

Հ.Մ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

МАТЕНА ДАРАН

Г. М. АМАЛЯН

ЛЕКСИКОГРАФИЧЕСКИЕ  
ПАМЯТНИКИ СРЕДНЕВЕКОВОЙ  
АРМЕНИИ (V—XV вв.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1966

4(47.925)

ՄԱՅԱԿԱՆ ՍՈՋ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳԻՐԵՐԻ ԲԱՍԻՏՈՒՄ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ա Ր Ա Ն

Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ  
(V—XV ԳԴ.)

2109

ՄԱՅԱԿԱՆ ՍՈՋ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1966



Աշխատության մեջ արծարծվում են հայ միջնադարյան բառարանագրության սկզբնավորման, զարգացման, տեսության ու բնույթի հիմնական հարցերը, բանասիրական ու լեզվաբանական բնության են ենթարկվում V—XV դարերի բառարանագրական հուշարձանները, ցույց է արվում նրանց դերը միջնադարյան մշակույթի մեջ և արժեքը արդի հայագիտության, մասնավորապես հայ լեզվաբանության համար:

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկա աշխատության նպատակն է ձեռագիր հուշարձանների հիման վրա ուրվագծել հայ միջնադարյան բառարանագրության պատմությունը:

Մի շարք էական հանգամանքների նկատառումով մենք նպատակահարմար ենք գտել հայ բառարանագրության միջնադարյան շրջանի ուսումնասիրությունն առայժմ սահմանափակել XV դարով, իսկ հաջորդ ժամանակաշրջանի՝ XVI—XVIII դդ. բառարանագրությունը քննել առանձին, մանավանդ, որ վերջին շրջանի մեջ է մտնում նաև Երեմիա Մեղրեցու բառարանը, որի վերականգնումն արդեն մի առանձին աշխատության խնդիր է:

Քանի որ մեր միջնադարյան բառարանագրությունը գեղեցիկաբար շափով չի ուսումնասիրված, այդ ուղղությամբ կատարված հետազոտությունները սակավ են, ապա՝ նախաշավիղ շունենալով, մենք կողմնորոշվել և մշակվող նյութը քննել ենք սեփական մոտեցմամբ:

Ձեռագիր բառարանների ուսումնասիրության մասնագիտական կողմին զուգընթաց ուշադրություն ենք դարձրել նաև ազբյուրագիտական կողմի վրա, նկատի ունենալով, որ քննվող բառարանների մեծ մասն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում:

Առանձին բառարանների քննության ժամանակ, բուն նյութին անցնելուց առաջ, անհրաժեշտ ենք համարել համառոտ պատմական տեղեկություններ տալ տվյալ ժամանակաշրջանի գիտական ու մշակութային կյանքի վերաբերյալ:

Մեր աշխատությունն անթերի չէ: Հույսով ենք, որ մասնագետները կրացահայտեն թերությունները, կանեն դիտողություններ, որոնք և զոհունակությամբ կընդունվեն և հաշվի կառնվեն հետագա աշխատանքների ընթացքում:

\* \* \*

Հայ բառարանագրությունը սկիզբ է առնում դարերի խորքից, մեր դարության ամենավաղ ժամանակներից: Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող հայ գրչության ու մշակութային գրեթե բոլոր կենտրոններում՝ Երզնկայում, Տաթևում, Գլաձորում, Վանում, Սուրխաթում, Բաղեշում, Կաֆայում, Զուղայում, Մեծոփա վանքում, Երուսաղեմում, Էջմիածնում, Կոստանդնուպոլսում, Սեանում, Երևանում, Լվովում, Կամենիցում և այլուր գրվել են զանազան տիպի մեծ ու փոքր բառարաններ: Անհամար փորձությունների ճանապարհով մեզ հասած ձեռագիր հուշարձաններում առկա միջնադարյան բառարանների հոծ բազմությունը միայն բավական է ապացուցելու համար, որ բառարանագրությունը Հայաստանում եղել է մշակութային մի կարևոր բնագավառ, որ բառարանները լայն տարածում են ունեցել և կարևոր դեր խաղացել գիտության և մանկավարժության ասպարեզում: Միայն մաշտոցյան մատենադարանի ձեռագիր հուշարձաններում պահպանվել են մի քանի տասնյակ անուն բառարաններ, որոնց ընդօրինակությունների ընդհանուր թիվը հասնում է 650-ի:

Հայ բառարանագրության հուշարձանների մեծ մասը մինչև այժմ մնում է որպես մեր անտիպ մատենագրության մեջ անթեղված գանձ: Հին բառարաններն ընդհանրապես հայտնի են եղել հայագետներին, այդ բառարաններից մի քանիսը աղբյուրներ են հանդիսացել Երեմիա Մեղրեցու, Ալիշանի, Փեշտամալճյանի, Նոր հայկազյան և այլ բառարանների համար: Առանձին ձեռագիր բառարաններ տպագրվել են, նրանց մասին գրվել են ուսումնասիրություններ, հայագիտական աշխատություններում երբեմն հիշատակվում են հին բառարաններ, արժարժվում են միջնադարյան բառարանագրությանը վերաբերող առանձին հարցեր: Այդուհանդերձ մեր միջնադարյան բա-

առարանագրությունը առանձին ուսումնասիրության առարկա չի եղել: Ավելին. հայերեն միջնադարյան բառարանների վերաբերյալ ոչ միայն մի ամփոփ, ամբողջական ուսումնասիրություն չկա, այլև չկան բառարաններն արտացոլող, թեկուզ, մատենագիտական ուղեցույց ձեռնարկներ: Հայերեն ձեռագրերի առաջիմ մի փոքր մասի նկարագրությունը պարունակող զանազան ձեռագրացուցակներում աղքատիկ տեղեկություններ են հաղորդվում բառարանների մասին, երբեմն էլ ուղղակի «բառարան», «բառարան անվերնագիր» և նման նշումներով ցույց է տրվում միայն բառարանի առկայությունը ձեռագրերում:

Գրանով հանդերձ մեր հին բառարանագրության ուղղությամբ մինչև այժմ կատարված աշխատանքը զգալի ներդրում է հայագիտության մեջ, շատ կարևոր է հայ բառարանագրության միջնադարյան շրջանի ուսումնասիրության համար: Ուստի անհրաժեշտ ենք համարում, հենց սկզբից, ամփոփ ներկայացնել մեր միջնադարյան բառարանագրության վերաբերյալ առ այսօր հրատարակված կարևոր նյութերը:

Ամենահին հայերեն բառարանագրական հուշարձանի մասին համառոտ տեղեկություն կա «Բաղմավէպ»-ում<sup>1</sup>: Այդ հուշարձանը հանգամանորեն քննված է Հ. Տաշյանի՝ հայ հնագրությանը վերաբերող աշխատության մեջ<sup>2</sup>: Դա պապիրուսի մի թերթիկ է, որի վրա հայերեն տառերով հունարեն առանձին բառեր են գրված:

Ֆրանսիական Օտյուն սեմինարիայի գրադարանի ձեռագրերից մեկում հայտնաբերվեց լատիներեն-հայերեն բավականին երկար մի բառացանկ: Գրադարանի աշխատող հնագետ Օմոնը «Bibliothèque de l'École des chartes» հանդեսում, առաջին անգամ, այդ բառացանկը լույս բնծայեց 1882 թվականին: Ապա, 1886 թ. առանձին գրքուկով լույս տեսավ հայագետ Կարիերի աշխատությունը այդ բառացանկի մասին<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Բաղմավէպ», 1892, էջ 39:

<sup>2</sup> Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898:

<sup>3</sup> Un ancien glossaire latin-arménien, publié et annoté par A. Carrière, Paris, 1886.

Հայ միջնադարյան բառարանագրությունը թեթևակի անդրադարձել է նաև Գ. Զարբհանայանը: Նա բավականին հանգամանորեն տալով ամբողջ հայ մատենագրության պատմությունը, իր աշխատության մեջ անհրաժեշտ տեղ չի հատկացնում հայ բառարանագրությանը, գրեթե ոչ մի խոսք չի ասում միջնադարյան հայ մատենագրության մեջ այնքան շատ տարածված ու բազմաթիվ զրչագրերով իրեն հայտնի ձևագիր բառարանների մասին: Միայն աշխատության երկրորդ մասում՝ «Նոր մատենագրության» մեջ, բառարաններին նվիրված գլխի սկզբում, նա թուղցիկ ակնարկով անցնում է հին բառարանների վրայով և հայ բառարանագրության պատմության շարադրանքն սկսում Յրանչեսկո Ռիվոլյալի Dictionarium armeno-latinum բառարանից<sup>4</sup>:

Մեր միջնադարյան բառարանների մասին խոսում է նաև Ն. Ակինյանը: Նա նույնպես բառարաններին նվիրված առանձին ուսումնասիրություն չունի գրած և, ուրիշ շատ հայագետների նման, զրանց անդրադառնում է հարեանցիորեն. «Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան» գրախոսականում, խոսելով Երևմտա-Մեղրեցու բառարանի մասին, նա հիշատակում է մի շարք հին բառարաններ և հայտնում իր կարծիքը նրանց ստեղծման ժամանակների մասին<sup>5</sup>:

Գերմանացի հայագետ Յրանց Յինկը 1902 թ. «Zeitschrift für armenische Philologie» հայագիտական հանդեսում հրատարակեց Մատենադարանի № 1898 (= Կարենյան ցուցակ № 1654) ձևագիր ժողովածուի նյութերի մի մասը «Kleinere mittelarmenische Texte» վերնագրով: Այդ բնագրերից մեկը, հիշատակված ժողովածուի վերջում զետեղված՝ փիլիսոփայական սահմանումների մի փոքր հավաքածու է՝ Դրանից հետո, այդ նույն հանդեսում, 1903 թ. գերմանացի

<sup>4</sup> Գ. Զարբհանայան, Պատմություն հայերեն զգրութեան, Բ, Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 405—421:

<sup>5</sup> Ն. Ակինյան, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, «Հանդես ամսօրեայ», 1930, էջ 482—498:

<sup>6</sup> F. Finck, Kleinere mittelarmenische Texte, «Zeitschrift für armenische Philologie», B. 1, H. 3, Marburg, 1902, S. 215—216.

հայագետ Յոզեֆ Կարստը հրատարակեց եռալեզվյան հայերեն-արաբերեն-լատիներեն մի բժշկական բառարան բավականին ընդարձակ ներածականով և ծանոթագրություններով<sup>7</sup>: Այս աշխատության ներածականում նա լեզվաբանական ու բանասիրական բազմակողմանի քննության է ենթարկում հիշյալ բառարանը:

Ականավոր հայագետ Ն. Աղոնցը իր՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությանը և մեկնություններին նվիրված աշխատության մեջ, բերում է Թրակացու «Ξγνη γραμματικη» երկի հայերեն թարգմանությանը կից «Բառք քերականին» բառարանի գիտահամեմատական բնագիրը<sup>8</sup>: Նա չի զբաղվում «Բառք քերականին» բառարանի հանգամանքներով, այլ մի քանի բառով նշում է այդ բառարանի «հավանաբար հին ծագում» ունենալու և անհայտ հեղինակի գործ լինելու հանգամանքը: Սակայն կարևորն այն է, որ Աղոնցը բառարանում բերվող բառերը Թրակացու քերականության բնագրի հետ համեմատելով, առանձնացրել է հետագայում ավելացված բառերը և ճիշտ կերպով վերականգնել բառարանի հեղինակային, նախագաղափար օրինակը:

Բժիշկ Խ. Մելիք-Փարսազանյանը, 1949 թ., «Բառք Գաղիանոսի» բառարանին նվիրված փոքրածավալ, բայց արժեքավոր, հոդվածում համառոտակի ներկայացնում է այդ բառարանը<sup>9</sup>:

Չնույնպես վիճակում է գտնվում անվանի հայագետ Նորայր Բյուզանդացու «Մեկնություն բառից Գաղիանոսի» աշխատությունը, որը գրված է Գաղիանոսի բառարանի հինգ տարբեր

<sup>7</sup> J. Karst, Das trilingue Medizinalglossar aus Ms. 310 der Wiener Mechitharisten-Bibliothek, «Zeitschrift für armenische Philologie», B. 2, H. 2, Marburg, 1903, S. 112—136.

<sup>8</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 57—64.

<sup>9</sup> Հ. Խ. Մելիք-Փարսազանյան, Համառոտ տեղեկություններ մեզ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին, 2002 ԳԱ «Աշխատություններ» հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի, № 2, Երևան, 1949, էջ 67—74:

ձեռագրերի համեմատական ուսումնասիրության հիման վրա: Աշխատությունը բազկացած է երկու բաժնից: Առաջինում տրբված է բառարանի գիտա-համեմատական բնագիրը, երկրորդում՝ ուղղված, ճշգրտված և մեկնարանված են այդ բառերը և բերված են նրանց հունարեն, արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն և լատիներեն հոմանիշները<sup>10</sup>:

Մատենադարանի գիտաշխատող Ս. Արևշատյանը 1960 թ. հրատարակեց հունարան շրջանի փիլիսոփայական երկերի երկու փոքր պատասխաններ, որոնցից մեկը՝ «Սահմանք փիլիսոփայական»-ը, փիլիսոփայական տերմինների ու հասկացությունների սահմանումների մի ընդարձակ հավաքածու է<sup>11</sup>:

1962 թ. լույս տեսավ Մատենադարանի գիտաշխատող Լ. Խաչերյանի՝ հայ միջնադարյան գրչության արվեստին նվիրված աշխատությունը, որտեղ տրված է Արիստակես գրչի «Արվեստ գրչութեան» աշխատության գիտա-համեմատական բնագիրը՝ ուղղագրական բառարանով հանդերձ<sup>12</sup>:

Վերջապես, 1963 թ. «Պատմա-բանասիրական հանդես»-ում լույս տեսավ Գ. Գասպարյանի հոդվածը<sup>13</sup>, որտեղ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է «Բառք Վարդան գրոց» բառարանի էական հարցերին, բերում է բառարանի բնագիրը և մեկ առ մեկ քննում բոլոր բառահոդվածները:

Հայ միջնադարյան բառարանագրության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ կան Հ. Աճառյանի, Էդ. Աղայանի, Գ. Զահուկյանի, Գ. Արզարյանի և այլոց աշխատություններում: Ահա, հիմնականում, մեր հին բառարանագրության պատկերը հայագիտության մեջ:

<sup>10</sup> Նորայր Բյուզանդացու անտիպ աշխատության մասին տեղեկությունները բազմից ենք Գ. Արզարյանի «Նորայր Բյուզանդացու անտիպ երկերը», («Էքզիսթիս», 1964, Ը-Թ, էջ 39) հոդվածից:

<sup>11</sup> С. Аревшатын, Два древних философских фрагмента—«Ритор, о природе» и «Философские определения», «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 371—391:

<sup>12</sup> Լ. Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի» լեզվական-բերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 227—286:

<sup>13</sup> Գ. Գասպարյան, «Վարդանանց պատմության» միջնադարյան բառարանը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 269—275:

Բայց ինչո՞ւ բառարաններ գրելու դարավոր փորձով, տրբադիցիաններով ու բառարաններով հարուստ հայ մշակույթին ուսումնասիրող գիտնականների ու բանասերների տեսադաշտից դուրս է մնացել բառարանագրության պատմությունը: Պատճառն այն է, որ բառարանագրությունը ինչպես մեզ մոտ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների մոտ իսկական բնագավառ չի համարվել: Բառարանների կարիք միշտ զգացվել է, բառարաններ գրվել, նորոգվել ու կատարելագործվել են, բառարաններ գրել են սովորաբար լավագույն մասնագետներն ու գիտնականները, բայց, այնուամենայնիվ, բառարանագրությունը, որպես գիտական բնագավառ, ըստ արժանվույն չի գնահատվել: Ահա թե ինչու բառարանագրության պատմությունը և հատկապես նրա միջնադարյան շրջանը ուշագրության չի արժանացել և մնացել է անմշակ: Հայագետները սովորաբար «բառարան» ասելով նկատի են ունեցել նոր, տպագիր բառարանները, որոնք մեր մշակույթի մեջ հանդես են գալիս XVII դարից սկսած և դրանց հետ համեմատելով, հին բառարանները համարել են աննշան ու թերակատար, գիտունների ու տգետների կողմից կցկցված, բառարան կոչվելու հազիվ արժանի գործեր: Մենք անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ զանազան հին բառարաններին ու բառարանագրության առանձին հարցերին վերաբերող կարծիքներին: Կասենք միայն, որ հին բառարանները ժամանակակից բառարանների համեմատությամբ գնահատելը ճիշտ չէ: «Բառք քերթողականք» կոչվող բացատրական բառարանը (XII դ.) նոր հայկազյան բառարանի համեմատությամբ շատ փոքր է: Բայց ճիշտ կլինե՞ր մտածել, թե «Բառք քերթողականք»-ը, ինչպես նաև մյուս հին բառարանները, աննշան ու չնչին երկեր են մեր միջնադարյան մշակույթի մեջ: Իհարկե՞ ոչ: Նման մոտեցումը այն սխալ հետևությունը կհանգեցնի, թե միջնադարյան բառարանագրությունը հազիվ նշմարելի, կողմնակի, մշակույթի մեջ գրեթե տեղ չզբաղվող մի բնագավառ է: Այնինչ՝ իրականում այդպես չէ:

Մինչև XVII դարը բառարանագրությունը համեմատաբար ցածր մակարդակի վրա էր, լեզվի ամբողջ բառազանձի կամ

որեւ գիտութեան ամբողջ մասնագիտական բառապաշարի ընդգրկումը բառարանների նպատակը չէր, ընդարձակ, բազմահատոր բառարաններ գոյություն չունեին: Ա. Չիկոբաբան իրավացի է՝ նշելով, որ «Լեզվի ամբողջ լեզուիկական կազմն ընդգրկող բառարանների մասին հասկացողությունը ծագում է նոր ժամանակներում, XVII դարից ոչ վաղ»<sup>14</sup>:

Սակայն միջնադարյան փոքրածավալ բառացանկերն ու բառարանները, այնուամենայնիվ, բավարարել են ժամանակաշրջանի մշակութային կյանքի պահանջները: Ավելին. միջին դարերում մի շարք ժողովուրդների մոտ բառարանագրությունը լեզվաբանության մեջ կենտրոնական դիրք էր զբաղում, օրինակ՝ միջնադարյան արաբական լեզվաբանությունը հայտնի է գլխավորապես բառարանագրությամբ: Հայ միջնադարյան մատենագրության մեջ բառարանագրական աշխատություններն ավելի շատ են, քան քերականական երկերը: Հետևաբար չի կարելի ճիշտ գնահատել հին բառարանները միայն նրանց ծավալին նայելով, առանց խորամուխ լինելու նրանց բովանդակության, նպատակների ու խնդիրների, մատենագրության և զարգացման ասպարեզում նրանց կատարած դերի մեջ, առանց իսկական գիտա-պատմական մոտեցման:

Միջնադարյան բառարանագրության խնդիրները բազմազան էին, փոքր մասշտաբների, բայց անմիջական ու գործնական: Բառարանները ստեղծվում էին մշակութային կյանքի հետևյալ գլխավոր պահանջները բավարարելու նպատակով:

1. Հին թարգմանական ու բնագիր երկերի ուղղությամբ կատարվող բանասիրական աշխատանքի պահանջով: Բառարաններում հավաքվում և բացատրվում էին բնագրերի հնացած ու անհասկանալի բառերը, ոճերն ու դարձվածները՝ այդ երկերի բովանդակությունը ընթերցողներին հասկանալի դարձնելու համար:

2. Նոր ասպարեզ մտած գիտական աշխատություններին ու թարգմանական գործերին առընթեր՝ այդ աշխատություն-

ներում հանդիպող մասնագիտական բառերն ու տերմինները, օտար բառերը, մայրենի լեզվի նորակազմություններն ու բարբառային բառերը բացատրելու համար:

3. Գրքոցների համար, ուսումնա-վարժական նպատակներով: Բառարանների օգնությամբ սովորողները սերտում էին փրիստփայական դանազան հասկացությունների սահմանումները, սովորում էին տերմինների իմաստն ու գործածությունը, իրենց բառապաշարը հարստացնում մայրենի լեզվի նոր բաներով, հմտանում ուղղագրության մեջ և այլն:

Հետագայում, X դարից հետո, բառարանագրության առաջ կանգնում են նոր խնդիրներ, որոնցից գլխավորը օտար լեզուների բառերը թարգմանելն էր, հանդես են գալիս երկլեզվյան, ապա՝ եռլեզվյան բառարաններ:

Սրանք են միջնադարյան բառարանագրության հիմնական խնդիրները, որոնց նկատառումով էլ պետք է քննել և գնահատել հին բառարաններն ու բառարանագրությունը:

Հայագիտության մեջ միջնադարյան բառարանների մասին եղած աղքատիկ տեղեկություններն այն պատկերացումն են առաջացնում, թե բառարանագրությունը Հայաստանում XVII դարից հանդես եկող մի երիտասարդ բնագավառ է: Անտեսվում է պատմական զարգացման այն ուղին, որ անցել է հայ բառարանագրությունը մեր դարության վաղ ժամանակներից մինչև XVII դարը: Իրականում, սակայն, բառարանագրությունը հայ մշակույթի հնագույն ու հարուստ բնագավառներից մեկն է և վաղ միջնադարի փոքր բառացանկերից ու բառարաններից մինչև նոր հայկազյան, Արմատական ու Մալխասյանցի բառարանները զարգացման անընդմեջ ուղի է անցել: Նոր բառարանագրությունը (XVII դարից սկսած մինչև սովետական շրջանը) հնի զարգացման շարունակությունն է ու նրա բարձր աստիճանը: Հետևենք, օրինակ, հայերեն բացատրական բառարաններին «Բառք քերթողականք»-ի հանդես գալու ժամանակից, XII դարից, մինչև նոր հայկազյան բառարանն ընկած ժամանակաշրջանը: «Բառք քերթողականք»-ը XIII դարում արդեն բավականին ընդարձակ բառարան էր, ուներ շուրջ 4000 բառ, XV—XVI դարերի ընթացքում

<sup>14</sup> А. Чикобава, О принципах составления толкового словаря грузинского языка, «Лексикографический сборник», вып. 1, М., 1957, стр. 58.

բառերի թիվը զգալիորեն ավելանում է, իսկ XVII դարում՝ 1660 թ. սկսած, մի շարք գրչագրերով, բառարանն արդեն 8500 բառ է ընդգրկում: Դրան հաջորդում է 1701 թ. գրված հայերեն բացատրական բառարանը, որը շուրջ 25000 բառ է պարունակում, այսինքն՝ նախորդից մոտ երեք անգամ ավելի: Դա իսկական, միջին ծավալի, բացատրական բառարան է, ունի ժամանակակից բառարանների բոլոր հատկությունները: Այդ բառարանում բառերը բացատրվում են ավելի ընդարձակ ու բազմակողմանի, մի քանի հոմանիշների օգնությամբ, տրվում է բառի քերականական բնութագիրը՝ նշվում են սեռական հոլովի, անցյալ կատարյալի և անցյալ դերբայի վերջավորությունները, բառերը դասավորված են լրիվ այբբենական կարգով և այլն: Բառարանի միակ գրչագիրը պահպանվում է Երևանի Մատենադարանում 9776 համարի տակ: Դա մեր միջնադարյան բառարանագրության ամենաարժեքավոր ու կատարյալ երկն է, հայերեն առաջին իսկական բացատրական բառարանը: Այնուհետև, դրան հաջորդում է Մխիթար Սեբաստացու «Քառգիրք հայկազեան լեզուի» տպագիր բառարանը (առաջին հատորը լույս տեսավ 1749 թ., երկրորդը՝ 1769 թ.), որից հետո էլ արդեն նոր հայկազյան բառարանի հանդես գալը միանգամայն օրինաչափ երևույթ էր, մեր բառարանագրության առաջընթացի հաջորդ քայլը: Չենք խոսում այլևս այն մասին, որ XV դարի վերջերին հայ բառարանագրությունը պսակվեց Ամիրզովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» աշխատությամբ, որը բժշկական-դեղաբանական մի կատարյալ հանրագիտական բառարան է ոչ միայն հայ իրականության, այլև միջնադարյան համաշխարհային մշակույթի մեջ:

Հայ բառարանագրությունը կարելի է բաժանել 3 հիմնական շրջանների. 1. միջնադարյան շրջան՝ սկըզբից մինչև XVII դարի 2-րդ քառորդը, մինչև Ռիվոլյույի բառարանի երևան գալը, 2. նոր շրջան կամ նախասովետական շրջան՝ XVII դարի 2-րդ քառորդից մինչև մեր դարի 20-ական թվականները և 3. հայ բառարանագրության սովետական շրջան:

Սույն աշխատությունը նվիրված է հայ բառարանագրության պատմության առաջին շրջանին, որը իր հերթին կարելի է բաժանել երկու ենթաշրջանի՝ մինչև XI դարը և նրանից հետո: Ըստ ենթաշրջանների կբննվեն մինչև XV դարի վերջերը գրված՝ լեզվաբանական տեսակետից առավել արժեքավոր, դպրոցի ու մանկավարժության պատմության համար բավականին հետաքրքրություն ներկայացնող բառարանները: Ուշադրության չեն առնվի նշանագրեր մեկնող ցանկերի, չափ ու կշռի, քաղաքների, թուղունների, հողմերի, թանկագին քարերի և այլ անունների ցանկերը, ինչպես նաև մատենագրության զանազան երկերին վերաբերող համառոտ լուծումները, որոնք մոտ են բառարաններին, բայց, այնուամենայնիվ, բառարաններ չեն և բառարանագրության տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում: Չի քննվելու նաև Ամիրզովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ը, որովհետև այն արդեն ուսումնասիրված և տպագրված է:



ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ  
ՈՒ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ V—X ԳԱՐԵՐՈՒՄ

2108

Հայ բառարանագրությունը սկզբնավորման ու լինելու-  
թյան մի երկար, շուրջ վեց դար տևող, նախնական ժամանա-  
կաշրջան է անցել մինչև առաջին այրբենական բառարանների  
երևան գալը:

Ե՞րբ են սկզբնավորվում բառարանագրական աշխատանք-  
ներն ու հանդես գալիս բառարանները հայ իրականության  
մեջ: Վենետիկյան միաբան Կ. Սահակյանը 1907 թ. իր «Գրոց  
գիտը» հոդվածում<sup>1</sup> այն միտքն է առաջ քաշում, թե այբու-  
բենը հնարելուց առաջ Մեսրոպ Մաշտոցը ստիպված էր հու-  
նարառ հույն-հայերեն բառարան ստեղծել: Նա գրում է. «Ս.  
Մեսրոպ ուրեմն բռնադատված էր ամենեն առաջ հունարենի  
հայերեն բառարան մը շինելու, հունարեն տառերով (որոնց  
անբավականությունը այնքան տաժանելի պիտի ըներ աշխա-  
տանքը) որպեսզի կարող ըլլար բազմաթիվ տառերով իմա-  
նալ՝ թե որ ձայները կարելի չէ ներկայացնել հույն տառերով  
և թե որ ձայներուն համար ուրիշ լեզուների տառ փոխ առնե-  
լու է, և կամ նոր հնարելու է»<sup>2</sup>:

Այնուհետև Սահակյանը ենթադրում է, թե սկզբում այդ  
բառարանը դեռևս անկատար էր, պետք էր այն ընդարձակել

<sup>1</sup> Կ. Սահակյան, Գրոց գիտը, «Բազմավեպ», 1907, էջ 439—443:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 441—442:



և սուրբ գրքերի թարգմանության համար լիակատար բառա-  
րան դարձնել:

Սահակյանին հակադրվեց նրա աշակերտ Եղիշե Գուրջա-  
նը, ցույց տալով, որ նախքան այբուբենի ստեղծումը ու թարգ-  
մանչական գործի սկիզբը հույն-հայերեն երկլեզվյան բառա-  
րանի գոյությունը ընդունումը զուրկ է որևէ գիտական հիմքից.  
«Նախ՝ զարմանալի պիտի ըլլար,— գրում է նա,— մեր առա-  
ջին թարգմանիչներուն համար ամեն բանն առաջ երկլեզվյա  
բառարան մը պատրաստել, դեռ տող մը բան չթարգմանած  
մագաղաթի մը վրա»<sup>3</sup>:

Եթե նկատի չունենանք Գուրջանի բազմաթիվ իրավացի  
և հիմնավոր ատարկումները ընդդեմ Սահակյանի, այդ միայն  
բերված քաղվածքին համամիտ լինելով, մենք անհրաժեշտ  
չենք համարում ավելին ասելու ի ժրտումն Սահակյանի:

Վերևում նշվեց, որ Ն. Ակինյանը կարծիքներ է հայտնել  
հայերեն մի շարք ձեռագիր բառարանների ստեղծման ժամա-  
նակների մասին: Անհրաժեշտ ենք համարում բերել նրա հոգ-  
վածից մի ընդարձակ հատված:

«Թե ինչպես հեղինակը Երեմիա վարդապետը կը ներկա-  
յացվի, ինձ անմեկնելի է: Հրատարակիչը ունեցած է աչքի  
առաջ ձեռագիր մը — «ի լավ և ընտիր օրինակէ» կը ըսվի  
տպագրված. այդ ձեռագիրն ըստ ամենայն հավանականու-  
թյան եղած է մին այն շին Բառագրքերին, որոնք սովորաբար  
կը բովանդակին. 1. «Մեկնութիւն յԵրրայեցոց լեզուէ ի հայ».  
2. «Բառք քերթողականք». 3. «Հանգէս բանաստեղծաց». 4.  
«Բառք Գաղիանոսի բժշկապետի» 5. «Թարգմանութիւն դեղոց»  
և 6. Այլ և այլ մանունք. երբմն ալ «Համառօտ գումարումն  
և լուծումն բառից Աստուածաշունչ գրոց» յուսմանէ Երեմիայէ  
Մեղրեցոյ: Վերջինս համառօտ բացատրություն մըն է այն  
ամեն դժվարիմաց բառերու, դասավորված Աստուածաշունչի  
մատչաններու կարգով, առանց այբուբենական հաջորդության:  
Եվ որովհետև հաճախ այս հավաքումը ղեկողված կը տեսնվի  
Հին Բառագրքին սկիզբը, համարված է, թե նաև հաջորդող

3 Ն. Գուրջան, Գրոց գիտի մասին, «Բազմավէպ», 1908, էջ 228:



բառերու հեղինակը Երեմիա Վ. Մեղրեցին է: Բայց հին են բա-  
ռագրքի 1, 4 մասերը, թերևս 2—է դարեն, 2 և 3 և 5, իբր  
ԺԱ—ԺԲ դարեն, ձոխացած հընթացս նոր հավելվածներով և  
ենթարկված նոր խմբագրություններու»<sup>4</sup>: Քաղվածքում հիշա-  
տակված բառարանների ստեղծման ժամանակների հարցում  
հիմնականում համամիտ լինելով Ակինյանին, միաժամանակ  
անհրաժեշտ ենք համարում անել հետևյալ գիտողությունները.

Այն կարծիքը, թե բառարանի 1, 4 մասերը, այսինքն՝  
«Մեկնութիւն յԵրրայեցոց լեզուէ ի հայ» և «Բառք Գաղիանո-  
սի բժշկապետի» բառարանները ստեղծված են 2—է դարե-  
րում, ճիշտ չէ: «Մեկնութիւն յԵրրայեցոց լեզուէ ի հայ» բա-  
ռարանը շփոթված է «Բառք երրայեցոց» բառարանի հետ:  
Մենք ընդունում և համոզված ենք, որ Ակինյանի խոսքը վե-  
րաբերում է ոչ թե իր հիշատակած, այլ «Բառք երրայեցոց»  
բառարանին, որը ստեղծված է XI—XII դարերում: Ավելի  
վաղ, ինչպես Ակինյանն է ենթադրում՝ 2—է դարերում, այդ  
բառարանը դժվար թե գոյություն ունենար, որովհետև երրա-  
յական լեզվաբանությունն ավելի ուշ է ձևավորվում, քան 2—  
է դարերը, ըստ Գ. Զահուկյանի՝ «Երրայական քերականու-  
թյան և բառարանագրության առաջին քայլերն սկսվում են X  
դարից»<sup>5</sup>:

Այնուհետև, «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարա-  
նը նույնպես 2—է դարերում չի ստեղծված, այլ հետո՝ X դարի  
վերջերին կամ XI դարի սկզբներին, ինչպես հետագայում  
կտեսնենք այդ բառարանի ըննության ժամանակ: Ակինյանի  
կարծիքը իր հիշատակած մյուս բառարանների ստեղծման  
ժամանակների մասին, հիմնականում, ճիշտ է: Ընդհանրապես  
Ակինյանն իրավացի է մեր միջնադարյան բառարանագրու-  
թյան նկատմամբ ընդունելով, որ Հայաստանում բառարանա-  
գրություն եղել է շատ ավելի վաղ, քան կարծում են մի շարք  
այլ հայագետներ:

4 Ն. Ակինյան, նշված հոդվածը, էջ 491—492:

5 Գ. Բ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան,  
1960, էջ 149:

Հայ բառարանագրության ամենավաղ շրջանի մասին մեր մատենագրությունը տեղեկություններ չի տալիս: Մատենագիրները, հատկապես V—X դդ., ոչ միայն բառարանագրության ու բառարանների մասին հիշատակություններ չունեն, այլև չեն գործածում «բառգիրք» և «բառարան» բառերը: Սակայն հին մատենագրական երկերում բառարանագրական աշխատանքի բազմաթիվ տարրերի առկայությունը, ինչպես նաև պահպանված բառարանագրական հուշարձանները անհերքելիորեն վկայում են, որ բառարանագրությունը Հայաստանում սկիզբ է առնում մեր դպրության սկզբնական ժամանակներից, պահպանված ամենահին բառարանագրական հուշարձանները հունաբան դպրոցի արտադրանքներ են:

Մեզ հասած VII—X դարերի բառարանագրական հուշարձանները լոկ շնչին մասն են այն ամենի, ինչ ստեղծվել է հնում: Հետևաբար մենք ամբողջական պատկերացում չենք կարող ունենալ հայ բառարանագրության հնագույն շրջանի մասին: Բայց ինչպիսին էլ լինեն այդ շրջանի բառարանագրությունը, դա, իհարկե, այն չէ, ինչ դառնում է X դարից հետո: Այդ շրջանում բառարանագրությունը դեռևս սաղմնային զարգացման վիճակ է ապրում:

Հայ բառարանագրությունը նույնքան հին է, որքան հայ քերականական մտքի պատմությունը, նա սկզբնավորվում է V—VI դարերից սկսած, և նրա ծագումը կապվում է հունական բառարանագրության հետ: Հայտնի է, որ հայերեն գրերի ստեղծումից առաջ հայ դպրոցի ու եկեղեցու գրական լեզուն հունարենն էր (նաև պարսկերենը), հայ մանուկները կրթվում էին հունական դպրոցում՝ ինչպես հելլենական մշակույթի օջախներում, այնպես էլ Հայաստանում: Հայերեն այբուբենի ստեղծումից հետո էլ Հայաստանը մշակույթային կապերը չխզեց Հունաստանի հետ, այլ, ընդհակառակը, հայ մշակույթի գործիչները եռանդուն կերպով ձեռնամուխ եղան հունական անտիկ ու վաղ ավատական շրջանների մատենագրության կարևոր երկերի թարգմանության գործին: Արտագնաց ուսումն ու կրթությունը շարունակվում էին դեռևս կրտսեր թարգմանչաց վերադարձից հետո էլ: Հայաստանի սահման-

ներից դուրս՝ ուսման առաքյալների հիմնական մասը սովորում էր հելլենական մշակույթային օջախներում՝ հելլենական դպրության ոգով ու ավանդույթներով: Հայ ուսումնականները, պարզ է, որ յուրացնում էին հունական դպրության ոչ միայն բովանդակությունը, այլև ձևը, տիրապետում էին դասագրքեր և ուսումնական այլևայլ ձեռնարկներ կազմելու գործին, մատենագրության ու դպրոցի գործնական աշխատանքներին: Հետևաբար նրանք ծանոթ էին նաև հին հունական բառարանագրությանը, հատկապես գլոսարիաներին, որոնք ավելի քան դրոջան շրջանից սկսած լայն տարածում ունեին Հունաստանում: Հայ ուսանողները ոչ միայն ծանոթ էին հունական բառարանագրական աշխատություններին, այլև իրենք էին կազմում բառացանկեր՝ լեզուների, ինչպես նաև փիլիսոփայության, ճարտասանության և այլ գիտությունների ուսումնասիրության գործնական պահանջների համաձայն, այնպես, ինչպես ժամանակակից դպրոցականն ու ուսանողը սովորում են ոչ միայն պատրաստի բառարաններով, այլև իրենք են կազմում զանազան բառագրություններ: Ուստի պատահական չէ, որ հայերեն առաջին ինքնուրույն (ո՛չ թե թարգմանական) բառարանագրական հուշարձանը, բանասեր Տաշյանի հիշատակած բառացանկը, հունարեն սովորող մի հայի կողմից է կազմված: Մինչև X դարը գրված հայերեն բառարանագրական հուշարձանները՝ «Սահմանք փիլիսոփայականը», «Բանականի մասին սահմանք» և այլ ցանկեր թարգմանված են հունարենից: Հունարենից հայերեն թարգմանվող շատ աշխատություններ, հատկապես ուսումնավարական բնույթի, հավանաբար, օժտված էին գլոսարիաներով, որոնք տալիս էր աշխատությունների հետ միասին թարգմանվում էին հայերեն: Հունարենից հայերեն են թարգմանվել ոչ միայն զանազան բնույթի երկեր, այլև՝ բառարաններ, ինչպես «Բառք եբրայեցոց»-ը, սահմանումների ցանկերը և այլն: Եթե հունական մատյաններին առնթր կամ առանձին գոյություն ունեցող բառարանները, նույնիսկ, շթարգմանվելին էլ հայերեն, ապա նրանք անվազն օրինակ կհանդիսանային հայ հեղինակների

համար իրենց երկերը նմանօրինակ բառարանադրական հավելվածներով օժտելու համար:

\* \* \*

Մինչև X դարը հայ բառարանագրությունը ձևավորման վիճակ է ապրում, նրան բնորոշ են հետևյալ գծերը.

1. Բառարանագրությունը դեռևս ինքնուրույն մշակութային բնագավառ չէ:

2. Բառարանագրական ընդարձակ աշխատություններ չըկան, գոյություն ունեն տասնյակների սահմանը չանցնող բառաքանակ ունեցող բառացանկեր ու սահմանումների հավաքածուներ:

3. Բառարանագրական այդ հնագույն նմուշները բառերի ու սահմանումների խառը հավաքածուներ են, բառերի այբբենական դասավորում գոյություն չունի:

4. Բառարանագրական աշխատանքի հիմնական ուղղությունն ու նպատակը դպրոցի և ուսուցման անմիջական պահանջների բավարարումն է:

Այս շրջանում բառարանագրությունը հանդես է գալիս նախ՝ մատենագրության մեջ ցրված զրոսանների, ապա առանձին բառացանկերի ձևով: Առաջին դեպքում, բառարանագրական ինքնուրույն աշխատանքների իսպառ բացակայության պայմաններում, «բառարանագրություն» բառն ավելի իմաստ չունի, քան բառարանագրությանը վերաբերող այն առանձին աշխատանքների՝ հրեթացս շարադրանքի կատարվող բացատրությունների, մեկնությունների ու ստուգաբանությունների, միջտողային ու լուսանցքային զրոսանների, ֆարգմանությունների ամբողջությունը մատենագրության մեջ: Հետագայում էլ, բառացանկերի հանդես գալուց հետո, մատենագրական տարբեր երկեր ոչ միայն չեն մաքրվում, այլ ընդհակառակը, զգալիորեն հարստանում են բառարանագրական աշխատանքների զանազան տպրերով:

Այժմ մատենագրության փաստերի ու պահպանված բառարանագրական հուշարձանների միջոցով, համառոտակի ծանոթանանք սույն շրջանի բառարանագրական աշխատանքներին,

բին, հետևելով բառարանագրության զարգացման ընթացքին՝ սկսած նրա առաջին քայլերից մինչև ինքնուրույն և ընդարձակ մշակութային բնագավառ ձևավորվելը:

Հայ դպրության նախահունարան ժամանակաշրջանում բառացանկերն ու բառարաններն իսպառ բացակայում են. ձեռագիր հուշարձաններ չկան, մատենագրությունն այդ մասին ոչինչ չի ասում: Սակայն այդ շրջանից սկսած բառարանագրական աշխատանքներ կատարվել են, հայ մատենագիրները մտածել են իրենց բնագիր ու թարգմանական աշխատություններում հանդիպող անհասկանալի բառերի բացատրության և օտար բառերի թարգմանության մասին՝ այդ աշխատությունների բովանդակությունը ընթերցողներին առավել մատչելի դարձնելու համար: Բնագրերում հանդիպող հունարեն, ասորերեն, եբրայերեն, պարսկերեն և այլ օտար բառեր թարգմանվել են հայերեն, մեկնվել ու բացատրվել են հնացած, հազվագյուտ ու դժվարիմաց բառերի իմաստները, կատարվել են ստուգաբանություններ, որոնք երբեմն ճիշտ են, իսկ մեծ մասամբ սխալ, ոչ գիտական՝ միջնադարյան ստուգաբանությանը հատուկ բոլոր թերություններով: Ուրեմն բառիմաստի բացահայտման և նրա զործածության ուղղությամբ աշխատանք կատարվել է, սակայն նա կենտրոնացված չէ բառարաններում:

«Վերջապես,— գրում է պրոֆ. էդ. Աղայանը,— բառերի ստուգաբանություններն, իբրև լեզվաբանական գիտության մի ճյուղ, դարձյալ գիտական ուսումնասիրական բնույթ չունեն, նրանք ցրված են հայ հին մատենագրության մեջ, այս և այն հեղինակների մոտ, առանց որևէ սիստեմի, առանց գիտական մտտեցման, որ, իհարկե, դժվար էլ էր սպասել»<sup>6</sup>:

Քաղվածքում ասվածը միանգամայն իրավացի է ոչ միայն հին ստուգաբանության, այլև բառարանագրական աշխատանքների նկատմամբ:

Արդ, հայ հին մատենագրության բնագրերից վերցնենք քաղվածքներ, որոնք զանազան բառերի մեկնություններ,

<sup>6</sup> էդ. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1978, էջ 94:

Թարգմանություններ կամ ստուգաբանություններ են պարունակում:

1. «Եւ սատանայ ի սկզբանն ոչ թշնամի արարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարւոյ. զի ըստ եօրայեցոց բռնիցն հակառակ թարգմանի»<sup>7</sup> («Գր. Լուսավորիչ», IV դ.):

2. «Եւ տօնք բարեկենդանին և ողորմեանն մեծ՝ որ թարգմանի բարեբանեալ օր»<sup>8</sup> (Սահակ Պարթև, V դ.):

3. «էլի էլի, լամա սարաքթանի, ալսինքն է, Աստուած. Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս»<sup>9</sup> (Ազաթանգեղոս, V դ.):

4. «Անդէն ի նմին տեղոջ զնոսա ընդ միմեանս խառնակեաց, ուստի և նոյն տեղին զխառնակութեան զԲարել անուն ծառանգեաց»<sup>10</sup>:

5. «...զայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթևարէն լեզուէն՝ Դիցաւան»<sup>11</sup>:

6. «...եղիցի նզովեալ մարանաթայ. մարան՝ Տէր, ամայ՝ եկն, ալսինքն Տէր եկն, և նորա ոչ հաւատացին, որք կոչին յամենեցուն մամծիրֆ, ալսինքն խանգարեալք, զի ոչ արինաւքն վարեցան, և ոչ հաւատոց հնազանդեցան»<sup>12</sup> (Հովհան Մանգակունի, V դ.):

7. «...որ չար իմն էութիւն հակառակ բարւոյ զնեն, զոր հիւղն կոչեն՝ որ թարգմանի նիւթ...»<sup>13</sup> (Եղնիկ Կողբացի, V դ.):

8. «Քանզի սատանայ յերբայեցոց և յԱսորոց լեզուէ խոտորեալ թարգմանի»<sup>14</sup>:

7 «Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճարք», Էջմիածին, 1894, էջ 228:

8 «Կանոնք Սրբոյն Սահակայ». «Սոփերք հայկականք», Բ. Վենետիկ, 1853, էջ 114:

9 «Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1909, էջ 236:

10 Նույն տեղում, էջ 293:

11 Նույն տեղում, էջ 426:

12 Յովհան Մանգակունի. (աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչյանի, արտատպություն «Արարատ» ամսագրից), 1903, էջ 5—6:

13 «Եղնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց», Թիֆլիզ, 1914, էջ 8:

14 Նույն տեղում, էջ 37—38:

9. «...յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն, զոր յոյն լեզու իշացոյս ասէ»<sup>15</sup>:

10. «Եւ զօձ յաղթանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչին զիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի, և զգազանն ծովական լեռնածև, զկիտացն ասեն և զղելփինաց, վիշապս անուանեն»<sup>16</sup>:

11. «Որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայեւ լով միայն սատակէ զմարդ կամ զանասուն»<sup>17</sup>:

12. «...Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք»<sup>18</sup>:

13. «Եւ Հելլէնք կոչին Յոյնք՝ յառնէ միտջէ, որում Հեղինոս անուն էր յելլադացոց աշխարհին: Բայց այլք ասեն՝ եթէ ի ձիթենւոյն, որ յԱթէնս բուսաւ իւրովի. վասն զի ձիթենի յունարէն ելէա կոչի»<sup>19</sup>:

14. «...Քանզի բաժանումն յունարէն մերիսմոս կոչի»<sup>20</sup>:

15. «Եւ յուղայութիւն ի Յուդայէ, որ է հրէութիւն...»<sup>21</sup>:

16. «Եւ ի վախճանի հրէութեան, քրիստոնէութեան անուն ի Քրիստոսէ...»<sup>22</sup>:

17. «Բայց երկինս և երկնից երկինս յայն սակս գտանեմք ի գիրս, զի յերբայեցոց լեզու երկին շմարթի ասել: Որպէս և ոչ յասորի լեզու՝ ջուր կամ երկին. այլ մին բազմաբար ասի»<sup>23</sup>:

18. «Քանզի Բիւզանդիոսս այս փոքրիկ քաղաքիկ էր, յառաջագոյն շինեալ յառնէ ումեմնէ Բիւզաս անուն կոչեցելոյ, մերձակայ Թրակացոց սահմանակցութեանն»<sup>24</sup> (Ղաղար Փարպեցի, V դ.):

15 Եղնիկ. Եղվ. աշխ. էջ 69:

16 Նույն տեղում, էջ 72—73:

17 Նույն տեղում, էջ 75:

18 Նույն տեղում, էջ 79:

19 Նույն տեղում, էջ 144:

20 Նույն տեղում, էջ 145:

21 Նույն տեղում, էջ 145:

22 Նույն տեղում, էջ 145:

23 Նույն տեղում, էջ 181:

24 Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 3:

19. «...Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգմանի հայերէն՝ Կոստանդինուսի քաղաք. զոր ոմանք ըստ հռոմայեցի բարբառոյն Պաղատն ասեն, որ թարգմանի արբունի»<sup>25</sup>:

20. «...և բազումք ասէին նմա էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանկեալ ի սա»<sup>26</sup> (Փափստոս Բուզանդ, V դ.):

21. «...բարունի ասելով, որ թարգմանեալ կոչի վարդապետ»<sup>27</sup> (Նղիշէ, V դ.):

22. «Երուսաղէմ խաղաղութիւն թարգմանի...»<sup>28</sup> (Մամբրե վերծանող, V դ.):

23. «Բեթփագէ՝ թարգմանի տուն ծնօտի, և Բեթանիա՝ տուն սգոյ և տուն հնազանդութեան...»<sup>29</sup>:

24. Մովսէս Խորենացին մեկնում է Աբգար, Աղուանք, Այրարատ, Արծրունի, Արմաշիր, Գնունի, Դիմաքսեան, Երասխ, Հայք, Մարմէտ, Շապուհ, Շիրակ, Պերոզ, Բագրատունի, Դուին և բազմաթիւ այլ անուններ ու բառեր<sup>30</sup>:

25. Անանիա Շիրակացու աշխատութիւնները հագեցված են բազմաթիւ թարգմանութիւններով ու մեկնութիւններով: Նրա «Յաղագս կաթին ծրոյ», «Յաղագս շափոյ, շափուց և պատարաց», «Յաղագս կշոտյ, կշոտց և կշոտրաց», «Յաղագս կենդանատեսակաց», «Յաղագս աստեղարաշխութեան», «Վասն դիտութեան մղոնաշափաց» և այլ աշխատութիւններ, այնքան շատ թարգմանութիւններ ու մեկնութիւններ են պարունակում, որ երբեմն մասնագիտական, տեղեկատու բառարանի տպավորութիւն են թողնում: Նրանց մեջ մեկնվող ու բացատրվող բառերը՝ երկարութեան ու ծանրութեան չափերը, աստղարաշխական ու տոմարական տերմինները, աշխարհա-

գրական, մաթեմատիկական, կրօնական և այլ բառեր ուղեկցւում են իրենց ասորերէն, երբայերէն, հունարէն, պարսկերէն, լատիներէն և այլ լեզուների համարժեքներով: Օրինակ՝ «Կշիո սիմէսի և գրամարի կոչի ըստ երբայեցուց սատեր. և ըստ հելլենականին՝ ողբոս, և ըստ եգիպտացուց՝ քաղկոս. վասն զի աղբքսանդրացիք զարծաթն դաղկեմա կոչեն. և ըստ հասարակաց խաւսից կոչի գրաքմէ, որ է Ը մասն ունկոյ. և լինի ժԸ կերատաց կշիո: Ըստ Հռոմայեցուց կապիտուն կոչի, զի կապու զլուխ լսի, վասն զի Աւգաստոս թագաւոր եղ հարկս ըստ գլխոյ գրաքմէ»<sup>31</sup>: Կամ՝

«Բեզոս՝ յունարէն Դիոս, հայերէն՝ Արամազդ, պարսկերէն՝ Որմիզդ»<sup>32</sup>:

26. «Վասն զի ի Բէթղէմ թարգմանեալ կոչի ըստ երբայեցուցն երզումն իւր»<sup>33</sup> (Թեոդորոս Քոթենաւոր, VII դ.):

27. «...նշանն յաղթութեան, որ կոչի ըստ մերում լեզուին՝ կնիք, և ըստ երբայեցուցն՝ անփիռն, զոր ունի քահանայապետքն ի ձեռին իւրում»<sup>34</sup> (Ստ. Սյունեցի, VIII դ.):

28. «...զի Իսրայէլ սրատեսող թարգմանի ի լեզու երբայեցի»<sup>35</sup> (Ղևոնդ, VIII դ.):

29. «Ուստի մարգարէական աւետեօքն զօրացեալ մանգունք եկեղեցույ՝ երզ նոր երզեն, միսիղի անուանելով, որ ըստ յունարէն բարբառովն թարգմանի, այսինքն է՝ օրհնութիւնս երզել»<sup>36</sup> (Հովհ. Իմաստասէր Օձնեցի, VIII դ.):

<sup>25</sup> Ա. Գ. Արաբհամյան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 255:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 376:

<sup>27</sup> «Թեոդորոսի Քոթենաւորի ճառք երեք.— Մատենագրութիւնք նախնաց. Վենետիկ, 1833, էջ 172:

<sup>28</sup> «Ժամանակագրութեան մեկնութիւն ընդարձակ և համառօտ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և նորին պատճառ հիմնարկութեան սրբոյ Կնիզուցոյ», Ս. Էջմիածին, 1917, էջ 66—67:

<sup>29</sup> «Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1867, էջ 73:

<sup>30</sup> «Յովհաննու իմաստասիրի Աւնեցույ մատենագրութիւնք.— Մատենագրութիւնք նախնեաց», Վենետիկ, 1833, էջ 105:

<sup>25</sup> Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 4:

<sup>26</sup> «Փաստասի Բուզանդացու Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1914, էջ 100:

<sup>27</sup> «Նղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 305:

<sup>28</sup> «Մամբրեի վերծանողի ճառք.— Մատենագրութիւնք նախնեաց», Վենետիկ, 1833, էջ 76:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>30</sup> Մտուգարանութիւնների մասին տե՛ս էղ. Աղայան, Հայ լեզվաբանութեան պատմութիւն, հտ. 1, Երևան, 1958, էջ 86—91:

30. «...եղիսարեթ անուն, որ ըստ ֆռանգաց լեզուին Չապիլ կոչի...»<sup>37</sup> (Վարդան, XIII դ.):

31. «...և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ, զՇահղոսդ որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու...»<sup>38</sup> (Թովմա Արծրունի, IX դ.):

32. «Եւ ապայ զնաց երկիրն եգիպտացոց, ի քաղաքն Աղէքսանտրիայ և կոչեաց զանուն նորա Մսր, որ թարգմանի տեղի ապստամբաց»<sup>39</sup> (Շապուհ Բագրատունի, X դ.):

33. «Իսկ ապա թագաւորն Աշոտ արքայորդին շուէր զնայր երթալը հասանէր ի կողմանս Գուգարաց մերձ յամրոցն մեծ, որ ի լեզու Վրաց Շամշուղէ, այսինքն՝ երեք նետն անուանի»<sup>40</sup> (Հովհ. Գրասխանակերտցի, X դ.):

34. «Եւ աշխարհն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, վասն զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն»<sup>41</sup> (Մովսէս Կաղանկատվացի, X դ.):

35. «Բայց Շապուհը ըստ պարսկականին, որ վեհագոյնդ էհաս մեզ իմաստասիրել, ըստ իսմայէլականին Սաբուն յորջ-յորջի, իսկ ըստ Երբայեցոց Սաւուդ, որ և բոյին նահանգի Սևորդեացն ոչ ուղղախօսելով զսա, ասեն Սևուդ»<sup>42</sup> (Գր. Մագիստրոս, X դ.):

36. «Քանզի Մեռայ, որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն յարմարական շարշարաւոր կրից տաժանմանց, որ և մի-

37 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեայ», Վենետիկ, 1862, էջ 141:

38 «Թովմայի վարդապետի Արծրունուց Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 116:

39 «Պատմութիւն Շապուհի Բագրատունուց», Էջմիածին, 1921, էջ 16:

40 «Յովհաննու կաթողիկոսի Գրասխանակերտեցուց Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 295:

41 «Մովսէսի Կաղանկատուացուց Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 14:

42 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» (բնագիրն առաջարանով և ծանոթութիւններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 133:

ոտն ստուգարանեայ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն»<sup>43</sup> (Գր. Նարեկացի, X դ.):

«Եւ կալեալ զձեռնէ մանկանն, ասէ ցնա. տա՛լիթա կու՛մի, որ թարգմանի, աղջիկ դու՛ քեզ ասեմ, արի»<sup>44</sup>:

Նման շատ օրինակներ կարելի է բերել նաև մեր հին մատենագրութեան թարգմանական երկերից, օրինակ՝

«Քանզի քանանացիք՝ փոխեալ ի հայ լեզու, ամբողջութեամբ»<sup>45</sup>: (Փիլոն, Լինելութեան, հայ թարգմ. V դ.):

«Եղովմ առեալ ի հայ լեզու՝ կոչի բոցագոյն, և կամ հողեղէն»<sup>46</sup>:

Փիլոնի բոլոր հայերեն թարգմանութիւններում էլ բազմաթիւ են այդպիսի մեկնութիւնները:

Նման քաղվածքներ կարելի է բերել նաև Զենոբ Գլակի, Սերբոսի, Սահակ Չորափորեցու, Հովհ. Մամիկոնյանի, Խոսրով Անձևացու, Ուխտանեսի, Ասողիկի և այլ հեղինակների երկերից:

Նպատակ շունենալով այստեղ ցուցադրելու մեր հին մատենագրութեան մեջ հանդիպող բոլոր մեկնութիւնները, ստուգաբանութիւններն ու թարգմանութիւնները, մենք վերցրեցինք լոկ առանձին օրինակներ՝ մատենագրութեան մեջ ցրված բառարանագրական աշխատանքների մասին բնագիտութեամբ պատկերացում տալու համար: Այդպիսի բազմաթիւ օրինակներ կարելի է բերել նաև հետագա դարերի մատենագրութեանից, հատկապէս մաթեմատիկական, աստղաբաշխական, տոմարական, բժշկական և իրավաբանական երկերից: Սակայն բերված օրինակներն էլ բավական են տեսնելու, որ հնում, նախքան բառարանների հանդես գալը, բառը ուղղորդութեան կենտրոնում է, նա մեկնվում, ստուգաբանվում ու թարգմանվում է իր զորածնութեան այն միջավայրում, որտեղ անհրաժեշտ է: Վերևում բերված օրինակներում տեսանք, որ բնագրի տվյալ

43 «Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Տրփիս, 1905, էջ 335:

44 Նույն տեղում, էջ 380:

45 «Փիլոնի Երբայեցուց մնացորդ ի հայոց», Վենետիկ, 1826, էջ 314:

46 Նույն տեղում, էջ 376:

փոքր հատվածում ոչ միայն մեկ, այլև մի քանի՝ երկու, երեք և ավելի բառեր են մեկնվում կամ թարգմանվում, այսինքն հատվածը ամբողջությամբ կազմված է իրար հաջորդող մի քանի բառահոգվածներից: Այդպիսի հատվածներ հաճախ են հանդիպում Անանիա Շիրակացու մոտ, օրինակ՝ «Յազագս կշոռյ, կշոռց և կշոռրդաց» աշխատության մեջ բառարանին հատուկ սեղմ բացատրությամբ ներկայացվում է կշոռի այս կամ այն միավորը, ապա ցույց տրվում, թե տվյալ միավորը ինչպես է կոչվում հայերի, եգիպտացիների, հռոմայեցիների և այլ ազգերի մոտ, երբեմն էլ նաև բարբառային, «հասարակաց», խոսակցության մեջ:

Հունարան դպրոցի շրջանում երևան են գալիս առանձին բառեր մեկնող փոքր բառացանկերն ու փրիսոփայական սահմանումների հավաքածուները: Գրանք, իհարկե, իսկական իմաստով դեռևս բառարաններ չեն, այլ բառարանների նախատիպեր: Մինչև XI դարը ընկած ժամանակաշրջանից ձևադիր հուշարձաններով առ այսօր հայտնի են սահմանումների մի քանի հավաքածուներ և երկու բառացանկ: Եթե մի կողմ թողնենք վերջին երկուսը, որոնք Հայաստանում չեն ստեղծվել, ապա կմնան միայն սահմանումների ցանկերը, որոնք երբեմնի ամբողջական հավաքածուների կամ ուսումնական բնույթի ժողովածուների հատվածներ ու հատակոտորներ են:

Մեզ հայտնի հուշարձանները հիմնականում փրիսոփայական-աստվածաբանական բովանդակություն ունեն, նրանց մեջ զանազան հասկացություններին տրվում են սեղմ ու համառոտ սահմանումներ, որոնք բառացիորեն կամ որոշ համառոտումով քաղված են անտիկ ու վաղ թրիստոնական շրջանի փրիսոփաների, եկեղեցու հայրերի ու բնախույզների աշխատություններից, գլխավորապես Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի երկերից: Օրինակ՝ սեռ հասկացությունը ըստ Արիստոտելի սահմանված է՝ «Սեռ է, որ ի վերայ բազմաց և աննմանից իրաց, յորում գինչէն ստորոգեալ»<sup>47</sup>, ըստ Գրիգոր

Նյուսացու՝ «Յիշումն է տեսութիւն ի ներքս մնացեալ յիմերէ զգայութենէ ըստ ներգործութեան երեկեցիոյ»<sup>48</sup> և այլն:

Սահմանումների հավաքածուները բացառապես ուսումնական նշանակություն են ունեցել, նրանք օգտագործվել են սովորողների կողմից տերմինների, փրիսոփայական կատեգորիաների և այլ հասկացությունների սահմանումները սովորելու ու սերտելու համար:

Հունարենից հայերեն թարգմանված հավաքածուները կազմված են նեոպլատոնական փրիսոփայությամբ զբաղվող հեղինակների կողմից: Հայ մատենագրության մեջ այդպիսի երկերի հանդես գալը պատահական չէ, այլ կապված է Հայաստանում տիրապետող փրիսոփայական ու կրոնական գաղափարախոսությունների հետ և նրանց արտացոլումն է: Հայտնի է, որ V—VII դարերում հայ փրիսոփայության մեջ տիրապետող ուղղություն է դառնում նեոպլատոնականությունը, որի կարկառուն ներկայացուցիչն էր Գավրիթ Անհաղթը: Հայ նեոպլատոնականները թարգմանում և մեկնում էին հունական նեոպլատոնական գրականությունը, նրանց ոգով աշխատություններ էին գրում ու լայնորեն պրոպագանդում Արիստոտելի ու Պլատոնի փրիսոփայությունը քրիստոնեական գնոստիցիզմի հետ զուգակցող նեոպլատոնականության գաղափարախոսությունը: Այն ժամանակ դա համապատասխանում էր հայ-գրիգորյան կրոնի և եկեղեցու շահերին, ուստի այդ ուսմունքը բավականին լայն տարածում ունեցավ Հայաստանում, դրա շուրջը ընդարձակ գրականություն ստեղծվեց: Հայ դպրոցներում, որպես դասագրքեր օգտագործվում էին նեոպլատոնական հեղինակների աշխատություններն ու սահմանումների հավաքածուները:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի բառարանագրական հուշարձաններ են պահպանվել մեր մատենագրության մեջ՝ սկզբից մինչև XI դարն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ և ծանոթանանք այդ հուշարձանների հետ:

Մատենագրանի և արտասահմանյան այլևայլ ձեռագրա-

<sup>47</sup> «Սահմանք փրիսոփայական», «Բանբեր Մատենագրանի», № 5, 1960, էջ 378:

<sup>48</sup> Մատենագրան, ձեռ. № 6897, էջ 406ա:



տներում պահվող հայերեն ձեռագրերում հանդիպում են բա-  
նարանագրական հետևյալ զործերը.

1. Սահմանֆ փիլիսոփայականֆ,
2. Սահմանֆ իմաստասիրականֆ միջակֆ,
3. Բարոյականի եղանակի սահմանֆ,
4. Թանականի մասին սահմանֆ,
5. Մասունֆ մարմնոյ,
6. Յաղագս տնկոց (վերջին գլուխ),
7. Նիսացոյ,
8. Սահմանֆ մասանց պէսպէս շարժմանց և կրից,
9. Հայատառ հունարեն բառացանկ,
10. Լատիներեն-հայերեն գրոսարիա:

Այս ցանկի 1—7 նյութերը հետագայում մտել են XII  
դարի մատենագիր Գր. Երուսաղեմացու ընդարձակ ժողովա-  
ծուի մեջ:

Համառոտակի կանգ առնենք թվարկված նյութերի վրա:

1. Սահմանֆ փիլիսոփայականֆ<sup>49</sup>.— Սահմանումների ա-  
մենարնդարձակ հավաքածուն է: Ձեռագրերում հանդիպում է  
միշտ մեկ ուրիշ պատասխանի՝ «Ճարտասան յաղագս բնութեան»  
հետ միասին: Հավաքածուի բովանդակությունը և լեզվական  
մի շարք հանգամանքներ ցույց են տալիս, որ այն նեոպլա-  
տոնական փիլիսոփայությանը հարող մի հեղինակի զործ է  
և հունարենից հայերեն է թարգմանվել հավանաբար VI—VII  
դարերում: Նրա մեջ՝ Արիստոտելի, Պլատոնի և ստոյիկյան  
փիլիսոփաների սահմանումներով, բերվում են հետևյալ հաս-  
կացությունները. սահման, ենթագրություն, ստուգաբանություն,  
բան, անուն, յորջորջում, բայ, ստորոգում, ասում, շաղ-  
կապ, յօդ, տրամաբանություն, ձայն, գիր, սեռ, տարբերություն,  
տեսակ, յատուկ, պատահում, տարորոշում, հակառարորո-  
շում, սեռականագոյն, տեսակագոյն, ցնորում, զգայություն,  
երեսք, լսելիք, հոտոտելիք, շօշափելիք, միտք, իմացություն,  
ներմտածություն, իմացական, մակացություն, յիշում, ասո-

ղություն, ճշմարիտ, բազատորագրություն, տարակուսում, դա-  
տում, ունակություն, սուտ, հաւատ, ապացոյց, բաղխոհու-  
թիւն, թուեցում, յառաջածգում, ստորասություն, ստորասա-  
կան, հակասություն, առինչ, տրամագրություն, մարտ, ապա-  
կանություն, մարթ, կարեոր, անմարթ, բաջայայտ, անյայտ,  
արժանատրություն, յառաջածգություն, բաղդատական, լը-  
ծակցություն, եղանակ, յարացոյց, տրամաբանական, աղօթք,  
երդում, լուծում, շարագրություն, արհեստ, իմաստ(ակ)ու-  
թիւն, հոմանունություն, փաղանունություն, բաղմանունություն,  
երկբայություն, յանդիմանում, յառաջարկություն, դրություն,  
խնդիր, գիտ, վհատություն, ճարտասանական, նախագուշա-  
կում, հաւանականություն, զովություն, պարսա, թուականու-  
թիւն, երկրաչափություն, թիւ, գիծ, մակերեղծ, աստեղաբաշ-  
խություն, բժշկական, եղծում, ապականելի, մշտնջենական,  
աստուած, բախտ, շունչ, կենդանի, դէմք, ուղեղ, տարր, առա-  
քինություն, բարք, խոհեմություն, բարեփառություն, բարեբաս-  
տություն, արդարություն, բնություն, յօժարական, համեստու-  
թիւն, ձայնակցություն, արիություն, բաջություն, ժուժկալություն,  
ակնկալություն, երկիր, ցանկություն, ամբարհաւածություն,  
հպարտություն, բարի, շար, մեծանձնություն, տրամություն, ա-  
նարծաթասիրություն, մակածանօթություն, խոնարհամտություն,  
ոչբարկություն, անփորձություն, սէր, գոյություն, գոյացություն,  
թիւր<sup>50</sup>:

2. Սահմանֆ իմաստասիրականֆ միջակֆ<sup>51</sup>.— Այս հավա-  
քածուն բաղկացած է հետևյալ բառերից. ողջություն, հիվան-  
դություն, տկարություն, գեղեցկություն, տգեղություն, ցաւ, ցան-  
կական, հեշտություն, մահ, հարստություն, տնանկություն, զօ-

<sup>50</sup> Բնագրում մի շարք հասկացություններ, ինչպես՝ ձայն, սահման,  
սեռ, թիւ և այլ հանգու են դալիս մի բանի սահմանումներով, որոնք տրված  
են տարբեր փիլիսոփաների կողմից: Այդպես է նաև սահմանումների մյուս  
հավաքածուներում:

<sup>51</sup> Մատենագրան, ձեռ. № 1980, էջ 280—282: Բառացանկի բա-  
ռերը բաղված են № 1980 և № 3082 ձեռագրերից: Այդպես էլ հաջորդ բա-  
ռացանկերում՝ որպես հիմք ընդունված ձեռագրի բառերը համալրված են  
մյուս ձեռագրի այն բառերով, որոնք չկան հիմնական ձեռագրում:

<sup>49</sup> «Սահմանք փիլիսոփայականք», էջ 376—391:

րութիւն, բնաւորական, մանկութիւն, ծերութիւն, տղայութիւն, փառք, բարեփառութիւն, բարետոհմութիւն, վատազգի, ամուսնութիւն, տուն, տնաւրինական, թաղաւորութիւն, ռամկութիւն, քաղաքականութիւն, դատ, շահ, դատողականութիւն, բարիք, հրահանգ, սովորութիւն, բարոյական, բանական\* առաքինութիւն, բարբրնութիւն, ախտ, յարձակումն, տրամութիւն, ցանկութիւն, մախանք, նախանձ, պակուցումն, տազնապ, դարհուրումն, ամօթ, ահ, տուփումն, փափաքումն, ջանասիրութիւն:

3. Բարոյականի յեղանակի սահման<sup>52</sup>.—Սահմանվում են՝ բաղձալի, յարձակումն, բարկութիւն, խորհուրդ, բարի, շար, լաւ, վատթար, միջակ, առաքինութիւն, շարութիւն, իմաստութիւն, խոհականութիւն, գործ, անզգամութիւն, արդարութիւն, անիրաւութիւն, թշնամանք, ձայնակցութիւն, վախումն, առաւելութիւն, խոստովանութիւն, երագամտութիւն, կորովութիւն, բարեհոգութիւն, բարեզարդութիւն, ամաւթ, ժուժկալութիւն, քաջալերութիւն, մեծանձնութիւն, մեծավայելութիւն, փոքրանձնութիւն, ամբարհաւաճութիւն, մեխմեխութիւն, համեմատութիւն, հասարակաց բարի, զձնութիւն, երջանկութիւն, վախճան, դիտաւորութիւն, կատարումն, յորդորումն, մեղանշումն, արէն, հրաժարական, բարեպաշտութիւն, սրբութիւն, տաւն:

4. Բանականի մասին սահման<sup>53</sup>.—Ունի հետեւյալ հասկացություններն իրենց սահմանումներով.

Սկիզբն մարմնոյ, բնաւորականի սկիզբն, բարոյականի սկիզբն, բանականի սկիզբն, բնութիւն, տունկ, սկիզբն, արարչականի պատճառ, նիւթական պատճառ, յարուցական պատճառ, յարացոյց, էութիւն, դե, քաջ, դե և նիւթ և անձն, ճակատագիր, նախախնամութիւն, անհաւասարութիւն, ակամայ, բախտ, հարկ, տարր, հուր, երկիր, ջուր, ար, շարժութիւն, լինելութիւն, ապականութիւն, աճումն, նուազումն, ալլալլումն, շրջագայութիւն, ժամանակ, տիւ, ամիս, տարի, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, տեղի, մարմին, խառնումն, միաւորութիւն, աշխարհ, երկին, անմոլար գունդ, մոլար, գունդ, կենդանի, մարդ.

<sup>52</sup> Մատենադարան, ձեռ. № 3682, էջ 442բ—443բ:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 444ա—445բ:

այր, կին, արու, էգ, բանական մասն, սրտմտող մասն, ցանկական մասն:

Մասունք մարմնոյ<sup>54</sup>.—Սա հավանաբար բժշկություն և մարդակազմություն ուսումնասիրող մեկի կազմած հավաքածու է, գրված պիտի լինի մոտավորապէս VIII—IX դարերում նյութացու, նեմեսիոսի և բժշկական-բնագիտական այլ երկերի հայերեն թարգմանություններից հետո: Այս փոքր հատվածում սահմանվում են. ուղեղ, ոսկր, ջիղ, երակ, արիւն, շնչերակ, ոգի, լեարդ, սիրտ, ձեռք, ոտք, բերան, լեզու, զգայարանք, ունկն, ունչք, աչք, մարմին, մաղձ, մաղաս, սերմն և կաթն բառերը:

6. Յաղագս տնկոց, վերջին գլուխ<sup>55</sup>.—Վերնագրի երկրորդ մասը ցույց է տալիս, որ այս հավաքածուն կից է եղել մի ինչ-որ բնագիտական աշխատության և համարվել է նրա վերջին գլուխը: Մեզ հասածը մի փոքր հատակոտոր է, որն ընդգրկում է՝ տունկ, ծառ, թուփ, դալարի, սիրտ տնկոյ, պրտուլ, տերեւ, այգի, գինի, մեղր, մեղու, ձէթ և հակակայ բառերը:

7. Նիւսացոյ<sup>56</sup>.—Գր. նյութացու աշխատությունից քաղված մի քանի սահմանումների ցանկ է, որը հավանաբար կցված է եղել նյութացու երկին և նրա հետ միասին հայերեն թարգմանվել է VIII դարում: Պարունակում է. երանութիւն, սուզ, արդարութիւն, ողորմութիւն, ամաւթ, պատկառանք, սիւնելութիւն, ատելութիւն, առաքինութիւն և ողջախոհութիւն բառերն իրենց սահմանումներով: Այս հավաքածուն նախկինում հավանաբար աճելի ընդարձակ է եղել:

8. Սահմանք մասանց պէսպէս շարժմանց և կրից<sup>57</sup>.—Սահմանումների այս հավաքածուն չի մտել Երուսաղեմացու ժողովածուի մեջ, պահպանվել է Մատենադարանի № 1898 մատարում, առաջին անգամ հրատարակվել է Ֆինկի կողմից:

<sup>54</sup> Մատենադարան, ձեռ. № 3082, էջ 345բ:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 345բ—346ա:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 346ա:

<sup>57</sup> „Zeitschrift für armenische Philologie“, B. I, H. 3, Marburg, 1902, S. 215—216.

Այս ցանկը գրվել է հավանաբար մինչև XI դարը: Սրա մեջ սահմանվում են բնութիւն, երկեղ, ցանկութիւն, սրտմտութիւն, խարէութիւն, ամբարհաւածութիւն, հպարտութիւն, բարի, շար, մեծանձնութիւն, բարեբախտութիւն, խնդութիւն, արդարութիւն, անիրաւութիւն, սէր, բարեմտութիւն, մարդ, անասուն, բոյս, անուն, բան, բայ, շողկապ, ձայն, գիր, իմացական, մակացութիւն, մոռացումն, յիշումն, զգայութիւն, տարակոյս, դատումն, կարեւոր, անկարեւոր, հաւատ, ստորաստութիւն, բացասութիւն, ապացոյց, հաւանութիւն, անհաւանութիւն, վստահութիւն, հոգի, միտք, մարմին, աշխարհ, երկիր, երկին, ծով, մահ, յարութիւն, կեանք, նորոգումն հասկացութիւնները:

9. Հայտատու հունարէն բառացանկ<sup>58</sup>.— Հայ իրականութեան մեջ այս բառացանկը ամենահին և ինքնուրույն բառարանագրական նմուշն է: Այդ բառացանկի հայտնաբերման և այլ հանգամանքների մասին առաջին անգամ Հ. Տաշյանին տեղեկություններ է հաղորդել Ֆրանսիացի հայագետ Կարիերը 1892 թվականին: Բառացանկը գրված է պապիրուսի մի հնացած թերթի վրա, որը հայտնաբերվել է Եգիպտոսում և գնվել մի արարացուց: Դրանով առաջին անգամ հետաքրքրված հայագետները հավաստում են, որ պապիրուսի վրա ոչ մի հայերեն բառ չկա գրված, այլ հայերեն տառերով գրված են հունարեն առանձին, իրար հետ չկապակցվող, ինքնուրույն բառեր, որոնք իրարից բաժանված են վերջակետերով: Տաշյանը այդ պապիրուսի վրա գրված հայերեն տառաձևերի մասին հետևյալն է ասում. «Ո՛չ լիովին «միջին» երկաթագիր են ձևերը, և ո՛չ պարզ բոլորգիր, թեև ավելի գերիշխող է վերջինս: Խառնուրդ միջնույն և բոլորգրին՝ կամ անցման կոչած գրերնու տեսակեն է, շատ մը վարտուղի ձևերով ալ, ամբողջն արագագրութեան դրոշմով. բուն զլխագիր երկաթագիր չի կրնար ըսվիլ գրերեն գրեթե և ոչ մեկը»<sup>59</sup>:

Տառաձևերի մանրագնին հետազոտութեամբ Տաշյանը հանգել է այն եզրակացութեան, թե այն «Ե դարուն կրնա ըլլալ:

թեև կրնա նաև հաջորդ դարերն ըլլալ մինչև իբր Ժ դար»<sup>60</sup>: Ապա ավելի որոշակի դարձնելով այդ հուշարձանի գրութեան ժամանակը, նա գտնում է, որ բառացանկը գրված պիտի լինի նախքան արաբների կողմից Եգիպտոսի ու Ալեքսանդրիայի նվաճումը, այսինքն՝ 640 թ. առաջ, «եբր հունարենն էր տիրող բովանդակ Եգիպտոսի մեջ»<sup>61</sup>:

Պապիրուսի վրա գրված բոլոր բառերը լավ չեն կարդացվում: Եթե հայերեն թարգմանենք 11—12-րդ տողերի բառերը, ապա կունենաք՝ «...գործք, այսոքիկ, նորա, գ... (աղատորն)... ունիմք, ունիմ, ունիս, ունի<sup>62</sup>...»: Ամբողջ պապիրուսի գրութեանը 27 տող է: Տաշյանը ենթադրում է, թե դա հունական տիրապետութեան շրջանում Եգիպտոսում գտնվող հունարեն սովորող մի հայի ձեռքով է գրված. «Հոս հայտնապես կերևա սովորող մի հայի ձեռքով է գրված. «Հոս հայտնապես կերևա հունարեն սովորող մը փորձն՝ նույն լեզվով խոսքեր ու հաճախ լոկ բառեր գրել, թերևս բերնուց սորվելու համար»<sup>63</sup>:

Այս հուշարձանով հաստատվում է, իրոք, որ Հայաստանում հայտնի են եղել հունական գլոսարիաները, կազմվել են զանազան բառացանկեր, եթե ոչ ավելի վաղ, ապա, առնվազն, հունարան զպրոցի ժամանակներից սկսած:

10. Լատիներեն-հայերեն գլոսարիան (Verba seu dictiones armeniorum).— Նախորդի նման այս գլոսարիայի մասին էլ ամեն ինչ հայտնի է դարձել Ֆրանսիացի հայագետ Կարիերի՝ վերևում հիշատակված աշխատութեանից: Անցյալ դարի 80-ական թվականներին Ֆրանսիական Օտյուն մեծ սեմինարիայի գրադարանում ստացվում է մի ձեռագիր, որի վերջում գետեղված է հիշյալ լատիներեն-հայերեն գլոսարիան:

Ֆրանսիացի հնագետ Օմոնը հավաստում է, որ այդ ձեռագիրը գրված պիտի լինի IX դարի վերջերին և X դարի սկզբներին: Այդ կարծիքը պաշտպանում է նաև Կարիերը: Դա ամենահին լատիներեն-հայերեն բառարանի և ընդհանրապես ամենահին թարգմանական բառարանի նախատիպն է հայ իրա-

60 Տաշյան, նշվ. աշխ., էջ 93:

61 Նույն տեղում, էջ 96:

62 Նույն տեղում, էջ 101:

63 Նույն տեղում, էջ 97—98:

58 Տե՛ս Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 92—104:

59 Նույն տեղում, էջ 98—99:

կանության մեջ: Ընդունելով, որ ձևագրի հետ օրգանական  
ամբողջություն կազմող գլոսարիան ձևագրից ուշ գրված ու  
նրան կցված չի կարող լինել, Կարիերը նշում է միաժամանակ,  
որ ոչինչ չի խանգարի ենթադրելու, թե գլոսարիան ավելի հին  
է (rien n' empêche qu' il soit plus ancien)<sup>64</sup> և նախոր-  
դում է X դարի սկզբներին:

Ամբողջ գլոսարիան լատինատառ է: Կարիերը գտնում է,  
որ այն կազմել է մի անձնավորություն, որը հայերեն չի իմա-  
ցել, լատիներեն բառերը թարգմանել է մի հայի օգնությամբ,  
նրա բերանով (glossaire recueilli de la bouche d' un Ar-  
ménien)<sup>65</sup>, իսկ վերջինս էլ լավ չի տիրապետել այն լեզվին,  
որով հաղորդակցվել է գլոսարիայի հեղինակի հետ: Ուստի  
հեղինակն իր բնարած լատիներեն բառերի իմաստը նկարա-  
գրական եղանակով, ձեռքը իր մարմնի գանազան մասերին  
դնելով, առարկաներ մատնացույց անելով և այլ ձևերով հաս-  
կացրել է հայ մարդուն, իսկ նա էլ զրանք անվանել է հայերեն:  
Այդ պատճառով էլ մի շարք լատինական բառեր ճիշտ չեն  
հասկացվել ու փոխադրվել հայերեն, օրինակ՝ homo-անձն,  
manus-ափ, renes, coxa-անդամ, ecclesia-վանք, altare-պա-  
տարագ և այլն:

Գլոսարիան բաղկացած է 90 բառերից, որոնք այբբենա-  
կան դասավորություն չունեն, սակայն ըստ իմաստի խմբված  
են համապատասխան վերնագրերի տակ, հետևյալ կարգով.

1. Nomina dierum: dies dominica-kyrache (կիրակի),  
feria II-ergout xapte (երկուշաբթի) և այլն:

2. Nomina numeri: 1—9, 10, 20, 30, 40, 50, 60, 70,  
80, 90, 100 և 1000 թվական անունները:

3. Nomina ceterarum rerum, որոնք նշանակում են  
սննդամթերքներ, բնության առարկաներ, մարդ և մեծ մա-  
սամբ մարդու մարմնի մասեր: Օրինակ՝ panis-haz (հաց),  
vinum-chini (գինի), sal-ahl (աղ), aqua-chure (ջուր), sol-  
arechac (արեգակ), homo-anzen (անձն), oculus-hahe (աչք),

64 Կարիեր, նշվ. աշխ., էջ 8:

65 Նույն տեղում, էջ 10:

nasus-chit (քիթ), os-peran (բերան), lingua-lizu (լեզու)  
collum-vise (վիզ), genu-scunch (ծունկ), pes-uaden (ոտն):  
և այլն, ընդամենը 51 բառ:

4. Nomina sanctarum rerum, ինչպես՝ ecclesia-vanc,  
(վանք), deus-ter (տէր), crux-chahe (խաչ), presbiter-eresc  
(երէց) և այլն, ընդամենը 12 բառ:

Մի շարք լատիներեն բառեր թարգմանված են հայերեն  
ոչ թե գրական, այլ բարբառային բառերով, որոնք հանդիպում  
են մեծ մասամբ կը ճյուղի բարբառներում, ինչպես՝ լուսնկայ,  
լիզու, ծիծ, կոնակ, կնիկ, աղէկ:

Հայերեն բառերը տառադարձվել են լատիներեն այդ այ-  
բույրների հնչյունական հնարավորությունների սահմաններում,  
ոչ հետևողական կերպով: Օրինակ՝ հայերեն Գ-ն տառադարձ-  
վում է լատիներեն C-ով (հինգ-hinc), ch-ով (գինի-chini),  
Ք-ն՝ լատիներեն C-ով, k-ով, t-ով, ch-ով, և այլն:

Ավելի անհետևողական են տառադարձված հայերենի  
կիսաշփականները. Ջ-ն՝ ch, sc, z, Ջ-ն՝ ch, Ծ-ն՝ c, sc, Ճ-ն՝  
ch, Յ-ն՝ t, z, sc, Չ-ն՝ ch, kh հնչյունների միջոցով:

Չափնավորներից Ե-ն արտահայտված է e, ie, hi, ii,  
Ռ-ն՝ u, ue, ua, hua, Ի-ն՝ e, i, y հնչյուններով, Ա-ն a, ha  
և Ու-ն՝ u-ով<sup>66</sup>:

Անհրաժեշտ չենք համարում մանրամասնորեն անդա-  
դանալ տառադարձման զանազան այլ դեպքերին և նրանց  
հետ կապված անկանոնություններին, որոնք քիչ չեն և չէին  
էլ կարող քիչ լինել, երբ մի կողմից գլոսարիան կազմողները  
չեն տիրապետել կամ հայերենին կամ լատիներենին, մյուս  
կողմից էլ հայերեն բոլոր հնչյունները ճիշտ արտահայտելու  
համար լատինական այբույրները լայն հնարավորություններ չի  
բնձեռել:

Կարիերն, այնուհետև, այն միտքն է արտահայտում, թե  
գլոսարիայի լեզուն, ոչ լրիվ կերպով, մոտ է հայերենի արև-  
մբայան արտաժանություններին: Նա ճիշտ է նկատել, իրոք,  
բաղաձայնների տեղաշարժը, ինչպես նաև վերևում բերված

66 Տառադարձությունների մասին մանրամասն տե՛ս Կարիեր, էջ 18:

բարբառային բառերը հատուկ են գլխավորապես հայերենի արևմտյան բարբառներին:

Մենք ընդհանուր գծերով ուրվագծեցինք այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայ բառարանագրությունը նոր է սկզբնավորվում, աստիճանաբար ձևավորվում որպես մշակութային բնագավառ, բայց դեռևս ինքնուրույն չէ ու մատենագրության մեջ զգալի տեղ չի գրավում: Այդ շրջանին հաջորդում է մեր բառարանագրության՝ որպես մշակութային ինքնուրույն, կարևոր բնագավառ դառնալու ժամանակաշրջանը՝ սկսած X դարի վերջերից և XI դարի սկզբներից:

Գ Լ ՈՒ Ն Ե Բ Կ Բ ՈՐ Գ

### ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ XI—XV ԳԱՐԵՐՈՒՄ

Տասներորդ դարից սկսած Հայաստանում տնտեսական ու մշակութային բուռն վերելք է սկսվում: Դա արդյունք էր պետական այն անկախության, որ նվաճել էր հայ ժողովուրդը Բագրատունյաց, ապա կիլիկյան թագավորության հաստատումով: Հայաստանում գործում էին տարբեր տիպի բազմաթիվ դպրոցներ, որոնցից շատերը միջնադարի ամենաբարձր մակարդակին կանգնած խոշոր գիտական և ուսումնական հաստատություններ էին, ինչպես՝ Հաղբատի, Սանահնի, Շիրակի, Սյունյաց, Երզնկայի, Կամրջաձորի, Գլաձորի, Տաթևի և այլ դպրոցներ: Իրար հեռեկից բարձրանում էին գրչության ու մշակութային այնպիսի կարևոր կենտրոններ, ինչպես՝ Սանահնի, Հաղբատը, Երզնկան, Վանը, Մուշը, Կիլիկիայում՝ Դրազարկը, Սիսը, Տարսոնը, Սկևռան, Արքակաղինը, Ակները, Գոները և այլն:

Դպրոցներում սկսվում են կանոնավոր դասավանդվել բնագիտություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, քերականություն և այլ առարկաներ, որոնք մինչ այդ չէին ուսումնասիրվում կամ աննշան տեղ էին գրավում: Մեծ ուշադրություն էր դարձվում թվաբանության, երկրաչափության և մյուս ճշգրիտ առարկաների դասավանդմանը, անտիկ ու վաղ ֆեոդալական շրջանի հեղինակների երկերի և զանազան օտար լեզուների ուսումնասիրությանը:

Հայ մատենագրությունն անընդհատ ընդարձակվում և հարստանում էր նորանոր բնագիր ու թարգմանական երկերով: Գրչության օջախներում գրվում էին ամենատարբեր բովանդակության ու ծավալի բազմաքանակ մատյաններ: Այդ շրջանում հայ մատենագրությունը զարգանում և ընդարձակվում էր երեք հիմնական ուղղությամբ. ա) հին երկերի հավաքման, ընդօրինակման ու բազմացման, բ) գիտական ու կրոնական նոր երկերի ու թարգմանությունների, գ) դպրոցի և մանկավարժության:

Անցյալի մշակութային ժառանգության նկատմամբ արթնացող հետաքրքրությունը պատահական չէր, այլ ուղղակիորեն բխում էր ծաղկող ֆեոդալական պետության ու եկեղեցու ներքին դասակարգային ու կրոնական շահերից և նրանց համապատասխանող արտաքին քաղաքական հարաբերություններից: Վաղ քրիստոնեական շրջանի փիլիսոփաների ու եկեղեցու հայրերի, ինչպես նաև հայ հին հեղինակների աշխատությունները հզոր դադափարական գեներ էին բարձրացող ֆեոդալիզմի ձեռքին՝ աշխատավորական մասսաներին ֆեոդալական հերերախիսային հնազանդ պահելու, աղանդավորական շարժումները ճնշելու, կաթոլիկական դադափարախոսությունը հաջող հակահարված տալու և հայ-գրիգորյան կրոնի հիմքերն ամրապնդելու համար: Այդ նպատակով էլ ձեռք էին բերվում և հազարավոր օրինակներով բազմացվում այն գրեթե բոլոր երկերը, որոնք գրվել էին անցյալում: Մյուս կողմից, մատենագրությունը ծավալվում էր զարգացող գիտությունների զուգընթաց. գրվում էին բժշկական-դեղաբանական, փիլիսոփայական-մեկնողական, քերականական, մաթեմատիկական և այլ գիտություններին վերաբերող նոր աշխատություններ, օտար լեզուներից հայերեն էին թարգմանվում բազմաթիվ նոր երկեր: Վերջապես, դպրոցների և նրանցում ընդգրկված սովորողների թվի աճը, դասավանդման որակի և ուսումնական պրոցեսի կազմակերպման փոփոխումն ու բարելավումը, հատկապես դասավանդվող առարկաների ավելացումը, դպրոցի և մանկավարժության առաջ դնում էին անհրաժեշտ բովանդակության ու ծավալի ուսումնական գրականության ստեղծ-

ման հրատապ խնդիրը: Ուսումնական հաստատություններում և գրչության օջախներում, գրիչների, ուսուցիչների ու բարձրագույն դպրոցների բարձր դասընթացներում սովորող աշակերտների կողմից, գրվում էին զանազան դասագրքեր, զուցարաններ, բառարաններ, ուսումնական այլևայլ ձեռնարկներ:

Հայ մշակույթի մեջ ընդարձակվող և կարևորություն ձեռք բերող բնագավառներից մեկն էր բառարանագրությունը, մի բնագավառ, որը սերտորեն կապված է մյուս բոլոր գիտությունների ու դպրոցի հետ: Նախնիների գրական ժառանգության ուղղությամբ կատարվող բանասիրական աշխատանքի շնորհիվ երևան եկան բացատրական ու թարգմանական բնույթի առաջին բառարաններն ու բառացանկերը:

Հայ ընթերցողների համար հունական բժշկական աշխատությունների լեզուն արդեն անհասկանալի էր: Ուստի հին բժշկական-դեղաբանական երկերում, ընդօրինակությունների ժամանակ հանդիպող հունարեն տերմիններն ու բժշկական բառերը թարգմանվում և բացատրվում էին հայերեն: Սակայն այդ հին երկերը վերձանող և ընդօրինակող մարդիկ, հավատարիմ մնալով «սուրբ հարանց» երկերը ճշտությամբ գաղափարելու տրադիցիային, չէին կարող բնագրերում հանդիպող օտար բառերը թարգմանել ու մեկնել հընթացա շարադրանքի, խոսափում էին սողամիջյան ու լուսանցքային գլոսաներ անելուց: Ուստի նրանք այդ բոլոր թարգմանություններն ու գլոսաները հավաքում էին առանձին բառարանի մեջ և կցում բնագրին: Այսպես է, օրինակ, հայերեն առաջին բժշկական-բնագիտական «Բառք Գաղիանոսի» կոչվող բառարանը:

X—XIII դարերում ուժեղանում է հետաքրքրությունը դեպի քերականությունը: Աստիճանաբար դուրս գալով թրակացու քերականության սահմաններից ու հայերենի իրողությունների շուրջը կենտրոնանալով, փոխելով իր նախկին սոսկ մեկնողական բնույթը, ապաստվելով հունաբան տարրերից ու խոսակցական լեզվին մոտենալով, քերականությունն սկսում է ձևավորվել որպես ինքնուրույն գիտական բնագավառ: Պրոֆ. Գ. Զահուկյանը ցույց է տալիս, որ «XII—XIII դարերում հայ

քերականությունը ձեռք է բերում մի շարք գծեր, որոնք նախորդ շրջաններում չեն նկատվում»<sup>1</sup>:

Հայ քերականության նորոգումն ու առաջընթացն սկսվում է Գր. Մագիստրոսի գործունեությամբ: Նա մշակում է փոխառությունների ուսմունքը, կարևոր փորձեր կատարում ստուգաբանությունը գիտական հիմքերի վրա դնելու ուղղությամբ, առաջ քաշելով օտար լեզուներ իմանալու և դրանք մայրենի լեզվի հետ համեմատելու անհրաժեշտությունը: Այնուհետև, մատենագրության բուռն զարգացումը քերականական միտքն ուղղում է դեպի ուղղագրության, կետագրության և ձևագրերի գաղափարման հետ կապված այլ կոնկրետ, գործնական հարցերի լուծումը. «Այս շրջանում, — գրում է պրոֆ. Զահուկյանը, — քերականությունը համեմատաբար քիչ վերացական բնույթ ունի՝ ձեռք բերելով գործնական մեծ նշանակություն: Կիլիկիայում քերականության նկատմամբ հետաքրքրության աճը մեծ չափով բխում է հենց ձևագրերը ճիշտ վերարտադրելու, ձևագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»<sup>2</sup>: Այդ պահանջների մղումով երևան եկան «Գրչության արվեստի» աշխատությունները, որոնց մեջ մշակվում են հայերենի՝ արդեն խախտված ու խառնաշփոթության մեջ գտնվող ուղղագրության միասնականացման ու կայունացման, կետագրության և մասամբ էլ շարահյուսության հարցերը: Հենց «Գրչության արվեստի» անդրանիկ աշխատության հետ էլ լույս աշխարհ եկավ մի նոր բառարան ևս, դա հայերենի առաջին ուղղագրական բառարանն էր, որ կազմել էր XII դարի հուշակավոր գրիչ Արիստակեսը իր «Գրչության արվեստ» աշխատության մեջ:

Գլաձորի և Տաթևի համալսարաններում փիլիսոփայության դասավանդման գրվածքի բարելավման, միջնադարյան բանասիրության և փիլիսոփայության նկատմամբ հետաքրքրության ուժեղացման շնորհիվ բազմաթիվ նոր երկերի հետ

1 Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 224:

2 Նույն տեղում, էջ 225:

միասին երևան եկան նոր բառարաններ: Գլաձորի համալսարանում էլ կազմվել է «Սահմանք իմաստասիրականք» խորագիրը կրող առաջին հայերեն փիլիսոփայական-աստվածաբանական բառարանը: Օտար լեզուների ուղղությամբ սրվող ուշադրության արդյունքը եղան թարգմանական բառարանների ու գրուցարանների:

Ապա իրար հետևից հանդես են գալիս զանազան տիպի բառարաններ, որոնք վերաբերում են բանասիրությանը, փիլիսոփայություններին, ծառայում են սովորողների լեզվական գիտելիքների ու բառուպաշարի հարստացմանը, բանարվեստի կատարելագործմանը և այլ նպատակներին: Դրանք են հոմանիշների, «գովասական» կոշվող բառերի ու դարձվածների և այլ բառարաններ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ բառարանագրության զարգացումն ու ծավալումը, առհասարակ, մշակութային ընդհանուր զարգացման ու վերելքի արդյունք է: Մշակույթի ամեն մի բնագավառ իր մասնագիտական գրականության մեջ ստեղծում է նաև համապատասխան տիպի բառարան՝ որպես շատ անհրաժեշտ ու կարևոր աշխատություն տվյալ բնագավառի ուսուցման և ուսումնասիրության համար: Ուրեմն եթե XI—XV դարերի ընթացքում հայ բառարանագրության մեջ արդեն ստեղծվեցին բառարանների զանազան տիպեր, ապա դա նշանակում է, որ այդ ժամանակաշրջանում բարձր զարգացման էին հասել մշակութային համապատասխան բնագավառները: Հենց բառարանագրության առանձնահատկություններից մեկն էլ, ի տարբերություն մյուս բնագավառների, որոնք նույնպես փոխադարձորեն կապված են իրար հետ, այն է, որ նա ավելի ընդարձակ ասպարեզ ունի, գործում է ավելի լայն ոլորտում, մշակույթի բոլոր բնագավառներում էլ ճյուղեր է արձակում: Կարևոր է ասել, հետևաբար, որ XI—XV դարերի հայ բառարանագրությունը, ընդհանուր առմամբ, արտացոլում է ժամանակաշրջանի գիտության և ուսումնական գործի պատկերը:

Եթե նախորդ շրջանում, մինչև XI դարը, բառարանագրությունը սաղմնային, նախնական վիճակում էր, ապա այս

չըջանում դառնում է հայ մշակույթի ինքնուրույն և ընդարձակ բնագավառներից մեկը: Բառարանների ստեղծումը դիտվում է որպես շատ կարևոր գործ և իրականացվում մայրենի ու օտար լեզուներին լավ տիրապետող, լեզվաբանական անհրաժեշտ գիտելիքներ ունեցող մատենագիրների ու մանկավարժների կողմից: Բառարանը դառնում է հայ ընթերցողի ու դպրոցականի ամենաանհրաժեշտ ու գործածական մատչաններից մեկը:

Հայ բառարանագրությունը մինչև XIV դարի կեսերը մեծ վերելք է ապրում, անընդհատ համալրվում նոր՝ բովանդակություններ ու կառուցվածքով տարբեր բառարաններով: Այնուհետև նրա զարգացման տեմպերը թուլանում են, նոր բառարաններ քիչ են հանդես գալիս, հատկապես XV դարում: Բառարանագրական աշխատանքները XIV դարի վերջերից ընթանում են հիմնականում արզնե գոյություն ունեցող բառարանների վերարտադրության, հին բառարանները զանազան ձևերով իրար միացնելու, նրանց բառերից նոր բառարաններ կազմելու և խմբագրումներ կատարելու ուղղությամբ: Ընդ որում, ընկնում է նաև բառարանների որակը. ընդօրինակությունների ժամանակ գրիչների կողմից կամայական ավելացումներ են կատարվում բառարաններում, սխալ ընթերցանության կամ շատ բառերի, հատկապես օտար, իմաստը չհասկանալու և յուրովի մեկնելու, ինչպես նաև գրչագրական վրիպումների, աղճատումների, բացթողումների պատճառով հին բառարանների շատ բառերի մեկնությունը դառնում է սխալ, երբեմն էլ անհասկանալի: Բառարանները հաճախ ընդօրինակվում էին ոչ թե հմուտ, այլ տգետ գրիչների կողմից:

Թուլացումն ու վայրէջքը, որ սկսվում է XIV դարի կեսերից, ընդհուպ մինչև XVII դարը, հատուկ են ոչ միայն բառարանագրությանը, այլ ամբողջ հայ մատենագրությանը: Դա էլ արդյունք էր տնտեսական ու քաղաքական այն վատթար վիճակի, որի մեջ ընկել էր հայ ժողովուրդը Բագրատունիների, իսկ հետո՝ կիրիկյան հայկական թագավորությունների անկումից հետո:

Սակայն մեծ կորուստներ կրելով ու զարգացման նախկին

հնարավորություններից զրկվելով, հայ մատենագրությունը, այնուամենայնիվ, պահպանեց իր գոյությունը: Սելջուկ-մոնղոլական և թուրքմեն-օսմանական բարբարոսական հրոսակների կողմից ոտնակոխ արված Հայաստանի առանձին անկյուններում՝ Սյունիքում, Արցախում, Ուտիքում, Գուգարքում, որտեղ հարմար աշխարհագրական դիրքի և այլ հանգամանքների բերումով համեմատաբար բարվոք էր գրությունը, դեռևս բոցկլտում էին հայ մշակույթի առանձին օջախներ: Այդ վայրերում զրվել են բազմաթիվ արժեքավոր բառարանագրական գործեր, հատկապես բազմալեզվյան բառարաններ, որոնցից մեզ քիչ բան է հասել:

Բառարանագրության այս շրջանին բնորոշ են հետևյալ հիմնական գծերը.

1. Երևան են գալիս բառարաններ, որոնց մեջ բառերը զասավորված են ալբերենական կարգով: Փորձեր են կատարվում բառարանների կառուցվածքը կատարելագործելու, նրանցից օգտվելը զուրացնելու ուղղությամբ:

2. Ստեղծվում են զանազան տիպի՝ բացատրական, ուղղագրական, մասնագիտական, թարգմանական և այլ բառարաններ, բառացանկեր ու զրուցարաններ:

3. Եթե նախորդ շրջանի փոքր բառացանկերը միայն ուսումնական նշանակություն ունեին, ապա այս շրջանում, բառարանագրությունն անհամեմատ ավելի լայն մասշտաբներով կատարելով իր այդ նախկին խնդիրը, միաժամանակ ծառայում է բանասիրությանն ու գրեթե բոլոր գիտական բնագավառներին:

4. Բառարանները փոքր են ծավալով, չեն արտացոլում լեզվի ամբողջ բառային կազմը, գիտությունների տարբեր ճյուղերի մասնագիտական բառապաշարն ու տերմինաբանությունը:

5. Բառարանագրությունը շունի ժամանակակից իմաստն ու դերը, լեզվաբանական մյուս բնագավառների հետ սերտորեն շաղկապված չէ, չի զրված իսկական գիտական հիմքերի վրա:



6. Բառարանագրությունը դառնում է մշակույթի կարևոր և ընդարձակ բնագավառներից մեկը:

\* \* \*

Բառարաններ բովանդակող հայերեն ամենահին ձեռագիրը Զմմառի վանքի № 204 (հին համարը՝ 83) ժողովածուն է, որի մի մասը գրված է ՇՀԲ (1123), իսկ մյուսը՝ ՈՒԷ (1178) թվականին, Դրազարկի վանքում (հավանաբար և այլուր)<sup>3</sup>: Բառարաններ ունի Փարիզի ազգային գրադարանի № 302 հայերեն ձեռագիր ժողովածուն, որը գրված է Տաթևի վանքում, 1282 թվականին<sup>4</sup>: Բառարանագրական հնագույն հուշարձաններ են նաև Մատենադարանի № 5596 և № 4149 ձեռագիր ժողովածուները: Առաջինը թվակիր չէ և վերագրվում է XII—XIII դարերին, իսկ երկրորդը ընդօրինակված է ՉԾԳ—Դ (1304—1305) թվականներին Երզնկայում: Այդ ձեռագրերում գետեղված են երկու տասնյակից ավելի հին բառարաններ, որոնք հանդիպում են հետագա ժամանակների բազմաթիվ ձեռագրերում:

Մատենադարանի բառարաններ պարունակող ձեռագրերից 31-ը գրված են մինչև XVI դարը: Այդ ձեռագրերն ըստ ընդօրինակման ժամանակների (դարերի) բաշխվում են հետևյալ քանակներով.

ԺԲ դար — 1

ԺԳ դար — 1

ԺԴ դար — 15

ԺԵ դար — 14

Հին բառարաններն ու բառացանկերը այս կամ այն աշխատությանը ծառայող, սպասարկու երկասիրություններ էին և ոչ թե ինքնուրույն գոյություն ունեցող ստեղծված գործեր: Նրանք կցվում էին առանձին աշխատությունների և երբեմն համարվում էին նրանց գլուխներից մեկը: Այդ պատճառով էլ շատ ձեռագիր բառարանների ստեղծման ստույգ ժա-

<sup>3</sup> Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեսրոպ վրդ. Քեչիշյան, Վիեննա, 1964, էջ 486—495:

<sup>4</sup> Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la bibliothèque Nationale par Frédéric Macler, Paris, 1908, p. 154—155.

մանակը, հեղինակը, գրչության վայրը և այլ հանդամանքներ հայտնի չեն: Հետագայում բնագրերին առընթեր բառացանկերն ու բառարաններն անջատվելով համապատասխան բնագրերից, միացվում էին ուրիշ բնագրերի կամ մտնում ժողովածուների մեջ, որպես անհայտ հեղինակների ու ժամանակների գործեր:

Հին բառարանների նախագաղափար օրինակները, մեծ մասամբ, մեզ չեն հասել: Պահպանվել են նրանց փոփոխությունների ենթարկված ընդօրինակություններն ու խմբագրությունները, որոնք բառաքննական և այլ տեսակետներից նպատակասլաց բանասիրական աշխատանքի հնարավորություններ չեն ընձեռում: Մենք կարող ենք գտնել այդ բառարանների աղբյուրները, պարզել, թե որ երկերին են նրանք պատկանում, բայց չենք կարող ասել, թե ում կողմից են կազմված և երբ: Մի շարք բառարաններ («Բառք Փիլոնի», «Բառք քերականին», «Սահմանք իմաստասիրականք» և այլն) հին երկերին կից՝ գլոսաների ու սահմանումների հավաքածուներ են: Բառարան կազմողը ոչ թե ինքն է մեկնում բառերը, այլ նա բնագրերի շարադրանքում արդեն պատրաստի գլոսաներն ու սահմանումները հավաքում է մի ցանկի մեջ: Այդ պատճառով, բառարանում արտացոլվում է ոչ թե բառարանը կազմողի, այլ բառարանի աղբյուր ծառայած աշխատության հեղինակի լեզուն՝ անկախ այն բանից, թե որ դարում և ում կողմից է կազմվել բառարանը:

Բառարանագրական հուշարձանների հետագա ավելի մանրախույզ հետազոտությունները, ինչպես նաև նորահայտ աղբյուրները, անկասկած, նոր տեղեկություններ կտան հայ միջնադարյան բառարանագրության և առանձին բառարանների մասին, հնարավորություն կտան պարզարանելու ու ճշգրտելու առայժմ չլուծված ու վիճելի բազմաթիվ հարցեր:

\* \* \*

Հայ մատենագրություն է ընդհանրապես միջնադարյան բառարանների հիմնական աղբյուրը: Բառարանները առաջին հերթին վերաբերում են թարգմանական երկերին՝ թրակացու

քերականությանը, փիլոսոփիա աշխատություններին և այլն: Բա-  
նարանները կազմվում էին սովորաբար մատենագրության  
այնպիսի երկերին կից, որոնք լայն տարածում ունեին Հա-  
յաստանում, հնուց ի վեր ընդօրինակվում, ուսումնասիրվում  
և օգտագործվում էին դպրոցներում: Այդպիսի երկերից են,  
օրինակ, Քրակացու քերականությունը և նրա մեկնությունն-  
երը, Արխատտելի, Գր. Նյուսացու, Փիլոսոփի, Ոսկեքերանի,  
Եփրեմի և այլ հայտնի ու անհայտ հեղինակների երկերը, հե-  
տագայում նաև հայ մատենագիրների աշխատությունները:

Բնական է, որ թարգմանական երկերի ուղղությանը շատ  
բառարաններ պիտի ստեղծվեին, որովհետև նրանց մեջ ավելի  
շատ էին հայ ընթերցողին անհասկանալի բառերը՝ թարգման-  
վող օտար լեզուներից նույնությանը վերցված այն բառերը,  
որոնք չունեին իրենց հայերեն համարժեքները, տերմինները,  
պատճենումները և այլն: Այդպես էր նաև ուրիշ ժողովուրդ-  
ների հին բառարանագրության մեջ, օրինակ՝ ռուսական հին  
բառարանների մասին խոսելիս Ա. Պիպինը նշում է, որ հին  
բառերի բացատրությանը նվիրված ազրուկովնիկները ավելի  
շատ են «թարգմանական, քան բնագիր սլավոնա-ռուսական  
գրականության բնագավառում»<sup>5</sup>:

Ոչ թարգմանական երկերին նվիրված բառարաններն ա-  
վելի քիչ են և հանդես են գալիս XIII—XIV դարերից սկսած:

Հայ մատենագրության մեջ բառագիր կամ բառգիր  
բառերը վկայվում են XIII դարից. Հովհ. Երզնկացու մոտ՝ «ի  
բառագրոցն Ընստակիսի», «յԸնստակիսի բառագրոցն բա-  
ղեալ», Ոսկեփորիկում՝ «ի բառի գիրքն» և այլ բնագրերում,  
իսկ բառարան-ը ավելի ուշ է գործածության մեջ մտնում: Բա-  
նարանները պարզապես վերնագրվել են՝ բառք, և այս բառը  
հարմար անվանումն էր հին շրջանի, հատկապես X դարից  
առաջ եղած բառարանագրական գործերի, որոնք ոչ թե բա-  
նարաններ էին իսկական իմաստով, այլ խառը, ոչ այբբենա-  
կան կարգով դասավորված առանձին բառերի ցանկեր էին.

զանազան գլոսաների փոքր հավաքածուներ: Հետագայում այդ  
բառք անունը, որ արդեն նշանակում էր բառարան, ավանդա-  
բար տրվում էր նաև առավել ծավալուն ու բառերի այբբենա-  
կան սկզբունքով կազմված բառարաններին:

Հայերեն ձեռագրերում բառարանները սովորաբար հան-  
դես են գալիս «բառք», «այս բառք», «լուծումն բառից», «գու-  
մարումն բառից», «հաւաքումն բառից», «մեկնութիւն բառից»,  
«թարգմանութիւն բառից» և այլ բառերի օգնությամբ կազմված  
վերնագրերով՝ «Բառք լուծարէն», «Բառք քերականին», «Բառք  
զովասականը», «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Մեկնու-  
թիւն պարսիկ բառի ի վարդան գրոց», «Թարգմանութիւն դե-  
զոց» և այլն: Կան բառարաններ, որոնց վերնագրերը ուղղա-  
կի ցույց են տալիս, որ տվյալ բառարանը նախկինում եղել է  
մի ինչ-որ աշխատության վերջին գլուխը, շնչելով այդ աշխա-  
տության անունը: Օրինակ՝ «Թարգմանութիւն դեզոց» վերնա-  
գիրն ունեցող բառարաններից մեկը եղել է Գագիկ-Տեթումյան  
բժշկարանի ԼԵ գլուխը, «Յաղագս տնկոց, վերջին գլուխ» բա-  
ռացանկը՝ մի ինչ-որ բնագիտական աշխատության վերջին  
գլուխը, վեց գլուխներից բաղկացած մի աշխատության բա-  
ռերն է բացատրել «Եւթներորդ գլուխ գրոցս» կոչվող բառա-  
րանը: Փամանակի ընթացքում բառարանների վերնագրերը  
նույնպես բազմապիսի փոփոխությունների են ենթարկվել՝ ըն-  
դարձակվել են, համառոտվել, մեկը մյուսի հետ շփոթվել և  
այլն:

\* \* \*

Հայերեն ձեռագիր բառարանները աչքի են ընկնում իրենց  
տեսակների բազմազանությամբ: Միջնադարյան Հայաստա-  
նում ստեղծվել են արդի գրեթե բոլոր բառարանների փոքրա-  
ծավալ, պարզ ու հասարակ նախատիպերը: Դրանք ըստ տի-  
պերի դասակարգելուց առաջ անհրաժեշտ է բաժանել երկու  
խմբի՝ ըստ նրանց մատենական վերաբերության: Առաջին  
խմբի մեջ պետք է դասել այն բոլոր բառարանները, որոնք  
վերաբերում են միայն մի որևէ աշխատության կամ հեղի-

<sup>5</sup> А. Н. Пыпин, История русской литературы, т. I, С.-Петербург, 1898, стр. 273.

նակի: Գրանք համեմատաբար փոքր բառարաններ ու բառացանկեր են, որոնց նպատակը միայն մի որոշակի երկրի կամ որևէ հեղինակի աշխատությունների մեջ հանդիպող բառերի ու ոճերի բացատրությունն է: Այդպիսի բառարանները հարմար է անվանել մատենակից բառարաններ: Այդ խմբին են պատկանում «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Բառք Երբայեցոց», «Բառք Փիլոնի» և այլ բառարաններ:

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն բոլոր բառարաններն ու բառացանկերը, որոնք մի որոշակի աշխատության շին պատկանում, անկախ են և ընդհանուր նշանակություն ունեն: Ըստ տեսակների այս խմբի բառարաններն ավելի բազմազան են, ծավալով ընդարձակ և բառերի դասավորությամբ ավելի կանոնավոր: Առաջին խմբի բառարանները համեմատաբար ավելի հին ծագում ունեն, մինչդեռ երկրորդ խմբի բառարանները հանդես են գալիս X դարից հետո, դրանք գերազանցապես դպրոցական-ուսումնական նշանակություն ունեն: Երկրորդ խմբից կարելի է հիշատակել Արիստակեսի ուղղագրական բառարանը, Զաքարիա գրչի բացատրական բառարանը, արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարանը, «Բառք քերթողականը», «Բառք գովասականը», «Հանդէս բանաստեղծաց», «Սահմանք իմաստասիրականը» և ուրիշ բառարաններ:

Ըստ տեսակների միջնադարյան բառարանները լինում են.

1. Բացատրական բառարաններ, որտեղ մեկնվում ու բացատրվում են հայերեն առանձին բառեր, ոճեր ու դարձվածներ, մասամբ էլ գրական և խոսակցական լեզվի մեջ զործավող օտար բառեր: Բացատրական բնույթ ունեն, օրինակ, «Բառք քերթողականը», «Բառք խորանին», «Բառք Փիլոնի», Զաքարիա գրչի բառարանը, «Բառք յունարէն» և այլն: Բացատրական է «բառք» վերնագրված բառարանների մեծ մասը: Այդպիսի բառարանները հնագույն ծագում ունեն: Հայերեն ամենահին բացատրական բառարանը «Բառք յունարէն» բառարանն է:

2. Քարգմանական 'բառարաններ' «Բառք Երբայեցոց», Կիրակոս Գանձակեցու հայերեն-մոնղոլերեն բառացանկը, արաբերեն-պարսկերեն-հայերեն, հայերեն-լատիներեն-արաբերեն բժշկական բառարանները: Այդ բառարաններում օտար լեզուների բառերը թարգմանվում են հայերեն կամ ընդհանրապես՝ հայերենից այլ լեզուների: Քարգմանական բառարանները նույնպես հին ծագում ունեն, մեծ մասամբ երկլեզվյան են, եռլեզվյան բառարանները հայերենը հանդես են գալիս XIV դարից սկսած: Մինչև XVI դարը մեզ հայտնի թարգմանական բառարաններով հայերեն լեզուն կապվում է հունարեն, երբայերեն, պարսկերեն, արաբերեն, լատիներեն, մոնղոլերեն և թուրքերեն լեզուների հետ: Քարգմանական բոլոր բառարաններում էլ թարգմանվող օտար բառերը գրվում են հայերեն տառերով ու տառադարձությամբ: Հայերեն ամենաընդարձակ թարգմանական բազմալեզվյան բառարանը XV դարի հայտնի թարգմանական բազմալեզվյան բառարանը XV դարի հայտնի բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» բառարանն է, որի մեջ բառերը մեկնվում են հայերեն, արաբերեն, լատիներեն, հունարեն, պարսկերեն և թուրքերեն լեզուներով:

3. Ուղղագրական՝ Արիստակեսի ուղղագրական բառարանը:

4. Հոմանիչների՝ «Հանդէս բանաստեղծաց»:

5. Բառա-դարձվածային՝ «Բառք գովասականը», «Բառք գովասականը վասն տղայոց ուսման» և այլն: Սրանք բաժանվում են երկու խմբի. ա) բառարաններ, որոնք կազմված են գերազանցապես առանձին բառերից՝ առանց մեկնությունների, դրանք բառամատույց բառարաններ են, բ) բանամատույց բառարաններ, որոնց մեջ գերակշռում են ոչ թե առանձին, միայնակ բառերը, այլ երկու, երեք և ավելի բառերից կառուցված դարձվածներն ու ոճերը: Այս կարգի բառարաններն ավելի շատ են, պահպանվել են մի շարք գրչագրերով, կրում են «Բառք գովասականը» վերնագիրը, ավելի ուշ են հանդես գալիս, քան բառամատույց բառարանները, մոտավորապես՝ XIII դարի կեսերից:

Բառա-դարձվածային բառարանները մեկնություններ ու բացատրություններ չեն տալիս, այլ միայն ներկայացնում են բառերն ու դարձվածները: Այսպիսի բառարանները գերազանցապես դպրոցական-վարժական նշանակություն ունեն. աշա-

կերտները նրանց օգնությունը սովորել են հանդիսավոր, վերամբարձ ոճին հատուկ բառերն ու պատրաստի դարձվածները, հմտացել են ներբողական-գրվատական բանարվեստի ուղղությունը:

6. Հատուկ անունների՝ «Բառք երբայցուց», որի մեջ բացատրվում են Սուրբ գրքի երբայական հատուկ անունները:

7. Սանձանումների՝ «Սահմանք իմաստասիրականք» բառարանը և զանազան ցանկեր: Դրանց մեջ տրվում են փիլիսոփայական ու աստվածաբանական հասկացությունների համառոտ սահմանումները: Օրինակ՝ «Բառք քերթողականք»-ը մտնում է մեկնում է որպես կոթիվ, մինչդեռ «Սահմանք իմաստասիրականք»-ում այդ նույն բառը սահմանվում է այսպես՝ «Մտն է ընդդիմադրություն էից, որոց և ոչ բայ միոյ եղանակի է հնար ճշմարտակից լինել կամ ստակից, որպէս տիւ և գիշեր»<sup>6</sup>:

8. Մասնագիտական՝ «Բառք քերականին», «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Թարգմանութիւն զեզոց» և այլն:

9. Բարբառային, գավառական բառարաններ: Որոշ իմաստով այդպիսի բառարաններ են «Բառք քերթողականք», «Բառք Փիլոնի» և այլ բառարաններ:

10. Ուսումնա-վարժական բնույթի զանազան մանր ցանկեր: Ուշագրություն արժանի են բանարվեստին և համարողական արվեստին վերաբերող ցանկերը, որոնց մեջ այբուբենի յուրաքանչյուր տառով մեկ կամ մի քանի բառ կամ դարձված է բերվում:

Ահա բառարանների այն հիմնական տեսակները, որոնք, բայտ ձևագիր հուշարձանների, հայտնի են մինչև XVI դարը: Անշուշտ, գոյություն են ունեցել նաև այլ տիպի բառարաններ, որոնք չեն պահպանվել:

Հայերեն միջնադարյան բառարաններում բառերի այբբենական դասավորությունը սկսվում է X դարի վերջերին և XI դարի սկզբներին: Այբբենական սկզբունքով կառուցված մեզ հայտնի հայերեն հնագույն բառարանը «Բառք Գաղիանոսի

բժշկապետի» բառարանն է: Սակայն բառերի այբբենական դասավորումը, ընդհուպ մինչև XVII դարի վերջերը, զեռես անկատար է. բառացանկերը, որոնք ձևագրերում առև կամ համաշարում են կոչվում, բառերի կանոնավոր ու լրիվ այբբենական դասավորումը չեն կառուցված, այլ նրանցում բառերը դասավորված են միայն իրենց սկզբնատառերի համաձայն: Ստացվում է, հետևաբար, որ հայերեն այբուբենի տառերի հաջորդականությունը դասավորված են միայն բառացանկերը, իսկ նրանց մեջ, միևնույն տառով սկսվող գլխաբառերը, այբբենական դասավորություն չունեն, որովհետև քվդրնատառին հաջորդող մյուս տառերը հաշվի չեն առնվում: Օրինակ՝ «Բառք Գաղիանոսի» բառարանից.

Բակշատլ. համկենայ, փալփալնահին, որ է խոճկորակ:

Բիկոս. վիզն:

Բալբալա. հաւամիրգ:

Բաղատրոն. նոան ծաղիկ:

Բոնիկարէն. բորակ:

Բազդ. դառն նուշ:

Բդելիայ. մուկ կամ քարախունկ...<sup>7</sup>:

Մինչդեռ լրիվ այբբենական դասավորության դեպքում այս հատվածում բերված գլխաբառերը պետք է ունենային բազդ, բալբալա, բակշատլ, բաղատրոն, բդելիայ, բիկոս, բոնիկարէն հաջորդականությունը:

Հետագայում, XIII դարից սկսած, նկատվում է բառերի դասավորության որոշ բարելավում: Հետևենք, օրինակ, «Բառք քերթողականք» բառարանի կառուցվածքին: Այդ բառարանում նույնպես բառերի լիարժեք այբբենական դասավորություն գոյություն չունի, սակայն բառարանը կառուցվածքով զգալիորեն տարբերվում է իրեն նախորդող բառարաններից: Նրա մեջ, ոչ հետևողական կերպով, հաշվի են առնված նաև բառասկզբի 2-րդ, 3-րդ և նույնիսկ ավելի տառեր: Բառացանկի մեջ նույնատառ սկիզբ ունեցող բառերը խմբավորվում, կենարոնացվում են մի հատվածում: Օրինակ՝

<sup>6</sup> «Սահմանք փիլիսոփայականք», էջ 354:

<sup>7</sup> Կատենագրան, ձեռ. N 7117, էջ 83բ:

Բաղել. պատել:

Բաղիստր. խոցոտիչ:

Բաղբանական. կենդանական կամ գործական:

Բաղբաղել. պատճառել կամ յարարարդել:

Բաղայեղծ. ստայեղծ... և այլն<sup>8</sup>:

Այդ բառացանկի բարեօրաս գլխաբառից հետո գալիս են բաղ-ով, բաց-ով, ապա՝ բե, բան, բառ և այլ տառակապակցություններով սկսվող բառերի շարքերը:

Ինչպես տեսնում ենք, բառերի այդպիսի դասավորության ղեկավարում էլ միօրինակություն գոյություն չունի՝ նույնատառ սկիզբ ունեցող ոչ բոլոր բառերն են կենտրոնացվում բառացանկի մի որևէ մասում, այլ փոքր ու մեծ խմբերով հանդիպում են տարբեր տեղերում: Անկանոնությունները շատ են հատկապես բառացանկերի վերջին մասերում, իսկ դա էլ հետևանք է այն բանի, որ բառարաններում հետագա ավելացվող և բնօրինակությունների ժամանակ բաց թողված բառերը գրվում էին համապատասխան բառացանկերի վերջում՝ բառաշարքի վերջին բառից հետո:

Նույնատառ սկիզբ ունեցող բառերը բառացանկի մի հատվածում խմբավորելու փորձը բավականին լայն կիրառում է ունեցել միջնադարյան հայ բառարանագրության մեջ: Հետաքրքիր է, որ բառացանկում որոնելի բառը հեշտությամբ գրտնելու համար, նույնատառ սկիզբ ունեցող բառերի խմբերը նշվել են առանձին տառերի ու նշանների միջոցով. լուսանցքում բառախմբի առաջին գլխաբառի դիմաց գրվել է այդ գլխաբառի երկրորդ տառը՝ վերևից և ներքևից աճնվելով զուգահեռ հորիզոնական գծիկների (փակագծերի) մեջ:

խ Ախրնթոր. անպիտան:

Ախորժել. կազմել:

Ախմախ. բազմութիւն ընչից:

Ախտակ. գնացք:

գ Ագաբս. սէր:

գ Ագդր. անդամն:

<sup>8</sup> Մատենագարան, ձեռ. № 4149, էջ 287բ:

Ազագուն. նուստ կամ ցամաք կամ դեղնած:

Ազբանագ. հովանացեալ...<sup>9</sup>:

Լուսանցքում նշված Խ, Գ, Զ տառերը գլխաբառերի սկզբի երկրորդ տառերն են: Լուսանցքներում կան նաև համարակալումներ. «Հանդէս բանաստեղծաց» բառարանում հոմանշային խմբերի գլխաբառերի դիմաց կան նշումներ, որոնք ցույց են տալիս հոմանիշ բառերի տվյալ խմբի (բառահոգվածի) հաջորդական կարգը բառարանում: Այսպես՝

ծա. Հաշտ, համբոյր, խաղաղ, զուտ, հեղ, հանդարտ, հալան, անքոյթ, հանգիստ:

ծբ. Սուրբ, պարզ, յստակ, մաքուր, վճիտ, ընտիր, ականակիտ, ջինջ, մեկին, անապական, անխառն, սորեկ, ամբիծ, զուտ, արդար:

ծգ. Ել, գոլ, եղանել, լինել, եալ, եղևալ<sup>10</sup>:

Բառահոգվածների այդպիսի համարակալումը պայմանավորված է բառարանի բնույթով ու յուրահատուկ կառուցվածքով. շատ ձեռագրերում, որտեղ «Հանդէս բանաստեղծաց»-ի հոգվածները համարակալված չեն, բառերը խառնված են, անցնելով մի բառահոգվածից մյուսին: Բառացանկի մեջ բառախմբերի կամ բառահոգվածների առանձնացումը, նշումը լուսանցքներում՝ առանձին տառերի ու նշանների միջոցով, ակնառու կերպով ցույց է տալիս, որ միջնադարյան բառարանագիրները, շմտածելով բառերի լրիվ այբբենական դասավորության մասին, այնուամենայնիվ, լրջորեն մտահոգված են եղել բառարանների կառուցվածքը կատարելագործելու, բառարաններից օգտվելը դյուրացնելու ուղղությամբ:

Սակայն, միջնադարյան բառարանները դեռևս հնարավորություն չեն տալիս հեշտությամբ և արագ գտնելու որոնելի բառը: Եվ եթե դրան ավելացնենք այն, որ գրչագրերում, հատկապես միասյուն գրված, հաճախ բոլոր գլխաբառերը նոր տողից չեն գրվում, այլ շարունակվում են նույն տողում՝ նախորդի բացատրությունից անմիջապես հետո, առանց բառան-

<sup>9</sup> Մատենագարան, ձեռ. № 7117, էջ 64ա:

<sup>10</sup> Մատենագարան, ձեռ. № 8198, էջ 56բ:

չատման, երբեմն էլ գլխաբանն առանց մեծատառով սկսելու, ապա հին բառարաններից օգտվելու տեխնիկական դժվարությունն ավելի հասկանալի կդառնա: Բառացանկերում նույնատառ սկիզբներով բառերի խմբավորումը, լուսանցանշումները զգալիորեն օգնում են շուտ կողմնորոշվելուն, բայց, այնուամենայնիվ, հին բառարաններն օգտագործելը դժվար է, որոնելի բառը պետք է փնտրել ամբողջ բառացանկում:

Բառարաններից շատերը հայերեն այբուբենի բոլոր տառերով բառեր չունեն: Հունարեն, ասորերեն և այլ լեզուներից թարգմանված աշխատություններին վերաբերող բառարաններում, բառեր կան միայն այն տառերով, որոնց համարժեքները կան համապատասխան լեզուների այբուբեններում: Այդ պատճառով էլ շատ բառարաններ՝ Յ, Մ, Ձ, Ը, Ծ, Զ, Զ, Յ տառերով բառեր չունեն, օրինակ՝ «Բառք Գաղիանոսի»-ն բառեր չունի Լ, Ժ, Մ, Ձ, Ը, Ծ, Զ, Յ տառերով, որովհետև նրա մեջ բերվող բառերը հունարեն են՝ գրված հայերեն տառերով:

Հին բառարանների բառահոգվածները նման չեն ժամանակակից բառահոգվածներին, որոնք բառի իմաստաբանական, քերականական ու շարահյուսական բազմակողմանի բնութագրության, ոճա-դարձվածային բոլոր արժեքների ու դրսևորումների բացահայտման ու ցուցադրման ամբողջություն են: Մինչդեռ հին բառարաններում գլխաբառը, որ զըրվում է իր ուղիղ կամ թեքված որևէ ձևով, ուղեկցվում է հիմնականում մեկ բացատրող բառով, իսկ հղումները, ցուցադրումները և արդի բառահոգվածին հատուկ այլ տարրերը գոյություն չունեն: Բառը մեկնել համառոտ, նրա իմաստը բացահայտելու, հասկանալի դարձնելու համար: Ահա միջնադարյան բառարանի խնդիրը: Վերցնենք, օրինակ, հետևյալ հատվածը «Բառք քերթողականք» բառարանից.

Գեղձումն. բաղձումն:

Գեթսուր. ձգեալ:

Գեղջուկ. շինական:

Գեղարէ. վրիպէ:

Գեղզեղ. հոլովումն:

Գինեճան. արբեցող:

Գիտակակցեալ. տեսեալ

կամ կցորդել:

Գիլ. վիրգ:

Գիտակակից. խորհրդակից:

Գիհանք. վարձկանք:

Գիտակք. ճանաչող զամենայն:

Գոհճ. ճանապարհ կամ փողոց կամ շուկա:

Գղնի. հայ:

Գոհճիկ. աշխարհական կամ շինական:

Գծատրութիւն. կերպարն կամ նկարագիր:

Գժդմիլ. խոժոռուկ:

Գձուձ. նուստ կամ փոքր:

Գղիր. խոշ:

Գրատք. վերնազգեստք:

Գրահամ. համեստ:

Գղրել. խոշորել:

Գո՛գ. ասա՛:

Գեղաղէշ. հրաշագեղ...<sup>11</sup>:

Այսպես են մեկնվում բառերը միջնադարյան բացատրական բառարաններում: Գլխաբառը բացատրվում է.

1. Մեկ հոմանիշի օգնությամբ՝ բառ-մեկնություն, ինչպես՝ «գեղջուկ-շինական», «գինեճան-արբեցող» և այլն.

2. Երկու և ավելի բառերի օգնությամբ, որոնք միանում են «կամ» շաղկապով՝ «Գոհճիկ. աշխարհական կամ շինական», «Գեղապարել. գեղեցիկ նուագել կամ խնդալ» և այլն:

3. Մասնավոր դեպքերում հանդիպում են առանձին գլխաբառերի ընդարձակ, ձգձգված, նկարագրական բնույթ ունեցող մեկնություններ: Բառ-մեկնության օգնությամբ դրսևորվում է, գերազանցապես, գլխաբառի հիմնական իմաստը, մի կողմ են թողնվում երկրորդական, ածանցական իմաստները, փոխաբերական, փոխանուն գործածությունները և իմաստային զանազան նրբերանգները: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ ընդհակառակը, բառի հիմնական իմաստի փոխարեն բացահայտվում է նրա իմաստային այս կամ այն գործածությունը: Այդ վերաբերում է հատկապես բնագրերին առնթեր՝ մատենակից բառարաններին, որոնց մեջ բառը բացատրվում է տվյալ բնագրում ունեցած իր կոնկրետ գործածության տեսակետից Օրինակ, ունենք՝ աշակերտ — լսող, խնշոյֆ — բազմուրիւն, արգասաւոր — գովեալ, գնդակ — խնձոր, զինտոր — հեծեալ, աղուէս — նենգ կամ ռխակալ, աղմուկ — ամբոխ խոսվեալ և այլն:

<sup>11</sup> Մատենադարան, ձեռ. 4149, էջ 291բ:

Հաճախ օտար բառերը մեկնվում են ոչ թե հայերեն, այլ օտար բառերի միջոցով: Այդպիսի մեկնությունները հատուկ են գլխավորապես բժշկական-դեղաբանական բառարաններին, որոնց մեջ արաբերեն և հունարեն բժշկական բառերի դիմաց որպես մեկնություն դրվում են արաբական կամ հունական ուրիշ բառեր: Դրանք այնպիսի օտար բառեր են, որոնք լայն ճանաչում ու գործածություն ունենին հայ բժշկական գրականության մեջ ու խոսակցական լեզվում: Օրինակ, «Բառք Գաղիանոսի» բառարանում բոքմ (բտումի), կաոն (կաոան), համիմ (համահիմ), լեղինջ, բգրկատուն, աշակ, մուկլ, մշմիշ, կղմուխ և այլ գլխաբառեր մեկնված են համապատասխան արաբերեն բառերի միջոցով:

Սահմանումների բառարաններում գլխաբառերը սահմանվում են ոչ թե բառարանը կազմողի կողմից, այլ բառացիորեն կամ համառոտ վերարտադրությամբ քաղված են փիլիսոփայական, աստվածաբանական և բնագիտական զանազան երկերից, որոնց հեղինակները բառերը սահմանել են իրենց աշխարհայացքին, հասարակական-քաղաքական, համոզմունքներին ու փիլիսոփայական ուղղություններին համապատասխան:

Վերջապես, անցնելով միջնադարյան բառարանների բառամթերքի բնութագրությանը, նշենք, որ բացատրական ու թարգմանական բառարանները համեմատաբար աղքատ են մասնագիտական բառարաններից, որոնք ընդգրկում են գիտության տվյալ բնագավառի հիմն ոչ բոլոր մասնագիտական բառերն ու տերմինները, այլադրանց հիմնական մասը:

Եվ եթե հին բառարանները չեն պարունակում մեր մատենագրության բոլոր բառերը, այլ վերցնում են միայն առանձին բառեր ու դարձվածներ, ապա մեր լեզվի ո՞ր բառերն են, որ մտել են բառարանների մեջ:

Չեռագիր բառարաններում ընդգրկված են.

1. Հնարանություններ. — Այս կարգի բառերը մեծ տեղ են զբաղում բառարաններում: Հանդիպում են օրինակ, արտախուզել, անըսխուրան, բազմունակ, բոմբին, գերանաւեալ, իրոցել, խոշտար, ծիւ, կայթանել, մակայել, սպետափառ,

վտարանջել, փոփոգել և բազմաթիվ այլ բառեր, որոնք քաղված են V—X դարերի մատենագրությունից: Այդ բառերից շատերը ժամանակին դեռևս կենսունակ լինելով՝ լայն տարածում ու գործածություն չեն ունեցել և հանդիպում են առանձին հեղինակների մոտ: Օրինակ՝ խոշտար և զարելի (զարելի) բառերը կան միայն Պիտոյից գրքում, արգանակ, խոռապետ, վայրագափք և այլն՝ Աստվածաշնչում, անըսխուրան, ախրնդուր, աներաժիշտ, աներաժշտագոյն, բարան, եռակմբայք, իրոցեալ, մեստրեալ, նուիրամսակ, շոշական, տարագծել, փուղծ, քուալ և այլ բառեր՝ միայն Փիլոնի երկերում:

Հետագայում արդեն վաղուց գոյություն ունեցող բառարանները համալրվում էին այնպիսի բառերով, որոնց մի մասը դեռևս կենսունակ է եղել բառարանի նախագաղափար օրինակի ստեղծման ժամանակ: Ուստի հին բառարանների բոլոր բառերը մի հարթության վրա չի կարելի դիտել, այլ պետք է զանազանել տարբեր ժամանակներում բառարանների մեջ մտած բառերի շերտերը: Հնարանությունների ստվար շերտն են կազմում հունարան բառերը: Վերնագրից թվում է, թե «Բառք յունարէն» բառարանը հույն-հայերեն երկլեզվյան բառարան է: Այնինչ նա բաղկացած է հայերենի բառակազմական միջոցներով կազմված այնպիսի բառերից, ինչպես՝ առկացուցանել, արտախուզել, ապարան, գերանուն, եռագարդ, հարզունանալ, յարաբարդել, ներէութիւն, պարադիտող, տրամացեալ, փաղղատող և այլն: Մատենակից բառարանները հիմնականում հնարանությունների բառարաններ են, որովհետև պարունակում են իրենցից մի բանի դար առաջ գրված մատյանների այն բառերը, որոնք հնացած էին բառարանը կազմելու ժամանակ:

2. Օտար բառեր. — Բառարաններում բացատրվում են նաև ասորերենից, հունարենից, պարսկերենից և այլ լեզուներից հայ մատենագրության մեջ մտած բառեր, ինչպես՝ անգիտատոն, աղիալիպտոս, ամարու, բաղիստր, ամատտարա, գրամարտիկոս, գաղիշն, դիգրաբմայ, եղդորոս, երգաբ, մոնորոս, շարապայ, պոլետիկոս, պասեբ, տելետի, փոենիտ, փեղմոնի, քարակտիր, բովթարիմ և բազմաթիվ այլ բառեր:

Հին թարգմանական բառարանները օտար բառերի ու դարձվածների ոչ ընդարձակ հավաքածուներ են: «Բառք վարդան գրոց»-ը մեկնում է Եղիշեի պատմության մեջ հանդիպող շուրջ չորս տասնյակ պարսկերեն բառեր՝ վզուրկ, բղպայիթ, զակիշ (լակիշ), շկոթակ, զանդիկ, համակղէն, կեշտ և այլն: Արարերեն-պարսկերեն-հայերեն զրուցարանում թարգմանվում են հաղորդակցության համար ամենաանհրաժեշտ բառերն ու դարձվածները, ինչպես՝ դաշտ, շարժել, տուն, ցորեան, ծով, պատասխանել, քաղաք, աշակերտ, կարագ, լաւագոյն անցանել, ի տեղոջէ ի տեղի երթալ, յումեքէ ինչ հայցել, յանձրն առնուլ, աւետիս աալ և այլն:

3. Տերմիններ և մասնագիտական բառեր. — «Բառք բերականին» բառարանում բացատրվում են բաղաձայն, բաղդատական, գերադրական, դերանուն, հոշական, յոգնական, շեղոք և այլ բառեր: Բժշկական-գեղարանական բառարաններում հավաքված են բուժիչ խոտերի, պտուղների ու սերմերի, տերևների ու արմատների, ջրային ու ցամաքային կենդանիների, թռչունների, սողունների ու միջատների, անօրգանական դեղանյութերի, սննդամթերքների, բնականիքների, մարմնի մասերի, հիվանդությունների անուններ, առողջական վիճակ ու զանազան զգացմունքներ ցույց տվող բառեր: Օրինակ՝ արբոտինոն, բիկոս, դենդրոն, հոդոմ, նարկիսոն, արկտոս, այնտոս, կորակա, ոփսարին, հնդիպէ, սիլիկոն, արտերեկ և այլն: Մինչև X դարը բժշկական բառարաններում օտար բառերի մեծ մասը հունարեն է, իսկ հետո՝ արաբական բժշկության ազդեցության ժամանակաշրջանում, հունական բառերը, որոնք արդեն հնացած ու անհասկանալի էին, փոխարինվում են արաբական բառերով: Սահմանումների ցանկերում բերվում են ժամանակ, ներգործութիւն, տեսակ, առաքինութիւն, բազստութիւն, բանական, բարոյական, գոյ, դրութիւն, զգայութիւն, էութիւն, իմաստութիւն, կեանք, պատահում, տարբերութիւն, քաղաքականութիւն և այլ հասկացություններ:

4. Բարբառային բառեր. — Բառարաններում հանդիպում են նաև բաղմամբով բարբառային բառեր, որոնք օգտագործվել են

խոսակցական լեզվում, ճարտասանական խոսքի մեջ և առանձին գրական երկերում: Ահավասիկ մի քանի բառեր «Բառք բերթողականք» բառարանից՝ բայժել, զղնի, դարակել, դամանել, դնդել, եղմիկ, զմնազ, թոռակուլ, խատակել, մինչել, շիշք, վիկող, ցովրել, քանքել և այլն: «Բառք խորանին» բառարանում կան՝ թեսել, ծիծանակ, ձանձամ, մատոիշ և այլն, է-ի բառացանկում՝ էնբոշխնել, էնթաբոյս, էնթակից, էրիզապատ, էրախան, էրէց, բառերը, որոնք բմբոշխնել, ընդարոյս, ընդակից, երիզապատ, երախան և երէց բառերի բարբառային արտասանություններն են: Բարբառային բառերի շարքում նույնպես կան օտար բառեր, օրինակ՝ այնակ, շիր (պրակ.), զուլայ, կացի, կիտր (վրաց.), շարապայ (ասոր.), թամար (եբր.) և այլն:

5. Գովասանական բառեր ու դարձվածներ. — «Բառք գովասականք» կոչվող բառարանները ճարտասանական, բերթողական ու խոսքի բարձր արվեստով գրված այլ երկերից բաղված բառերի ու դարձվածների հավաքածուներ են: Նրանցում օրինակ, բերվում են այսպիսի բառեր ու դարձվածներ՝ ամենակատար, արբուցող լուսոյ, ականակիտ վտակ, երանաւէտ ծաղիկ, լուսերանդ շաիդ, ծով ծիծաղահոս, գեղաղէշ ծաղիկ, շար ոսկեմանեալ, փառազարդ լապտեր և այլն:

6. Հատուկ անուններ. — «Բառք եբրայիցւոց» բառարանում բացատրվում են Աստվածաշնչի հատուկ անունները՝ Ադամ, Աբրահամ, Բահազ, Բէեղզբուդ, Դաւիթ, Մարիամ, Սէմ, Ասկաղոն, Բարելոն, Գաբաւոն, Մարաղա, Աքովր, Կեղրօն, Սինայ և այլն:

Առանձին հատուկ անուններ մեկնվում են նաև ուրիշ բառարաններում:

7. Հոմանիշ բառեր. — «Հանդէս բանաստեղծաց» բառարանում հավաքված են միջնադարյան մատենագրության մեջ լայն գործածություն ունեցող զանազան հոմանիշ բառեր՝ հրճուել, ցնծալ, բերկրիլ, ուրախանալ, զուարճանալ, խայտալ, խրախճանալ և այլն: Հոմանիշների խմբերում կան նաև բառեր, որոնք հոմանիշ չեն գլխաբառին, սակայն նրա հետ, գոր-



ծածուկյան մի որոշակի տեղում, կարող են կապվել անվանելու, գործողություն, վիճակի ու գրություն և այլ հարաբերություններ արտահայտելու համաստային միասնություններ:

8. Անվավեր բառեր.— Այդպիսի բառեր կան մեր բոլոր բառարաններում ինչպես գլխաբառերի, այնպես էլ մեկնությունների մեջ: Դրանք հիմնականում հայերեն բառեր են, որոնք մատենագրական ոչ մի վկայություն չունեն և պահպանվել են միայն հին բառարաններում: Այդ բառերից են օրինակ՝ անարգատիպ, անեղատունկ, բիրեղատես, գործակաթ, դուադէպ, կրչուցեալ, ընդերունել, լրաբար, կոհակայեղց, կերպագործ, հարթագիտական, ղամբատող, ճղճատել, մեծաստոյգ, շամբշապեա, ուշատուկի, շարհոռակ, ոահվարել, վերաբուսիկ, վտակածին, տենչատրոփ, փատակաղոյն և այլն: Այս կարգի բառերի մեծ մասն անշուշտ օգտագործվել է արդեն անհայտացած գրական երկերում:

9. Անստույգ, աղավաղված բառեր.— Հին բառարանների որոշ բառեր, օրինակ՝ ապարեկ, արուեզ, աթեր, գրծաթգ, գարգեցի, դելխուպ, զեսխին, ըստկու, կամիտ, կարկազերինայ, կրակիմ, շաղաշին, ումանակ, հարուածան, զուզիւ, բեղթ, շաբեցի, մսեալ, մեղմեղ, ճոկող, փոսմատ, շմոշ, խումանակ և այլն բառեր այսօր անհասկանալի ու անմեկնելի են: Դրանցից շատերը, հավանաբար, պահպանել են իրենց նախնական, ճիշտ ձևերը, իսկ մի մասն էլ, անկասկած, այլ բառերի աղավաղումներ են: Այդպիսի բառերից շատերի նախկին, ճիշտ, ձևերը հնարավոր է վերականգնել գրչագրերի բաղդատական հետազոտության ճանապարհով:

Այսպիսով, ընդգրկումների տեսակետից միջնադարյան բառարանները խիստ սահմանափակ են ու միակողմանի: Նրանք զեռու հեռու են հայերենի բառային կազմն ամբողջությամբ արտացոլելու կարողությունից, այլ ընդգրկում են զրլխավորապես հնաբանություններ ու նորաբանություններ, օտար բառեր, տերմիններ ու մասնագիտական բառեր, որոնք գործածական են միայն մատենագրության մեջ, և այնտեղ էլ նրանց մի մասը հանդիպում է հազվագյուտ ղեպերում: Այդ

բառերը կազմում են մեր լեզվի բառային կազմի այն շերտը, որը համեմատաբար հեռու է հիմնական բառային ֆոնդից և գրեթե չի մտնում խոսակցական լեզվի մեջ:

Մենք միայն ընդհանուր գծերով, ձեռագիր ու տպագիր աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում, բնութագրեցինք հայ միջնադարյան բառարանագրությունը: Արդ անցնենք այդ ժամանակաշրջանի բառարանների ու բառացանկերի քննությանը:

## Ա. ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

### ԲԱՌՔ ՅՈՒՆԱՐԷՆ

Հունաբան դպրոցի նորամուծությունները մեր լեզվի մեջ, մեծ մասամբ, հարատև չեղան և աստիճանաբար դուրս մղվեցին: Ամենայն մանրամասնությամբ անդրադառնալով հունաբան հայերենին՝ մեծանուն գիտնական Հ. Աճառյանը գրում է. «Այստեղ էլ (հայերենի մեջ, — Հ. Ա.) կեղծ քերականությունը ամբողջապես և բառարանը մեծավ մասամբ վտարված են, պահվում են միայն այն կարևոր բառերը, որոնք անհրաժեշտ են արդի գիտական և փիլիսոփայական լեզվին»<sup>12</sup>:

Սակայն լեզվից վտարված բազմաթիվ բառեր քարացած էին հունաբան շրջանի հայ մատենագրության մեջ և անհասկանալի էին ընթերցողների համար: Այդ անհասկանալի հունաբան բառերը մեկնելու համար կազմվում էին բառարաններ: Մեզ հասած այդպիսի բառարաններից մեկը հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի է «Այս բառք ի յունականէն առ մերս յայտնեալ» վերնագրով: Դա հայերեն ամենահին բացատրական բառարանն է: Երևանի Մատենադարանում պահվում են «Բառք յունարէն» բառարանի՝ XIV—XVII դդ. ընդօրինակված 13 գրչագիր: Բառարանը հանդի-

<sup>12</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 168:

պում է նաև Փարիզի, Երուսաղեմի, Հալեպի, Անկյուրիայի և արտասահմանյան այլ վայրերի հայերեն ձեռագրերում:

Մատենադարանում բառարանի ամենահին գրչագիրը մեզ արդեն ծանոթ № 4149 ժողովածուն է: Նրան ժամանակակից են № 530 և № 5919 անթվակիր ձեռագրերը, իսկ մնացածները գրված են ավելի ուշ: Տասնչորսերորդ դարի այդ երեք ձեռագրերից երկուսը բավականին լավ վիճակում են, իսկ № 4149-ը պարունակում է բառարանի մի պատասխիկը միայն՝ Ա-ի բառացանկն՝ ընդամենը 24 բառով: Մեր հետազոտությունների հիմնական աղբյուր ընդունված № 5919 ժողովածուն բովանդակում է Երզնկացու քերականությունը և մի շարք բառարաններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բառարանն ավելի հին է, կազմվել է XIV դարից առաջ: Դա կարելի է ցույց տալ մի շարք փաստերով, սակայն մենք կանգ կառնենք ամենազլխավորի վրա:

Հայերեն ձեռագիր հուշարձաններով XII դարից վկայվող «Բառք քերթողականք» բառարանի և քննվող բառարանի բազմատումից պարզվեց, որ վերջինիս գրեթե բոլոր բառերը իրենց մեկնություններով նույնությամբ, կան «Բառք քերթողականք»-ի մեջ, բացառությամբ գրչագրական վրիպումների հետևանքով դուրս մնացած մի քանի և Ա-ով սկսվող բոլոր բառերի:

Հետաքրքիր է, որ այս բառարանից «Բառք քերթողականք»-ին անցած բառերը վերջինիս մեջ Բ-ից մինչև Յ բոլոր բառացանկերում տեղավորված են միայն սկզբում՝ իրենց նախկին դասավորությամբ, իսկ մնացած բառացանկերում, սկսած Մ-ից, աստիճանաբար խառնվում են, ցրվում «Բառք քերթողականք»-ի ընդարձակ բառացանկերի մեջ: Այդ ծավալուն բառարանի մեջ պարզորեն երևում է «Բառք յունարէն» բառարանը, որի բառերն առանց զժվարության կարելի է առանձնացնել: Պարզ է, որ «Բառք յունարէն»-ը, որպես առանձին բառարան գոյություն է ունեցել «Բառք քերթողականք»-ից առաջ: Բայց ինչ են եղել «Բառք յունարէն»-ի Ա-ով սկսվող բառերը, ինչո՞ւ նրանք չեն մտել «Բառք քերթողականք»-ի

մեջ: Դա զժվար չէ կոահել: Բառագիրը, հավանաբար, գետեղված է եղել մի ինչ-որ ձեռագրի սկզբում: Ժամանակի ընթացքում այդ ձեռագիրը քայքայվել է, նրանից պոկվել և անհայտացել են Ա-ի բառացանկն ընդգրկող թերթերը: Այդ են հաստատում ձեռագրերը: № 4149 և № 8198 (XIV դ.) ձեռագրերում «Բառք յունարէն»-ից կա միայն մի բառացանկ՝ Ա-ով բառերով: Դա հենց «Բառք յունարէն»-ի Ա-ի բառացանկն է ամբողջությամբ՝ բառերի դասավորության ու նրանց մեկնությունների տառացի նույնությամբ: Հասկանալի է, որ այդ ձեռագրերի գրիչները, հավանաբար, ձեռքի տակ ունեցել են «Բառք յունարէն»-ի միայն այդ մասը՝ Ա-ով բառերը, առանձին թերթերի վրա կամ մի ձեռագիր, որի մեջ պատահաբար ընկել են այդ թերթերը: Դրան հակառակ «Բառք քերթողականք»-ի հեղինակը հավանաբար օգտվել է այն վնասված ձեռագրից, որի առաջին թերթերը՝ «Բառք յունարէն»-ի Ա-ով սկսվող բառերով, բացակայել են և մնացել է բառարանի մյուս մասը: Այլ կերպ չի էլ կարելի բացատրել այն հանգամանքը, որ ձեռագրերի մի մասն ունի միևնույն բառարանի միայն մի բառացանկը, իսկ մյուս մասը՝ այդ նույն բառարանն առանց Ա-ի բառացանկի: Եվ եթե «Բառք յունարէն»-ը նախորդել է «Բառք քերթողականք»-ին, նրա համար հիմք հանդիսացել, ապա այն, պարզ է, որ ավելի հին է, քան վերջինս, որ ստեղծվել է XII դարում:

Ձեռագրերի մի մասն ունի վերևում նշված՝ «Այս բառք ի յունականէն առ մերս յայտնեալ» վերտառությունը: Հանդիպում են վերնագրի նաև այլ ձևակերպումներ, այն է՝ «Դարձեալ բառք ի յունականէն առ մերս յայտնեալ», «Դարձեալ այլ բառք ի յունականէն առ մերս յայտնեալ» և այլն:

Ապա, այն ձեռագրերում (№ 4149 և № 8198), որտեղ բառարանը թերի է, վերնագիրը կրճատ է՝ «Բառք յունարէն»:

Բառարանի վերնագրերը, հատկապես՝ «Բառք յունարէն»-ը, այն տպավորությունն են առաջացնում, թե բառարանը հունարեն բառերից կազմված մի հույն-հայերեն երկլեզվյան բառարան է: Այդպես չէ, իհարկե: «Բառք յունարէն» արտահայտության տակ պետք է հասկանալ ոչ թե հայերեն թարգման-

վող հունարեն բառերի, այլ այդ բառերի հայերեն պատճենումների, նրանց՝ հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված համարժեք բառերի բառարան: Կան, իհարկե, մի շարք հունարեն բառեր, ինչպես՝ պատրիարզ (πατριάρχης), քարկտիր (χρυσάφης), բուպէ (βουπέ), փոենիտն (φρονιτισ), սոփիալ (σοφία), տելետին (τελετισ), ի(ւ)կոնոմոս (οικονόμος) և այլն: Դրանց կողքին կան նաև պարսկերենից, արաբերենից, եբրայերենից և այլ լեզուներից եկող՝ ուտուրն, բարբա, սթարել, բոռին, դրաստ և ուրիշ բառեր, սակայն դրանք քիչ են բառարանում: Ավելին. մեր մյուս միջնադարյան բառարանների համեմատ «Բառք յունարէն»-ում ավելի քիչ օտար բառեր կան:

Բառարանում բառացանկեր չկան է, Յ, Վ տառերով: Բառերի թիվը ձեռագրերում տարբեր է, տատանվում է 350—370-ի սահմաններում, № 5919 ձեռագրում բառարանը 364 բառ ունի: Բառերը մեկնվում են այնպես, ինչպես մյուս միջնադարյան բառարաններում, բայց այստեղ բառերի համառոտ բացատրությունները՝ բառ-մեկնությունները, գերակշռող են:

Առանձին բառերից բացի բառարանում բացատրվում են նաև մի շարք բառակապակցություններ, նախդիրավոր հոլովածներ, հատկապես ի նախդիրով: Օրինակ՝ զառ որս կայցեն, ի բաց առեալ, ձրից բաշխ, տին և զտին, տէր՝ դատաւոր, փառաց գոչակ, ի մակագոյն, ի ծայր, ի բացուստ, ի տրամի և այլն: Ի-ի բառացանկի 29 բառերից 17-ը ոչ թե Է-ով սկսվող բառեր են, այլ ի նախդիրով ուղեկցվող բառեր: Բառերի մեծ մասը բարդ և ածանցավոր է: Ահա Յ-ի բառացանկն ամբողջությամբ.

- Յարաբարդել. միատրել կամ յարել:
- Յարատեան. ի գլուխ:
- Յարհուն. խորարննող:
- Յարարնակ. վերանստող կամ մշտարնակ:
- Յոքնիշխան. ամենակամ:
- Յարագունելով. հաստատելով<sup>13</sup>:

«Բառք յունարէն» բառագրքի ամբողջ բառամթերքը կարելի է բաժանել երկու մասի՝ մատենագրությունը վկայված և վկայություններ չունեցող բառերի: Առաջին խմբի բառերը հազիվ կազմում են բառարանում առկա բառերի կեսը: Այդ խմբի բառերը հանդիպում են հայ մատենագրության V—XII դարերի ամենատարբեր երկերում: Նրանցից մի քանիսը, սակայն, լայն տարածում չունեն և հանդիպում են եզակի հեղինակների մոտ: Այսպես, Պլատոնի հայերեն թարգմանություններում գործածված է արտախուզել բառը, ճառընտիրում՝ ալաունեմ, Բարսեղ Կեսարացու Վեցօրեայքում՝ դալակել, Հովհ. Դրասխանակերտցու «Պատմության» մեջ՝ սամարտիկոս, նյուսացու մոտ՝ փոենիտն, Թրակացու քերականության մեջ՝ փեռեկումն, փեռեկեալ, Հարանց վարքում՝ խարբալեալ և այլն: Հիշյալ խմբում գերակշռող են հունաբան բառերը, ինչպես՝ առողանութիւն, առասացութիւն, առկացուցանել, առարկութիւն, արտախուզել, բացարձակ, գերանուն, գերաշխարհիկ, դալապր, եռազարդ, կոճատ, ճառաբանող, յարաբարդել, պարագրելի, ստորոգութիւն, տարագիր, քողասուզել և այլն:

Վերջապես, բառագրքի մյուս կեսը կազմող երկրորդ խմբի բառերը, մատենագրական վկայություններ չունեցող, անստույգ և մասամբ աղավաղված ու կեղծ բառեր են, որոնք գրեթե բոլորն էլ անցել են Երեմիա Մեղրեցու բառարանի մեջ:

Այդ չվկայված բառերից ոչ մեկը չկա նոր հայկազյան բառարանում, իսկ Արմատական բառարանը, Երեմիա Մեղրեցու բառարանից, վերցրել է դրանց մոտ կեսը, ավելի քան 80 բառ: Ստորև բերվում են Արմատական բառարանին անցած այդ բառերը. անարգատ (իպ), անարկզոս, գիւէ, գերամնոց, գերաբուն (գերբաբահուն), գերվերնօզ, գիմի (գիմել), գրիս, գարհասնոսից (գարհասունից), զեռնդոմին (զերնգոմին), զոմոս, զրովք (զրովթ), զէշխուպ, ընդիրանգիրս, թեբակդոն, ժառաշնորհ, ժերշարժող (ժերժարշող), ժամոխասէր, իրբունոս (իրբինոս), ի կապլի, ինտուն (ի ծխտանի, ի խաշ-

<sup>13</sup> Մատենադարան, ձեռ. № 5919, էջ 199բ:

դանի), լմշտել, խորթնօղ, խաբաբայ, կած (կածնիզար)<sup>14</sup>, հարգունանալ, հարգեղաղէշեալ (հարգեղաղելեալ), հարկճաճառով, դաբանոս, դիդիտող (դիդրիսօղ), դատագոս, ճգն (ճգուն), ճգոտեալ, ճեմաբար, մէս, նեէս (նեւս, նէեստ), ներգով, ներգովող (ներգօղ), շկտել, շերնագոյն, շողնագոյն (կամ շաղնագոյն), որոսելուն (որոսելոյ), ուղփաճաճ, ուրփիղէս, որգելակ, պտակ, պերատէ, ջատնօղ, ջոկառ, ջվնասացեալ, ռատգունաս, ռամունոզք (ռամունոս), ռափինիկ, ռեմ, ռեսփանէս, ստնանաւորք (ստնաւոր), վիփող (վիկել), վարսանաւետ (ից), վանեալ, վարփեռոն, վիկել, վահամախոճ (վաղամախորճ), տարրայն (տարայնք), տին և զտին, տայն (տէն), տինել, բուճանակ, փատողանալ, փարաձգող (փարգձօղ), փարական, փարահ, քերտողան (քերտրդան), քաղբասրել (քաղթարսել), քարդաւանաս (քարգոն կամ քարգոնոս), քերիմանէ, քողիցնօղ, քրուել:

«Բառք յունարէն» բառարանի երկրորդ խմբի բառերի մեծ մասը, ինչպես տեսանք, հայերեն ծագում ունեցող պարզ կամ հայերենի բառակազմական միջոցներով, մասնավորապես հունարան նախածանցներով կազմված բառեր են: Դրանք անկասկած գրավոր լեզվի բառեր են եղել, օգտագործվել մատենագրութեան մեջ, այնպիսի երկերում, որոնք զժախտարար, անհայտացել են:

Այնպիսով, ամբողջ բառարանը հիմնականում կազմված է հունարան դպրոցի ժամանակների մատենագրական երկերից վերցված բառերից, դրա համար էլ բառարանագիրն այդ բառերը համարում է «բառք ի յունականէն առ մերս յայտնեալ»:

Մեր քննած բառարանը հայ միջնադարյան բառարանագրութեան անգրանիկ գործերից է՝ մեզ հայտնի ամենահին հայերեն բացատրական բառարանը: Նրա օրինակով հետագայում կազմվել են այդ բնույթի ուրիշ բառարաններ, նրա

<sup>14</sup> Այս բառը Արմատականում «Բառք յունարէնի» երկու տարբեր բառերի՝ «կաց» և «նիզար» և նրանց մեկնությունների միացումն է՝ «Կած. նիզար» և «Կարմի. ուգաս»:

հիման վրա է ստեղծվել մեր միջնադարյան ամենահարուստ ու արժեքավոր «Բառք քերթողականք» բացատրական բառարանը: Բառարանն արժեքավոր է նաև նրանով, որ այն այսօր մեր լեզվաբանությունն ու բանասիրությունն է ներկայացնում մինչև օրս անհայտ մի շարք նոր բառեր:

### ԲԱՌՔ ՓԻՆՈՆԻ

Ալեքսանդրյան դպրոցի ականավոր ներկայացուցիչ Փիլոն Ալեքսանդրացու (Երրայեցու, 20 թ. մ. թ. ա.—54 թ. մ. թ.) ուսմունքը տարածում և ընդհանուր ճանաչում է ունեցել Հայաստանում՝ սկսած հայ մատենագրութեան սկզբնավորման ժամանակներից: Ակադեմիկոս Հ. Մանանդյանը բանասիրական մանրադնին հետազոտությունների շնորհիվ, բնագրերը լեզվա-ոճային ընդհանրությունների ու նմանությունների հիման վրա, ցույց է տալիս, որ «Թրակացու քերականության, Փիլոնի և Պիտոլից գրքի թարգմանությունները կազմում են հունարան թարգմանությունների հնագույն շերտը»<sup>15</sup>:

Մատենագրարանի ձեռագրերում կան մեր մատենագրությանը հայտնի՝ Փիլոնի բոլոր երկերի հայերեն թարգմանությունները: Պահպանվել են նրա ոչ միայն հանրահայտ աշխատությունները, այլև այնպիսի ծավալուն և արժեքավոր երկեր, ինչպես՝ «Յաղագս նախախնամութեան», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացող», «Այնոցիկ որ ի Լինելութեանն խընդրոց և լուծմանց», «Առանց պատրաստութեան ի Սամփսովն», «Յաղագս Յովնանու» և «Յաղագս զԱստուած»: Այս երկերը մինչև XIX դարի 2-րդ քառորդը անհայտ էին գիտությունը, բայց դարերով անթեղված լինելով հայ մատենագրության մեջ, վերստին լույս աշխարհ եկան և համաշխարհային մշակութի սեփականություն դարձան՝ «Մնացորդք ի հայս» հայկական մատենաշարով<sup>16</sup>:

<sup>15</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 105:

<sup>16</sup> «Փիլոնի Երրայեցու բանք երեք շե ի լոյս բնծայեալք», Վենետիկ, 1822: «Փիլոնի Երրայեցույ մնացորդք ի հայս», Վենետիկ, 1826:

Հենց այն հանգամանքը, որ պահպանվել են Փիլոնի հայերեն բազմաթիվ թարգմանություններ, խոսում է այն մասին, որ «քրիստոնեության իսկական հայր» Փիլոնը որպես հեղինակություն է ճանաչվել հայ մտավորականների կողմից և որոշակի ազդեցություն ունեցել, ընդհանրապես, հայ մտքի վրա: Գ. Զարբանյանը մատենագրական բազմաթիվ կոնկրետ փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ հորենացու, Մամբրի, Եզնիկի երկերի և Պիտոյից գրքի շատ մեջբերումներ, առանձին նախադասություններով, կամ դարձվածներով, վերցված են Փիլոնի աշխատություններից, ապա՝ Շիրակացին, Հովհ. Իմաստասերը, Թովմա Արծրունին, Խոսրով Անձեվացին, Գր. Մագիստրոսը, Ն. Շնորհալին, Ն. Լամբրոնացին և ուրիշներ «հաճախ իրենց զրվածոց մեջ վկայություն կը բերեն Փիլոնի խոսքերեն՝ մեզի արդեն ծանոթ թարգմանությունամբ»<sup>17</sup>:

Հետագայում, XI—XIV դարերում, հետաքրքրությունը դեպի Փիլոնն ավելի է ուժեղանում, ոչ միայն լայնորեն ընդօրինակվում և բազմաթիվ զրչագրերով տարածվում են նրա աշխատությունները, այլև հանդես են գալիս այդ աշխատությունների մի ամբողջ շարք համառոտ և ընդարձակ մեկնություններ, որպես տվյալ ժամանակաշրջանի գիտական ու քաղաքական գործունեության անհրաժեշտ և կարևոր արդյունքներ: Այլադավան արտաքին կրոնական ազդեցություններին, ինչպես նաև կաթոլիկական քարոզներին հակահարված տալու համար տիրապետող հասարակարգը պետք է ամրապնդեր իր գաղափարական հիմքերը, եկեղեցին ամեն կերպ պետք է հաստատեր ու առաջ մղեր հայ-գրիգորյան քրիստոնեական դավանանքի հիմունքները: Հետևաբար պարզ է, թե ինչու նեոպլիթագորական «Փիլոն Ալեքսանդրացու ուսմունքը, որը հայ մրտերին ծանոթ է, գլխավորապես, որպես քրիստոնեության տեսական ակունքներից մեկը...»<sup>18</sup> լայնորեն պրոպագանդվում

17 Գ. Զարբանյան, Հայկական թարգմանություններ նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 747:

18 Զ. Գարիբյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հտ. 1, Երևան, 1956, էջ 87:

էր հայ հոգևորական մտավորականության կողմից և նրա շատ երկեր հայ դպրոցներում օգտագործվում էին որպես դասագրքեր:

Փիլոնի երկերի հայ մեկնությունները կան Մատենադարանի № №1931, 1701, 59 և բազմաթիվ այլ ձեռագրերում: Այդ մեկնությունները գեոևս շեն ուսումնասիրվել: Ուշադրություն դարձնելով Փիլոնի մեկնություններին՝ Գ. Գրիգորյանը 1961 թ. տպագրեց իր «Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները» հետաքրքիր հոդվածը<sup>19</sup>: Նշելով, որ մեկնությունների գրությունն ստույգ ժամանակներն ու հեղինակներն անհայտ են, հոդվածագիրը փորձել է որոշել հիշյալ զրվածքների հեղինակները, հետևաբար և նրանց գրությունն մոտավոր ժամանակը:

Փիլոնի մեկնությունները պայմանականորեն երեք խմբի բաժանելով և յուրաքանչյուր խմբի մեջ մտնող գործերի լրիվ թվարկումով, Գ. Գրիգորյանը, հայ մատենագրության մեջ եղած տվյալների ու սեփական բանասիրական մանրակրկիտ պրպտումների հիման վրա, առաջին խմբի մեկնությունները վերագրում է Հովհան Որոտնեցուն, մեկնությունների երկրորդ խումբը՝ Հովհաննես Սարկավազին և երրորդ խումբը՝ Հովհաննես Երզնկացուն (Պլուզին): Հայերեն փիլոնյան ընդարձակ գրականության մեջ է մտնում նաև «Բառք Փիլոնի» բացատրական բառարանը, որտեղ բացատրվում են Փիլոնի աշխատությունների բառերն ու դարձվածները:

«Բառք Փիլոնի առանձինն» կամ «Բառք Փիլոնի» բառարանի ձեռագրերից ամենահինը Փարիզի № 302 ձեռագիրն է, ապա Մատենադարանի № 4149 ժողովածուն: Մակլերի ձեռագրացուցակը, որտեղ նկարագրվում է Փարիզի հիշյալ ձեռագիրը, բառարանի մասին ոչինչ չի ասում, բացի՝ «Փիլոնի բառերի բացատրությունը» (explication des mots de Philon) արտահայտությունից, չի նշվում նույնիսկ բառարանի վերնագիրը («Մեկնություն բառից Փիլոնի առանձինն»), որ հայտնի

19 Գ. Գրիգորյան, Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 95—115:

է դառնում Տեր-Մովսիսյանի ձեռագրացուցակից: Փարիզի ձեռագրում բառարանն սկզբնօրինակ չէ, այլ ընդօրինակված է մի ավելի հին ձեռագրից: Ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ «Բառք Փիլոնի» բառարանից բազմաթիվ բառեր իրենց մեկնություններով անցել են «Բառք քերթողականը» բառարանին:

Ձեռագրերից միայն երկուսը (№ № 266, 3937) ունեն «Բառք Փիլոնի առանձինն» վերնագիրը, իսկ № 7250-ում վերնագիրը կրճատ է՝ «Բառք Փիլոնի»: Մյուս ձեռագրերում, վերնագրերի շփոթման պատճառով, այս բառարանը հանդես է գալիս «Բառք խորանին» վերնագրով:

Քննվող բառարանը մեր հնագույն բացատրական բառարաններից մեկն է, այն փոքր է ծավալով, պարունակում է ընդամենը 250—260 բառ:

Սակայն Փիլոնի անունով հայտնի այս բառարանն ամբողջությունամբ նրա երկերին չի վերաբերում, բառարանի ոչ բոլոր բառերն են, որ վերցված են Փիլոնի աշխատություններից: Այդ հեղինակի հայերեն տպագիր ու ձեռագիր բոլոր թարգմանությունների, ինչպես նաև բոլոր մեկնությունների հետ բառարանի բառերը սաուգելուց հետո պարզվեց, որ բառերի միայն 50—55 տոկոսն է հանդիպում Փիլոնի մոտ: Այդ բառերը, իհարկե, կան նաև Աստվածաշնչում, Պիտոյից գրքում և այլ մատյաններում, սակայն նրանք վերցված են հենց Փիլոնի բնագրերից՝ նրանց մեջ ունեցած իրենց իմաստային առումներով, քերականական ձևերով ու կապակցություններով: Մի շարք բառեր՝ աներաժշտագոյն, աներաժիշտ, ակադիմական, շապրմամբ (շապրումն, շապրել) և այլ հատուկ են միայն Փիլոնի բնագրերին և չկան մեր մատենագրության մյուս երկերում: Բերենք Փիլոնի այն տեղերը, որտեղ գործածված են հիշատակված բառերը:

«...բանդի ոչ ինչ աներաժշտագոյն է՝ քան որովայնի պարապել» (Լին., բան 2-րդ, է)<sup>20</sup>:

«Որպէս որ այժմ ասին ակադիմականն և խուզակք, ոչինչ զկամս օրինացն իւրեանց հաստատուն դնելով...» (Լին., բան

<sup>20</sup> «Փիլոնի երբայցեոյ մնացորդք ի հայս», Վենետիկ, 1826, էջ 85:

3-րդ, ԼԳ)<sup>21</sup>: «Եւ մեծն արդարև չըհեղեղ սա է. և մտաց հոսանաց բացելոց անզգամութեամբք, շապրմամբք, անյագ ցանկութեամբք, անիրաւութեամբք, անզգայութեամբք, յանդգնութեամբք, ամբարշտութեամբք...» (Լին., բան 2-րդ, ԺԸ)<sup>22</sup>:

«...Քուշունք աստուածազգեստեալք՝ անդէն վաղվաղակի ընդ կրունկն դարձան. ոչ թուցեալք միայն՝ քան թէ ի վայր ձգեալք, ի տարտարոսին ասեմ յալս» (Յել., բան 2-րդ, Խ)<sup>23</sup>:

Պետք է նշել, որ Փիլոնի երկերից եկող բառերի մեծ մասը, շուրջ 80 տոկոսը, պատկանում է նրա «Այնոցիկ որ ի Լինելութեանն խնդրոց և լուծմանց» քառամասն ընդարձակ աշխատությանը: Դա հասկանալի է՝ Փիլոնի այդ հիմնական աշխատությունը առավել լայն տարածում է ունեցել, օգտագործվել է որպես դասագիրք: Բառերի մյուս մասը վերցված է Փիլոնի տարբեր աշխատություններից, զխաւորապես՝ «Այնոցիկ որ յնլսն խնդրոց և լուծմանց», «Ժ բան», «Կեանք իմաստնոց» և «Աստուածային օրինացն այլաբանութիւն» աշխատություններից:

Ինչ վերաբերում է բառարանի մնացած, 100-ից ավելի բառերին, որպես՝ արտախուրակ, աւան, արոյր, անագ, բրշակ, զիրուխտի, զուլող, խնկաղաց, կրակարան, կապար, կապէնս, հալուէ, հեցիկ, ձորձս, ճարմանդս, մանի, նքողել, ոսոխել, պարուրել, սրսկապան, վհուկ, վայրապանակ, տարատ, քաղցկեղ և այլն, որոնք չկան Փիլոնի մոտ, ապա դրանք հանդիպում են, հիմնականում, Աստվածաշնչում, Պիտոյից գրքում, Ոսկերեանի և այլոց երկերում, մասամբ՝ հին բառարաններում, նրանց մի զգալի մասն էլ անստույգ, չվկայված բառեր են: Ծանո հավանական է, որ այդ բառերը վերցված են Փիլոնի գոյություն ունեցած այնպիսի հայերեն թարգմանություններից, որոնք չեն պահպանվել: Հենց այն փաստը, որ բառարանը ամենահին ձեռագրերում, սկսած XIII դարից, վերնագրված է «Բառք Փիլոնի» հիմք է տալիս նման ենթադրություն անելու:

<sup>21</sup> Փիլոն, նշվ. աշխ., էջ 203:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 102:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 497:

է դառնում Տեր-Մովսիսյանի ձեռագրացուցակից: Փարիզի ձեռագրում բառարանն սկզբնօրինակ չէ, այլ ընդօրինակված է մի ավելի հին ձեռագրից: Զեռագրերի համեմատությունից պարզվում է, որ «Բառք Փիլոնի» բառարանից բազմաթիվ բառեր իրենց մեկնություններով անցել են «Բառք բերթողականք» բառարանին:

Զեռագրերից միայն երկուսը (№ № 266, 3937) ունեն «Բառք Փիլոնի առանձինն» վերնագիրը, իսկ № 7250-ում վերնագիրը կրճատ է՝ «Բառք Փիլոնի»: Մյուս ձեռագրերում, վերնագրերի շփոթման պատճառով, այս բառարանը հանդես է գալիս «Բառք խորանին» վերնագրով:

Քննվող բառարանը մեր հնագույն բացատրական բառարաններից մեկն է, այն փոքր է ծավալով, պարունակում է ընդամենը 250—260 բառ:

Սակայն Փիլոնի անունով հայտնի այս բառարանն ամբողջությամբ նրա երկերին չի վերաբերում, բառարանի ոչ բոլոր բառերն են, որ վերցված են Փիլոնի աշխատություններից: Այդ հեղինակի հայերեն տպագիր ու ձեռագիր բոլոր թարգմանությունների, ինչպես նաև բոլոր մեկնությունների հետ բառարանի բառերը ստուգելուց հետո պարզվեց, որ բառերի միայն 50—55 տոկոսն է հանդիպում Փիլոնի մոտ: Այդ բառերը, իհարկե, կան նաև Աստվածաշնչում, Պիտոյից գրքում և այլ մատյաններում, սակայն նրանք վերցված են հենց Փիլոնի բնագրերից՝ նրանց մեջ ունեցած իրենց իմաստային առումներով, քերականական ձևերով ու կապակցություններով: Մի շարք բառեր՝ աներածշտագոյն, աներածիշտ, ակադիմական, շապրմամբ (շապրումն, շապրել) և այլ հատուկ են միայն Փիլոնի բնագրերին և չկան մեր մատենագրության մյուս երկերում: Բերենք Փիլոնի այն տեղերը, որտեղ դործածված են հիշատակված բառերը:

«...բանզի ոչ ինչ աներածշտագոյն է՝ քան որովայնի պարապել» (Լին., բան 2-րդ, է)<sup>20</sup>:

«Որպէս որ այժմ ասին ակադիմական և խուզակք, ոչինչ զկամս օրինացն իրեանց հաստատուն զնելով...» (Լին., բան

<sup>20</sup> «Փիլոնի Երրայեցույ մնացորդք ի հայս», Վենետիկ, 1826, էջ 85:

3-րդ, ԼԳ)<sup>21</sup>: «Եւ մեծն արդարև չրհնդեղ սա է. և մտաց հոսանաց բացելոց անզգամութեամբք, շապրմամբք, անյագ ցանկութեամբք, անիրաւութեամբք, անզգայութեամբք, յանդգնութեամբք, ամբարշտութեամբք...» (Լին., բան 2-րդ, ԺԸ)<sup>22</sup>:

«...Փռչունք աստուածազգեստեալք՝ անդէն վաղվաղակի ընդ կրունկն դարձան. ոչ թուցեալք միայն՝ քան թէ ի վայր ձգեալք, ի տարտարոսին ասեմ յալս» (Յել., բան 2-րդ, Խ)<sup>23</sup>:

Պետք է նշել, որ Փիլոնի երկերից եկող բառերի մեծ մասը, շուրջ 80 տոկոսը, պատկանում է նրա «Այնոցիկ որ ի Լինելութեանն խնդրոց և լուծմանց» քառամասն ընդարձակ աշխատությանը: Դա հասկանալի է՝ Փիլոնի այդ հիմնական աշխատությունը առավել լայն տարածում է ունեցել, օգտագործվել է որպես դասագիրք: Բառերի մյուս մասը վերցված է Փիլոնի տարբեր աշխատություններից, զխավորապես՝ «Այնոցիկ որ յԵլան խնդրոց և լուծմանց», «Ժ բան», «Կեանք իմաստնոց» և «Աստուածային օրինացն այլաբանութիւն» աշխատություններից:

Ինչ վերաբերում է բառարանի մնացած, 100-ից ավելի բառերին, որպես՝ արտախուրակ, աւան, արոյր, անագ, բրշակ, գիրուխտի, զովոյ, խնկաղաց, կրակարան, կապար, կապէնս, հալուէ, հեցիկ, ձորձս, ճարմանդս, մանի, նքողել, ոսոխել, պարուրել, սրակապան, վհուկ, վայրապանակ, տաբատ, քաղցկեղ և այլն, որոնք չկան Փիլոնի մոտ, ապա դրանք հանդիպում են, հիմնականում, Աստվածաշնչում, Պիտոյից գրքում, Ոսկեբերանի և այլոց երկերում, մասամբ՝ հին բառարաններում, նրանց մի զպալի մասն էլ անստույգ, չվկայված բառեր են: Ծառ հավանական է, որ այդ բառերը վերցված են Փիլոնի գոյություն ունեցած այնպիսի հայերեն թարգմանություններից, որոնք չեն պահպանվել: Հենց այն փաստը, որ բառարանը ամենահին ձեռագրերում, սկսած XIII դարից, վերնագրված է «Բառք Փիլոնի» հիմք է տալիս նման ենթադրություն անելու:

<sup>21</sup> Փիլոն, նշվ. աշխ., էջ 203:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 102:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 497:

Դժվար թե նախնիների գրական գործերը ճշտութեամբ ընդօրինակելու դարավոր սովորույթը սրբութեամբ պահպանող հայ դպիրները շփոթելով ու թյուրիմացաբար ուրիշ հեղինակների երկերից բաղված բառեր մտցնելին Փիլոնի անունը կրող բառարանի մեջ, և այն էլ այն ժամանակ, երբ հայ մտքի մեջ Փիլոնը մեծ հեղինակություն ուներ, նրա երկերը լայնորեն տարածված էին հայ մատենագրության մեջ և ուսումնասիրվում էին զպրօցներում:

Փիլոնի աշխատությունների բառերի ու ոճերի բացատրություններ կան նաև հետագա ժամանակների մյուս ձեռագիր բառարաններում, հատկապես «Եւթներորդ գլուխ գրոցս» կոչվող բառարանում:

#### ԲԱՌՔ ԽՈՐԱՆԻՆ

Ձեռագրերում հաճախ հանդիպում է «Բառք որ ինչ ի խորանն և այլոց անյայտից» կամ կարճ՝ «Բառք խորանին» վերնագիրն ունեցող փոքր բացատրական բառարանը: Հայտնի չէ, թե որտեղից է ծագում այդ վերնագիրը: Ն. Քարամյանցը գրտնում է, որ «Բառք խորանին» բառարանը պարունակում է. «Աստվածաշնչում սուրբ խորանի նկարագրության մեջ հանդիպող մի բանի խրթին բառերի բացատրությունը»<sup>24</sup>:

Իրականում, սակայն, բառարանը կապ չունի մեր միջնադարյան մատենագրության մեջ տարածված՝ խորանին վերաբերող զանազան մանր երկերի հետ: Միայն Փիլոն Ալեքսանդրացու «Այնոցիկ, որ յԵլսն է խնդրոց և լուծմանց» աշխատության՝ խորանին և տապանակին վերաբերող մասերից բառարանի մեջ են մտել սակավաթիվ բառեր, որոնք հանդիպում են նաև հիշյալ աշխատության մյուս բաժիններում, ինչպես նաև հայ մատենագրության այլ երկերում:

«Բառք խորանին» սովորական միջնադարյան բացատրական բառարան է: Այն պարունակում է մոտ 450 բառ, առկա

է Մատենադարանի 16 ձեռագրերում: Բառարանի հնագույն ընդօրինակությունները XIV դարի ձեռագրեր են (ձեռ. № № 4149, 530, 5919, 5925, 8198), իսկ նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի № 75 ձեռագիրը, ըստ Տեր-Մովսիսյանի անտիպ ձեռագրացուցակի, գրված է ԺԳ—ԺԴ դարերում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ «Բառք Խորանին» բառարանը ավելի հին է, քան մեզ հասած նրա հնագույն գրչագիրը, որը այդ բառարանի նախագաղափար օրինակը չի հանդիսանում: Այդ բառարանը կազմվել է «Բառք Փիլոնի» բառարանի հիման վրա:

Սկզբում «Բառք խորանին» բառարանը փոքր է եղել, ավելի քիչ բառ է ընդգրկել, քան «Բառք Փիլոնի» բառարանը: Այն կազմված է եղել, ամենայն հավանականությամբ, միայն այն բառերից, որոնք անցել են «Բառք քերթողականք» բառարանին: Այդ բառերը հետագայում մի շարք անձանոթ, մատենագրությամբ չվկայված «և այլոց անյայտից» բառերի հետ ավելացվել են «Բառք Փիլոնի» բառարանի վրա և այսպիսով ստեղծվել է «Բառք որ ինչ ի խորանն և այլոց անյայտից» բառարանը: Այդ ավելացումների ժամանակ չի խախտվել «Բառք Փիլոնի» բառարանի բառերի դասավորությունը, այլ ավելացված բառերը դրվել են նրա բառացանկերի վերջում, իսկ նրանում բացակայող՝ է, Թ, Ղ տառերով բառերն ավելացվել են համապատասխան տեղում: Այսպիսով, «Բառք խորանին» բառարանն իրեն նախորդող՝ «Բառք Փիլոնի» բառարանի հետագա ընդարձակումն է և երկու բառարանների այս կայն է, որ հաճախ պատճառ է դառնում նրանց շփոթման:

Քննվող բառարանի և «Բառք քերթողականք»-ի համեմատության միջոցով պարզվեց, որ այդ բառարաններն ակնհայտ ընդհանրություններ ունեն՝ «Բառք խորանին» բառարանի ավելի քան 130 բառեր, այսինքն՝ նրա բառերի շուրջ 30 տոկոսը, նույն մեկնություններով, կան «Բառք քերթողականք»-ում: Այդ բառերը հենց առաջինից՝ «Բառք խորանին» բառարանից են անցել երկրորդին և ոչ ընդհակառակը: Երկու բառարանների հետ ընդհանուր ծանոթությունն էլ անգամ կարող է հաստատել «Բառք խորանին» բառարանի առավել հին

<sup>24</sup> Die Handschriften-Verzeichnisse der Königl. Bibliothek zu Berlin, B. 10, Verzeichniss der armenischen Handschriften von Dr. N. Karamianz, Berlin, 1888, S. 62,



ծագումը: Այլևայլ փաստերի զանցառումով, նշենք միայն երկու կարևոր հանգամանք՝ ա) «Բառք քերթողականը» բառարանն իր կառուցվածքով ավելի կատարյալ է և հայերեն այբուբենի բոլոր տառերով ունի անհամեմատ ընդարձակ բառացանկեր, բան «Բառք խորանին»-ը, բ) առաջինի մեջ ուրիշ բառարաններից եկող բառերը երբեմն տեղավորված են ոչ թե համապատասխան, այլ մեկ ուրիշ բառացանկում, օրինակ՝ «Բառք խորանին» բառարանի ղեպեշտի բառը մյուսի մեջ կալեպեշտի ձևով՝ Լ-ի բառացանկում, այդպես էլ ի յալս հոլովածը, առանց ի նախդիրի, յալս ձևով, մյուսում գտնվում է Ծ-ի բառացանկում, իսկ բազմակ և բազմակի բառերը, որոնք առանձին զխաբառեր են, միացված են մի բառահոլովածի մեջ՝ «Բազմակ, ճրագ կամ ունեիր»:

Ձեռագրերում հաճախ «Բառք խորանին» բառարանը շքփոթված է «Բառք Փիլոնի» բառարանի հետ, այսինքն՝ շքփոթված են այդ երկուսի վերնագրերը: Այդպես է օրինակ՝ № № 532, 538, 3197 և 3207 ձեռագրերում, որոնց մեջ բառարանը վերնագրված է «Բառք Փիլոնի» և ընդհակառակը՝ վերջին վերնագիրն ունեցող բառարանը № № 4149, 5008, 7995, 8106 և 536 ձեռագրերում ներկայանում է «Բառք խորանին» վերնագրով, իսկ № 2369 և 529 ձեռագրերում այդ վերնագրի հետ միաժամանակ, նույն էջի ներքևի լուսանցքում, կարդում ենք գրչի նշումը՝ «Այս բառք ի Փիլոնի գրոցն է, ո՛վ ընթերցող»: Այդ շքփոթումները պատահական չեն, այլ արդյունք են երկու բառարանների անմիջական կախման և բառային ընդհանրությունների:

«Բառք խորանին» բառարանը մեզ հասած հայերեն ամենահին բացատրական բառարաններից է: Նրա պարունակած բառերի մեծ մասը վերցված է հայ մատենագրություն տարբեր երկրներից, հատկապես հունաբան ժամանակաշրջանի բնագիր և թարգմանական գործերից: Միայն Փիլոնի աշխատությունների հայերեն թարգմանություններից առնված բառերը կազմում են ամբողջ բառամթերքի շուրջ 40 տոկոսը: Մեկնվող բառերը, ոչ լիակատար կանոնավորությամբ, դասավորված են այբբենական կարգով, բառացանկերը սեղմ են, սակավարատ,

Ժ-ով, Ծ-ով, Զ-ով, Զ-ով և Փ-ով 1—2 բառ կա, իսկ Զ, Ռ, Բ, Ի տառերով բառեր չկան: Ընդհակառակը, միայն Ա-ով սկսվող բառերի թիվը հասնում է 125—130-ի: Բառերը մեկնվում, բացատրվում են մեծ մասամբ մեկ ուրիշ հայերեն բառով, կան նաև մի շարք ընդարձակ բացատրություններ:

Ստորև բերվում են այս բառարանից «Բառք քերթողականը»-ին անցած բառերն, առանց մեկնությունների, բառարանում ունեցած նրանց հաջորդականությամբ.

Անգուած, ախս, ապարում և ապտանդակ, արտախուրակ, արոյր, աւան, ափսէ, աղխ, աներն, անաւագ, արուարձանեայս, անագ, անբաժան, անալոց, ասխանի, աստուածք, ամէն, անիրանունք, աներաժշտագոյն, ազազուն, անազդակել, արտաշիկագոյն, անվկանդ, աղունք, անապակ, անանդր, աշղահակ, արտանութին, արեկ, ահար, ալոստոս, Ասքանազ, ափա, աւշ, ալթձէ, արէնք, ալաւորեաց, անորոնելի, անոպա, անկելաւզ, արաստ, արգասաւոր, արտ, արագ, արտահերքել, արեզովթ, անագանոս, անուղղայտ (անաղայտ), ասի, աստեալ, առկոշել, աղիճ, այլասաց, բազմակ, բրշակ, բազմակք<sup>25</sup>, բազմակակալք, բարգաւաճ, բամբիշ, բազաղբել, բաղա, բազակ, բացայայտել, գինեզէն, գեղմ, գզրել, դոմոս, ենթագրութիւն, ետրոն, եղտիր, եղեգնոտ, եռազարդ, զարմ և ճետ, զեղուն, զետունք, զարթեա, զիփա (զիգա), էնբոշխնել (ըմբոշխնել), ընդոծին, ընկալաւ, ընփորտէ, ընկրկել, ի յալս, իսկապէս, լիբանան, լուտալ, խակակութ, խուժան, խանձեալ, խոկալ, խոխոմ, խուճթել, խրամատեալ, խիտալ, խայրեղիք, խաշաշուն (խախաշուն), խազ և խակ, խոհոմ, ծառայն, ծասքել, ծանրըմբերելի, կամար, կոկողանալ, հերքել, հուժկու, հեթախա, հոյ, համբարտակ, ձանձամ, ձանձել, մրցանակ, մակու, մակբայ, մատոնիշ, յողալ, նեցուկ, նուարտան, նաւագք, նաւաստի, ներշրջական (ներշրջանակ), շուայտել, պարէտ, վիժակա, վակաս, վհուկս (վհուկ), վճիտ, վիրագ, տրամագիծ, տոշկեն (տոշկել), տիրապէս, տարաւրէն, փաբտն, քամահել:

25 «Բազմակ» և «բազմակք» բառերը մեկնվում են տարբեր առաջին քրպես «ունեիր», երկրորդը՝ «ճրագք»:

Հենց այս բառերից էլ, ամենայն հավանականությամբ, կազմված է եղել «Բառք խորանին» բառարանը: Հետաքրքիր է, որ բառարանում՝ վերևում բերված բառերն իրենց զասավորությամբ և բառացանկերում գրաված տեղով նկատելիորեն տարբերվում են մյուս բառերից: Նրանք բառացանկերի տարբեր մասերում հանդես են գալիս առանձին փոքր խմբերով՝ իրար առընթեր: Այսպես օրինակ, այդ բառերը խմբավորված են Ա-ի, Ե-ի, Ը-ի, Վ-ի բառացանկերի սկզբում, Բ-ի և Զ-ի բառացանկերի սկզբում և վերջում: Խմբավածությունն զգացվում է նաև մյուս բառացանկերում, իսկ Խ-ի բառացանկն հիմնականում բաղկացած է այդ բառերից: Դրան հակառակ, «Բառք խորանին» և «Բառք բերթողականք» բառարանները միաժամանակ ունեն մի շարք բառեր, ինչպես՝ ագուր, աճան, ալա-նով, երանեալ, զովող, կարկ, հեռ, վտավակս, որոնք տարբեր ձևով են մեկնվում այդ բառարաններում և առաջինի մեջ հանդիպում են բառացանկերի զանազան տեղերում:

Նշելի է նաև, որ բառերի այդ նախնական շերտը, բացառությամբ մոտ երկու տասնյակ անձանոթ՝ արքե՛, ասի, բաղակ, զետու՛, խու՛րեյ, ձանձամ, մատո՛իչ և այլ բառերի, կազմված է V—X դարերի մատենագրության, գլխավորապես՝ Աստվածաշնչում, Փիլոնի, Ոսկերեքանի, Խորենացու և Նարեկացու երկերում հանդիպող բառերից:

Մյուս բառերի շարքում բարբառային անձանոթ և անստույգ բառերի, ինչպես նաև մեր մատենագրության ավելի ուշ շրջանի երկերից վերցված բառերի առկայությունը ինքնին հաստատում է, որ դրանք «Բառք Փիլոնի» բառարանի բառացանկերին ավելացվել են հետագայում, երբ վերջինս արդեն գոյություն ուներ, որպես բառարան: Այս բառերի մեջ էլ զգալի թիվ են կազմում մեր մատենագրությամբ չվկայված և միայն հին բառարաններում հանդիպող բառերը, որոնք ըստ ծագման աղբյուրների և առաջացման հանգամանքների կարելի է բաժանել 3 խմբի.

ա) Հայերեն բարբառային բառեր կամ զրական բառերի բարբառային արտասանություններ, ինչպես՝ եղեգնոտ, թե-

սել, ծիծանակ, ձանձամ, մատո՛իչ, բեքեկ, էնբոշխնել, էրեց և այլն:

բ) Հայերեն խոսակցական լեզվում գործածված օտար բառեր:

գ) Գրչագրական աղավաղումների պատճառով նախնական ձևն ու իմաստը փոխած, մթազնած բառեր:

Բառարանի արբանէ, ասակից, անկոէն, բաղակ, գրաւազր, ետրոն, զետուք, էախո՛հ, թարգաղա, թեսել, խաշաշուն, ծիծանակ, կարկ, հերոզէս, հոյ, ձանձամ, ղալկար, մագոն, մատո՛իչ, մակետոյ, յեղեղ, ոնքինոտ, սկիլայն, բեքեկ և բազմաթիվ այլ բառեր, բացի հին բառարաններից, մատենագրական այլ հուշարձաններով չեն վկայվում:

Բառարանում բերվում են նաև բառակապակցություններ, հարազիր բարդություններ և հատուկ անուններ, որպես զարմ և հետ. խազմ և խակ, խուն և դուն, կահ և կարասի, մասն ծամանակի, Բանբար և տաղանդ, Արել, Ամբակում, Արիսակ, Ազար, Ասֆանագ և այլն:

Հետագայում այս բառարանը որոշ ձեռագրերում միացվել է իրեն ժամանակակից մեկ ուրիշ բացատրական բառարանի հետ, որը մեր ձեռագրերում հանդես է գալիս «Նւթնեբորդ գլուխ գրոցս» խորագրով, սակայն՝ ոչ թե այդ երկու բառարանների բառերի խառնումով և այլբերնական վերադասավորումով, այլ մեզ արդեն ծանոթ բառարանի բառացանկերին, վերջից, կցվել են մյուս բառարանի համապատասխան բառացանկերը: Նրանց ընդհանուր, միացյալ բառարանը կա Մատենադարանի № 267 և № 5925 ձեռագրերում և վերջինիս մեջ «Բառք խորանին» բառարանի Ա-ի բառացանկի վերջում, վերնագրի ձևով, գրված է՝ «Այլ բառք որ չեն խորանին», ապա դալիս են մյուս բառարանի բառերը, իսկ մնացած բառացանկերում նման սահմանազատող նշումներ չկան: Քննված բառարանից նույնպես բազմաթիվ նոր, անհայտ բառեր են հանդես գալիս, դրանց մի մասը, Ե. Մեղրեցու բառարանի միջոցով, անցել է Արմատական բառարանին:

Մատենադարանում այս բառարանը կա 58 ձեռագիր ժողովածուներում, որոնք ընդօրինակվել են Երզնկայում, Վանում, Մեծոփի վանքում, Ս. Սահակի վանքում, Հովհաննավանքում, Ն. Զուղայում, Կ. Պոլսում և գրչության բազմաթիվ այլ կենտրոններում:

Բառարանի բազմաթիվ գրչագրեր կան նաև արտասահմանի հայերեն ձեռագրերում: Ամենահին թվակիր ձեռագրերը Զմմառի № 204 և Փարիզի № 302 ժողովածուներն են, իսկ Մատենադարանում՝ № № 5596, 725 (XIII դ.), 4149 ձեռագրերը: Գրչագրերն իրարից զգալիորեն տարբերվում են ոչ միայն բառարանում եղած բառերի քանակով, այլ նաև մեկնություններով:

Ուսումնասիրությունների ժամանակ իրար հետ բաղդատված են այդ բառարանի Մատենադարանում եղած բոլոր գրչագրերը: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, մեզ հասած գրչագրերը ընդօրինակություններ են միայն, հետևաբար բառարանի ստեղծման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ինչ վերաբերում է բառարանի հեղինակին, ապա ձեռագիր հուշարձաններն այդ մասին ոչինչ չեն հաղորդում:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները ձեռագիր բառարաններից վերցված բառերի դիմաց դնում են «ի հին բառ. գրի», «հին բռ.» և նման այլ նշումներ՝ դրանց տակ նկատի ունենալով գլխավորապես «Բառք քերթողականք»-ը: Նրանք գտնում են, որ այդ ձեռագիր «հին» բառարանները գրված են XIII—XIV դարերում<sup>26</sup>: Ավելի հավանական պետք է համարել Ն. Ակինյանի կարծիքը, թե բառարանն ստեղծված պիտի լինի XI—XII դարերում:

Մյուս ձեռագիր բառարաններից «Բառք քերթողականք»-ը տարբերվում է մի քանի գծերով.

1. Եթե մի շարք հին բառարաններ միայն մի որոշակի երկի անհասկանալի բառերը բացատրող մատենակից բառա-

րաններ են, ապա այս բառարանը սնվում է մատենագրական ամենատարբեր աղբյուրներից, նրա նպատակը ոչ թե մի երկի, այլ ընդհանրապես մատենագրության մեջ հանդիպող անհասկանալի բառերի բացատրությունն է:

2. «Բառք քերթողականք»-ը պարունակում է բազմաթիվ բարբառային բառեր, նրա հեղինակը նպատակ է դրել գրական բառերի կողքին բացատրել նաև ճարտասանների լեզվում գործածվող բարբառային բառերը:

3. «Բառք քերթողականք»-ը մյուս հին բառարաններից տարբերվում է նաև իր կառուցվածքով՝ այբբենական կարգի համեմատաբար առավել կատարելությամբ, ինչպես նաև ընդարձակ ծավալով:

Նշելի է, որ բառարանի բառերը քաղված են մատենագրության ոչ թե բոլոր երկերից, այլ գլխավորապես աշխարհիկ բնույթի՝ բանաստեղծական, քերականական, այսինքն՝ քերթողական կոչվող երկերից, իսկ հետագայում՝ XV դարից հետո, այն ընդարձակվում է նաև կրոնական-աստվածաբանական երկերից ու նրանց վերաբերող պատրաստի բառարաններից վերցված բառերի հաշվին:

Միջնադարյան ձեռագիր բառարանների հիմնական մասը, մասնակի փոփոխություններով հանդերձ, մեզ հասել է սկզբնօրինակներին մոտ ու հարազատ ընդօրինակություններով: Այդպես չէ «Բառք քերթողականք»-ը: Նա մի փոքր հին բառարանի՝ «Բառք յունարէն»-ի հիման վրա ստեղծված լինելով, դարերի ընթացքում անընդհատ ընդլայնվել է՝ իր մեջ առնելով մինչև այդ եղած բառարաններից ու մատենագրությունից եկող բազմաթիվ բառեր: Տասնյոթերորդ դարում բառարանն արդեն իր մեջ էր ձուլել մի շարք հին բառարաններ, ապա նրան միացվում է նաև Երեմիա Մեղրեցու՝ Աստվածաշնչի բառարանը: Բառարանի համար հիմք հանդիսացած «Բառք յունարէն» բառարանի բառերը, բացառությամբ Ա-ով սկսվողների, շատ ձեռագրերում դեռևս նախնական ձևով տեղավորված են «Բառք քերթողականք»-ի բառացանկերի սկզբում: № 4149 (նաև այլ) ձեռագրի «Բառք քերթողականք» բառարանում՝ «Բառք յունարէն»-ից վերցված վերջին բառի դիմաց գրված

<sup>26</sup> Տե՛ս նոր հայկազյան բառարան, հտ. 1, էջ 14 (այսուհետև՝ ՆՁԲ):

է «յոյն» բառը, որը նշանակում է, թե բառացանկի սկզբից մինչև այդ նշումը եղած բոլոր բառերը պատկանում են «Բառք յունարէն»-ին: Բառարանի մեջ են մտել նաև «Բառք քերականին» բառարանի աղատ, բացատ, բաղաձայն, բերանուն, գերադրական, գերհատուցական, գերանուն, ենթանկելի, եղ առ մու, ըմբաղդատութեան, լծորդութիւն, խած, խոնարհումն, կիսաձայն, հագներգութիւն, հոլովականք, մակգիր, մակաւասար, մականուն, յոյր, յաւղ, յարանուն, ներկուտ, նախադրութիւն, ոլորակ, ողբերգութիւն, շեզոք, պիտակ, վերառուցեալ, տրամադրութիւն, փաղանուն, փաղառութիւն և այլ բառեր, որոնք կազմում են «Բառք քերականին» բառարանի բառերի կեսից ավելին:

Այդ բառերից մի քանիսը «Բառք քերթողականք»-ում արդեն այլ ձևով են մեկնվում, ինչպես՝ «Գիւցազնաբար-բաջար», փոխանակ՝ «Գիւցազնաբար-որպէս դիւցազանց վայել է», «Դուզնաքեայ-սակաւ կամ լոկ կամ սոսկ» փոխ. «Դուզնաքեայ-փոքր» և այլն:

Դա նշանակում է, որ բառարանագիրները հին բառարաններից օգտվելիս իրենց վերաբերմունքն են ցույց տալիս այդ բառարաններից վերցվող բառերի նկատմամբ՝ ճշգրտում, փոփոխում և ընդարձակում են բացատրութիւնները: Բառարանի մեջ են մտել նաև «Բառք Փիլոնի» բառարանի ավելի քան 50, և «Ենթներորդ գլուխ» բառարանից շուրջ 40 բառեր՝ իրենց անփոփոխ մեկնութիւններով: Մյուս բառարաններից, ինչպես՝ «Բառք Երրայեցուց», «Բառք Գաղիանոսի» և այլ հատուկ կենտ բառեր են անցել «Բառք քերթողականք»-ին: Այսինքն՝ ոչ քերթողական բնույթի բառարանները դեռևս չեն միացված վերջինիս:

Բառարանի վերնագիրն արդեն սկզբից զաղափար է տալիս նրա մեջ հավաքված բառերի մասին: Չնուազանք մի մասում բառարանը համառոտակի վերնագրված է «Բառք քերթողականք» կամ «Բառք քերթողաց»: Չնուազանք մեծ մասն ունի բառարանի իսկական, ամբողջական վերնագիրը. «Այս բառք են քերթողականք վասն չափոյ հոմերական տաղիցն»<sup>27</sup>

<sup>27</sup> Չնուազանք մի մասում՝ տաղիցն:

վասն զի քերթողական արհեստքն չափաբերականք են և չափով վարին և էն որ գեղջուկք են, որով ճարտասանքն վարին զի յաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանիցն և հարկ է յոքնահամար եղանիլ»<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է վերնագրի «վասն չափոյ հոմերական տաղիցն» արտահայտութեանը, ապա այստեղ «հոմերական» ասելով հասկացվում են ոչ թե Հոմերոսի երկերը, այլ բնդհանրապես չափածո տաղերը: Մեր մատենագրութեան մեջ «հոմերական»-ը փոխարինում է նաև «բանաստեղծական» բառին և այդպես էլ բացատրված է Առձեռն բառարանում:

Չնայած բառարանը միայն չափագրված, բանաստեղծական երկերի բառերից չի կազմված և ոչ էլ քերթողական արվեստին նվիրված հատուկ բառարան է, բայց և այնպես բառարանի վերնագիրը ճիշտ է բացահայտում նրա էությունը. այն հավաքածու է քերթողական և գեղջուկ բառերի: Վերնագիրը «աղէկ խաբէական վերնագիր մը»<sup>29</sup> չէ, ինչպես խստութեամբ ասում է Սուքրյանը, միաժամանակ ճիշտ նկատելով, որ հեղինակի նպատակը «չէ բանասիրաց քերթողական բառագիրքը մը ընծայել»<sup>30</sup>:

«Բառք քերթողականքի» բառերի քանակին և նրանց դասավորութեանը այլևս չենք անդրադառնում, որովհետև այդ հարցերի մասին արդեն խոսվել է սույն աշխատութեան ներածականում: Սակայն պատկերացման համար կրեքք միայն երկու քաղվածք՝ մեկը Բ-ի բառացանկի սկզբից, մյուսը Հ-ի բառացանկի վերջից: Հեշտութեամբ կնկատվի, որ բառացանկերի սկզբում բառերի դասավորութեան ավելի կանոնավոր է, և այդ մասերից օգտվելը համեմատաբար դյուրին է, քան բառացանկերի վերջում:

ժամարոնակ. անժամանակ:	ժառանգորհ. պարզևատու:
ժամարհեստ. ամենարուեստ:	ժերշարժող. անշարժական:
	ժամողասէր. ունայնասէր:

<sup>28</sup> Մատենագրան, ձեռ. № 2371, էջ 186ր:

<sup>29</sup> Ա. Սուրեան, Հոմերական բառագիրք և հոմերական տողք, «Բազմավէպ», 1877, էջ 19:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 20:

ժամ. առաւառ:  
 ժամողարկը. անցաւոր:  
 ժամ. պահ:  
 ժամանակ. հասանել կ. յա-  
 ուաջել... և այլն<sup>31</sup>:  
 Հպատակ. հնազանդ:  
 Հոետոր. վարդապետ կամ  
 ճարտասան:

Հոփսոսիմէ. մեծ խորհուրդ:  
 Հուպ. մերձ:  
 Հանգէտ. զոյգ կամ հաւա-  
 սար կամ նման:  
 Հանգերձեալ. լինելոց:  
 Հրաջք. զարմանք:  
 Հեթանոսք. աշխարհ(ք):  
 Հոտորահատ. լի և կաճ<sup>32</sup>:

«Բառք քերթողականք»-ը բառացանկեր ունի մեսրոպյան աշուրներնի բոլոր տառերով, իսկ հետագայում, XV դարից սկսած երևան են գալիս Օ և Ֆ տառերով բառերի ցանկերը: Բառարանն սկսվում է «աստուածազան, աստուածազարդ» բառերով և ավարտվում «քուք» բառի մեկնությամբ: Մյուս հին բառարաններից վերցված բառերի մեկնությունները երբեմն ընդարձակվում են նոր բառերով, «կամ» շաղկապով կապվող հոմանիշներով, իսկ եզակի դեպքերում փոխարինվում նոր մեկնությամբ:

Վերջապես անցնելով բառարանի բառամթերքին, մենք այն բաժանում ենք երկու մասի.

1. Հայ մատենագրության մեջ V—XII դարերում գործածված բնիկ և օտարամուտ բառեր՝ վկայված գրական հուշարձաններով.

2. Մատենագրության մեջ չհանդիպող, անծանոթ, չվկայված բառեր:

Առաջին խմբի մեջ մտնող բառերը կազմում են բառամթերքի հիմնական մասը: Դրանք սբ. գրքերից, գլխավորապես հունարան գրական երկերից քաղված բառեր են, ինչպես՝ արտասանել, աղանդ, անապակ, բաղդատութիւն, գերադրական, եռազարդ, ըմբռշխնել, թարգման, կացուրդ, համագոյ, հերձուած, հրեշտակ, դամբար, ճամարտակել, մեկուսի, ներհուն, շարագրել, ոգել, պարունակ, սարկաւագ, վերձանող, տարտամ, փաղառութիւն, քաջուղէջ և այլն: Այդ խմբի բառե-

րի մեջ զգալի թիվ են կազմում հունարան նորակազմությունները:

Բավականին շատ են նաև հունարեն, պարսկերեն, ասորերեն, եբրայերեն և այլ լեզուներից փոխառված բառերը, ինչպես՝ աղեն, ամարու, ասխիս, արուճանակ, ամատտարա, բաղէն, բեզեկ, բաղիստր, գրամարտիկոս, գաղիշ, գեղզուր, գուլայ, դիաթիկ, դաստիշոն, գալապր, երգար, զոպայ, զովոդ, թերափիմ, թալպիոթ, լիբանոն, խոխոմ, կաթարոս, կաղէս, հիպերէտ, հարակաշ, հաղը, ճաղագ, մաքման, յետկար, նեսար, շարապայ, պուետիկոս, ուփայ, սաղեմովթ, սեղայ, սինկղիտոս, սիդա, տրապիդիտ, փեղմոնի, փոենիտ, քովթար և այլն:

Երկրորդ խմբի բառերը մատենագրությամբ չվկայված բառեր են, որոնք մնացել են միայն հին բառարաններում, նրանցից անցել տպագիր բառարաններին: Այդ չվկայված բառերի մեծ մասը հայերեն պարզ, ինչպես նաև հայերենի բառակազմական միջոցներով բարդված ու ածանցված բառեր են, որոնք գործածվել են ինչպես գրական, այնպես էլ ժողովրդական խոսակցական լեզվի մեջ: Դրանց շարքում հունարան նորակազմությունների առկայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չվկայված բառերի մի մասը գրական անհայտ երկերից, գլխավորապես՝ ճարտասանական երկերից, քաղված բառեր են, որոնք կարող էին ստեղծվել ու գործածվել ոչ թե շինականների, այլ գրագետ, դպրության հետ կապ ունեցող մարդկանց կողմից, մանավանդ որ այդ բառերի այլաձևերը բավականին լայն տարածում ունեն հայ միջնադարյան մատենագրության մեջ:

Ուրեմն, այս խմբի բառերը, իրենց հերթին, նորից կարելի է բաժանել երկու մասի:

ա) Բարբառային բառեր, որոնք գործածվել են ժողովրդական խոսակցական լեզվում, բարբառներում և հավանաբար չեն եղել գրական լեզվի մեջ: Դրանք հայերեն, մասամբ օտար ծագման բառեր են, ինչպես՝ այնակ, բայծել, զղնի, գուլայ, դամանել, թոռակուլ, խատակել, կացի, կաղթ, դատիկարել, շիր, շիշք, պլշել, ջնդել, սեղա, ցովրել, քանքել և այլն:

բ) Անհայտ գրական երկերում գործածված բառեր, ինչ-

31-Մատենագրան, ձեռ. N 4149, էջ 302բ:

32 նույն տեղում, էջ 315ա—315բ:

պես՝ արտահերքել, արշաւանակից, գերներհուն, դերարկեալ, երահրաւէր, ընդագրել, ընդոտնոց, ժառաշնորհ, ծնելակից, համանձունք, հակափրկական, ձանարկու, ճեմարար, ճոխաձեմ, մակազոյն, մարզարան, մեղսամակարդ, միաթերիճ, յոքնիշխան, ներացիկ, նախագահակ, նախատառել, ներդորժակ, ներամտութիւն, շամբշապետ, ունախոհ, շարահոռակ, պարարկող, փահաւորել, սոփաբան, վերելակել, փաղասէր և այլն:

«Բառք քերթողականք»-ի հետագա փոփոխութիւններին մենք առայժմ հանգամանորեն չենք անդրադառնա: Բառարանն անընդհաւ ընդարձակվելով հիմնականում մյուս հին բառարաններից, մասամբ էլ Աստվածաշնչից և այլ աղբյուրներից վերցված բառերի հաշվին՝ 1698 թ. տպագրվում է «Բառգիրք հայոց» խորագրի տակ, Երեմիա վարդապետ Մեղրեցու անունով:

#### ԵՒԹՆԵՐՈՐԿ ԳԼՈՒԽ

«Եւթներորդ գլուխ գրոցս, որ կոչի բառագիրք, զոր այժմ մեկն է զմնացուածն» վերնագրով հայերեն բացատրական բառարանը բովանդակությամբ շատ մոտ է «Բառք խորանին» բառարանին: Բառագրքի ամենահին օրինակները № 530 և № 5919 ժողովածուներն են, իսկ մյուս գրչագրերը ավելի ուշ ժամանակների ընդօրինակություններ են: Ձեռագրերի մեծ մասում բառարանի վերնագիրը չկա, միայն № № 530, 1424 (1620 թ.) և 3207 (XVII դ.) ձեռագրերում է, որ բառարանը հանդես է գալիս վերևում նշված ընդարձակ վերնագրով: Երեք ձեռագրերում (№ № 529, 2335 և 5919) բառագիրքը թերի է, բառեր ունի միայն Ա, Բ և Գ տառերով: Վերջին երկու ձեռագրերն ընդօրինակված են № 529 ձեռագրից կամ նրա հետ միասին՝ մի այնպիսի նախօրինակից, որի թերթերը թափվելով ու իրար խառնվելով այնպես են դասավորվել ու կազմվել, որ բառարանի մեծ մասն անհայտացել է, իսկ մյուս մասը՝ շփոթվել «Բառք երբայցեոց» բառարանի հետ և այդպիսով երկու բառարաններն էլ աղավաղվել են: Մնացած ձեռագրերից այս

բառարանն ունեցող լավագույնը № 530 ձեռագիրն է, որի մեջ, բառարանի վերջից, պակասում են Ք-ով սկսվող վերջին 4 բառերը միայն:

Այդ ձեռագիր ժողովածուն ընդօրինակվել է ԺԴ դարում, Ձագավանքում, Ստեփաննոս Վարագեցու կողմից, բովանդակում է մի շարք հայերեն հին բառարաններ, Ստ. Սյունեցու քերականությունը և տոմարական մեկնություններ: Բառարանը մեր մատենագրության մեջ երևան է եկել հավանաբար XIV դարի առաջին քառորդում, Հովհ. Որոտնեցու ասպարեզ իջնելուց առաջ:

Բառարանի կազմողը, զուցե, ծանոթ լինելով հին, արդեն գոյություն ունեցող բառարաններին, նրանցից չի օգտվել, այլ ինքնուրույն է բացատրել ու մեկնել իր հավաքած բառերը: Բառագիրքը, ինչպես վկայում է նրա վերնագիրը, անտարակույս, եղել է վեց գլուխներից բաղկացած մի աշխատության կից բառարան, հանդիսացել է նրա յոթներորդ գլուխը, որտեղ հավաքվել և բացատրվել են աշխատության մեջ անհասկանալի բառերը: Թե ինչ բովանդակություն և ինչպիսի գլուխներ է ունեցել այն ժողովածուն, որի «Եւթներորդ գլուխ» է համարվել քննվող բառարանը, դրան կանդրադառնանք հետո:

Բառագիրքը ծավալուն չէ, նրա ամբողջ բառամթերքը կազմված է 430—440 բառից, բառացանկերը փոքր են, երբեմն բառերի նվազագույն քանակով, Ո և Վ տառերով բառեր չկան, զգալիորեն շատ են ընդարձակ բացատրությունները:

Այս բառարանը մեկնվող բառերի զգալի ընդհանրություններ ունի «Բառք քերթողականք» բառարանի հետ, նրա ավելի քան 80 բառեր, ինչպես արտաշիկացեալ, արզոբ, ամատտարա, բարանություն, զակուցեալ, դիմառնություն, զընկենուլ, ընդհատ, ժտել, խնճոյք, կոնք, կոզակք, հուծկու, հոյ, ճայրտեալ, մաննա, մեղմեղ, յակճիոս, նեկաթ, շութափել, պատգահ, ջողիթ, վակժոյժ, տարբուն, ցնցուղ և այլ բառեր կան նաև վերջինիս մեջ: Սակայն այս բառերի մեծ մասը բառարաններից յուրաքանչյուրը մեկնում է տարբեր ձևի:

Օրինակ՝

Քառօր Բերթոզականք

Աշխոյժ. սաստիկ կամ բու-  
որն:

Ապառում. խիստ կամ վայ-  
րագ:

Արգոք. քուրց ոսկոյ կամ  
կտաւի:

Ապախտ. ուրացող բարեաց:  
Բարառնութիւն. անխաւսից  
բան զնել:

Գաղջ. անպիտան

Գակուցեալ. երկուցեալ:

Գեղաղէշ. հրաշագեղ:

Գիմառնութիւն. անխաւսից  
բանս զնել<sup>33</sup>:

Դահլիճ. սրահ

Դատել. քննել:

Դաշնակել. նուագել:

Զընկենուլ. գրկել կամ մեր-  
ժել:

Ժտել. խնդրել կամ աղաչել:  
Խնճոյք. ամբոխք կամ լկտի  
խաղ:

Կոնք. ափսէ:

Հուժկու. ուժեղ:

Հոյ. ցեց:

Մակացու. վերակացու:

Շարագիր. ասի որ զիրոյ  
ժամանակին իրս գրէ:

Որակութիւն. ունակութիւն  
յարամնայ կամ ի բնէ:

Քաղաքավարել. հաստա-  
տուն կալ:

Երթերորդ զուլիս

Աշխոյժ. դարաւոր:

Ապառում. ամբարտաւան:

Արգոք. կտաւ ի վուշ:

Ապախտ. անփոյթ:

Բարառնութիւն. որ ըստ բա-  
րուց է:

Գաղջ. ոչ ջերմ և ոչ ցուրտ

Գակուցեալ. ընկալեալ:

Գեղաղէշ. աղէկ:

Գիմառնութիւն. ըստ դի-  
մաց:

Դահլիճ. դուքան:

Դատել. ընտրել:

Դաշնակել. երգել:

Զընկենուլ. յամել:

Ժտել. վստահել:

Խնճոյք. բազմութիւն:

Կոնք. որ ի սեանն գլուխն:

Հուժկու. կատարեալ:

Հոյ. անուանի:

Մակացու. արուեստաւոր:

Շարագիր. ճարտասան

Որակութիւն. որպիսութիւն,  
մարդ կամ ոչխար կամ  
այլ ինչ:

Քաղաքավարել. արիւնաղը-  
րել:

«Քառօր խորանին»-ի հետ այս բառարանն ավելի քիչ ընդ-  
հանրություն ունի, շուրջ 3 տասնյակ բառերի, որոնք նույն-  
պես, հիմնականում, տարբեր մեկնություններ ունեն այդ բա-  
ռարաններում: Օրինակ՝

Քառօր խորանին

Արաստ. հրապարակ:

Բաղադրել. շարագրել:

Գնդակ. խնձոր:

Ըստինքեանք. ըստ բաւա-  
կանի:

Զընկենուլ. արհամարհել:

Ածող. քարշող:

Արգասաւոր. գովեալ:

Ապաքէն. հաստատ:

Զանձի. լարի:

Երթերորդ զուլիս

Արաստ. հզար:

Բաղադրել. զուգադրել:

Գնդակ. թանրձութիւն մար-  
մնոյ:

Ըստինքեանք. ըստ բնու-  
թեան:

Զընկենուլ. յամել:

Ածող. սովոր:

Արգասաւոր, արդիւնաւոր:

Ապաքէն. գիտեա՛:

Զանձի. իմանի կամ ասի:

Բերված օրինակները հաստատում են, որ իրոք, այդ բա-  
ռագիրքը գրեթե կապ չունի նախորդ բառարանների հետ, այլ  
ինքնուրույն աշխատություն է: Բառագրքում, մյուսների հա-  
մեմատ, բառերի տարբեր մեկնությունը արդյունք է այն բանի,  
որ այդ բառերը գալիս են այլ բնագրերից, որտեղ և նրանք օգ-  
տագործված են այլ իմաստներով, քան նախորդ բառարան-  
ների աղբյուրներում:

Այս բառարանի ավելի քան 60 բառեր, ինչպես անտիղ,  
ասկաղոն, ագարոս, անոտնէ, արգաբայ, գակուցեալ, դիոնի-  
սիս, ենակիմք, զրահասն, հրրիկ, ճարտակ, մաթան, յեղի, նա-  
գեք, շպտի, պատեղ, սէրարբեալ, սաղերովդ, տաննաբովթայ,  
բափաթ, քաղտնատ և այլն չեն հանդիպում մեր հին մատե-  
նագրության մեջ:

Մյուս բառերին անցնելուց առաջ անհրաժեշտ է անդրա-  
դառնալ բառարանի մատենագրական աղբյուրների հարցին:  
Այս բառարանը սերտորեն կապված է Փիլոնի մատենագրու-  
թյան հետ: Բառագրքի շուրջ 140 բառեր կամ նրա ամբողջ բա-

33 Տե՛ս նաև բարառնութիւն:

աամթերքի մոտ մեկ երրորդ մասը վերցված է Փիլոնի աշխատությունների ինչպես հայերեն թարգմանություններից, այնպես էլ նրանց հայ մեկնություններից: Այդ բառերի մի զգալի մասը, իր հերթին, առնված է Փիլոնի «Այնոցիկ որ ի Լինելութեանն խնդրոց և լուծմանց» հայտնի աշխատությունից, ապա՝ «Յաղագս տասն բանից», «Աստուածային արինացն այլաբանութիւն», «Յաղագս նախախնամութեան», «Կեանք իմաստնոց» և բառերի մի որոշ քանակ էլ մյուս աշխատություններից: Այդ բառերի թվում կան այնպիսիները, որոնք լայն տարածում չունեն հայ մատենագրության մեջ և հանդիպում են միայն Փիլոնի վերոհիշյալ գործերում: Բերում ենք այդ բառերն առանց մեկնությունների. անծող, արկադիր, անտղէ, աղխընդոր, աներածիշտ (համտ. աներածշտագոյն, — Բառք Փիլոնի), բարան, եռակմբայք, իրոցեալ, հոր(ք), փուղծ, քըրտալ (քրտնալ) և այլն, իսկ անըստուրան, անթրունդ, թուոս, կառածուղ, բաղբաղա, կուտպան, շոշական, պատիճակել, վիշապակ քառերը գործածված են Փիլոնի՝ ինչպես երկերում, այնպես էլ նրանց Հովհ. Սարկավագի և Հովհ. Երզնկացու մեկնություններում:

Երզնկացու մեկնություններում են գործածված ամաղեկ, զմծեալ, հեսսայք, հրրիկ, փշտին և այլ, իսկ Սարկավագի մեկնություններում՝ հրատարակել, շպտի, պիտա, բառերը: Բառագրքի հեղինակն, անշուշտ, Փիլոնի երկերից բացի ձեռքի տակ ունեցել է նաև նրանց մեկնությունները, որոնք հավանաբար մտել են բառագրքի աղբյուր-ժողովածուի մեջ: Ուստի, անհրաժեշտ է Փիլոնի մեկնությունների մասին թեկուզ համառոտ տեղեկություններ տալ:

Փիլոնի երկերի առաջին խմբի՝ Հովհ. Որոտնեցու, մեկնությունները շատ համառոտ են, նրանց շարադրանքում առանձին բառերի ու արտահայտությունների ուղղակի, կոնկրետ բացատրություններ չկան, ինչ հատուկ է մեկնությունների մյուս երկու խմբին: Բառագրքում, ինչպես տեսանք, այս խմբի մեկնություններից վերցված բառեր չկան և դա ցույց է տալիս, որ, ամենայն հավանականությամբ, բառագիրքը գոյություն է ունեցել նախքան Որոտնեցու մեկնությունների հանդես

գալը: Այդ հանգամանքն էլ հենց նկատի առնելով, մենք բառարանի ստեղծման առավել հավանական ժամանակը համարում ենք XIV դարի առաջին բառորդը՝ Որոտնեցու մանկավարժական ու գիտական գործունեության նախաշրջանը:

Փիլոնի երկերի երկրորդ խմբի՝ Հովհ. Սարկավագին ընծայվող, մեկնություններն համեմատաբար ընդարձակ են, հագեցված բազմաթիվ առանձին բառերի, նաև բառակապակցությունների բացատրություններով: Այդ մեկնությունների մեջ, շատ հաճախ, երբեմն նույնիսկ իրար հետևից, տրվում են զանազան բառերի բացատրություններ, օրինակ՝ խանդալ-քինանալ, բերկրել-խնդալ, անբաղայ է-անբամբաս է, շապրամամբք-յիմարութեամբք, ապերախտ-երախտամոռաց, ճակատագիր-զհարկատրն ասէ, առաթուր-ոտնակոխ, բարիատեացն-բանսարկուն է: Այսպես էլ մեկնվում են շիշք, վեհերոտ, քաշն, տրամագիծ, պատիճակել, կետն, գրապանն, հարքն, իւղապլեսալք, արդարականս, օսարդ, ղընդշումն, եղեմն, զլանալ, զնդալ, խոհունն, աոինչն, ձայն, ցեցն) և բազմաթիվ այլ բառեր: Վերցնենք մի քաղվածք Փիլոնի «Յաղագս Յովնանու» աշխատության՝ Սարկավագի մեկնությունից.

«Բան. վայրաց զհետ ես: Լուծումն. դու ասէ վայրենի մարդ ես, ոչ տնկեալ ես, և ոչ սնուցեալ: Փայտատ. կացին: Նայացուցանել. գիջացուցանել: Բաժակել. շուրջ փոս կտրել, որ ջուրն ի ներս ժողովի և զաւելորդն և զշորն ի բաց հատանեն, որ ջեռնուցու յարեգականէ»<sup>34</sup>:

Այնուհետև, Փիլոնի մեկնությունների երրորդ խումբը՝ Հովհ. Երզնկացու մեկնությունները, մեր նյութի տեսակետից, ավելի ուշագրություն են արժանի<sup>35</sup>:

Այդ խմբի մեկնություններն ավելի ընդարձակ են, բայց այնտեղ, շարադրանքի ընթացքում, զանազան մեկնություն-

34 Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 267բ:

35 Մեկնությունների այդ խմբի մեջ, ըստ Գ. Գրիգորյանի, մեկնվում են Փիլոնի հետևյալ երկերը. 1. Յաղագս նախախնամութեան, 2. Յաղագս բանունել և անասուն կենդանեաց, 3. Այնոցիկ որ ի Լինելութեանն (չորս մասով), 4. Կեանք իմաստնոց, 5. Յաղագս վարուց կենաց տեսականի և 6. Աստուածային օրինացն այլաբանութիւն:



ներ ու բացատրություններ համեմատաբար քիչ են, քան նախորդ խմբի մեկնություններում: Բառերի բացատրության մի քանի օրինակ էլ ցույց տանք այս խմբի մեկնություններից. «Կուտպան: Լուծումն. կոյտ ասեն ձիոցն երամակին որ զկոյտն պահէ ասէ»<sup>36</sup> (տե՛ս բառարան):

«Ջկրիւսոս Պագտուզոս: Լուծումն. թագատր էր լիբէացոցն...»<sup>37</sup> (տե՛ս բառարան):

«Կառաթուզ: Լուծումն. մծեխն է»<sup>38</sup> (տե՛ս բառարան):

«...բազմակն ճրագն . է ի վերայ աշտանակի, զոր բազմակ կոչի...»<sup>39</sup> (տե՛ս բառարաններ՝ «Բառք խորանին» և «Բառք Փիլոնի»):

«Առաքինի ազգին մարդկան: Լուծումն. առաքինին լաւ ասէ՛ զի լաւ ազգ է մարդական քան զայլ կենդանեաց»<sup>40</sup>:

«...և խնդա՛ որպէս Իսահակ, որ խնդութիւն թարգմանի...»<sup>41</sup> և այլն:

Այս մեկնություններից (հատկապես երկրորդ խմբի) բառարանի մեջ մտած բառերը, ինչպես մասամբ երևում է մեր բերած օրինակներից, վերցվել են բնագրերից՝ իրենց բնագրային մեկնություններով: Փիլոնի մեկնությունների երրորդ խմբի ցանկը գիտելուց հետո այն միտքը ծագեց, թե «Եւթն-երորդ գլուխ» կոչվող բառարանը հենց այդ վեց գլուխներից բաղկացած մեկնությունների հաջորդ գլուխ-բառագիրքը պիտի լինի: Թվում էր, թե բառարանի մատենական, հետևաբար և հեղինակային պատկանելության հարցը պիտի լուծվի, թե այդ բառարանի հեղինակն ինքը, այդ խմբի մեկնությունները կատարող Հովհաննես Երզնկացին է: Սակայն հետազոտությունները ցույց տվեցին, որ բառագրքի մեջ մտած բառերի մեծ մասը արդեն առկա է մեր հին մատենագրության երկերում, մի մասը գործածվում է Փիլոնի թարգմանություններում

և լոկ մի խումբ բառեր, որոնք թվարկվեցին վերևում, վերցված են այդ խմբի մեկնություններից:

Վերջապես, բառագրքի մնացած այն բառերը, որոնց մասին շխտվեց, հայ մատենագրության մեջ լայն տարածում ու գործածություն ունեցող բառեր են, բացառությամբ՝ արգանակ, գեղգուր, գառացոյց, դաբիր, թարսիս, թերափ, թերափիմս, խոռապետ, մաննա, վայրագալիթ բառերի, որոնք մեծ մասամբ օտար ծագում ունեն և գործածված են միայն Աստվածաշնչում, ծիւն բառը Եղիշեի, կերպառութիւն-ը՝ նարեկացու մոտ և այլն:

Այս ամենից հետո պետք է եզրակացնել, որ բառագիրքը եղել է յոթներորդ գլուխը մի այնպիսի ժողովածուի, որը բովանդակել է, հավանաբար, Փիլոնի աշխատությունների թարգմանությունները, հատկապես Աստվածաշնչի լուծումները, ապա այդ թարգմանությունների՝ Սարկավագի և Երզնկացու մեկնությունները:

«Եւթներորդ գլուխ» բառարանը հայ միջնադարյան բառարանագրության հետագա զարգացման արդյունքն է, նրա առաջընթացի մի քայլը: Նա հատկանշվում է ոչ միայն հեղինակման ինքնուրույնությամբ, այլև դրա մեջ որակ դարձող մեկնությունների ու բացատրությունների ճշտությամբ, միաժամանակ գերծ շինելով մի շարք բառերի աղավաղումներից և սխալ մեկնություններից: Բառարանն արժեքավոր է նաև նրանով, որ դարերի անհայտության հատակից վեր է հանում մեր լեզվում գործածված և մինչև օրս անհայտ բազմաթիվ նոր բառեր:

#### ՉԱՔԱՐԻԱ ԳՐԶԻ ԲԱՌԱՐԱՆԷ:

Չեռագրերում կա մեկ այլ բացատրական բառարան: Նրա ամենահին գրչագիրը Մատենագրանի № 3202 ժողովածուն է, որն ընդօրինակել է Չաքարիա գրիչը Խիզանում, 1417 թվականին, ապա դրանից երկու տարի հետո՝ 1419 թ., այդ ձեռագրից պատճենված է № 3201 ձեռագիրը: Մյուս ձեռագրերը նույնպես առաջինի ընդօրինակություններն են: Բառարանի

36 Մատենագրան, ձեռ. N 1053, էջ 250բ: Չեռագրում՝ կուտպած:

37 Նույն տեղում, էջ 256բ:

38 Նույն տեղում, էջ 269բ:

39 Նույն տեղում, էջ 278բ:

40 Նույն տեղում, էջ 372բ:

41 Նույն տեղում, էջ 381ա:

հեղինակը, ամենայն հավանականությամբ, հենց ինքը՝ № 3202 ձեռագրի գրիչ Զաքարիան է:

Բոլոր գրչագրերում էլ բառարանն անվերնագիր է, սկզբվում է աստուածակերտ, աստուածատունկ գլխաբառերով: Բառարանը ղեռնա լրիվ, ավարտուն գործ չէ. բառացանկերում պարբերաբար հանդիպում են չգրված, ազատ մնացած տեղեր, որոնց տողասկզբներում գրված են ինչ-որ բառերի սկզբի երկու տառերը: Անշուշտ, հեղինակը տողասկզբին դնելով այդ տառերը և բաց թողնելով մնացած տեղը, ցանկացել է այդ տառերով սկսվող գլխաբառեր գրել և բացատրել: Սակայն № 3201 գրչագրում այդ չգրված գլխաբառերի սկզբնատառերն արդեն չկան, ընդօրինակողը՝ Բարսեղ գրիչը, վերցրել է միայն մեկնված, լրիվ գլխաբառերը, որոնց թիվն անցնում է 730-ից: Բառարանում բառեր չկան միայն Ղ տառով, բառերը դասավորված են այբբենական կարգով:

Բովանդակության տեսակետից այս բառարանը մի յուրատեսակ, նոր բառարան չէ: Ձեռագիր բառարաններին ծանոթ բանասերն առանց դժվարության կարող է տեսնել, որ այդ բառարանում բերվող գրեթե բոլոր բառերն էլ, իրենց մեկնություններով, կան մյուս ձեռագիր բառարաններում: Զաքարիայի բառարանը, հետևաբար, մյուս բառարաններից ընտրված բառերի հավաքածու է: Այդ բառարանում ընդգրկված բառերը վերցված են գլխավորապես «Եւթներորդ գլուխ», «Հանդէս բանաստեղծաց», «Բառք խորանին» և «Բառք քերթողականք» բառարաններից: Միայն առաջինից այս բառարանին են անցել նրա բառերի կեսը՝ ավելի քան երկու հարյուր բառ, ինչպես՝ գնդակ, դաշնակել, ենթադատել, զարտուղի, էրևակն, ընծա, թարշիշ, ժառանգ, իմնապէս, խայժ, ծամածուռ, ծիւ, կառածուղ, հարստութիւն, ծաղկ, միսթաղ, յակձիոս, նագեր, շականջանել, պաստառ, սաւառնել, վայրագաւիթ, տամալոջ, փուղձ, քաղաքավարել և այլն: Ապա «Հանդէս բանաստեղծաց» բառարանից վերցված են ապարանք, բռնադատել, գերունակ, գուռել, եզր, զոյգ, թուրմ, իր, լոյս խաւարորբ, ծնկեալ, կապարձ, հանձար, ձայն, ճգոտել, մարթ,

չախունախօս, նենգօղ, շամբուշ, պատկեր, ջան, սեռ, սարդել, վանդ և այլ, նույնքան բառեր, որքան նախորդից:

«Հանդէս բանաստեղծաց» բառարանից Զաքարիա գրիչը վերցրել է միայն երկու՝ առընթեր հոմանիշ բառեր, մեծ մասամբ՝ գլխաբառերն իրենց կից հոմանիշների հետ:

Վերջապես «Բառք խորանին» բառարանից են քաղված առեղծանել, բանին, եղենափայտ, զուտող, ըղծութիւնք, իսկապէս, խիթալ, հուժկու, համանուն, մազապուր, սրսկապան, վարսավիրա, տաբատ, փոքրոզի, քերթոն և այլ բառեր: Այս ամենից հետո մնում է բառերի մի աննշան մաս, պարզապէս, շուրջ երկու տասնյակ բառ, ինչպես՝ անձնամատն, էապատիւ, հոլաթեան, հոշքուրակ, մշտասառոյց, վերապարել, տանուտէր, քթան և այլ, որոնք եթե մեզ անհայտ ուրիշ հին բառարաններից չեն քաղված, ապա բառարանի մեջ առնված ու մեկնված են հեղինակի կողմից:

Սակայն, նկատելի է, որ բառարան կազմողը մասնակի ուղղումներ ու խմբագրումներ է կատարում. այլ բառարաններից վերցված բառերը երբեմն բոլորովին ուրիշ ձևով է բացատրում, որոշ գեպքերում էլ մեկնություններն ընդարձակում՝ գլխաբառին նոր համարժեքներ ավելացնելով: Օրինակ՝ ապագէն. ամպրոպ, գերունակ, երկեան բառերը «Բառք քերթողականք»-ը մեկնում է որպէս՝ անգէն, խոսվութիւն և վրդովումն, առաւել, երկբայ, մինչդեռ այս բառարանում դրանք, համապատասխանաբար, մեկնվում են՝ վաւրարագէն, ամպայոյց, արատ և ամենակալ բառերով: Այսպիսով, բառարանն իր ծամանակաշրջանի արդյունքն է՝ XV դարի այն բառարաններից, որոնք ստեղծվում էին արդեն գոյություն ունեցող բառարաններից քաղված բառերի համագրման ճանապարհով: Կարևորն այն է, որ արդեն փորձեր են կատարվում փոքր բառարաններից ու գլոսարիաններից ավելի ընդարձակ բառարաններ կազմելու ուղղությամբ, հին բառարաններն ամփոփվում են մեկ ընդհանուր, համահավաք բառարանի մեջ:

Համահավաք մի բառարան է նաև «Բառք վարդապետացն» արքոց հաւաքեալ ի միասին» վերնագիրն ունեցող հայերէն բացատրական բառարանը, որն ստեղծ է Մատենադարանի № 7117 ձեռագրում<sup>42</sup>:

Այս բառարանը, սակայն, Զաքարիա զրչի բառարանից տարբերվում է նրանով, որ սա առաջինի նման ոչ թե տարբեր հին բառարաններից քաղված առանձին բառերից է կազմված, այլ ուղղակի երկու ամբողջական բառարանների միացման արդյունք է: «Բառք խորանին» բառարանի քննարկման ժամանակ նշվել է, որ այդ բառարանը հետագայում, XIV դարում, միացվել է «Եւթներորդ գլուխ» կոչվող բառարանի հետ և որ նրանց միացյալ բառարանը կա Մատենադարանի № 5925 և № 267 ձեռագրերում: Ահա այս միացյալ բառարանի հետագա խմբագրությունն է հանդիսանում «Բառք վարդապետացն» բառարանը: Մինչդեռ № 5925 և № 267 ձեռագրերում պահպանված բառարանը սոսկ մեխանիկական միացումն է «Բառք խորանին» և «Եւթներորդ գլուխ» բառարանների: «Բառք վարդապետացն» բառարանում, ընդհակառակը, աղբյուր-բառարանները ենթարկված են բառարանագրական վերամշակման՝ նրանց մեջ գտնվող բառերը վերագրաստվողված են ընդհանուր այբբենական դասավորությամբ: Բառարանի հեղինակը հավանաբար ծանոթ է եղել նախորդ միացյալ բառարանին, որը և մշակել ու խմբագրել է:

Բառարանը պարունակող № 7117 ձեռագիր ժողովածուն կազմվել է Մեծոփի դպրոցում XV դարի հայ մեծ պատմաբան Ե. զործիչ Թովմա Մեծոփեցու պատմվերով: Զեռագրում զետեղված նյութերը մեծ մասամբ ուսումնական նշանակություն ունեն: Այդպիսին է նաև «Բառք վարդապետացն» բառարանը: Բառարանի մշակողը հավանաբար ինքը՝ Թովմա Մեծոփեցին է:

<sup>42</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 60ա-79բ:

ՀԱՅԵՐԵՆ-ՄՈՆԳՈՒԵՐԵՆ ԲԱՌԱՅԱՆԿ

Տասներեքերորդ դարի հայ ականավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» աշխատությունը մեծարժեք հուշարձան է ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի զանձարանում:

Այդ երկի հիմնական բովանդակությունը մոնղոլական արշավանքների և նրանց դեմ ուղղված՝ հայ, վրաց, աղվան և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի պատկերումն է: Ժամանակաշրջանի պատմական-քաղաքական իրադարձություններին զուգընթաց, պատմագիրը տալիս է հայ, նաև նրա հետ բարեկամական ու թշնամական հարաբերությունների մեջ գտնվող ժողովուրդների կյանքի, ապրելակերպի, սովորույթների և կենցաղային այլևայլ հարաբերությունների նկարագիրը, հետաքրքիր փաստեր արձանագրում մոնղոլական լեզվի պատմության վերաբերյալ: Հետևաբար, Գանձակեցու երկն արժեքավոր է ոչ միայն պատմության, այլև լեզվագիտության, մասնավորապես մոնղոլերեն լեզվի պատմության համար:

Գանձակեցին իր շարագրանքի ընթացքում պարզաբանումներ է կատարում, բացատրում առանձին անհասկանալի բառեր, հատուկ անուններ, թարգմանում է օտար բառեր, ինչպես այդ անում են մյուս պատմիչները: Օրինակ՝ «...անուն նորա Սիմեօն, զոր Ռաբան-աթա կոչէին. ռաբանն ասորերէն՝ վարդապետ և աթայն թաթարերէն՝ հայր»<sup>43</sup>:

Կամ՝

«Եւ մարդիկ նորա վաճառականք, որք ունէին զտամաղտ նորա, այսինքն՝ զնշան և զգիր, համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն աշխարհս...»<sup>44</sup>:

Սակայն այսպիսի մասնակի, հընթաց շարագրանքի ար-

<sup>43</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 276:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 277:

ված գլուսաները չեն, որոնց նկատառումով մենք ընդգծում ենք Գանձակեցու երկի լեզվապատմական արժանիքը, այլ այն, որ Գանձակեցին հետաքրքրություն է ցուցաբերել ղեպի մոնղոլներին լեզուն, որին, հավանաբար, տիրապետել է: Նրա աշխատության լԲ գլուխը, որ վերնագրված է «Վասն ցուցման կերպարանաց թաթարին բացայայտութիւն սակաւութ» նվիրված է մոնղոլների արտաքինի, դեմքի, ձայնի, ինչպես նաև նրանց կենցաղային սովորությունների, նիստ ու կացի, յուրայինների և օտարների հետ ունեցած վերաբերմունքի, նրանց լեզվի հնչական-խոսակցական ձևի և այլնի նկարագրությանը:

Այդ գլխի վերջին մասում Գանձակեցին բերում է մոնղոլական բառերի մի ամբողջ բառացանկ՝ սկզբից դնելով հայերեն բառը, ապա նրա դիմաց՝ համապատասխան մոնղոլական բառը: Հենց այդ բառացանկն է, որ իր հերթին բարձրացնում է Գանձակեցու պատմության արժեքը, հետաքրքիր ու կարևոր դարձնում նաև լեզվի պատմության տեսակետից:

Ականավոր մոնղոլագետ Գ. Գ. Սանժեևը Կիրակոս Գանձակեցու «Պատմության» հրատարակիչ, ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանին ուղղած իր նամակում գրում է.

«Այն ամենը, ինչ Կիրակոսը հազորդում է մոնղոլների մասին, անշափ կարևոր նշանակություն ունի մոնղոլագիտության համար և դա առաջին հերթին ժԳ դարի մոնղոլական լեզվի պատմության տեսագծով»<sup>45</sup>:

Ստորև բերում ենք Գանձակեցու պատմության լԲ գլխի այն հատվածը, որի մեջ լրիվ ամփոփված է հիշատակված հայ-մոնղոլներին բառացանկը:

«Այլ և կանայք նոցա կախարդք էին և զամենայն ինչ հմայէին. և առանց հրամանի կախարդացն և դիւթիցն ոչ երթային ի ճանապարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին: Այլ և խօսք նոցա խժականք և անժանօթք ի մէնջ. քանզի կոչէին զանուն աստուծոյ՝ քանգրի, և զմարդ՝ էրէ, հարան և զկին՝ էմէ, արջի, և զանուն հօր՝ էչկա՛, և զմայր՝ աֆա, և զեղբար՝ աղա,

45 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., Կ. Մելիք-Օհանջանյանի առաջարկեր, էջ 2է:

և զքոյր՝ աֆանի, և զգլուխ՝ բիրօն, և զաշտ՝ նիտուն, և զականջս՝ շիֆին, և զմօրուս՝ սախալ, և զերեսս՝ յիզ, նիուր, և զբերան՝ աման, և զատամն՝ սխուր, սիդուն, և զհաց՝ օքմակ, և զեզն՝ օֆար, և զկով՝ ունէն, և զոչխար՝ դոյնա, և զգառն՝ դուրդան, և զայծ՝ իման, և զձի՝ մօրի, և զչորի՝ լօսա, և զուղտ՝ քաման, և զշուն՝ նօխայ, և զգայլ՝ շինա, և զարջ՝ այաֆու, և զաղուէս՝ հօնֆան, և զնապաստակ՝ քարլայ, քուլայ, և զհաւ, քախեա, և զաղանի՝ ֆօֆուչին, և զարծուի՝ բուրֆուի-դուչ, և զչուր՝ ուսուն, և զգինի՝ տարասու(ն), և զծով՝ նաուր-տանգրգ, և զգետ՝ մօրան-ուլանսու, և զթուր՝ իօլուու, և զաղեղ՝ նրմու, և զնետ՝ սրմու, և զթագաւոր՝ մելիֆ, և զպատրոն՝ նուին, և զմեծ պատրոն՝ եֆա նուին, և զերկիր՝ էլ, իրկան, և զերկիրք՝ զօգայ, և զարեգակն՝ նարան, և զլուսին՝ սարա, և զաստեղս՝ սարղա, հուտուտ, և զլոյս՝ օտուր, և զգիշեր՝ սոյնի, և զգրագիր՝ բիրիֆիշի, և զսատանայ՝ բաուհուր, էլէպ և զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազում ամաց մեզ անժանօթ, իսկ այժմ ակամայ ծանուցեալ»<sup>46</sup>:

Այդ փոքր բառացանկն արժեքավոր է մոնղոլական մշակույթի մեջ, որպես մոնղոլներին առաջին՝ զրի առնված և պահպանված հին բառերի ցանկ, իսկ հայ մշակույթի մեջ՝ որպես երևույթ՝ թե՛նուց փոքր ու սակավարատ, բայց մինչև օրս երկու լեզուները բառարանային առնչությամբ կապող՝ հայ-մոնղոլներին բառարանի մի հնագույն նախատիպ, մի նմուշ:

#### ԲԱՌՔ ՎԱՐԴԱՆ ԳՐՈՑ

Հինգերորդ դարի պատմագիր Եղիշի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկը դարեր շարունակ եղել է հայ ընթերցողի ամենասիրելի երկերից, հայ դպրոցի ճանաչված զասագրքերից մեկը: Միջնադարյան մի անհայտ հեղինակ կազմել է Եղիշի այդ երկի մեջ գործածված պարսկերեն բառերի մի փոքր բառացանկ:

Հայերեն ձեռագիր հուշարձաններում պահպանվել են Եղիշի պատմությանը վերաբերող այդ բառացանկի բազմաթիվ

46 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 273—275:

ընդօրինակություններ: Բառացանկի ամենահին ընդօրինակությունները՝ մեզ արդեն հայտնի՝ Փարիզի № 302 և Երևանի Մատենադարանի № 4149 ձեռագրերն են: Գրչագրերը բաժանվում են երկու հիմնական խմբի կամ խմբագրությունների՝ ա) բառերի խառը և բ) այբբենական դասավորություն ունեցող: Այբբենական դասավորություն ունեն բառացանկի միայն № 5925 (ԺԻ դար) և № 3172 (ԺԷ դար) գրչագրերը: Առաջին խմբագրության գրչագրերում բառերը իրար են հաջորդում այնպես, ինչպես Եղիշեի պատմության մեջ: Բառերի այբբենական դասավորումը կատարվել է XIV դարում:

Երկրորդ խմբագրության գրչագրերն էլ կարելի է բաժանել իրարից շատ շտաբերվող երկու ենթախմբի: Առաջին ենթախմբին են պատկանում մի քանի այնպիսի ձեռագրեր, որոնք համընկնում են № 4149-ի հետ. դրանք բոլորն էլ ընդօրինակված են մի ավելի հին ձեռագրից և պարունակում են 36—40 բառ (№ 4149-ը՝ 36 բառ): Մյուս խմբի ձեռագրերն ունեն 25—30 բառ և նախորդ խմբի ձեռագրերից տարբերվում են նաև բառերի դասավորությամբ. № 4149-ում փշտիպան, մարգպան և նախնի բառերը գտնվում են բառացանկի վերջում, իսկ մյուս խմբի ձեռագրերում՝ միջին մասում: Տարբեր խմբագրությունների գրչագրերում որոշ բառեր իրարից զանազանվում են թարգմանությունների ձևով՝ մի խմբագրությունում ավելի ընդարձակ են, մյուսում՝ համառոտ:

Ձեռագրերում բառացանկը հայտնի է «Թարգմանութիւն պարսիկ բառի ի Վարդան գրոց», «Մեկնութիւն պարսից բառի ի Վարդան գրոց», «Բառք Վարդան գրոց» և այլ վերնագրերով:

Բառացանկի ստեղծման ստույգ ժամանակն անհայտ է: Ն. Ակինյանը գտնում է, որ այդ բառարանը գրված պիտի լինի 1350 թ. առաջ, Գ. Գասպարյանը, որին արդեն հայտնի է բառարանի ավելի հին՝ № 4149 (1304 թ.) գրչագիրը, բաշարաբ և նուրադին բառերի վկայակոչումով միանգամայն իրավացի ենթադրում է, թե բառարանը շատ ավելի հին է, քան № 4149 ձեռագիրը: Նա գրում է. «Մենք այն հաստատ համոզմանն ենք, որ Եղիշեի միջնադարյան բառարանը կազմել են շատ ավելի վաղ շրջանում՝ XI—XII դարերում, հիմք ունենալով այն,

որ Պատմության մեզ հասած առաջին ձեռագրերում՝ № 1880 (1687), 1174 թ., № 1888 (1685), 1207 թ. շկան բաշարաբ, նուրադին բառերը: Բառարանի ավելի հին լինելը հաստատում է նաև զոմեզ բառի բացատրության մեջ եղած «Այլ դիրք աւճառ լուալեաց ասեն» արտահայտությունը, որը լիարժեք վկայում է, որ 1304 թ. գրված բառարանին նախորդող ժամանակներում եղել են այլ գրքեր, կասեինք՝ բառարաններ, որից օգտորվել է № 4149 ձեռագրի բառարանագիրը»<sup>47</sup>: Սակայն բառարանը արդեն վկայված է XIII դարից, 1282 թվականից, Փարիզի № 302 ձեռագրով:

«Բառք Վարդան գրոց»-ը մեզ հայտնի առաջին պարսկերեն-հայերեն բառացանկն է: Նրանում բերվում են Եղիշեի պատմության մեջ հանդիպող այնպիսի պարսկերեն բառեր, ինչպես զրադաշտական (նաև՝ զրադեշտական), վգուրկ, դակիշ (նաև՝ լակիշ), դեհպետ, կեշա, փշտիպան, սեպուս և այլն: Կան նաև առանձին բառակապակցություններ՝ երան և աներեան, ի դիւաց խարամանոյ (հարամանոյ) խաբեալ, ի դարի քիւ (միր) երկայլ և այլն:

Այդ բառերը առանձին պաշտոնյաների, սպասավորների, կրոնների և աղանդների պարսկերեն անվանումներ են, կրոնական և այլ հիմաստներ ունեցող բառեր: Բերենք պատմության մի քանի հատվածներ, որոնցում գործածված են բառացանկում հանդիպող պարսկերեն բառերը:

«Միհրնեբսեհ Վգուրկ հրամատար երեան և Աներեան, Հայոց մեծաց ողջոյն շատ»<sup>48</sup>:

«...և զմեռեալս ի հող թաղելով զերկիր ապականէք, և Բուրկիար շտոնելով ոյժ տայք Հարամանոյ»<sup>49</sup>:

«...և հրաման ետ մոգաց և մոգպետաց, զի մի՛ ամեննին որ խուսցէ զնոսա, այլ հաստատեալ կայցեն, աներկիւղութեամբ յիրաբանշիր ուսմունս, մոզն և զանդիկն և հրեայն և

47 Գ. Գասպարյան, նշված հոդվածը, էջ 269—270:

48 «Եղիշեի վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 24:

49 Նույն տեղում, էջ 46:

քրիստոնեայն, և որ այլ բազում կեշտք են ի կողմանս կողմանս աշխարհին Պարսից»<sup>50</sup>:

«Եւ ի մնացեալ մոզացն և ի փշտիպանացն, որք ի կայանսն ապրեալ էին և...»<sup>51</sup>:

«Հայք առանց փանդամի մի՛ զանգցին. ծիւք և քակորք ի կրակ մի՛ եկեսցեն. ձեռք առանց գումիզոյ մի՛ լուսացին. շնջրիք և ազուէսք և նապաստակք մի՛ մեռցին»<sup>52</sup>:

«Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուցն ի դարի թիր եկայք. զի վաղիւ անդ Մովսէսեան մովսէս ռատ յագէ, և նոյն հաճեալ հաւանեցուցէ զմիտս ձեր»<sup>53</sup>:

«Այլ զնոսա մոզպետին յառաջագոյն, որում յանձն արարեալ էր, բազում անգամ աւելի քան զհրամանն արքունի շարշարեալ էր. քանզի իշխան զեկայեալ էր Ապար աշխարհին, և առաւել ջերմագոյն էր ի մոզութեանն. քան զբազում զիտունսն ևս տեղեակ էր զբաղեշտական օրինացն: Նա և զոր մեծ պարզանս համարէին ըստ իրեանց մոլորութեանն կարգին, Համակղեն անուն էր. գիտէր և զԱմպարտաբաշն, ուսեալ էր ըզՔոզպայիտն, ունէր և զՊահլաիկն և զՊարսկաղեմն: Քանզի այս հինգ կեշտք են, որ զրաւեալ ունին զամենայն օրէնս մոզութեանն. բայց արտարոյ սոցա է մես ևս այլ վեցերորդ՝ զոր Պետմոզն կոչեն»<sup>54</sup>:

Միայն այս վերջին հատվածից, ինչպես տեսնում ենք, բառացանկի մեջ են մտել 8 բառեր, որոնք հավատ, կրոն և կրոնական աստիճանավորներ են նշանակում:

Սակայն բառացանկի ոչ բոլոր բառերն են, որ կան Եղիշեի պատմության բնագրում, օրինակ այնտեղ չեն գործածված պաշարատ (բաշարաթ)<sup>55</sup> և նուրադին բառերը: Եղիշեի պատմության մեջ չհանդիպող այս բառերի մասին Գ. Գաս-

50 Եղիշե, նշվ. աշխ., էջ 61:

51 Նույն տեղում, էջ 133:

52 Նույն տեղում, էջ 52:

53 Նույն տեղում, էջ 181:

54 Նույն տեղում, էջ 143—144:

55 «Քոմորմզ» և «պաշարատ» բառերը կան N 4149 և նրան խմբակից

ձեռագրերում միայն, մյուսների մեջ բացակայում են:

պարյանը այն միտքն է հայտնում, թե բաշարաթ և նուրադին բառերը, որոնք բառարանում տեղավորված են Եղիշեի պատմության 4-րդ չեղանակից քաղված բառերից հետո և 6-րդ չեղանակի բառերից առաջ, հավանաբար, քաղված են Պատմության «մեզ առայժմ անհայտ այնպիսի օրինակից, որի մեջ եղել է 5-րդ գլուխը կամ որոշ հատված»<sup>56</sup>:

Բառացանկում, սակայն, տեղ չեն գտել այն բոլոր պարսկերեն բառերը, որոնք հանդիպում են Եղիշեի պատմության մեջ, դուրս են մնացել զլխավորապես այն բառերը, որոնք հայերենի մեջ են մտել ավելի վաղ ժամանակներում, լայն ճանաչում ստացել ու հայացվել, ինչպես՝ ապարատան, մարգպետ, նուրադակ, հրապարակ, դաստատակ, օջան, զանատրակ, բոշակ և այլն:

Այսպիսով «Բառք վարդան գրոց» բառացանկը կազմված է, զլխավորապես, Եղիշեի պատմության բնագրում հանդիպող այնպիսի բառերից միայն, որոնք մեր լեզվի մեջ են մտել V դարի առաջին կեսերին, մարզպանական շրջանում, երբ Պարսկաստանի քաղաքական-ազդեական տիրապետությունը Հայաստանի նկատմամբ, բնականաբար, ուժեղացնում էր երկու ժողովուրդների շփումն ու փոխադարձ կապերը, հետևաբար, նաև լեզվական փոխհարաբերությունները:

Բառացանկը կազմողը պարզ է, որ լայն պլաններ և նպատակներ չի հետապնդել և, ինչպես երևում է, դրա համար նա անհրաժեշտ լեզվական գիտելիքներ չի ունեցել, հմտորեն չի տիրապետել պարսկերենին և իր բառացանկը կազմելիս նա գիմել է մեկ ուրիշի (հավանաբար պարսիկի) օգնության: Բառացանկի վերջին բառահոգվածից՝ «Ռբունայն. ասաց թէ չէ պարսիկ, բայց յայտ է ի նախատես բանից մոզպետին, զի պսակն է»<sup>57</sup> պարզ երևում է, որ հեղինակը չի իմացել բառը և ինչ-որ մեկը նրան ասել է, թէ «չէ պարսիկ», բայց ինքը կոնտեքստից հասկացել է «զի պսակն է» այդ բառը: Բացի դրանից, բառարանի վերջում նշված է. «Չառաջին ճառն ընթեր-

56 Գ. Գասպարյան, նշվ. հոդվ., էջ 272:

57 Մատենադարան, ձեռ. N 3202, էջ 173բ:

ցեալ գտի երիս բառս, զոր պարթևն ոչ գիտաց ասելով չէ պարսիկ, և այլն՝ այս է բովանդակ»<sup>58</sup>: Կ. Ակինյանը և Գ. Գասպարյանը նույնպէս նշում են, որ բառարանը կազմված է մի երկրորդ անձնավորութեան օգնութեամբ:

Բառարանի գրչագրերում բառերը ճիշտ են թարգմանվում և մեկնվում բացառութեամբ առանձին գրչագրական վրիպումների, օրինակ՝ սաղար (սալար) բառը գրչագրերում հանդիպում է նաև «սաղաւար» կամ նույնիսկ «սաղաւարդ» ձևով, սակայն պարսկերենն այդ բառի ճիշտ թարգմանութեամբ՝ «ստրատեալատ կամ զօրագլուխ»: Այդ բառն, իրոք, կա եղիշեի պատմութեան մեջ «...և թէ քանի՛ զունդ զզօրսն բաժանիցեն, և ո՛ր որ ի նոցանէ սաղար՛ լինիցին, և ո՛ր զօրագլուխ յորմէ կողմանէ յաղմ մտանիցէ, ...»<sup>59</sup>:

«Բառք Վարդան գրոցը» պարսկերեն-հայերեն առաջին բառարանն է հայ իրականութեան մեջ:

#### ԱՐԱՔԵՐԵՆ-ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Այս բառարանը հայ միջնադարյան ուշագրավ հուշարձաններից մեկն է: Երբեմնի բավականին ծավալուն արաբերեն-պարսկերեն-հայերեն եռլեզույան բառարանից պահպանվել է միայն մի հատված, որը գետեղված է Մատենադարանի № 7151 ժողովածուի մեջ: Այդ ձեռագիրն իմաստասիրական բազմապիսի համառոտ նյութերի մի հետաքրքիր ուսումնական ձեռնարկ է: Նրա գրչութեան վայրը չի նշվում, բայց հավանական է, որ գրվել է Տաթևում, որովհետև ընդօրինակված է Հովհ. Որոտնեցու աշակերտ Գրիգոր-Նուբյուշայի (Տաթևացու) ձեռքով: Ժողովածուի ընդօրինակման տարիները նույնպէս չի նշվում հիշատակարանում, ենթադրվում է, թե այն գրված պիտի լինի XIV դարի երկրորդ կեսին<sup>60</sup>:

<sup>58</sup> Մատենադարան, ձեռ. № 3202, էջ 174ա:

<sup>59</sup> Եղիշե, նշվ. աշխ., էջ 96:

<sup>60</sup> Լ. Ս. Խաչիկյանի կազմած «ԺՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ում այդ ձեռագիրը գրված է 1371 թվականի տակ, ուստի հիշյալ թվականն էլ ընդունվում է որպէս ձեռագրի գրութեան ժամանակ: Տե՛ս նշվ. աշխատութեան 497 էջը:

Բառարանը գետեղված է հիշատակված ձեռագրի 1ա—10բ էջերում: Թղթի որակը, շափերը, տառաձևերը և այլ հանգամանքներ ցույց են տալիս, որ ձեռագրի՝ բառարանի այդ հատվածն ընդգրկող պրակը տվյալ ձեռագրի իսկական մասը չէ, նրա հետ օրգանական միասնություն չի կազմում, այլ նրան է միացվել հետագայում: Անշուշտ, բառարանի այդ հատվածն ամփոփող պրակը մնացել է մի այլ ձեռագրից, որի գրութեան ժամանակի մասին, պարզ է, որոշակի բան ասել հնարավոր չէ: Տառաձևերի հիման վրա արվող ենթադրությունն այն է, որ այդ ձեռագիրը գրված պիտի լինի XIV դարում, ավելի վաղ, քան № 7151 ձեռագիրը: Թե ե՞րբ է հայ մատենագրութեան մեջ հանդես եկել այդ բառարանը, ե՞րբ է պարսկերենից հայերեն թարգմանվել, դա էլ այլ հարց է: Մենք նախ չզիտենք, թե երբ է գրվել այն ձեռագիրը, որից մնացել է բառարանի հատվածը, ապա՝ ձեռագրի գրութեան ժամանակը միշտ չէ որ բառարանի ստեղծման ժամանակ կարելի է ընդունել, որովհետև բառարանը (ինչպէս նաև ամբողջ ձեռագիրը) կարող է ընդօրինակված լինել մի ավելի հին նախօրինակից:

Չնայած բառարանն ամբողջութեամբ չի պահպանվել, բայց մնացած մասը լրիվ պատկերացում է տալիս նրա բովանդակութեան ու նպատակների մասին: Բարեբախտաբար մեզ է հասել բառարանի սկզբի մասը՝ նրա հայ հեղինակի հետևյալ նախագրութեամբ.

«Այս բառք են որ շարամանեալ են ետակի ոճիւք և եղանակաւ զընթացս լեզուաց երրակի ազ[գա]ց զարբարացոց, զպարսից և զհայկ[ազ]եանց: Չոր բացերեապէս ենթ(ազ)րեալ եղև ան(ու)անք և բայք... զի և աստիճանի և պարունակ[ի] հոմանունանապէս ի տարրականն... յալիֆ[է] [սկ]սեալ մինչև ցիէ: Իբր[և] յայքէ մինչև ցրէ: [Եւ այս] յար[արաց]ոցն իմաստնոցն. զոր թարգմանեալ է[ ] ի [բ]անասիրացն պարսից և... [կարճ] առաւտ և բազմահայեաց [ե]... սահ հոլովմանց... պա... ի նոցունց ի մատեան... մարգարանս խաւսից: Որով և յեղափոխեալ ի նոցունց ի հայկականս բարբառ յաղագս ուսումնասէր հասարակաց քանզի կարաւտ գոլով անաւարաթեկիցն մեղու-

ացն. յորնազանից հիւթից ներհակաց. առ ի լրումն արուեստաստեղծն հնարից որ զճաշակս ճաշակողաց քաղցրացուցանէ»<sup>61</sup>:

Այդ բավականին ընդարձակ բառարանը ուսումնական նպատակներով օգտագործվել է արաբական ու պարսկական դպրոցներում և հավանաբար բավականին ճանաչում ու լայն գործածություն է ունեցել: Նրա հայերեն թարգմանվելն ու հայ դպրոցներում օգտագործվելը պատահական չի եղել: Հայ դրուպոցներում մեծ ուշադրություն է դարձվել օտար լեզուների ուսումնասիրությանը, դասավանդվող օտար լեզուներից մեկը եղել է պարսկերենը, դասավանդվել է հավանաբար նաև արաբերեն: Այլապես ի՞նչ նպատակով պիտի հայացվեր այդ բառարանը, եթե այն անհրաժեշտ չլիներ «ուսումնասէր հասարակաց», որոնք «կարօտ գոլով» սպասում էին այդպիսի բառարանի: Ուրեմն այդ բառարանի անհրաժեշտությունը զբաղցվել է հայ դպրոցներում և լեզուների մեջ հմուտ մի հայ մտավորական, որ ծանոթ է եղել այդ բառարանին, թարգմանել է հայերեն:

Ամբողջ բառարանից ձեռագրում պահպանվել է նրա մի փոքր մասը միայն, սկզբի երեք բառացանկերը՝ արաբական այբուբենի առաջին երեք տառերով՝ Ա (ալիֆ), ب (բա) և ت (թա) տառերով սկսվող բառերը: Առաջին երկու տառերի բառացանկերը լրիվ են, իսկ մյուս՝ ت-ի բառացանկը թերևս կիսատ է: Եւ բառարանի պահպանված այդ հատվածը պարունակում է ընդամենը 225 արաբերեն գլխաբառեր իրենց պարսկերեն և հայերեն բացատրություններով: Այստեղից դժվար չէ, մոտավորապես, զազափար կազմել ամբողջ բառարանի ծավալի մասին: Այդ բառարանը եղել է ժամանակի ամենաընդարձակ թարգմանական բառարանը հայ մատենագրության մեջ:

Արաբերեն-պարսկերեն-հայերեն եռալեզվյան բառարանում ընդգրկված են լեզվի շատ կարևոր, գործածական բա-

<sup>61</sup> Մատենադարան, ձեռ. № 7151, էջ 1ա—1բ: Բերված հատվածում բաց են թողնված այն տեղերը, որոնք ձեռագրում անընթեռնելի են:

ռեր, զանազան առարկաներ ու երևույթներ նշանակող գոյականներ, ածականներ, բայեր և այլ բառեր, ինչպես՝ սիրելիք, բշնամիք, ուրախութիւն, գոյնք, զաւառ, պինդ, յիմար, տունք, առողջութիւնք, անցանել, որոնել, շարժել, ցորեան, ծով, վաճառող, կարագ, պատասխանել, հրամայել, խնամել, պատուել, գործածել, լաւագոյն, կոյս, տեղի, քաղաք, զարմանալ, աշակերտ, մաղթել, փորձանք և այլն: Իրանագետ Բ. Զուգասզյանը հավաստում է, որ բառարանի հայ թարգմանիչը լավ է տիրապետել թարգմանվող լեզուներին, հատկապես պարսկերենին և կարողացել է ճշտությամբ թարգմանել բառերը, ճիշտ տառադարձել. «Բառերի հայերեն նշանակությունների արտակարգ ճշգրտությունը,— գրում է նա,— հետևողական ու միօրինակ տառադարձությունը իրավունք է տալիս ենթադրելու, որ բառարանի հեղինակը (իմա՝ թարգմանիչը,— Զ. Ա.) ունեցել է լեզվաբանական կուռ գիտելիքներ և քաջ տիրապետել է այդ լեզուներին»<sup>62</sup>: Բառարանի հայ հեղինակը հավանաբար եղել է պարսկաբանակ վայրերում, իմացել է նաև պարսկերեն խոսակցական լեզուն, որի շնորհիվ կարողանում է պարսկերեն բառերը ճշտությամբ տառադարձել հայերեն՝ պահպանելով պարսկերենի հնչյունական առանձնահատկություններն ու արտասանական նրբությունները:

Բառերի թարգմանությունների մեջ, այնուամենայնիվ, կան մասնակի շեղումներ ու անճշտություններ, որոնք կարող են գրչագրական վրիպումների արդյունք լինել: Օրինակ՝ արաբերեն և պարսկերեն բառերն, բառերը թարգմանված են որպես անգլիսի, փոխանակ՝ սիւնք, բըրբըք, ազմաիչ բառերը՝ փորձանք, փոխանակ՝ փորձ: Մի քանի բառերի դիմաց ինչպես՝ ինքիաշ-հաջը բմբնդի, իքիբաֆ-մունդիրամբնդն, իղթիսա-թաղասա քոլըն, արագ-ազիզի քոլըն, բզդիամ-բբբաւի բացակայում են նրանց հայերեն թարգմանությունները:

<sup>62</sup> Բ. Ա. Զուգասզյան, Պարսկերեն-հայերեն առաջին տպագիր բառարանը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 12, Երևան, 1962, էջ 75—76:



ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

XI—XII դարերում մատենագրության մեջ մուտք է գործում ժողովրդական խոսակցական լեզուն, հանդես են գալիս միջին հայերենով գրված երկեր, փոփոխություններ են առաջանում հայերեն ուղղագրության բնագավառում:

Նոր ուղղագրական կանոնների մշակման և արմատավորման հարցը հասունացել էր: Պրոֆ. Գ. Զահուկյանը իրավացիորեն նշում է. «Ոչ միայն լեզվի և գիտության առաջադրած պահանջներն ընդհանրապես, այլև ձեռագրերի մասսայական արտագրությունը նպաստում են փերականության և ուղղագրության հարցերի նկատմամբ հետաքրքրության բուռն աճմանը»<sup>63</sup>:

Եվ պատճական չէ, որ գրչության արվեստին նվիրված առաջին աշխատություններն ստեղծվեցին Կիլիկիայում, որտեղ կենտրոնացված էին գրչության խոշոր օջախներ, ուր տրնտեսական ու քաղաքական բարգավաճումն առհասարակ առաջ էր մղում գիտություններն ու մշակույթը:

«Գրչության արվեստի» առաջին աշխատության հեղինակը Արիստակես գրիչն է: Նա ապրել և ստեղծագործել է XII դարում: Նրա երկի նպատակն է վերականգնել հին ուղղագրությունը, հիմնականում Յ-ի գրության կանոնները, որոնք ազավաղվել են «յանվարժից և յանհանձար գրչաց»:

Արիստակեսի «Գրչության արվեստի» տեսության մասին աշխատությունը բաղկացած է տասը կանոններից, որոնցից ինը վերաբերում են Յ-ի գրության զանազան դեպքերին, իսկ 10-րդը՝ նախորդ կանոնների հետ սերտորեն կապված՝ ուղղագրական բառարանն է: Այդ աշխատությունն անհրաժեշտ մանրամասնությամբ քննված է պրոֆ. Գ. Զահուկյանի և Լ. Խաչերյանի՝ մեր կողմից արդեն մատնանշված մենագրություն-

ների մեջ: Մենք կանոնադառնանք Արիստակեսի աշխատության միայն այն բաժնին, որը հայ մատենագրության մեջ հայտնի է «Արիստակեսի ուղղագրական բառարան» անունով:

Արիստակեսի բառարանը, ինչպես ամեն մի ուղղագրական բառարան, բացառապես կիրառական բնույթ ունի, կոնկրետ գործնական նպատակներ է հետապնդում, այն է՝ գրիչներին ու աշակերտներին սովորեցնել ճիշտ գրելու կանոնները, սահմանել և մատենագրության մեջ արմատավորել հայերեն լեզվի միասնական ուղղագրություն:

Մենք գործ ունենք միջնադարյան մի բառարանի հետ, որը գրվել է այն ժամանակ, երբ բառարանագրությունը դեռ նոր էր ծավալվում: Այդ մի ժամանակաշրջան էր, երբ բառարանագրական աշխատանքներն սկիզբ էին առնում գործնական կյանքի, մատենագրության ամենաանհրաժեշտ, առօրյա պահանջների մղումով: Արիստակեսի բառարանն ունի այժմյան ուղղագրական բառարանների բոլոր հատկությունները, միաժամանակ այն խիստ տարբերվում է արդի ուղղագրական բառարաններից մի շարք գծերով, ամենից առաջ իր կառուցվածքով, բառապաշարով, փերականական ու ուղղագրական բնույթի բացատրություններով և այլն:

Արիստակեսի ուղղագրական բառարանն սկսվում է նրա «Գրչության արվեստ» աշխատության 10-րդ կանոնով, հանդիսանալով այդ երկի մի անբաժանելի մասը: Տասներորդ կանոնի սկզբից հեղինակը համառոտակի բնորոշում է իր բառարանի կառուցվածքը, ապա ցույց տալիս, թե յուրաքանչյուր բառ, ըստ նրա սկզբնատառի, պետք է փնտրել բառարանի համապատասխան բառացանկում՝ Ա-ով սկսվող բառերը Ա-ի բառացանկում, Բ-ով սկսվողները՝ Բ-ի բառացանկում և այլպես էլ մյուսները: Սակայն կարող է պատահել, որ բառարանից օգտվողն իր որոնած բառը չգտնի տվյալ բառացանկում: Նկատի ունենալով, որ տարբեր արտասանությունների ժամանակ Ե և Է, Ս և Զ, Ա և Ո, Ի և Է հնչյունները կարող են շփոթվել, բառարանի հեղինակը զգուշացնում է. «Բայց իմա՛ և զայս քաջ սիրելի. զի է բառ, որ քեզ կարծի թէ առաջին գիրն Է է, և յորժամ խնդրես և ոչ գտանես յեջի տունն, գիտեա՛, որ է է

63 Գ. Զահուկյան, Փերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 223:

առաջին գիրն և յէի տունն տե՛ս: Եւ է բառ, որ զա կարծես  
առաջին գիրն, և յորժամ յուզես և ոչ գտանես ի զայի տունն,  
գիտեա՛, որ սէ է և ի սէի տունն գի՛տ»<sup>64</sup>:

Այսպես պետք է վարվել նաև մյուս կասկածելի բառերի  
դեպքում: Այս անհրաժեշտ պարզաբանումներից հետո սկըս-  
վում են բառացանկերը:

Հատված Ա-ի բառացանկից. «...այծենի, այծենեաւ, ա-  
պուշ, ապշուքիւն, ապշեցայ, անոյշ, անուշակ, անուշահոտ,  
անուշունք իւրոց, զանոյշ իւրոցն, անդեայ, որ է նախիր, այ-  
սինքն՝ հոյլք պախրեաց, անդեորդ «նախարարած», անդաստան,  
անդ, եկեալ յանդէ, անդք «տոհմականս», Անդրէաս, Անդրէի,  
ի քաղաքէ Անդրեայ, անդ, անդանաւ, անդ անկցիւն, անդ  
գնաց, անդ եին, անդ եիք, անդ եկին՝ Եշերով են. վասնզի ի  
հոյլովման են. անդր ես, անդրէն, անդր կացեալ, անդրբուսայր,  
անդէն «վաղվաղակի»: Անդունդք, անդնդային, անդնդայ-  
նով»<sup>65</sup>:

Բառարանում բառացանկեր կան հայերեն այբուբենի բո-  
լոր տառերով, բացառությամբ Օ և Ֆ տառերի (Օ-ն արտա-  
հայտվում է աւ երկբարրառով՝ աւծ, աւդ և այլն):

Բառացանկն Արիստակեսի մոտ կոչվում է «տուն» և ըստ  
այդմ՝ «այբի տուն», «բենի տուն», «գաի տուն» և այլն: Բա-  
ռարանի հեղինակը գիտե բառացանկի և այբբենական դասա-  
վորութիւնն նշանակութիւնը, նրա տասներորդ կանոնն սկըս-  
վում է այսպես՝ «Համարէն այբբենաւք բազմամասնաբար շա-  
րագրութեամբ ճշգրտեալ յորջորջմամբ և յեռեալ ընդ իրեարս,  
վասն որոյ դիւրաւ գտցես զոր ինչ իր ի կարիք լինիս յիւրում  
տանն: Այսինքն՝ թէ այբ է առաջին գիծն քոյ խնդրոյն, յայբի  
տանն գտցես: Եւ թե բեն է առաջին գիր բառին քոյին խնդրոյն,  
ի բենին խուզես: Եւ ըստ կարգի զայլսն»<sup>66</sup>:

Արիստակեսը չի հավաքում հայոց լեզվի բոլոր կամ առ-  
նվազն ամենատարածված ու շատ գործածական այն բա-  
ռերը, որոնք դժվար կամ երկգրութիւն ունեն: Նա բերում է

64 Լ. Խաչերյան, Եջվ. աշխ., էջ 252:

65 Նույն տեղում, էջ 254—255:

66 Նույն տեղում, էջ 252:

միայն այն բառերը, որոնց սխալ գրութիւնն ինքը նկատել է  
իր ընթերցած մատչաններում կամ հանդիպել է առօրյա աշ-  
խատանքում: Ուստի հանձնարարելով զանազան բառերի ճիշտ  
գրութիւնն ձևերը, միաժամանակ նշում է, որ նմանօրինակ  
բառերը շատ են, և ինքը բոլորը չի բերում, որովհետև «զմի  
տեսութիւն ունին ամենեքեան», և որ մնացած բառերը պետք  
է գրել իր կողմից հանձնարարվող ձևերի օրինակով: Այդ իսկ  
պատճառով Արիստակեսի բառարանը մեծ չէ ծավալով: Հաշ-  
վի շտանդարտ բառերի թեքված ձևերը, այլ միայն այն հիմնա-  
կան սկզբնաբառերը (գլխաբառերը), որոնք Արիստակեսը  
գրում է մեծատառերով, բառարանն ունի շուրջ 900 բառ-  
օրինակներ:

Բառացանկերից համեմատաբար ընդարձակ են Ա-ի, Ե-ի  
և Ո-ի բառացանկերը, որոնք ծանրաբեռնված են քերականա-  
կան, ուղղագրական և այլ կարգի բացատրութիւններով: Արդի  
ուղղագրական բառարաններում սկզբից տրվում են լեզվի տրվ-  
յալ ժամանակաշրջանին հատուկ ամենակարևոր ուղղագրա-  
կան ու կետագրական կանոնները, որից հետո գալիս են բա-  
ռերի կանոնավոր, այբբենական համակարգի ենթարկված  
շարքերը: Այդպես չէ Արիստակեսի բառարանը, հեղինակը  
ազատ կերպով ընդհատում է բառերի շարքը և բացատրու-  
թիւններ ու խրատներ տալիս, զիտողութիւններ անում, ապա  
շարունակում իրար հետևից շարել բառերն ու օրինակները:  
Ե-ի բառացանկը քերականական և ուղղագրական բացատրու-  
թիւնների մի շարագրանք է: Բացի բառերից այդ բառացան-  
կում խոսվում է ն և է տառերի, բայական զանազան ձևերի  
(երկեայ, երկեաւ, եկն, եկեր, եդ, եդիր, անց, հերծ, եղիցիս,  
եղիցես), անցյալ կատարչալի է (ե) նախահավելվածի, մի  
շարք թվականների (երկերիւր, երկու հարիւր, եւթներորդ,  
եւթնեակ, երկոցունց, երկօրումբք), անձնական դերանուննե-  
րի, «եդիր» ձևի բարբառային գործածութիւն, անունների հո-  
լովման, իմ, քո, նորա դերանունների վերջում յ-ի գրութիւնն և  
այլ հարցերի շուրջը:

Մյուս բառացանկերն ավելի սեղմ են, պարզ, բաղկացած  
են հիմնականում բառերից և նրանցով կազմված օրինակ-

ներից: Չ, Ղ, Ճ, Ն, Շ, Ջ, Ռ, Յ տառերից յուրաքանչյուրով բերվում է ընդամենը մի քանի գլխաբառ՝ անհրաժեշտ բացատրություններով և օրինակներով:

Բառարանի այսպիսի կառուցվածքը պայմանավորված է նրա խիստ կիրառական բնույթով ու նշանակությամբ: Դա մի ուղղադրական ձեռնարկ է, որով հռչակավոր գրիչը ուղղագրություն է ուսուցանում գրիչներին և աշակերտներին, որպեսզի նրանք ճիշտ գրեն և ընդօրինակեն այն երկերը, որոնք գրել են «պերճ քերական գծից հմտացեալք», «սքանչելի վարժեալքն հայոց, երիցս երանեալ մեծն թարգմանիչք»:

Բառարանում որպես ճիշտ գրություն ձևեր ընդունված բառերը ներկայացված են տարբեր եղանակներով. հեղինակը դիմում է բառափոխական ու բառակազմական գրեթե բոլոր միջոցների օգտագործմանը: Դրանով բառը ներկայանում է իր զանազան ձևերով, որոնց մեջ կատարված փոփոխություններն ուղղագրական նշանակություն ունեն: Բացի դրանից՝ բառերը վերցվում են ուրիշ բառերի հետ ունեցած բազմապիսի կապակցությունների մեջ, հարադրվում են հոմանիշները, երկգրություն ունեցող բառերի երկու ձևերը, բերվում են առանձին ոճեր ու արտահայտություններ և մի շարք այլ եղանակներով ցույց են տրվում ուղղագրական տարբեր դեպքեր:

Բառերի մեծ մասը ներկայացվում է տարբեր հոլովածեվերով, որոնք գրվում են լրիվ կամ սկզբնաբառից հետո՝ գրվում են միայն նրանց հոլովական վերջավորությունները: Բառերը հասկապես շատ են հանդես գալիս իրենց սեռական, բացառական և գործիական հոլովների ձևերով, օրինակ՝ առիւծու, արփայ, արեւ, անրջից, աղախնաց, աղախնիւք, յաղբիւսաց, ականջով, ամպովք, ապստամբողաց, երկոցունց, երկոճումբք և այլն: Է-ով վերջացող բառերը բացառական հոլովում երկու է են ունենում վերջում, ինչպես՝ մարգարէ—մարգարէէ:

Բառերի հոգնակի ձևերը բերվում են առանձին կամ բառակապակցությունների մեջ, այսպես՝ աղջիկ—աղջկունք, քոյր՝ մի, քոյր՝ բազումք և այլն: Բավականին շատ են բարդված կամ ածանցված բառաձևերը և նրանցով կազմված կապակցու-

թյունները, օրինակ՝ անոյշ—անուշահոտ, ապստամբ—ապստամբութիւն, առեւծ—առեւծաղէմ, արծուի—արծուանման, ընկուզագարդ, անբիծ, անհննելի և այլն:

Հատուկ ուշադրություն է դարձվում բայաձևերի ուղղագրությանը. բայերի օրինակները շատ են, գրեթե բոլոր բայերն էլ բերվում են տարբեր եղանակների ու ժամանակների դիմային ձևերով: Հրամայական եղանակի բայաձևերին առաջընթացում են անցյալ կատարյալի ձևերը, դրանով ցույց է տրվում նրանց տարբերությունը: Հրամայականի ձևերը բառակերպում չլին ունենում: Բայերի գրություն ցուցադրման համար Զ-ի բառացանկից վերցնենք հետևյալ հատվածը. «...գարդաբեիք, եին, եաք, գարդաբեալք եղեաք, զանգուածս մեր, ձեր, զգացուցանեի, եիր, եին, զգայցէք, զբաղմունս, զբաւսանս, զգաստ եղեաք, եղեալք, եղեն, զգաստացեալ արհնարանիչք, զգայաբան, զգայուն, զգացո՛, զգացի, զգացին, զգեցո՛, զգեցայ, զգեցար, աւ, զգան, զգոյշ լերուք, զգուշացուք, զեղխք՝ «անառակք», զեղուն՝ «չի»<sup>67</sup>:

Կամ՝ «Առեալ ես դու, առեալ են, առէք, առնուք, առնում, առեալ եիք, առեալ եաք, եառ նա, եառ սա»<sup>68</sup>: Հաճախ միևնույն բառի գրություն տարբեր ձևերը առաջընթացում են, երբեմն նրանց դիմաց նշվում է, թե նրանք «մի են» օրինակ՝ «երկու հարիւր և երկերիւր—մի են», «արագ, երագախաւս, արագընթաց, երագագնաց», «Սառա և Սարբա—մի են»: Այսպես առաջընթացում են նաև հոմանիշները՝ «երանգ կամ երփն», «ջեւմ և շող—մի են», «արգաւանդ երկիր և յուրքի, որ են պարարտ» և այլն:

Բերվում են նաև մի շարք թվականներ, դերանուններ, մակբայներ և այլ բառեր, ինչպես՝ շորք, շորբող, հնգետասան, երեք հարիւր, բերք, սա, դա, նա, սոքա, սոցա, ինձ, քեզ, աստ, անդ, վաղվադակի, աստի, անտի, այտի, հոգեպէս և այլն:

Մասնավոր դեպքերում որոշ բառեր, հատկապես նույնանուններ և բիշ գործածական, երբեմն էլ օտար, անծանոթ

67 Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 269:

68 նույն տեղում, էջ 257:

բառեր ու հատուկ անուններ ուղեկցվում են օժանդակ բառերով, որոնք բացահայտում, կոնկրետացնում են այդ բառերի իմաստը, ինչպես՝ ադամանդ քար, քաբովր լեռան և այլն: Այսպիսի օժանդակ բառերն արդի ուղղագրական բառարաններում առնվում են փակագծերի մեջ, օրինակ՝ Քարո (լեռան անուն է), Ասյա (անձնանուն), մարտ (կռիվ) և այլն<sup>69</sup>:

Բառարանում բերվում են նաև բազմաթիվ հատուկ անուններ, որոնց գրության ժամանակ հաճախակի սխալներ են թույլ տրվել: Այդ հատուկ անունների մեծ մասը հանդիպում է սուրբ գրքերում, ինչպես՝ Ամբակում, Սերովբէ, Քերովբէ, Անդրէաս, Բարելոն, Հոփսիմէ, Լիբանան, Յակոբ, Սիմա, Յուդա, Քերսայիդա, Յովսէփ և այլք:

Կան նաև մեր մատենագրության մեջ դործածվող մի շարք օտար բառեր, ինչպես պենտեկոստե (հուն. πεντηκώστος), պրոբատիկէ (πρωβάτιος), կարմեղոս (καρμύλος), կրաւաւաւիլոս (προκοδένιος), կիաոս (κίτος), քառուկ (χαρών), մուղառնաս (տե՛ս Արմ. բառարան, հտ. 4, էջ 1144), մազարովք (հերբ):

Բառերի զգալի մասը հանդես է գալիս որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի շարույթային կապակցություններով, ինչպես՝ ծառ անտառի, հեճան գինույ, ականճ պատուական, ակունճ աղբերաց, գահոյք փղոսկրեայք, աւճ բունաւոր, գեհեճան անշէջ, աղբեր անմահութեան, ամպ ցաւաբեր, գինի անոյշ և այլն:

Արիստակեսն առանձին ուշադրություն չի նվիրում բազաձայնների ուղղագրությանը, սակայն նրա բառարանի գրեթե բոլոր բառացանկերում էլ կան բառեր, որոնք ավելի հաճախ են հանդիպում սխալ գրությամբ՝ բազաձայնների շփոթումով: Բառարանում բերված անբիծ, ամբարտաւան, աբփի, աբգանակ, անկողին, բնտանի, բնդարոյս, թագաւորեցելոյ, թառուտ և բազմաթիվ այլ բառեր վերաբերում են տարբեր բազաձայնների ուղղագրությանը:

Կան մի շարք բառեր և օրինակներ նաև հնչյունափոխությունների ենթարկվող բառերի ուղղագրության վերաբերյալ:

<sup>69</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետագրության ուղեցույց, Երևան, 1957:

Այստեղ էլ Արիստակեսը հանգամանորեն չի անդրադառնում հնչյունափոխական զանազան դեպքերի հետ կապված ուղղագրական բոլոր հարցերին և կանգ է առնում միայն ուղղագրական կարևոր նշանակություն ունեցող հնչյունափոխությունների վրա, ինչպես.

- Ի-ւ (արփի, արփույց, գինի-գինույ)
- Ի-ե (անկիւն-անկեան, ալիւր-ալեր)
- Ի-ը (թիմ-թրմակից, թիւ-թրլաւ)
- ե-ի (առեւծ-առիծու)
- եւ-ե (աղբեր-յաղբերաց)
- է-ի (մէգ-միգով)
- է-ե (Աթէնս-յԱթենայ)
- Ոյ-ու (ձոյլ-ձուլածու) և այլն:

Քերականական և ուղղագրական բացատրությունները գլխավորապես այն հարցերի մասնավորումն ու կոնկրետացումն են, որոնք առաջ են բաշխված «Գրչության արվեստ» աշխատության կանոններում: Արծարծվում են նաև մի շարք այլ հարցեր, որոնց մասին համառոտակի կիսովի ստորև:

Բառարանում խոսվում է ել և եալ վերջավորություններով անորոշ և անցյալ դերբայների տարբերության մասին: Ըստ Արիստակեսի անորոշ դերբայներն «առանց այբի անկատարք են», որովհետև կատարված գործողություն և դեմք չեն ցույց տալիս: Ապա խոսվում է բայի դիմային ձևերի մասին, Մ, Ս, Յ, ն հնչյունները ճանաչվում են որպես դիմային վերջավորություններ: Բացի դրանից, ն-ն կարող է նաև ցույց տալ անցյալում սկսված և շարունակվող գործողություն. «զառաջագոյնն նշանակէ և զմիշտն», իսկ կրկնված ձևով՝ հոգնակիություն՝ «Իսկ յորժամ յայս կերպ բանս երկու եւս լինի, որ նախին, այն զբազմաց նստողաց ցուցանէ»<sup>70</sup>:

Բայը համարվում է «երից դիմաց», որոնք (դեմքերը) «գործոց և կրից» նշանակողներն են: Հրամայականի առա՛, ասա՛, անսա՛ ձևերը համարվում են անկատար, ներկայի առնէ, ասէ, անսայ ձևերը ցույց են տալիս «զեղեալն», իսկ անցյալ

<sup>70</sup> Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 280:

կատարյալի արար, անսաց, ասաց ձևերը՝ կատարյալ: Բայի կատարյալ և անկատար գործողություններից Արիստակեսը տարբերում է նաև «յարաձագականը», այսինքն՝ անցյալ անկատարը:

Անցյալ կատարյալի է (ե) նախահավելվածի նշանակության վերաբերյալ Արիստակեսը գրում է. «Երբ ասեմ ընդ քեզ թէ՛ դիր գծեռն քո ի վերայ իմ՝ անկատար է դեռ: Իստ յես զննելոյն քոյ զոճանամ առ քեզ, թէ՛ արգնեցեր ինձ և եղիր գծեռն քո ի վերայ իմ: Եւ այս զեղեալն և զանցեալն յայտնեաց, որպէս կայ ի գիրս և ոչ է եղեր, որպէս ոճանց թուի»<sup>71</sup>: Արիստակեսը կարծում է, թե այդ նախահավելվածն անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում անց, հեղ, թող, հար, առ և նման այլ ձևերի վրա գրվում է՝ զրանք բուն հրամայականի ձևերից տարբերելու համար: Նա նկատի ունի նաև այն, որ է նախահավելվածը հեշտությունը կարող է շփոթվել է օժանդակ բայի հետ, այնպիսի կապակցություններում, ինչպես՝ էառ նա, է առ նա (հմմտ. Բուզանդի հետևյալ նախադասությունները. «Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ...» և «Ապա Գնել պատանեակն եղբորորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր»): Նա գտնում է, հետևաբար, որ է-ի տեղ ե գործածել «չէ խոտան», ուրեմն պետք է անցյալ կատարյալի այդ ձևերը գրել ե-ով:

Արիստակեսը ուշադրություն է դարձնում նաև գրական լեզվի մեջ մտնող զանազան բարբառային ձևերի վրա և անում է իր դիտողություններն այդ մասին: Նա նշում է, օրինակ, որ «ըստ գեղջուկ բառի» հաճախ սխալ են գործածվում «եղեր» և «եղիր» ձևերը՝ դու եղեր, նա եղիր և առաջարկում է գործածել «եղիր»-ը՝ ես եղի, դու եղիր, նա եղ, ապա հոգնակին՝ եղաք, եղիք, եղին:

Բայի կրավորական սեռի ցուցիչ Արիստակեսը համարում է ի լծորդով կազմված ձևերը՝ խաբիցաք, կոփիցաք և այլն, ինչպես ընդունում էին հունարան դպրոցի ներկայացուցիչները: Նա գրում է. «Տե՛ս, եղիցիսն կրավորական է, որ ի քո

71 Լ. Խաչերյան, Նշվ. աշխ., էջ 264:

անձդ կրես: Իսկ եղիցեսն՝ ներգործական, զոր յայլս գործես»<sup>72</sup>: Բերելով և խոնարհման բայերի անցյալ անկատար ժամանակի եզակի երրորդ դեմքի իւր վերջավորություն ունեցող «եքեիւր, տեսանիւր, բազմիւր և որ սոցին նման այլք» բայաձևերը, Արիստակեսը դարձյալ նկատի ունի նրանց միայն անցյալ գործողության ցույց տալը և չի խոսում նրանց կրավորական ձևեր լինելու կամ չլինելու մասին:

Արիստակեսը պահանջում է ուղղականում իմ, քո նորա դերանուններից հետո չ չգրել. «Արդ՝ ուր աստուած կամ հայր կամ այլ ինչ անուն լինի ուղղական, նա թե հետ իր իմ կայցէ, կամ քո, կամ նորա՝ առանց յիոյ են»<sup>73</sup>: Եվ անհրաժեշտ է համարում չ-ն գրել սեռականում, զրա համար պետք է լավ իմանալ անունների հոլովները. «Եւ նախ գիտեա՛ զհոլովումս անունաց, որ են շրջունք կամ թաւալունք, և նոյն հոլովքն, որ են անունաց, են նորին և դերանունաց»<sup>74</sup>: Սոցա, նոցա դերանուններից հետո չ գրել թույլատրելի է համարում այն դեպքում, երբ նրանց վրա ուրիշ տառեր են ավելանում կամ երբ դերանունը նախադաս է գոյականին, իսկ վերջադաս լինելու դեպքում «հագիւ առնու կամ բնաւ իսկ շառնու յի», օրինակ՝ սոցայլք, նոցայց, նոցայք մերձաւորք, նոցայց (կամ նոցայոց) մերձաւորաց, մերձաւորք նոցա և այլն: Սա, դա, նա ցուցական դերանունները հանձնարարվում է գրել առանց չ-ի:

Խոսելով «վերայ» նախադրության մասին, Արիստակեսն ասում է, թե երբ այդ բառի վերջում չ չկա, ապա այն այլ իմաստ և գործածություն ունի և ծառայում է բառաբարդություններ կազմելու համար, ինչպես՝ վերաբերաւոյ, վերաստեծաւոյ, վերանորոգաւոյ, վերառուփիւն, վերաստուփիւն և այլն: Այդպես էլ նա խոսում է իսկ շաղկապի և իսկ և իսկ մակբայի տարբերության մասին:

Այնուհետև Արիստակեսը դիտողություններ է անում մի շարք առանձին բառերի ուղղագրության վերաբերյալ: Ա-ի բառացանկի սկզբում խոսում է պատվով գրվող բառերի մա-

72 Լ. Խաչերյան, Նշվ. աշխ., էջ 265:

73 Նույն տեղում, էջ 266:

74 Նույն տեղում:

սին և հանձնարարում է պատվով գրել միայն քրիստոնեական կրոնի նվիրական բառերը, իսկ հեթանոսական աստվածներին վերաբերող, ինչպես ինքն է անվանում «պարզ» բառերը՝ առանց պատվի, այսինքն՝ լրիվ, ոչ թե հապավված ձևով և պատվի նշանով: Դիտողություն է արվում ամէն և ամեն ձևերից բարդություններ կազմելու մասին, ավելի ճիշտ՝ բերվում են այդ երկու ձևերից բաղադրված մի քանի բառեր՝ ամէնիմաստ, ամէնողորմ, ամենակալ, ամենագաւր և այլն, բայց չի բացատրվում, թե այդ բառերը երբ պետք է գրել է-ով և երբ Ե-ով: Զգուշացվում է, որ առաջի մակբայը պետք է գրել առանց ն-ի (առաջի բո), այլապես այն կշփոթվի առաջին դասական թվականի հետ. այդպես էլ պետք է խուսափել բստգտանք և ստգտանք, վարք և վարս, հրեայ և հրեա՝ (հրամայականի ձևը), լուա (լուանամ) և լուայ, ան և ացտող, առոգանել և ոռոգանել և նման այլ ձևերի շփոթումներից:

Արիստակեսը հետաքրքրվում է նաև օտար բառերի տառադարձություններով. «Անգոսնաղ, անգուշեաց և անգոսնեաց՝ մի են: Շայդ ասորի է և սէղ հայեցի, որպէս և նոցա բառն բարշիշ և մերս՝ քարսիս»<sup>75</sup>:

Բառարանում թարգմանվում են մի շարք օտար բառեր և երբեմն ցույց է տրվում, թե որ լեզվից են վերցված այդ բառերը, օրինակ՝ «եպիսկոպոս և ոչ՝ եպիսկապոս, անունս յունարէն է»<sup>76</sup>: Բարունի բառի դիմաց նշվում է, թե այն երբայերեն է, այդ բառը հրեան լավ գիտե, իսկ ինքը (Արիստակեսը) չգիտե, թե այդ բառի շեշտը որ վանկի վրա պետք է դնել:

Արիստակեսի մոտ դեռևս չեն տարբերակված նախորդի և նախադրության հասկացողությունները և երկուսի համար էլ հավասարապես գործածվում է նախդիր բառը: Այդպես էլ շաղկապ բառը գործածվում է թե՛ շաղկապի, և թե՛ հողակապի իմաստով, կա նաև «կապ բանի» արտահայտությունը: Արիստակեսը հասկանում և իրարից տարբերում է հոլովի և խոնարհման կատեգորիաները, գործածում է հոլովում և խոնարհում բառերը, սակայն հաճախ նա հոլով է համարում նաև

75 Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 258:

76 Նույն տեղում, էջ 268:

բայերի խոնարհված ձևերը: Այդ դեպքում նա այդ բառի տակ հասկանում է ընդհանրապես թեքված ձևեր, թեքում: Օրինակ՝ միանգամայն ճիշտ բացատրելով կամ և կայ բառերի իմաստային տարբերությունը, վերջում նա գրում է, որ «կեայ սսելն նշանակէ թէ կենդանի է, իսկ կեցցէ հոլով է նորին»<sup>77</sup>: Բառարանում որոշ տեղեկություններ են տրվում նաև հնչյունաբանությունից: Գրաբարյան ի առաջնալիզվային (փափուկ) ձայնորդի համար առանձին տառ չհնարելը և Գ-ով նշանակելը, ինչպես նաև աւ երկբարբառի տարբեր արտասանությունների համար առանձին տառեր չունենալը բացատրվում է նրանով, որ նախնիները չեն ցանկացել ավելացնել մեր այբուբենի (առանց այդ էլ շատ) տառերի թիվը:

Արիստակեսը շարահյուսության հարցերով չի զբաղվել. բայց նրա մոտ կան շարահյուսության վերաբերող մտքեր, ըմբռնումներ նախադասությունների բնույթի մասին: Պատմողական բնույթի նախադասությունը Արիստակեսի մոտ կոչվում է պատմական, հրամայականը՝ խրատական կամ հրամայական, բացականչականը՝ գոհացողական կամ աղօրական:

Հետաքրքիր դատողություններ կան նաև լեզվի և ոճի մասին, հատկապես լեզվի հարստության, ձկունության ու գեղեցկության վերաբերյալ. «Ուրք և ոյք:— Սոքա թուեցան ոմանց ոչ գոլ համազարս, այլ ես ասեմ համազարս զսոսա գոլ, վասն հարստութեան մերոյս լեզուոյ, որպէս յորժամ ասեմք յայնկոյս և յայնկողմ, և են սոքա միևնոյն ըստ մտաց, այլ ըստ տեղոյն պիտոյից փոփոխեն զիրեարս վասն ողորկութեան բանին առ ի զսպել կամ տարածանել զբանն, զի յայնմ կուտէ՝ յոյժ ամփոփ է, իսկ յայնմ կողմանէ՝ վայելչական լիութեամբ է: Եւ այսպես ըստ տեղոյն ածեն և հանեն զիրեարս լծորդարէն կերպիւ կողմս և կոյսս, թէև է՝ կոյսն յանապականութեան վրայ կոչեցեալ: Այսպէս և ոյք և ուրք, ըստ զարտութեան մի են, բայց զեղեցկաբանութեան արուեստի սակս՝ զանազանին...»<sup>78</sup>: Այսպես է խոսվում նաև ո և ուր գեղանունների գործածության մասին:

77 Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 274:

78 Նույն տեղում, էջ 280—281:

Արիստակեսի բառարանում բառերի ստուգաբանություններ չկան, սակայն զգալի թիվ են կազմում այն բառերը, որոնց իմաստը բացատրվում է այնպես, ինչպես այդ արվում է միջնադարյան բացատրական բառարաններում: Այսպես՝ բաղդատել-համեմատել, գայլ-գազան, անգ-պատշան, վիհ-խոր ձոր, վիրագ-ատելի, վիուկ-դիւք, տւամադրել-փոխադրել, գեղուն-լի, ֆաղդէացի-ագգի անուն է և աղանդոյ, զարմագան՝ ասի սֆանջելի ասի եւ երփն, զանգէտ-երկշոտ, սեռն-բոլո՞ւ ազգն, ծպտեալ-ծածկեալ ասի, կաթողիկէ-բոլոր և հանրական ասի և այլն: Երբեմն տրվում է բառիմաստի աճելի ընդարձակ բացատրություն, այդպես է, օրինակ, բացատրվում գայլ բառը: Հենց այսպիսի մեկնությունները նկատի ունենալով, մենք վերևում նշել ենք, որ Արիստակեսի բառարանը ինչ-որ չափով ունի նաև բացատրական բառարանի նշանակություն:

Արիստակեսի բառարանում տրված բացատրություններում առաջ են քաշվում քերականական այն հարցերը միայն, որոնք անմիջականորեն կապվում են առանձին հնչյունների գրություն, բառարարման, հոլովման, խոնարհման, մասամբ ոճի և այլնի հետ:

Արիստակեսի բառարանը հարուստ է դիպուկ և արտահայտիչ օրինակներով, մատենագրությունից վերցված արտահայտություններով ու դարձվածներով: Եվ քանի որ Արիստակեսը հիմնվում է անցյալի մատենագրության վրա, ապա նրա բերած օրինակների զգալի մասը վերցված է ս. գրքերից, օրինակ՝ «չնջեցից դամենեսին» (Աստվածաշունչ, Ծննդ. 2, 7), «արար զհրեշտակս իւր» (Սաղմ. ԸԳ, 4), «Ո՛ւր է Հարէլ եղբայր բո» (Ծննդ. Գ, 9): Կան նաև ուրիշ արտահայտություններ և կապակցություններ՝ բանտ և կապանք, ցիր և ցան, կանացի և առնացի, բաց է ի բաց, բաց ի մեղաց, անզգայ մտաւք, զգոյշ լեռուք, ծորեալ և ծնգեալ, առոյգս և առոքս և այլն:

Առանձին կապակցությունների ու արտահայտությունների առաջընթացում բացահայտված է բառի բազմիմաստությունը: Լ-ի բառացանկում կարդում ենք. «Լոյծ ի բաց, լոյծ զկաշիկս, լոյծ զկապանս, և հոտեալն և շրորեալն՝ լուծեալ ասի, և մեկնութիւն գրոց լուծումն ասի, և զմի տեսութիւն ունին ամենե-

քեան, զի մին ի կապանաց արձակի, և միւսն յառողջ պնդութենէ»<sup>79</sup>: Նման օրինակների միջոցով հիշողության մեջ ամրապնդվում է բառի իմաստը, հետևաբար նրա ճիշտ գրությունն ու գործածությունը, բացահայտվում են բազմիմաստ բառերի՝ տարբեր գործածություններում ունեցած կոնկրետ իմաստները, ցույց է տրվում կապակցությունների ու ոճերի գրության ճիշտ ձևը:

Արիստակեսը հուշակավոր գրիչ լինելուց բացի, միևնույն ժամանակ փորձված ու շնորհալի ուսուցիչ է, տիրապետում է ուսուցման գործի նրբություններին՝ սովորեցնում է ու խորհուրդներ տալիս. «գիտեա՛ւ», «իմա՛ւ», «ծանի՛ր», նրան հատուկ են միջնադարյան գրչի համեստությունն ու անկեղծությունը:

Հայերենի անդրանիկ ուղղագրական բառարանը զերծ չէ և չէր էլ կարող զերծ լինել թերություններից: Այդ թերությունները վերաբերում են հիմնականում բառարանի կառուցվածքին (բառերի ոչ լրիվ այբբենական դասավորություն, բառերի սահմանափակ քանակ, բառացանկերի՝ զանազան բացատրություններով և օրինակներով ծանրաբեռնվածություն և այլն) և դուրյն անզամ շեն նսեմացնում Արիստակեսի ուղղագրական բառարանը, որը հիմնարարը հանդիսացավ հայերենի կայուն ուղղագրության:

## Գ. ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

### ՀԱՆԳԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՅ

Այս բառարանը նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար և ճարտասանների, գեղարվեստական խոսքի կատարելագործման ու բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան է, մի հետաքրքիր ուսումնական ձեռնարկ:

<sup>79</sup> Լ. Խաչերյան, Եղվ. աշխ., էջ 271:

Մեր մատենագրության մեջ այդ բառարանի առկայությունը ցույց է տալիս, որ XII—XIII դարերում հայ բառարանագրությունը նոր քայլեր է կատարում դեպի առաջ, դառնում է ավելի բազմակողմանի, հարստանում նոր տիպի բառարաններով: Բառարանի լրիվ վերնագիրն է՝ «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս»: Հետագայում այս վերնագրին, վերջից, ավելացվել են «բառ է գեղջուկը» բառերը:

«Հանդէս»-ը հայերեն հնագույն բառարաններից է, ձևագիր հուշարձաններով, Զմմառի № 204 ձևագրով, այն վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանված, նրա գրության ստույգ ժամանակը, տեղն ու հեղինակն անհայտ են:

Ըստ բառերի դասավորության կարգի բառարանն ունի երկու խմբագրություն՝ խառը, ոչ այբբենական և այբբենական: Առաջին խմբագրության բառարանները, որոնք բառարանի նախագաղափարից են ընդօրինակված, սկզբնաբանների այբբենական դասավորություն չունեն, սկսվում են պարտ բառով և ավարտվում գիծի, տառի, գծաուրի բառերով: Այս խմբագրությանն է պատկանում բառարանի գրչագրերի մեծ մասը (ձև. № № 5596, 2371, 5919, 6624 և ուրիշ): Երկրորդ խմբագրությանը պատկանում են բառերի այբբենական դասավորություն ունեցող գրչագրերը: Այբբենական դասավորումը կատարվել է XIV դարում (տե՛ս ձև. № № 268, 540, 3844, 4149 և ուրիշ): Այս խմբի բառարաններն սկսվում են անհաս բառով և ավարտվում մարգարէ, տեսնալ բառերով:

Հատած բառարանից. «Պարտ, պատշան, ի դէպ, ի հան, չանգ, նման, բարտ, վայելուչ, մարք, հանոյ, յարմար, պատկան, փառակ, ըմբոն, առժան, առէն, պատեհ, իրաւ, պատեհագոյն, քնտանեգոյն, անգ, կար, հնար, հաւան, հաղորդ, համբոյր»<sup>80</sup>:

Ամբողջ բառարանը կազմված է 135—140 այդպիսի բառախմբերից, որոնք ընդգրկում են 3-ից մինչև 50 բառ և բո-

լոր բառախմբերում եղած հոմանիշ բառերի ընդհանուր թիվը, այսինքն ամբողջ բառարանի բառերի քանակը, տատանվում է 1470—1570-ի միջև: Եթե բառարանի գրչագրերում բառախմբերի քանակը գրեթե միևնույնն է, ապա համապատասխան բառախմբերում բառերի քանակը տարբեր է: Օրինակ՝ № 8198 ձևագրում պարտ բառով սկսվող բառախմբում բացակայում են յարմար, պատկան, փառակ, ըմբոն բառերը, նմանութիւն բառի խմբում՝ տեսակ, ձև, սարաս, ունակութիւն, գոյն, քուրմի խմբում՝ գողար, կակուղ, լոյծ, փափուկ բառերը, որոնք կան № 2371 և այլ ձևագրերի համապատասխան հոմանիշային խմբերում: «Հանդէս»-ում հոմանիշների կողքին կան նաև այլ բառեր, որոնք հոմանիշ չեն գլխաբառին և շրջապատի մյուս բառերին: Սակայն միևնույն բառախմբում հավաքված բոլոր բառերն էլ կարող են գլխաբառի հետ կապվել, համընկնել իմաստային մի որևէ զործածութեամբ և առարկային ու երևույթին վերագրել միևնույն հատկանիշը, նախադասության մեջ իրար փոխարինել զանազան խնդրային ու պարագայական դերերում: Բառերի իմաստային ու կիրառական անընթացները լրիվ բացահայտելու համար դիմենք բառարանից առնչված օրինակների:

«Հրեռել, բախնանալ, խախնանալ, ցնծալ, խաղալ, խոպալ, սոպալ, խայտալ, խնդալ, զուարեանալ, բերկրիլ, ուրախանալ»<sup>81</sup>:

Այս խմբի բոլոր բառերն էլ, բացառութեամբ սոպալ բառից, հոմանիշներ են: Այդպես էլ՝ «նենգաւղ, դաւանանաւղ, պատրաւղ, խաբաւղ»<sup>82</sup> կամ՝ «ել, գոլ, եղանել, լինել, եղել, ելոյր, ելոյ»<sup>83</sup>:

Հոմանիշներ են նաև վաղվաղակի, յախտունախաւս, պահպան, հաշտ, սիգալ, համբակ, շամբուչ, հասանելի, համանգամայն, խտեռախ և այլ բառերով սկսվող բառախմբերի գրեթե բոլոր բառերը: Սակայն այդ չի կարելի ասել բոլոր բառախմբերի մասին: Օրինակ՝

<sup>81</sup> Մատենագրան, ձև. № 2371, էջ 280ա:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 287բ:

<sup>83</sup> Նույն տեղում, էջ 283ա:

<sup>80</sup> Մատենագրան, ձև. № 2371, էջ 276ա:



«Բոց, հուր, հրատ, շանքիք, դամբար, ջան, պեւկէ, կայ-  
ծակն, խարոյկ, եռանդն, բով, հալոց, տոչորել, կիզուլ, տա-  
պակել, փուրա»<sup>84</sup>:

Այս խմբում լիարժեք հոմանիշներ են ոչ թե բոլոր բա-  
ռերը, այլ առանձին բառեր իրար հետ, որոնք բառախմբի ներ-  
սում կարելի է ենթաբաժանել այսպես.

բոց, հուր, հրատ  
շանքիք, կայծակ  
դամբար, ջան, պեւկէ  
խարոյկ  
բով, հալոց, քուրա  
տապակել, եռանդն  
տոչորել, կիզուլ

Այստեղ միևնույն տողի վրա գրված բառերը հոմանիշ-  
ներ են, իսկ տարբեր տողերում գտնվողները լիարժեք, ոճա-  
յին, հոմանիշներ չեն: Բայց այդ բոլորը մի բառախմբում բոց  
գլխաբառին առադրվել են նրա համար, որ դրանք բոլորն էլ  
իրար հետ իմաստային առնչության մեջ են, կապված են հրի  
ու կրակի ընդհանուր հասկացությամբ:

Այլ օրինակներ՝

«Լոյս, նանանշ, արեգակն, արեւ, ար, տիւ, տուրնջենա-  
յին, լուսանեմ, նառագայք, փայլակն, սպիտակափայլ, փաղ-  
փուն, փայլուն, նշոյլք, լուսերանգ, պայծառ, սպետափառ,  
ուղփանեմ, արեգակնափայլ, ոսկեփայլ, լուսակիզն, հրաշա-  
փառ, լուսափայլ, երեք լուսեան, երեք հրաշեան, երեք սփան-  
շեան, բազմալոյս, բազմանառագայք, որ է աստուած»<sup>85</sup>:

և՛

«Նաւար, մուր, մէզ, մառն, մրոայլ, ստուերամած, շա-  
մանդաղ, աղջամուղջ, նսեմ, բալ, աղտամուղտ, խաւարարօր,  
բուզ, գիշեր, մքին, բուխ, արջնաքոյր, սեւաքոյր, խրքնի,  
բալիդ, բոբր, տխուրք, ոզր, ուլբր, խաւարագգած, խաւարա-  
սէր, խաւարամած, խաւարածին, որ է ստանայ»<sup>86</sup>: Այս բա-

ռախմբերում էլ բոլոր բառերը հոմանիշ չեն, դրանք նույնպես  
բառախմբի ներսում կարելի է հոմանիշների առանձին խմբերի  
բաժանել: Սակայն չորաբանչուր հատվածում եղած բոլոր  
բառերն էլ իմաստային ու գործածական կապերով են կապ-  
ված, նրանց լույսի ու փայլի, խավարի ու մթության ընդհա-  
նուր գաղափարն է միավորում: Բացի իմաստային միասնու-  
թյունից, այդ խմբերի, հատկապես նրանց վերջին մասերի,  
բառերը իրար հետ են կապվում փոխաբերական իմաստով,  
որպես միևնույն երևույթին, առարկային տարբեր կողմերից  
բնորոշող, որակող բառեր. լույսի հետ կապված բոլոր բա-  
ռերը, որպես մակդիրներ հատկացվում են աստված բառին,  
իսկ խավարի հետ կապվածները՝ սատանային:

«Ասել, ոգել, պատմել, քուել, ձայնել, նառել, առակս  
հրամայել, առագբել, արտագբել, արտասել, վիպել, հաւա-  
նել, վարկանել, բացառոցել, բացիրել, բանալ, խոստովանել,  
ղաւանել, նամարտակել, առասել, հատուցանել, բարբառել,  
համարել, փարոզել, վնարել, առեհարանել, նօքնել, հրապա-  
րակել»<sup>87</sup>: Ոչ բոլոր բառերն են հոմանիշներ, բայց բոլորն էլ  
իրար հետ են կապվում ասել բառի միջոցով, ասելու, խոսն-  
լու, ինչ-որ բան հաղորդելու գործողության ընդհանուր գա-  
ղափարով:

«Նագմ, վրդով, խոռով, ամպրոպ, կղամ, աղմուկ, շփոք-  
դերձիկք, փարագմունք, խունապ, մերիկ, ծուխ, խուծան,  
ժխուր, խննոյ, զուպար, մարտ, վէն, արշաւք, պայքար, նա-  
կատ, հանդէսք, հակառակք, ներհակք, ընդդիմակք, հակա-  
նառ, հակադարձք, ոգոզել, խեռալ, զոռալ, փինալ, ռիալ, պա-  
տերագմել, ռիսրիմք, ակատել, խորհել, խոկալ, պարուրել»<sup>88</sup>:

Այստեղ նույնպես բոլոր բառերը հոմանիշներ չեն, նրան-  
ցից մի քանիսը իմաստով հեռու են իրարից, սակայն այդ բո-  
լորն էլ կարող են գործածվել խառը վիճակ, խառնաշփոթու-  
թյուն, տազնապ նկարագրելու համար:

«Վտանգք, աղէտք, աղունք, լիումն, վարանք, տարակու-  
սանք, վնասք, խոխոմել, ինոզել, սրտաբափումն, քաղխծանք,

<sup>84</sup> Մատենադարան, ձեռ. № 2371, էջ 287ա:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 276բ—277ա:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 277ա:

<sup>87</sup> Մատենադարան, ձեռ. № 2371, էջ 281ա—281բ:

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 278ա:

տրամուրիւն, աւաղ, վիշտ, սուգ, վայ, ջայլանք, կոծ, լա-  
լիք, ողբ, ողբալիք, եղերամայրք, ճիշք, աշխարհաճ, եղկու-  
րիւն, կականումն, շիանք, յալէտ անյուսից»<sup>89</sup>:

Քառերը իրար հետ կապված են գործողության և նրա հե-  
տևանքի գաղափարով, վտանգի դեպքում զանազան ապրում-  
ներ ու զգացումներ ցույց տվող բառերի իմաստային միաս-  
նությունը:

«Տեսանալ, մարգարէ, նախագիտական, գիտնական,  
միտք քափանցեալ, արք հոգեկիրք»<sup>90</sup>:

Քառերը հոմանիշներ չեն և ոչ մի ուղղակի առնչություն  
չունեն տեսնել բառի հետ: Այստեղ քառերը հանդես են գա-  
լիս ոչ թե իրենց հիմնական իմաստներով, այլ փոխաբերա-  
կան իմաստներով, որոնցով և առաջրված են տեսանալ բա-  
ռին: Այդպես էլ հոյակապ բառի խմբում՝ նրան հոմանիշ և ոչ  
հոմանիշ բազմաթիվ բառերի շարքում կան նաև հարուստ,  
երկնափառաբան, երուսաղէմացի, մայրափառաբան, մեծա-  
տուն բառերը, որոնք հոմանիշներ չեն գլխաբառին, բայց փո-  
խաբերական իմաստների ընդհանրությամբ այդ բառերը հա-  
վարվել են մի խմբի մեջ:

Այնուհետև

«Անհաս, անհա, անպատում, անբաւ, անպարագրելի,  
անեզր, անսահման, անպար, անիմանալի, անըմբռնելի, ան-  
պարունակելի, անձեւ, անորակ, անշափ, անհանակ, անժամա-  
նակ, անուր, աներբ, անյաւ, անյաւղ, ի վեր քան զքան, և  
զփորձ և զմիտս և զսահման և զհասս, վերագոյն քննելեաց,  
լուրիւն, խորք խորոց, անդունդք, անայլանուն, անհին, ան-  
յայտ, վեհ, մեծ, հզար, անհար, աներեւելի, աներեւոյք, ան-  
բաւելի, անբովանդակելի, դատավեճ, անհատելի, տարակու-  
սելի, քափուն, ծածուկ, անտարբերական, անհասանելի, ան-  
տանելի, անայլայլելի կոչելով և զառ ի յորոց ոչ զինչէն, այդ  
զոր ինչ ոչնէ նշանակէ, և այլևս սոցին նման, և ահա աս-  
տուած»<sup>91</sup>:

<sup>89</sup> Մատենադարան, ձեռ. № 2371, էջ 284ա—284բ:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 284ա:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 281բ—282ա:

Այս խմբում կան, իհարկե, հոմանիշներ, ինչպես՝ անպա-  
րագրելի, անեզր, անսահման, անպար, անպարունակելի, ան-  
ըմբռնելի, անիմանալի, խորք խորոց, անդունդք և այլն, բայց  
բառերի մեծ մասը հոմանիշներ չեն և անհաս բառին առաջըր-  
ված են նրա համար, որ այդ բոլորն էլ բնորոշում, որպես մակ-  
դիրներ, զանազան հատկանիշներ են վերագրում միևնույն  
աստված հասկացությանը, կապված են ոչ թե իմաստներով,  
այլ գործածության առնթներով: Ինչպես տեսնում ենք,  
«Հանդէս»-ը միայն հոմանիշների բառարանն է: Քառերը կապ-  
ված են առարկան զանազան ձևերով անվանելու, նրան հատ-  
կանիշներ վերագրելու, գործողության, վիճակի ու գրության,  
չափի ու քանակի և խնդրային ու պարագայական այլևայլ հա-  
րաբերություններ արտահայտելու միասնությամբ: Այդ բա-  
ռերի համար ընդհանուրն այն է, որ զրանք բոլորն էլ իրենց  
հիմնական կամ փոխաբերական իմաստներով կարող են գոր-  
ծածվել միևնույն բառի հետ: Նրանցից յուրաքանչյուրը զըլ-  
խաբառի հետ կարող է նախագաստության մեջ փոխարինել  
մեկը մյուսին: Գրանք իսկական, սոսկ ոճային սրժեքներով  
զանազանվող հոմանիշներ չեն, այլ կոնտեքստային հոմա-  
նիշներ, որոնք, բայց Ա. Իսկոսի և Ա. Լենկովայի ճիշտ բնորոշ-  
ման, ոչ թե միշտ, այլ միայն որոշակի պայմաններում, որո-  
շակի կոնտեքստում (nur unter bestimmten Umständen, d.  
h. in bestimmten Kontexten)<sup>92</sup> կարող են որպես հոմանիշ-  
ներ հանդես գալ: Հոմանիշ բառերի շարքում երբեմն հոմանի-  
շությունը արտահայտվում է ոչ թե մի առանձին նոր բառով  
(հոմանիշով), այլ ամբողջական բառակապակցության միջո-  
ցով, նկարագրական եղանակով, որպես՝ «եզական թուով ըզ-  
բազմաց ասել»<sup>93</sup> արտահայտությանը՝ համաձայն, համահա-  
ւաք, առհասարակ, միաժողով, հասարակաբար և այլն բառերի  
շարքում:

Մի շարք բառեր բերվում են առանձին արտահայտու-  
թյունների մեջ: Օրինակ՝ «թշուառանալ, մարկանալ, տառա-

<sup>92</sup> A. Iskos, A. Lenkova, Deutsche Lexikologie, Lenin-  
grad, 1960, S. 215.

<sup>93</sup> Մատենադարան, ձեռ. № 2371, էջ 277բ:

պիլ... աղփատի ի հոգեւոր և ի մարմնաւոր արգասեաց և հիւանդի մեղաւ»<sup>94</sup>, «Յունադատել... խոտորել, քիւրել, բուռն և զլացաւ զմարդիկ»<sup>95</sup>:

Ամեղել բառի խմբում վերջին՝ ժպիրեմ, բառին անմիջապէս հետևում է «որպէս հրեայքն հայհոյիչք և նենգաւորք և պատուիրանազանցք»<sup>96</sup>: Եզերի-ի խումբն ավարտւում է այսպէս. «...աւարտ, գլուխ, վերջք, որպէս Ղուկաս գտեառնէ և զհրեիցն ցուցանէ»<sup>97</sup>: Ապա, զանխուլ բառով սկսվող բառերի շարքում, չբերելով այդ բառի բոլոր հոմանիշներն ու գործածութեան ձևերը, բառարանի հեղինակը վերջում նշում է՝ «յորնառեալ է սա»<sup>98</sup>: Նման նշումներ ու բացատրութիւններ կան նաև մյուս բառախմբերում: Դա պայմանավորված է բառարանի իսկական գործնական բնույթով. նորավարժներին բառեր սովորեցնելու հետ միաժամանակ տրվում են որոշ բացատրութիւններ՝ բառերն ավելի լավ հիշելու, նրանց գործածութեան դեպքերը պարզ պատկերացնելու համար:

Այս տեսակետից «Հանդէս»-ը որոշ նմանութիւն ունի Արիստակեսի ուղղագրական բառարանի հետ, որի բառացանկերը հազեցված են դիպուկ, արտահայտիչ օրինակներով ու համեմատութիւններով:

«Հանդէս»-ի բառախմբերի թիվը, ինչպէս տեսանք, շատ չէ, բառարանը փոքր է, սակայն նրանում կենտրոնացված են այնպիսի բառեր, որոնք շատ գործածական են թե՛ մատենագրութեան մեջ, և թե՛ դպրոցական-ուսումնական առօրյայում: Ստորև բերում ենք բառարանի զխաբարները, նրանց դիմաց նշելով տվյալ բառով սկսվող բառախմբում եղած բառերի քանակը (այդ թիվում նաև զխաբարը): Բառերը բերում ենք ըստ № 2371 ձևագրի, որը լավագոյնն է «Հանդէս»-ի գրչագրերի մեջ, մյուս ձևագրերի օգնութեամբ լրացումներ և մասնակի ճշգրտումներ կատարելով:

94 Մատենադարան, ձև. № 2371, էջ 283բ:

95 Նույն տեղում, էջ 284բ:

96 Նույն տեղում:

97 Նույն տեղում, էջ 285ա:

98 Նույն տեղում:

Պարտ (26), արդակ (35), նմանութիւն (29), ապարանք (10), լոյս (28), խաւար (28), բոպէ (7), բետոր (8), պատուակեալ (18), տէր (5), նենգածէտ (8), համանգամայն (22), շան (12), խազմ (38), նահատակել (11), դաս (22), ծագք (35), ծոցք (19), անջատել (24), լուծումն (9), գատ (9), փոփոխել (15), վաղվաղակի (10), կորացեալ (9), բափեալ (6), ձեռք (4), հնագանդ (12), դեկավար (7), այտուցեալ (24), սասիւն (6), յախտունախաս (5), հայցել (32), մերձ (5), հիւնիւնել (5), հրեուել (12), փանափի (39), հիւք (4), հասուցի (10), լոգանալ (6), հոյակապ (47), ծիրեալ (6), բազմապատիկ (17), ասել (28), արծարծել (7), սեռք (15), անհաս (48), ջնջել (21), պահապան (10), առաջափ (13), հեղինակ (20), հաշտ (9), սուրբ (18), ել (7), սպրդել (3), բիծ (9), պիտառութիւն (5), կառուցեալ (5), նախկին (9), միշտ (17), բմբոջիւնել (5), խոնարհ (6), դեզերել (34), մածեալ (3), քրտառանալ (8), երգք (27), վրիպել (3), կարապետ (5), ձայն (15), կիրք (5), տեսանալ (6), վտանգք (28), հանդերձեալք (5), գերունակ (7), ամեղել (14), բունադատել (14), եզերի (21), զանխուլ (11), իրք (21), լուտալ (21), դուռել (16), շամբուշ (7), զգան (6), մուրկ (8), հասանելի (4), հարկանել (4), հաննար (7), յարձակումն (4), վիթխարի (4), հասուն (քարսուն, 3), զղջանալ (4), զսպել (3), սիգալ (4), կոնոպել (3), դուար (9), կապերտ (7), պոռնիկ (19), լաղ (3), կէտ (3), համբակ (9), շաղգակերք (4), տարտողական (5), կաղալ (8), ծամել (9), ձգել (14), աստուածագան (6), լեզուագարութիւնք (3), գուք (7), ծագել (4), յարել (14), բոց (16), նենգալ (4), վիռվ (7), առիշեղ (5), պիտալ (9), խստերախ (3), տարակուսել (7), պարենի (4), սպանդ (10), շարիլ (4), պարիլ (4), նուագ (10), պարենի (6), անպահր (5), սոսկ (7), անտառախիտ (13), ծպտել (7), բուրաստանք (4), հատու (4), գէք (3), նողոպրեաց (4), խոշոր (6), թուրմ (8), դիլիք (դիլիսին, 7), կապարն (3), պարունակել (4), խոխտալ (11), բնաւորել (6), շինել (13), պանունել (11), դիտել (3), հրաշափառ (5), արբանակ (4), գիծք (3):

Այս փոքր բառարանը արժեքավոր է առաջին հերթին, որպես նոր տիպի բառարան, որպես լեզվի ոճային կողմին նվիրված մի աշխատություն հայ մատենագրության մեջ: Բառարանը օգտակար կարող է լինել նաև մի շարք բառերի բազմամաստությունները, գործածական դանազան գրսևորումները պատմականորեն ուսումնասիրելու, բառի իմաստային փոփոխություններին հետևելու տեսակետից:

«Հանդէս»-ը միաժամանակ արժեքավոր է որպես միջնադարյան հայ դպրոցի ուսումնական ձեռնարկ: Գրքերի ընթացքում աշակերտների ամբողջ սերունդներ օգտվել են այդ բառարանից, հարստացրել իրենց բառապաշարը, կատարելագործել իրենց ոճը, գեղեցիկ ու բովանդակալից շարագրելու հմտություններ ձեռք բերել:

## Ե. ԲԱՌԱ-ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

### ԲԱՌԱՐԱՆ ԲԱՌԱՄԱՏՈՒՅՑ

Կան միջնադարյան բառարաններ, որոնք միայն գրանցում, ներկայացնում են բառերը, առանց բացատրելու, թարգմանելու կամ նրանց մասին որևէ տեղեկություն տալու: Գրանք բառա-դարձվածային բառարաններ են: Իրենց կառուցվածքով նրանք հիշեցնում են արդի ուղղագրական բառարանները, որոնց մեջ իրար հետևից բառեր են շարված:

Ի՞նչ նպատակով են ստեղծվել այդ բառարանները:

Գրանք խոսքի արվեստին նյութականապես ծառայող, սոսկ բառային շինանյութ մատակարարող, տարբեր բովանդակության ու ծավալի հավաքածուներ են, նախատեսված ինչպես դպրոցականների, այնպես էլ բանաստեղծների, ճարտասանների և բանարվեստի հետ գործ ունեցող այլ մարդկանց օգնելու համար:

Ամբողջական մի բառամատույց բառարան պահպանվել է Մատենադարանի № 3937 ձեռագրում<sup>99</sup>: Այդ ձեռագիրը մի

<sup>99</sup> Մատենադարան, ձեռ. № 3937, էջ 46ա—52ա:

ընդարձակ ժողովածու է, որը այլևայլ նյութերի հետ միաժամանակ պարունակում է մի շարք հին բառարաններ: Զեռագրի գրություն ժամանակը հայտնի չէ, մասնագետները այդ ժողովածուն վերագրում են XIV դարին: Զեռագիրը վատ վիճակում է, շատ թերթեր պատռոտված են, մաշված ու տեղտեղ անընթեռնելի են, սակայն, բարեբախտաբար, բառարանը վնասված չէ: Մյուս բառարանների նման այս բառարանը մի համառոտ ու բնորոշ վերնագիր չունի և բերվում է հետևյալ նախագրության տակ.

«Անյայտին նիշ նիթեղէն կոշմամբ իբր ի սոցունց զննա յորմէ առկացան [կա]րեմք բակձածել զոր ինչ ի տարրեղէնս սուրբս և հաճելիս պատկանաւորս և յարմարս. մտաւորականաւ անօսրի և թանձրականաւ բրբաւ բոլորի բերեալ բարգեմք: Բեղնանտողին յարարարողին զբաւանդակ զէսս յորոց առանց յորունց ներհակաց զո ի յիմացածս: Յարակերտօղն իբր իր և անուն զոր ի ստորակացս ըստթիբրոնիս ցուցաբ... անի օ[գ]նութիւն գրականացս շարագրի շարամանեալ. որուն [ի] թիւս Ժ-անց, և Ը-ից և Թ-աց... ..ն դարձեալ անյայտի... ոյն ի նոյնն»<sup>100</sup>:

Անընթեռնելի տեղեր պարունակող վերջին տողերի իմաստը անհասկանալի է և նախագրության այդ մասն աղճատված է թվում: Այնուամենայնիվ հասկանալի է այն, որ այդ նախագրությանը հաջորդող բառարանում հավաքված բառերի օգնությամբ, նրանց դանազան կապակցություններով, կարելի է արտահայտել փառաբանող, պատշաճ ու հաճելի խոսքեր, աստծու հասցեին, որքան որ անհրաժեշտ է: Անկասկած, բառարանն ավելի հին է, քան ձեռագիրը, որով նա հասել է մեզ: Թե ե՞րբ է գրվել այն՝ հայտնի չէ: Նրա նախագրության մեջ հունարան բառերի, մասնավորապես հունարեն ըստիբրոնց (στοιβερον) բառի առկայությունը, ինչպես նաև խրթին ու մանվածապատ ոճը հիշեցնում են Գր. Մագիստրոսի աշխատությունները: Ամբողջ բառարանը նույնպես հագեցված է հունարան բառերով ու այնպիսի բառակազմություններով, որոնք բնորոշ են Մագիստրոսի ժամանակաշրջանի մատենա-

<sup>100</sup> Մատենադարան, ձեռ. № 3937, էջ 46ա:

գրութիւններ: Ենթադրւում է, թէ բառարանը գրված պիտի լինի XI դարում, գուցե և ավելի վաղ: Բայց այն հանգամանքը, որ բառարանը չուր բնույթի մյուս հեղինակումների նման բառ չի վերնագրված, այլ կոչված է ըստի՛րոն, միւս է առաջացնում, թէ նա կազմված պիտի լինի այն ժամանակ, երբ զեռ բառարանների բառէ անվանումը գոյութիւն չունի, այսինքն՝ գրված է միջնադարյան հայ բառարանագրութեան երկրորդ ենթաշրջանի հենց սկզբին: Շատ հավանական է, որ բառարանի բառերը նախապես այրբենական դասավորութիւն չեն ունեցել և հետագայում են վերագասավորվել ներկա կարգով, ինչպես այդ կատարվել է «Բառք քերականին», «Հանդէս բանաստեղծաց» և այլ բառարանների հետ: Եթէ դա էլ ճիշտ է, ապա բառարանի ստեղծման ամենահավանական ժամանակը պետք է ընդունել XI դարի սկիզբը: Սա գրված պիտի լինի «Բառք Գաղիանոսի» բառարանից էլ առաջ:

Բառարանը պարունակում է 1000-ից ավելի բառեր, այդ թվում մի քանի բառակապակցութիւններ: Բառերը դասավորված են այբբենական կարգով, ըստ իրենց սկզբնատառերի միայն, ինչպես մյուս հին բառարաններում: Միևնույն արմատից կազմված բառերը հաճախ զետեղված են իրար առընթեր, ինչպես՝ «լոյս, լուսատու, լուսաորիշ», «կանուխ, կանխաւ, կանխածան» և այլն, սակայն բառերի խմբավորման այդ եղանակը պատահական բնույթ ունի և հետեղականորեն չի կիրառվում ամբողջ բառաշարքի նկատմամբ:

Ըստ կազմութեան բառարանում ընդգրկված բառերը հայերենի բառակազմական տարրեր եղանակներով ու միջոցներով կազմված բառեր են: Նրանց մեջ զգալի տեղ են գրավում հունարան նախածանցներով, ութիւն, ինչ, ակաւն վերջածանցներով բառերն ու բառարարդումները: Անով սկսվող բառերի կեսից ավելին կազմված է ան ժխտական նախածանցով: Գրանք հատկապես եկեղեցական մատյաններում լայնորեն զործածվող բառեր են, ինչպես՝ անմահ, անմահացուցիչ և այլն, որոնց օգնութեամբ բազմաթիվ երկրային, կենսական հատկանիշներ ու վիճակներ ժխտվում և անհարիւր են համարվում աստծու նկատմամբ: Բառերի մեծ մասը իրենց ուղիղ

կամ տարրեր թէր ձևերով բերված գոյական և ածական անուններ են, կան նաև դերբայական ձևեր: Գրեթէ բոլոր բառերն էլ հայերեն գրական բառեր են, բացառութեամբ թալպիովք, սարաովք, ապենիազ և նման մի քանի օտար բառերի, որոնք նույնպես գործածական են հայ մատենագրութեան առանձին երկերում:

Հիշյալ բառամատուց բառարանը մեր միջնադարյան արժեքավոր գրական հուշարձաններից և բառարանագրական հնագույն, հետաքրքիր գործերից մեկն է: Այն բառերի մի հետաքրքիր հավաքածու է, որ մեր ժամանակներն է հասցրել այնպիսի հայերեն բառեր, որոնք մինչև օրս անհայտ են և տեղ չեն գտել տպագիր բառարաններում: Այդ բառարանի օրինակով հետագայում ստեղծվել են նման բնույթի ուրիշ բառարաններ, որոնք մեծ չափով օգտագործվել են հայ դպրոցներում և մատենագրութեան ասպարեզում:

#### ԲԱՌՔ ԳՈՎԱՍՍԱԿԱՆՔ

Ձեռագիր հուշարձաններում պահպանվել է նաև «Բառք գովասականք ոգեալ» խորագիրն ունեցող բառարանը, որը մյուս ձեռագիր բառարանների շարքում, «Հանդէս բանաստեղծաց»-ի նման, աչքի է ընկնում որպէս նոր տիպի բառարան: Դա նույնպես նորավարժների ուսուցման համար ստեղծված, նրանց մեջ զործնական հմտութիւններ դաստիարակող զբոսայգիական ձեռնարկ է: «Բառք գովասականք»-ը մեզ է հասել համեմատաբար ավելի քիչ ընդօրինակութիւններով: Մատենագրարանում պահվում են այդ բառարանի ընդամենը վեց գրչագրեր:

Այդ ձեռագրերը մեզ արդեն ծանոթ ժողովածուներ են, որոնք գրված են XIV—XVII դարերում: Ենթադրւում է, որ բառարանը գրվել է XIII դարի վերջերին և XIV դարի առաջին տարիներին, անհայտ հեղինակի, ամենայն հավանակաւ նութեամբ մի սովորական գրչի կողմից:

Բառարանը փոքր է, բանասիրութեան ու լեզվաբանութեան համար առանձին արժեք չի ներկայացնում ու զնահատելի է

գլխավորապես որպես բառարանի մի նոր տեսակ, որ մինչ այդ հայտնի չէր մեր մատենագրության մեջ:

«Բառք գովասանական»-ը անմիջականորեն կապված է ոճի հետ: Նրա մեջ հավաքված են մեր հին մատենագրության տարբեր երկերից քաղված ոճեր, բառակապակցություններ, ինչպես նաև առանձին բառեր: Սակայն, որպես այդպիսին էլ այդ բառարանը, ինչպես մյուս միջնադարյան բառարանները, լայն ընդգրկումներ ու մեծ նշանակություն ունեցող գործ չէ, նրա հեղինակը աշակերտներին ոճական հարցերում բազմակողմանիորեն օգնող, նրանց գիտելիքները հարստացնող բառարան չի ստեղծել. նա, պարզապես, իր ձեռքի տակ եղած մի քանի մատյաններից քաղել է առանձին ոճեր, հաճախ էլ այդ բնագրերի նախադասությունները մեխանիկորեն աղձատելով դուրս է քաշել առանձին կապակցություններ ու դարձվածներ և տեղավորել բառարանի մեջ:

«Բառք գովասանական» վերնագրի տակ, անշուշտ, հասկացվում է մի այնպիսի բառարան, որը կազմված է գովք, դրվատանք, մեծարում, փառաբանություն և այլ նվիրական հասկացություններ արտահայտող բառերից ու նրանցից կազմված զանազան ոճերից: Բառարանը կազմված է ընդամենը 460 ոճերից ու արտահայտություններից: Գրանց մի զգալի մասը, մոտ մեկ երրորդը, ամենևին էլ, «գովասանական» ոճեր չեն, շատերն էլ աշակերտներին ոչինչ չտվող, ուսուցողական տեսակետից անիմաստ ավելորդություններ են:

#### Հատված բառաբանից

Ամենատիպ ձև	Թուրաստան ծաղկեալ
Արբուն հասակալ	Բեղնալէտ պտուղ
Արփիական գեղ	Բոլորից բաղձեալ
Արտադրեալ ի բաց	Բազմազան պարզև
Ապենիազ գոլով	Բազմահոյլ սեռից
Առատաբաշխ շնորհաց	Բիրաւոր մտաւր... և
Բնութիւն բարի	այլն <sup>101</sup> :
Թոլորից պատճառ	

<sup>101</sup> Մատենադարան, ձեռ. № 4149, էջ 376ա:

Գծվար չէ ասել, թե ինչ աղբյուրներից են գալիս այդ ոճերը:

Գրանք բազմազան ու շափազանց շատ են հայ հին մատենագրության, հատկապես կրոնական-եկեղեցական երկերում՝ Ոսկերեքանի ու Եփրեմի ճառերում, ներբողներում, նաև մեկնություններում, Փիլոնի, Նարեկացու, Շնորհալու և այլ հեղինակների ստեղծագործություններում, ապա՝ շարակնոցներում, տաղարաններում, ժամագրքերում, սրբոց վարքերում և այլ մատյաններում:

Բավական է հիշել Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը, որի բոլոր գլուխներն էլ հագեցված են աստծուն դրվատող և դրան հակառակ՝ մարդուն նվաստացնող մակդիրներով ու ոճերով: Այդ հանձարեղ քերթության առանձին գլուխների (Գ, ԼԲ, ԺԸ և ուրիշ) ամբողջական հատվածներ, պարզապես, տասնյակների հասնող մակդիրների ու ոճերի ցանկերի են նման: Թրինակ՝ ԼԲ գլխի Բ մասը. աստուած բոլորից. աննառ մեծութիւն, անպակաս լուրբիւն, աննառ ժառանգութիւն, բաղձալի բերկութիւն, անսասանելի հաստատութիւն, գաիշ կորուսելոց և այլ նման, վաթսուներից ավելի կապակցություններից է բաղկացած: Այդպես էլ, ասենք, Հովհան Ոսկերեքանը Գր. Լուսավորչին նվիրած իր ներբողում առատորեն իրար հետևից շարում է Լուսավորչին դրվատող այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ երբողութեանն փառոզն, ուղղափառութեանն հաստատիչն, Քրիստոսի հօտին վերադիտողն. իմաստութեան հոգոյն տանաւն, երկնային կառավարն, օղախաղաց բոշունն, տիեզերաց անշիջանելի լոյսն և այլն<sup>102</sup>: Բազմաթիվ այսպիսի օրինակներ կարելի է բերել, բայց այդ ավելորդ համարելով, մենք կբավարարվենք միայն Հովհաննես Երզնկացու՝ «Ասացուած ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորչին Հայոց Գրիգորիոս» ներբողի հետևյալ հատվածով:

«Գրիգորիոս արփիական գեղ, արեգակնափայլ ջահ, անշիջանելի լուսովն լցեալ. Գրիգորիոս բարունակ բարի, բուրաստան ծաղկեալ, բուրավառ ոսկեղէն հաշտարար խնկօք.

<sup>102</sup> Տե՛ս Սովետ Լայկական, Գ, Վենետիկ, 1853, էջ 70—71:

Գրիգորիոս գարուն ծաղկաւէտ, գետ յորդանոս, գեղեցկածա-  
ւալ բղխամամբ ընթացեալ. Գրիգորիոս զրախտ աստուածա-  
զարգ, դիւայարմար քնար, դայեակ մանկութեան և դաստիա-  
րակ. Գրիգորիոս երկնաքաղաքացի այր, երեւելի աստղ, երկ-  
նաշու ընթացիւք լուսատու: Գրիգորիոս զօրութեամբ էին զաւ-  
ղարեալ զքեզ զանագան ծաղկօք անուշիւք. Գրիգորիոս էական  
բարութն էապէս պատկեր, էին ճշմարտի ճոխացեալ շնոր-  
հիւ<sup>103</sup>»:

Քաղվածքի ընդգծված ոճերը, նույնությամբ, կան բա-  
ռարանում: Երգնկացու այդ ներքողից են վերցված նաև բա-  
ռարանի ընդ հանդէս յօժուց, ընդ արփին սլացեալ, ընտիր  
գտար կերպիւ, քնածեալ երբեք, քաւախիտ յանտառ, ժիր մշակ  
հայրադիր, ժիրակարոյս ծաղիկ, ի ծովային ծփմանց, լուսե-  
րանց շաւիղ, խոհական հանեար, ծով ծիծաղանոս, ծուղակ  
դժրողին, կտակագիր բարոյ, հերքեալ ցանկութեամբ, ձեւեալ  
է հասակ, ճշմարիտ հովիւ, մայր եկեղեցոյ, յօճագան պար-  
գեաւք, յարփիագեղ լուսոյն, նուիրացող վեհին, շողէչ կեն-  
դանի, շար ոսկեմանեալ, ոսկեներմ աղբիւր, շնաշխարհիկ պար-  
ծանք, պողազորք երկիր, սոսկալի տեսիլ, վիմարգեայ մտաւք,  
վարդ վերարուսիկ, տարփելի վերեոցն, բարունեաց պարծանք,  
փառագարդ յապտեր, փունջ մանուշակի, քանհայ ամբիծ,  
բարոզ ճշմարիտ ոճերը:

Բառակապակցութիւններից բացի կան նաև առանձին,  
ինքնուրույն բառեր, վեղում ունեցող և նույնիսկ ամբողջա-  
կան պարզ նախադասութիւններ: Օրինակ՝ բազմազանապար-  
գեւ, ցնծան արդարէն ոգով, նաւաստի լեր ինձ, արդարև ես  
դու և այլն:

Տասնչորսերորդ դարի երկու ձեռագրերում՝ № 4149 և №  
8198, բառարանը շարունակվում է. վերջում, Ք-ով բառերից  
հետո, գալիս է ոճերի մի նոր շարք, մի ամբողջ բառացանկ,  
որն իր ծավալով մի փոքր է զիջում բառարանին: Վերջինս,  
հավելվածի ձևով բառարանին կցված այդ բառացանկը, պա-  
րունակում է 400 ոճեր:

Գրանք լրացուցիչ հավաքվել ու բառարանին են ավելաց-  
վել հետագայում, XIV դարի սկզբին: Այդ բառացանկի ոճերը  
այրբենական դասավորութիւն չունեն, վերցված են վերևում  
հիշատակված նույն աղբյուրներից: Հեղինակը, հավանաբար,  
ուզեցել է ընդարձակել «Բառք գովասանկանք»-ը, այդ երկու-  
սից մի ամբողջական բառարան կազմել, բայց չի արել այդ,  
և բառարանը գրեթե կրկնապատկելով նոր ոճերով՝ մշակ-  
ման չի ենթարկվել, ավելացումները շեն գետեղվել համապա-  
տասխան բառացանկերում: Եւ այդ հանգամանքն էլ հավաս-  
տում է, որ «Բառք գովասանկանք»-ը բավականաչափ անհրա-  
ժեշտ ու օգտակար չի եղել դպրոցների համար, ուստի չի մշակ-  
վել, մեծ քանակութեամբ չի ընդօրինակվել ու տարածվել:

Մի շարք ոճեր, ինչպես՝ նահատակ զարեղ, նագելի մշակ,  
գեղաղէջ ծաղիկ և այլն կան թե՛ բառարանում, և թե՛ բառա-  
ցանկում:

Բառարանների հետ ծանոթանալուց հետո, իրոք, կարելի  
է համոզվել, որ դրանք չէին կարող անհրաժեշտ և օգտակար  
լինել, ինչպես մյուս բառարանները: Բացի «գովասանկանք» բա-  
ռերից ու ոճերից, ինչպես բառարանում, այնպես էլ նրան կից  
բառացանկում հանդիպում են նաև նվաստացում, հակակրանք,  
խորշանք արտահայտող այնպիսի ոճեր, ինչպես՝ դաժանու-  
քեան մութ, դժոխադուռն տղմին, ընդ եղկելի կենցաղս, ժան-  
տաժողովն շարեաց, խուժադուռ իմաստ, ծուղակ դժրողին, մա-  
հարեր աղէտ, շամանդաղ մրին, շուտական եղեռն, սարսուլի  
պատիւ, փոծեալք մաշին ի հուրն անվախեան, փիծ եղելոց  
մարդկան, քինածեալ ոգով և այլն:

Անօգուտ ավելորդութիւններ են գրիչների կողմից բառա-  
րանի մեջ մտցված՝ անբնականաց զինքն, բաղկացեալ անեն.  
դոցին նմանողաց, զարդարեաց զքեզ, է աւարտ սիրոյ, է գե-  
րապարծիկ, է կորովակի, ընդ միմեանս խառնեալ, կնքէ գեա-  
լեցուածդ, նաս ալեկոծի, վարին լուսաւորք, ցանկան պարեալքն  
յոլով և այլ արտահայտութիւններ: Սակայն «Բառք գովա-  
սանկանք»-ը պատահական երևույթ չէ մեր մատենագրութեան  
մեջ, այլ անխուսափելի արդյունքն է սխուլաստիկայի տիրա-  
պետութեան ժամանակաշրջանի, երբ քրիստոնեական դոգմա-

103 Սոփերք Հայկականք, Ե, Վենետիկ, 1853, էջ 103:

ների հետ միաժամանակ աշակերտները սերտելու և հիշելու էին բռնադատվում այդ զոգմաների սխեմատիկ-շարժուն ոճերն ու արտահայտությունները:

Այնուամենայնիվ, «Բառք գովասականք»-ը, որպես նոր տիպի՝ ոճերի ու ոճային կապակցությունների բառարան, աննշան չէ մեր բառարանագրության պատմության մեջ: Նրա մեջ էլ կան մի շարք այնպիսի բառեր, բառարարություններ, որոնք կա՛մ մատենագրական վկայություններ շունեն, կա՛մ, գուցե, ունենալով հանդերձ՝ վրիպել են մեր բառարանագիրների աչքից, տեղ չգտնելով տպագիր բառարանների մեջ:

Այդպիսի բառեր են, օրինակ՝ անձնամեծ (հմմտ. մեծանձրն), ժանտաժողով, ձորձակիչ, նուիրացող, նանբոն, ոսկեհեմ, որակաճոյլ, պարկեշտանուն, պերեանանուն, ռահնախտուն, բինածեալ և այլն:

#### ԳՈՎԱՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Մատենադարանի № 7117 ձեռագրում<sup>104</sup> կա «Բառք գովասականք»-ի նման մեկ ուրիշ բառարան, վերնագրված «Գարձուր անդրէն ի բերական այբիս և սկիզբն արասցուք այլ խորհրդոյ Դաւթի փիլիսոփայի»: Այսինքն՝ բառարանը կառուցված է Դաւիթ Անհաղթին վերագրվող, այբբենական կարգով կազմված, մի ինչ-որ դպրոցական-վարժական ձեռնարկի օրինակով:

Բառարանը բաղկացած է այբուբենի կարգով դասավորված առանձին բառերից ու բառակապակցություններից, որոնց թիվը շուրջ 1200-ի է հասնում: Դրանք քերթողական, ճարտասանական ու կրոնական երկերից բաղված ոճեր ու դարձվածներ են, ինչպես՝ արմաեների բարձրագոյն, բարետես հասակ, գունակազարդ ծաղիկ, երկնաման լոյս, զանազան փայլմամբ, ցաղ ողորմութեան և այլն: Դրանցից մի քանիսը՝ ակնակիտ վտակ, բոլորից պատեալ և այլք կան նաև «Բառք գովասականք» և այդ տիպի մյուս բառարաններում: Համատիպ

մյուս բառարաններից սույն բառարանը զանազանվում է միայն նրանով, որ նրա մեջ առանձին, ինքնուրույն բառերն ավելի շատ են և ճիշտ կլինի բառարանն անվանել գովասական բառերի և ոճերի բառարան, այն միջին դիրք ունի բառամատույց և բանամատույց բառարանների միջև: Բառարանն աչքի է ընկնում նաև նրանով, որ նրա բառացանկերում ավելի շատ են ընդարձակ դարձվածները և ամբողջական նախադասությունները: Դ-ի բառացանկը, մեծ մասամբ, լրիվ, բայց իրար հետ իմաստներով չկապվող նախադասություններից է բաղկացած: Օրինակ՝ «Դու բացաղ եղեր դախտին կենաց: Դու առաջնող եղեր մեզ: Դու ախոյեան յաղթող գաւա: Դու սուսեր աբիւնասուր: Դու ռահ մաբափայլեալ: Դու պարիսպ ամրութեան: Դու պսակ պարձանաց: Դու նորատունկ արմատ: Դու բուրաստան ծաղկեալ... և այլն»<sup>105</sup>:

Բառացանկերի վերջում կան զանազան նշումներ՝ տվյալ տառով սկսվող բառերի գործածության մասին: Այսպես, է-ի բառացանկում բերվում են մի շարք բառեր՝ էրկնանման, էրկնահոյլ, էրգեմբ և այլ, որոնք գրական լեզվում գրվում են Ե-ով և, հետևաբար, պետք է տեղավորված լինեին Ե-ի բառացանկում, բայց այդ բառերից հետո կարդում ենք՝ «Այս շափարեբական յաղագս է-իս»<sup>106</sup>: Այսինքն՝ շափով գրված, բանաստեղծական խոսքում, երբեմն, Ե-ով սկսվող բառերը կարող են գրվել է-ով: Կան նաև այլ նշումներ, ինչպես՝ «Այս է նիւթք իմաստից բենիս», «Այս են բանք հմտական խէիս» և այլն: Ժ-ի բառացանկի վերջում նշվում է, որ այդ ցանկում բերված բառերով են արտահայտվում գովասանքի խոսքերը և աշակերտները պետք է հիշեն ու գործածեն այդ բառերը. «Սովաւ ժողովին քերթողական արհեստիք ի շինուածս պիտոյից գովչաց տաղից չերգս գովասանականս. ժիր է սա ի բերել զամենայն բանս ի միտս վարժաւղաց յարհեստս քերթողականս»<sup>107</sup>:

105 Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 13բ—14ա:

106 Նույն տեղում, էջ 15ա:

107 Նույն տեղում, էջ 16բ:

104 Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 11ա—35ա:



Այս բառարանը ոճերի ու դարձվածների փոքրիկ այբբենական բառարան է<sup>108</sup>: Վերնագիրն իսկույն հայտնում է, որ այն նախատեսված է նորավարժների, ցածր դասարաններում սովորող աշակերտների՝ «տղայոց» համար:

Բառարանը պարունակում է ընդամենը 160 դարձվածներ, ունի փոքր (2—10 ոճերից բաղկացած) բառացանկեր՝ բոլոր տառերով, սկսվում է «արփոյն հասակ» և ավարտվում «բրիստոսպսակ արբայ» բառերով:

Մատենադարանի № 7117 ձեռագիրը միակ գրչագիրն է նաև այս բառարանի համար: Այդ ձեռագրում բառարանը ղետեղված է «Բառք գովասականք» բառարանից առաջ: Դա պատահական չէ: Բանն այն է, որ դպրոցական դասագրքերում նյութերը դասավորված են բոս դասարանների. ձեռագրի հեղինակը միևնույն տիպի երկու բառարաններից առաջին տեղում դրել է այն բառարանը, որը մանուկների համար է կազմված, ապա, հաջորդաբար, բարձր խմբերում սովորողների համար նախատեսված նյութերը:

Իր բնույթով այս փոքրիկ բառարանը ոչնչով չի տարբերվում գովասական կոչվող մյուս բառարաններից: Պատկերացման համար մի հատված էլ վերցնենք այդ բառարանից:

«Լոյս համասփիտ, լուսավոր արեգակն, լոյս բարեբուն ջահից, լոյս արփիագան, լուսատիպ հասակ, լանջագեղ տեսակ, լապտեր լուսեղէն, լի ամենայն լուսավոր բանիւք, խորիսխ հաւատոյ, խորխորախիտ վտակ, խաշակրան ճգնութեան, խաշակից գոլով սրբոցն, խանդաղակաք սիրովն, խանդաղական սիրով, խնդութեամբ սրտիւ, ծագումն արփայնոյ, ծիրանէգոյն երփն, ծիծառնք բանատրք, ծայրաբան խար մատ, կերպարն լուսոյ, կամար լուսագարդ, կապուտակ երփմամբ, կարկանդակ ակունք, կապոյտ երբերին»<sup>109</sup>:

Այս բառարանը նույնպես կարող է հետաքրքիր նյութեր

տալ միջնադարյան դպրոցական դասագրքերի ու ձեռնարկների, ինչպես նաև ցածր դասարաններում լեզուների ու բանարվեստի դրվածքի և ուսումնական այլևայլ հարցերի վերաբերյալ:

## Չ. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

### ԲԱՌՔ ԵՐՐԱՅԵՅԻՈՅ

Հայերը և հրեաները իրար հետ պատմականորեն կապված ու փոխհարաբերությունների մեջ են եղել դեռևս շատ վաղուց, մեր թվարկությունից էլ առաջ: Տիգրան Մեծի թագավորության ժամանակ և հետո էլ, Հայաստանի մի շարք քաղաքներում բավականին մեծաքանակ հրեա բնակչություն կար:

Միևնույն քաղաքներում իրար հետ խառը, համատեղ ապրող այս երկու ժողովուրդների լեզուները, հասկանալի է, նույնպես շփման, փոխհարաբերությունների մեջ պիտի լինեին: Երբայերենից բավականին թվով բառեր են անցել հայերենին: Հ. Աճառյանը, մանրամասն քննելով հայերենի եբրայական փոխառությունները<sup>110</sup>, բերում է եբրայերենից հայերենին անցած բոլոր բառերը, որոնց թիվը հավասար է 236-ի (կրոնական և այլ իմաստ ունեցող 138 բառ և 98 հատուկ անուն):

Սակայն մեզ հետաքրքրում է ոչ թե եբրայական փոխառությունների քանակը, կամ երկու լեզուների ընդհանրություններն ու մերձեցումները, այլ այն, թե ինչ ճանապարհով են կատարվել այդ փոխառությունները՝ բանավոր, խոսակցական լեզվի միջոցով, թե գրականության, ապա՝ ինչպե՞ս են կատարվել փոխառությունները՝ ուղղակի՞, թե միջնորդավորված:

Հ. Աճառյանը նշում է, որ դեռևս Տիգրանի ժամանակ Հայաստանում ապրող հրեաները խոսում էին ոչ թե եբրայերեն, այլ ասորերեն, և՛ «Ընդհանրապես, — գրում է նա, — գիտենք,

<sup>108</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 50ա—53ա:

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 51ա:

<sup>110</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 54—64:

որ հրեաները ուր որ հաստատվել են, շուտով կորցրել են իրենց լեզուն և ընդունել տեղական լեզուն: Այդպես պիտի լիներ նաև Հայաստանում»<sup>111</sup>: Ապա մեծանուն գիտնականը ցույց է տալիս, որ երբայական փոխառությունները հայերենում լեզուների բանավոր առնչությունների, կենդանի խոսակցական լեզվի միջոցով չեն կատարվել, այլ միայն գրականության միջոցով՝ Ս. գրքից, մասամբ էլ կրոնական այլ մատյաններից:

Սակայն գրականությունից հայերենին անցած երբայական բառերն էլ ոչ թե ուղղակիորեն երբայերեն մատյաններից են անցել հայերենին, այլ ուրիշ լեզուների միջոցով: Հայագետները (Մակլեր, Գուրյան, Աճառյան) բանասիրական բազմազան ու ակնառու փաստերով ապացուցել են, որ Ս. գրքերը հայերեն է թարգմանվել ոչ թե երբայական բնագրից, այլ նրա՝ նախ ասորական, ապա հունարեն թարգմանություններից: Հայերեն դպրոցներում երբայերեն լեզու չի դասավանդվել, մեր հինգերորդ և հետագա դարերի թարգմանիչները, ինչպես ցույց է տալիս Մակլերը՝ առարկելով բանասեր Տեր-Միքելյանին, չեն իմացել երբայերեն (ne savaient pas l'hébreu), չեն օգտվել երբայերենից (n'ont utilisé l'hébreu) Ս. գրքերը թարգմանելիս<sup>112</sup>: Ուրեմն հայերեն Ս. գրքերը երբայական բնագրի թարգմանության թարգմանությունն է, և երբայերենի ազդեցությունը հայերենի վրա ուղղակի, անմիջական չէ:

Եվ քանի որ այդպես է, ապա մենք երբայական բառերի հայերեն տառադարձումների, թարգմանական ճշգրտությունների և նման հանգամանքների մասին լրիվ պատկերացում չենք կարող ունենալ և զործ ունենք փաստորեն միայն միջնորդ լեզուների՝ հունարենի և ասորերենի հետ: Այստեղից էլ հետևում է, որ հունարենի և ասորերենի տառադարձություններով կներված, ապա նոր հայերեն թարգմանված երբայական բառերը, ավելի շատ պիտի կերպարանափոխված լինեն, քան

<sup>111</sup> Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 54:

<sup>112</sup> Տե՛ս Frédéric Macler, Les traducteurs arméniens ont-ils connu et utilisé l'hébreu? «Հանդես ամսօրեայ», 1927, էջ 609—616:

այն դեպքում, երբ նրանք երբայերենից անմիջապես հայերեն թարգմանվեին:

«Նույնիսկ,— գրում է Հ. Աճառյանը,— այնպիսի տեղեր, ուր երբայական բառը ունի մի տարբեր ընթերցված, սխալ ձև կամ աղճատում, հայերենը նույնն է հունարենի և ոչ թե երբայերենի հետ. օր. եբբ. ganzak, հն. Շաչո, հայ. քակքով, որ անշուշտ հն. շաչո ընթերցվածից է»<sup>113</sup>:

Բացի Ս. գրքից երբայերենն ու հայերենը իրար են հանդիպում նաև մեկ ուրիշ հնագույն հուշարձանում՝ «Բառք երբայեցոց» բառարանում: Սակայն այդ բառարանում էլ առընչվող երկու լեզուների կապն ուղղակի չէ, այլ միջնորդված՝ դարձյալ հունարենով: Եթե այդ բառարանի վերնագրում չլինի անգամ «թարգմանեալ և մեկնեալ յերբայեցոցն ի յոյն և ի յունէն ի հայ» նշումը, ապա նրանում բերվող բառերից առանց դժվարություն կարելի է տեսնել, որ բառարանը թարգմանված է հունարենից, որ այստեղ էլ, ինչպես Ս. գրքում, երբայերենն ու հայերենը անմիջական առնչություն չունեն: Բառարանը երբայերեն և հայերեն լեզուների կապի մասին հայագետների վերոհիշյալ կարծիքները հաստատող, հարյուրավոր փաստերով հարուստ, մի հիանալի գրավոր հուշարձան է:

Հայ մատենագրության մեջ տարածված և արժեքավոր բառարաններից մեկն է «Բառք երբայեցոց»-ը, սակայն այն էլ մեր մյուս բառարանների նման չի արժանացել հայագետների ուշադրությանը: Այդ բառարանը առաջին երկրիկվյան, հայաստան, երբայա-հայերեն բառարանն է: Երբայա-հայերեն թարգմանական բառարան կարելի է համարել այն առումով, որ այնտեղ երբայական բառերը հայերեն են թարգմանվում, սակայն ըստ էություն այդ բառարանը երբայական հատուկ անունների բացատրական բառարան է՝ թարգմանված հայերեն:

Բառարանի բազմաթիվ գրչագրեր կան Մատենադարանում, Փարիզի, Վիեննայի, Օքսֆորդի, Երուսաղեմի, Հալիպի, Թավրիզի, Նոր-Ջուղայի և այլ վայրերի հայերեն ձեռագրերում:

<sup>113</sup> Հ. Անադյան, նշվ. աշխ., էջ 60:

Հնագույն գրչագրեր են Զմմաոի № 204, Փարիզի № 302, Մատենադարանի № № 5596, 4149, 2371 (1357 թ.), 3937 (1370 թ.) և ուրիշ ձեռագրեր: Մատենադարանի № 5596՝ ձեռագիրը, լրիվ օգտագործման համար բավարար չէ. ղեղաթափության, ֆերթերի մաշվածության և այլ նյութական թերությունների պատճառով որոշ տեղեր անընթեռնելի են: Ուստի բառարանի հետազոտության համար որպես հիմնական աղբյուր բնորոշված է Մատենադարանի № 4149 ձեռագիր ժողովածուն: Զուգահեռաբար օգտագործվել են նաև № 8198 ձեռագիրը և բառարանի մի քանի այլ՝ լավագույն գրչագրեր:

Բառարանի սկզբում, արդի թարգմանական բառարանների նման, բերվում է երբայական այբուբենը: Այդ այբուբենում, սակայն, չկան երբայական նշանագրեր, այլ բերված են այբուբենի տառերի անվանումները միայն, որոնց ղիմաց տրվում են նրանց ստուգաբանությունները: Ստորև բերվում է այդ այբուբենն ըստ № 8198 ձեռագրի:

Ալիփ. ուսումն նշանագրաց:	Ղամեղ. ուսիր:
Բէթ. բնակեա ի դմին:	Սեմ. ի սմանէ:
Գամիղ. լրումն վերագոյն կամ ծնունդ:	Նուն. յաւտեան:
Գաղէթ. գրեալ բարձր կամ ծնունդ:	Սամբաթ. աւգնականութիւն:
Հէ. սա:	Եց. աղբերակն:
Վա. ի սմանէ:	Փէ. բերան:
Զէ. կեաց:	Սաղէ. զարդարուն:
Խէթ. կենդանի է:	Կոփ. կոշումն սրբութեան:
Տէթ. բարի է:	Բեշ. երևելի առաջնորդ:
Յոա. սկիզբն:	Շին. ատամունք:
Քար. դեռևս:	Թա. նշանակ կամ կոշումը <sup>114</sup> :

Այս այբուբենին անմիջապես հաջորդում է «Բառք երբայեցոց» վերնագիրը, ապա բուն բառարանը և այդ երկուսը միասին՝ այբուբենն ու բառարանը, ունեն հեղեղյակ ընդհանուր վերնագիրը.

<sup>114</sup> Մատենադարան, ձեռ. № 8198, էջ 40բ:

«Այս բառք եռահիսական բաղաձայնք հոմանուանց բաղձաձեալ ամենայն ինչ որ միանգամ անուանք յերբայեցի. յԱւրէնս և ի Մարգարեսն և ի նոր կտակարանս: Թարգմանեալ և մեկնեալ յերբայեցոցն ի յոյն և ի յունէն ի հայ կարգաւ ըստ նշանագրաց աղփարետից երբայեցոցն, թէ զինչ միաբանութիւն անուանց ունիցին»:

Հետագայում բառարանին նախորդող այս այբուբենն անջատվել է նրանից, մատչաններում ղետեղվել առանձին, որպես մի ինքնուրույն ցանկ, իսկ բառարանն էլ մնացել է իր «Բառք երբայեցոց» վերնագրով: Մի շարք ձեռագրերում, օրինակ՝ № 4149-ում, բառարանը ղետեղված է այդ ժողովածուի 262ա-278բ էջերում, ապա գալիս են հինգ ուրիշ բառարաններ և, վերջապես, 350բ էջում, բերվում է այբուբենը՝ «Մեկնութիւն նշանագրաց ալֆաբենից երբայեցոց, թէ զինչ միաբանութիւն անուանց ունիցին կամ որպէս» վերտառութեամբ: Այդ վերնագրով էլ հանդես է գալիս այբուբենը բոլոր այն ձեռագրերում, որոնց մեջ նա բերված է որպես մի անկախ, ինքնուրույն գործ:

Բառարանի ստեղծման ժամանակի և հեղինակի մասին մեր ձեռագիր հուշարձանները տեղեկություններ չեն տալիս, մանավանդ որ դա ոչ թե հայ հեղինակի ստեղծագործություն է, այլ հունարենից է թարգմանված, ինչպես նշվում է վերնագրում՝ «Թարգմանեալ և մեկնեալ յերբայեցոցն ի յոյն և ի յունէն ի հայ»: Իսկ ինչ մնում է հունարենից հայերեն թարգմանելու ժամանակին ու թարգմանչին, ապա դա նույնպես պարզ չէ, սակայն № 7117 ձեռագրում<sup>115</sup> բառարանի առկայությունը նշանակում է, որ այն մեր մատենագրությունը հայտնի է եղել արդեն X—XI դարերում, թերևս գոյություն է ունեցել դրանից էլ ավելի վաղ:

Ականավոր հայագետ Ն. Ակինյանը մեկ հայտնի մի շարք հայերեն հնագույն բառարանների թվում հիշատակում է նաև «Մեկնութիւն երբայեցոց լեզուէ ի հայ» բառարանը: Հայ մա-

<sup>115</sup> 2. Աճառյանը գտնում է, որ այդ ձեռագրի «մայր օրինակը ժ—ԺԱ դարերից էր»: Տե՛ս պրոֆ. Զ. Աճառյան, Աղվանից գիրք, ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, 1941, № 3—4 (8—9), էջ 5:

տենագրության մեջ կա, իհարկե, այդ վերտառութիւնն ունեցող բառարան: Վերջինս լայն տարածում չունի, համեմատաբար փոքր է ծավալով, քան բննվող բառարանը, որի հետ բառերի զգալի ընդհանրութիւն ունի: Սակայն նման վերնագրեր ունեցող, «Երբայցեւոց» կոչվող այս երկու բառարաններն իրար հետ ոչ մի կապ չունեն, նրանք ամենատարբեր ժամանակների ու հեղինակների գործեր են, ընդ որում Ակինյանի հիշատակած բառարանը հանդիպում է հայերեն XVII դարի և ավելի ուշ շրջանների ձեռագրերում և ամենայն հավանականութեամբ հենց XVII դարում էլ ստեղծվել է մի անհայտ հայ հեղինակի կողմից: Այդ բառարանի բառերի լրիվ, կանոնավոր այբբենական դասավորութիւնը, «Բառք երբայցեւոց»-ի մեջ բացակայող Զ, Վ, Շ տառերով սկսվող բառերի անկայութիւնը, մեկնութիւնների եղանակը և այլ հանգամանքներ բնավ չեն կարող հաստատել, որ այն XVII դարից առաջ կարող էր գոյութիւն ունենալ: Ակինյանը ենթադրում է, թե այդ բառարանը մեր հնագույն մեկ ուրիշ՝ «Բառք Գաղիանոսի» բառարանի հետ հայ մատենագրութեանը հայտնի է «Թերևս Զ—է դարերէն», այսինքն՝ հունարան դպրոցի ժամանակներից: Իհարկե Ակինյանը ոչ թե սխալվում է այդ փոքրիկ բառագրի ժամանակը որոշելիս, այլ, պարզապէս, շփոթում, նույնացնում է «Երբայցեւոց» կոչվող երկու բառարանները: Նրա թվարկած հինգ բառարանները հայերեն ամենահին և հայտնի բառարաններն են, նրանք իրար հետ մեկտեղ շատ հաճախ են հանդիպում մեր ձեռագիր ժողովածուներում, նրանից շատ բառեր են անցել հայերեն ավելի ուշ ժամանակների ձեռագիր բառարաններին: Ակինյանի հիշատակած բառարանի իսկական վերնագիրն է «Մեկնութիւն անուանց յերբայցեւոց լեզուէ ի հայ բարբառ»: Ակինյանը նկատի ունի ոչ թե այդ վերջին, այլ «Բառք երբայցեւոց» բառարանը:

«Բառք երբայցեւոց»-ը բավականին ծավալուն է, ընդգրկում է 900—1000 բառ: Նա շատ փոփոխութիւնների է ենթարկվել ընդօրինակութիւնների ժամանակ. նոր բառեր են ավելացել նրա մեջ, որոշ բառեր դուրս մնացել, շատերն էլ

աղձատվել են: Այդ պատճառով էլ բառերի թիվը գրչադրերում տարբեր է:

Բառարանում բառերը դասավորված են հայերեն այբուբենի կարգով և ոչ թե սկզբում բերվող երբայական այբուբենի տառերի համաձայն՝ «կարգաւ ըստ նշանագրաց աղփաբետից երբայցեւոցն»: Բառեր կան այդ այբուբենի՝ հունարեն, ապա նրանից էլ հայերեն թարգմանելուց ու տառադարձելուց հետո՝ հայերեն համապատասխան տառերով:

Այստեղ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել երբայերեն-հույն-հայերեն տառադարձութիւնների ու թարգմանութիւնների վրա:

Մենք արդեն խոսել ենք երբայերեն և հայերեն լեզուների անուղղակի կապի մասին: Բառարանի գրեթե բոլոր բառերի վրա էլ դրված է հունարենի կնիքը և մենք, փաստորեն, գործունենք հունարեն և հայերեն լեզուների հետ: Նշելի է, որ հայերենն ու երբայերենն ունեն մի շարք հնչյունական նույնութիւններ ու մերձեցումներ, որոնք հատուկ չեն հունարենին, բայց դրանք հանդես չեն գալիս՝ լեզվական անմիջական կապի բացակայության պատճառով: Այսպէս, երբայերենն ու հայերենը ունեն ԅ, Շ, Հ տառերը, որոնք չկան հունարենում, բայց քանի որ հունարենն այդ ԅ-ն և Շ-ն դարձնում է Ս, իսկ Հ-ն բաց թողնում, ապա այդ գրեթե նույնութեամբ, հունարենից անցնում է հայերենին: Օրինակ՝

Երբ.	ne'šār	հն.	νεεσάρ	հյ.	նեսար
	šəbāō		σάβαω		սարաւովթ
	šaddai		σάδαϊ		սաղգայ
	qādēs		κάδες		կադէս
	halelu yāh		ἀλλ.η.αὐτα		ալէլուիա
	habāmā		ἄββαμα		արբանա
	hōš'ānā		ὠσαννά		ուխաննա . . .
					և այլն <sup>116</sup> :

116 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 59—60: Մենք վերցրել ենք, որպէս օրինակներ, այն բառերը, որոնք կան «Բառք երբայցեւոց» բառարանում:

Մինչդեռ եբրայերենից ուղղակի հայերեն թարգմանվելու դեպքում, եբրայական այդ բառերը կդառնային նեցար, սաբաթ, շաղ(դ)այ, Բաղեշ, հալելու յահ, իաբամա, հոշիանա:

Բազմաթիվ տառադարձական այլ փոփոխություններ ցուցադրող օրինակների շինք դիմում, բերվածները բավական են տեսնելու, թե ինչպիսի մեծ փոփոխություններ են կրում եբրայական բառերը կրկնակի տառադարձումներից հետո:

Եվ եթե դրան ավելացնենք դարերի ընդօրինակությունների ժամանակ տեղի ունեցած զրչազրական սխալներն ու աղավաղումները, ապա պարզ կդառնա, թե ինչ կերպարանքով է մեզ հասել այդ բառարանը:

Բառարանում, հետևաբար, հայերեն Ը, Ժ, Խ, Ծ, Չ, Զ, Զ, Վ, Բ, Ց, Ի տառերով բառեր չկան:

Որպես հատուկ անունների բառարան «Բառք եբրայեցւոցը» նման չէ ժամանակակից համանուն բառարաններին, ասենք օրինակ, Մխ. Սերաստացու «Բառարան յատուկ անուանց»<sup>117</sup> կամ Ն. Ծիվանյանի՝ «Առձեռն բառարան յատուկ անուանց»<sup>118</sup> բառարանին: Դա միջնադարյան մի փոքր բառարան է, որտեղ պարզ ու համառոտակի բացատրվում են Աստվածաշնչի առանձին եբրայական հատուկ անուններ, ինչպես՝ Ադամ, Բարելոն, Մարկոս, Նոյ, Յոթ, Գեհոն, Մաթուսաղա, Եղեմ, Բահաղ և այլն:

Վերնագրում նշվում է, որ բառարանում ընդգրկված են այն հատուկ անունները, որոնք հանդիպում են «յԱւրէնս և ի Մարգարէս և ի Նոր կտակարանս»: Չի հիշատակվում «Հին կտակարանը» ամբողջությամբ, այլ միայն օրինաց և մարդարենների գրքերը: Սակայն բառարանի բառերը վերցված են Հին կտակարանի բոլոր գլուխներից էլ, բառարանը հիմնականում վերաբերում է ամբողջ Հին կտակարանին և ոչ թե նրա առանձին գլուխներին: Պատահական չէ, որ որոշ աշխատություն-

<sup>117</sup> Մխիթար Սերաստացի, «Բառարան յատուկ անուանց աստուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց».— «Բառգիրք հայկազեան լեզուի» Բ, Վենետիկ, 1769:

<sup>118</sup> Ն. Ծիվանյան, Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցարանական յատուկ անուանց, յաւելեալ հայկական յատուկ անուանք, Կ. Պոլիս, 1879:

ներում (օրինակ՝ Մակերի) բառարանը համարված է Հին կտակարանի հատուկ անունների բացատրություն (glossaire ou interprétation de l'alphabet et des noms propres hébreux de l'Ancien Testament)<sup>119</sup>:

Հատուկ անունների զգալի մասը քաղված է, զլխավորապես, Մնացորդաց գրքերից, որոնց մեջ, օրինակ՝ Մնացորդաց Ա գրքում, թվարկվում են Ադամից, ապա Նոյից սերված բոլոր մարդկանց անունները, այդ գիրքը փաստորեն Ադամի բոլոր հետնորդների տոհմագրությունն է: Բառարանի բազմաթիվ բառեր հանդիպում են մնացորդաց Ա գրքի հետևյալ հատվածում:

«Ադամ, Սէթ, Ենոխ, Կայնան, Մադաղայէլ, Յարեգ, Ենոք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ:

Որդիք Նոյի՝ Սէմ, Քամ, Յաբէթ: Որդիք Յաբէթի՝ Գամեր, Մագովգ, Մադայի, Յովիդան, Եղիսան, Թոբէլ, Մոսոբ և Թիրաս: Եւ որդիք Գամերայ՝ Ասքանազ և Հոփիաթ և Թորգոմա. և որդիք Յովիդանայ՝ Ելիսա և Թարսիս, կիտացիք և հողացիք: Եւ որդիք Քամայ՝ Քուս և Մեստրեմ, Փուզ և Քանան. և որդիք Քուսայ՝ Սաբա, Եիլա և Սաբաթա և Հոեզմա և Սաբակաթա. և որդիք Հոեզմայ՝ Սաբա և Դեդան. և Քուս ծնաւ զՆեմրոզիթ...»<sup>120</sup> և այսպես շարունակ մինչև զլխի վերջը (Մնացորդաց առաջին, գլ. Ա):

Հատուկ անուններին բառարանում տրվում է համառոտ ստուգաբանություն՝ «Դաւիթ. բաական ձեռն կամ սիրեցեալ»<sup>121</sup> (եբր. Dāvid «սիրելի, սիրեցյալ»):

«Եղիսաբեթ, աստուած իմ կամ երզումն կամ աստուած իմ ի տան իմում»<sup>122</sup> (եբր. Elišeba՝ բառք կազմված է El «աստուած» և šb՝ «երզում անել» բառերից և նշանակում է «Աստուած է երզումն նորա»):

<sup>119</sup> Տե՛ս Մակերի ձեռագրացուցակը, էջ 153:

<sup>120</sup> «Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 357:

<sup>121</sup> Մատենադարան, ձեռ. N 4149, էջ 267բ:

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 268բ:

«Յովնաթան. տուր կամ առաւելագոյն»<sup>123</sup> (եբր. Յովնաթան բառը բաղկացած է Կօնօ «Աստուած, Եհոփա» և Ուփո «տաւ, նվիրել» բառերից):

«Սահակ. ծաղր կամ խնդութիւն»<sup>124</sup> (եբր. Իօօօօօ «ծաղր կամ ուրախութիւն»):

«Սամսոն. արեգակն նոցա կամ փրկութիւն»<sup>125</sup> (եբր. Šemeš նշանակում է «արեգակ»)<sup>126</sup>:

Այսպէս էլ ստուգաբանվում են բառարանի մյուս հատուկ անուններն ու բառերը:

Ստուգաբանվող եբրայական հատուկ անուններից բացի բառարանում կան նաև հունարեն կամ հունական ծագում ունեցող մի շարք բառեր, որոնք հանդիպում են նոր կտակարանում: Այդ բառերից են. Պետրոս (Πέτρος, բար), Պողոս (Παύλος, փոքր, փոքրիկ, սակաւիկ), Մարկոս (Μαρκός), Բարթողոմէոս (Βαρθολομαῖος), Նազարեթ (Ναζαρέθ), Ստեփանոս (Στέφανος), Փիլիպպոս (Φίλιππος), Թէոփիլէ (Θεοφιλος) և այլն: Կան նաև առանձին ասորական բառեր, ինչպէս նաև հայերեն բառեր՝ հայրաշարժելակ, արտախուրակ, ապաւէն. որոնք բառարանում ավելացվել են հայ գրիչների կողմից:

Ըստ իմաստի և նշանակութեան բառարանում ստուգաբանվող բառերը կարելի է բաժանել 3 հիմնական խմբի.

1. Օնոմաստիկա (ονομαστική. անձնանուններ, մականուններ և հորջորջումներ, կենդանիների, հրեշտակների, սրբերի, աստվածների, կուսքերի և այլ անուններ), ինչպէս՝ Ադամ, Աբրահամ, Ամբակում, Բահայ, Բերսաբէլէ, Բէնդզերուզ, Գերսամ, Դաւիթ, Զաքարիա, Իսաբար, Մարիամ, Ովսաննա, Պետրոս, Սէմ, Ստեփաննոս, Քերովբէ և այլն: Այս խմբի հատուկ անունները կազմում են բառարանի բառամթերքի հիմնական մասը:

123 Մատենագարան, ձեռ. № 4149, էջ 273ր.

124 Նույն տեղում, էջ 377ր:

125 Նույն տեղում, էջ 377ա:

126 Բերված օրինակներում, այդ նույն բառի՝ փակագծերում տրված ստուգաբանությունը տե՛ս 2. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա—Ե, Երևան, 1942—1962:

2. Հատուկ տեղանուններ, տոպոնիմիկա (τοπωνυμική. երկրների, բաղաբնների, թագավորությունների, գետերի, լեռների, անապատների և այլ անուններ), օրինակ՝ Բաբելոն, Գաբաոն (բաղաբններ), Գաղաադ, Կարմեղոս (լեռներ), Կեղրոն (ձոր), Սինա (անապատ), Սարովնա (գավառ) և այլն:

3. Ժողովուրդներ, ցեղեր, տոհմեր, հավատներ, աղանդներ նշանակող և մի քանի այլ իմաստի բառեր, ինչպէս՝ ամովրհացիք, սագուկեցիք, բաղդեացիք, փարիսեցիք, փերեզացիք, ալեւուփա և այլն: Այս կարգի բառերը քիչ են բառարանում: Սակայն բառարանում տեղ գտած բառերի զգալի մասը չի հանդիպում Աստվածաշնչում: Այդ բառերի մի մասը հավանաբար եբրայական կրոնական այլ գրքերից եկող բառեր են, իսկ մյուս մասը՝ Ս. գրքի անունների հետագա ազավազումներն ու աղճատումներն են: Զեռագրերի բաղդատումների միջոցով հնարավոր է վերականգնել այդ բառերից շատերի նախկին ճիշտ ձևերը, գտնել նրանց աղբյուրները, ուղղումներ կատարել գրչագրական վրիպակներ և երկգրություններ ունեցող բառերում, ինչպէս՝ պորոս, փոխանակ՝ փարսուր, քառեցիք, փոխ. քոռեցիք, բերմայել, բերմայաղ, փոխ. բերմասեմ, եմանուն, փոխ. եման, մանթա, փոխ. Մանթանին, ովնագէ, փոխ. ովն և այլն:

Բառերը ճիշտ են ստուգաբանված, բացատրված մի քանի մոտավոր, միակողմանի և, երբեմն, նույնիսկ սխալ մեկնությունների, որոնց մի մասը դարձյալ ազավազումների ու շփոթումների արդյունք է: Օրինակ՝ «Փիլիպպոս» բառը մեկնվում է որպէս «քեբան ձեռոյ կամ բերան ջանից», մինչդեռ հունարեն Φίλιππος բարդ բառը կազմված է Φίλιος «սիրելի» և Ίππος «ծի» բառերից և նշանակում է «ծիասէր»<sup>127</sup>: Նրբայերեն «Յեսու» բառը բաղկացած է «եհովա» (աստված) և ՅՎ՝ «մեծանձն լինել» բառերից և նշանակում է «Աստուած է մեծանձն»<sup>128</sup>, սակայն բառարանն այն մեկնում է որպէս

127 Տե՛ս 2. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, 1962, էջ 201:

128 Նույն տեղում, հտ. Գ, էջ 526:

«առնէ հգորութիւն»: Երբայերեն «Յովակիմ» նշանակում է «Աստուած յարեալ», իսկ բառարանում մեկնված է՝ «սկիզբն անկեալ դին»: Հունարեն πέντες «քար» բառը մեկնվում է որպէս «վէմ», «Սամվել»-ը՝ «տուրք Ապտուծոյ կամ հայեցեալ», փոխանակ՝ «Աստուած լսեց», «Ջարուղոն»-ը՝ «յանախումն նաեապարհի կամ հասումն գիշերոյ», փոխանակ՝ «բնակութիւն, բնակարան»<sup>129</sup>: Այդպէս են ստուգաբանվում նաև Խամայէլ, Հոաբէլ, Յովնաբան, Ղազար(ոս), Մանասէ, Միքայէլ, Անանիա, Բարաբիա և ուրիշ բառեր:

«Բառք եբրայեցոց» բառարանը հայ միջնադարյան բառարանագրութեան մեզ հայտնի ամենաառաջին ընդարձակ, այբբենական բառարաններից է, հետաքրքիր և արժեքավոր մի գործ հայ մատենագրութեան մեջ: Նա մեծ դեր է խաղացել հայ դպրոցներում, գլխավորապէս Ս. գրքի ուսումնասիրութեան գործում, եղել է աշակերտների մշտական ու գործածական ձեռնարկներից մեկը: Այդ մասին է վկայում, թեկուզ, բառարանի հայ մատենագրութեան մեջ այդքան շատ տարածված լինելը: Այս հետաքրքիր հուշարձանի հետազոտությունը, անկասկած, օգտակար կլինի արևելագիտության և մասնավորապէս եբրայագիտութեան համար:

## Է. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

### ԲԱՌՔ ՔԵՐԱԿԱՆԻՆ

Հայերեն ձեռագիր հուշարձաններում «Բառք քերականին» բառարանը հանդիպում է ինչպէս Քրակացու քերականութեան հետ միասին, այնպէս էլ առանձին: Բազմաթիվ ժողովածուներում, բառարանը գետեզված է Քրակացու քերականութեան թարգմանություններից անմիջապէս հետո, ապա գալիս են մեկնությունները:

<sup>129</sup> Տե՛ս նաև Մ. Աբաստացու բառարանը:

Երբ է ստեղծվել այդ բառարանը և ո՞վ է նրա հեղինակը: Այս բառարանի հնագույն օրինակը նույնպէս Զմմառի ձեռագրով է հայտնի: Ն. Աղոնցը, Քրակացուն և նրա հայ մեկնչներին նվիրված իր աշխատության մեջ, այդ բառարանի մասին ունի հետևյալ համառոտ նշումը. «Բառք քերականին» բառարանը, որ գտնվում է Դիոնիսիոսի հայերեն ընդօրինակությունների կից, հավանաբար, հին ծագում ունի, թեև հայտնի չէ, թե ում կողմից է կազմված»<sup>130</sup>: Գ. Զահուկյանը գտնում է, որ Քրակացու քերականութեանը կից այդ բառարանը կազմել է Արիստակես զրիչը: Նա գրում է. «Քարգմանութեան լեզուն (Քրակացու քերականութեան, — Հ. Ա.) և շատ տերմիններ այնքան անհասկանալի են եղել, որ «Արուեստ գրչութեան» երկի հեղինակ Արիստակեսը (XII դար) նրա համար կազմել է բառարան»<sup>131</sup>:

Այս կարծիքը մեզ այնքան էլ հավանական չի թվում, որովհետև նախ՝ Արիստակեսի անվամբ այդպիսի երկ հայտնի չէ, ապա՝ Արիստակեսն իր ուղղագրական բառարանում բառերը դասավորել է այբբենական կարգով և այդ տեսակետից նրա բառարանը ավելի կատարյալ և կանոնավոր է, քան մյուս բոլոր միջնադարյան բառարանները: Մինչդեռ «Բառք քերականին» բառարանը վաղ շրջանների բառացանկերի նման խառը դասավորություն ունի և եթե դա Արիստակեսի աշխատությունը լիներ, ապա բառարանագրական տեխնիկային հմուտ այդ հեղինակը, պետք է որ բառերը դասավորեր այբբենական կարգով:

Հետազոտությունները բերում են այն համոզմանը, որ բառարանի հեղինակը մի սովորական, ձեռագրեր ընդօրինակող զրիչ չէ, այլ Քրակացու հայերեն թարգմանությունը և մեկնություններին լավատեղյակ անձնավորություն: Այդ բառարանը կազմված պիտի լինի XII դարից առաջ:

Բառերի բացատրության գործում հեղինակը ինքնուրույնություն չի ցուցաբերում: Շատ բառեր բացատրված են ճիշտ

<sup>130</sup> Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ CLXXXI:

<sup>131</sup> Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 114:

այնպես, ինչպես Գավթի, Անանունի, մասամբ Մովսեսի և Ստեփանոսի մեկնություններում: Հաճախ բառերի բացատրությունները նույնությամբ են քաղված այդ հեղինակների մեկնություններից: Այդ ցույց տալու համար բերենք օրինակներ՝ ձախ կողմում ղնելով մեկնություններից վերցված քաղվածքները, աչ կողմում՝ այդ տեղերում՝ զործածված բառերն իրենց բառարանային բացատրություններով<sup>132</sup>:

**Մեկնություններ**

**Գավթիք**

Բայց եւ զիրս աստանաւր պարտ էր ասել անմարմին քան զիր (էջ 103):  
 Իսկ մակաւասարն ոչ եւս, այլ ի վեր քան զհաւասար (էջ 104):  
 Եւ նախագաղափար իմանալի է նախարինակ ինչ (էջ 104):  
 Իսկ ենթակայ անուան, որպէս ընդ անուամբ անկեալ... (էջ 108):  
 Քանզի փաղանուն ըստ քերդողացն ասի բազմանուն... (էջ 109):  
 Բերանուն կոչի յիրացն բերմանէ... (էջ 109):  
 Բակձաձական լսի բակառական... (էջ 110):  
 Եւ զի յարեւանայ՝ զհետ երթայ բայի (էջ 112):

**Բառք ֆեռականին**

Իր. անմարմին (էջ 60):  
 Մակաւասար. ի վեր քան զհաւասար (էջ 61):  
 Նախագաղափար. նախարինակ (էջ 61):  
 Ենթանկեալ. ընդ անուամբ անկեալ (էջ 60):  
 Փաղանուն. բազմանուն (էջ 62):  
 Բերանուն. ի բերմանէ (էջ 62):  
 Բակձաձական. բակառական (էջ 62):  
 Յարեւանայ. զհետ երթայ (էջ 63):

<sup>132</sup> Բոլոր քաղվածքները վերցված են Ն. Աղոնցի աշխատության մեջ բերված բնագրերից:

Եւ է զերանունութիւն փոխանունութիւն եւ թերանուն եւ հասարակ անուն... (էջ 116):

Առողանութիւնդ՝ առասանութիւն ասի (էջ 123):

**Անանուն մեկնիչ**

Դամբանական որ է զերեզմանական... (էջ 128):  
 Եւ անձայնք ասին, վասն զի առաւել քան զայլսն են շարաձայնք... (էջ 133):  
 Եւ նայք են շորք. դ, մ, ն, ր, այսինքն խոնար (էջ 134):  
 Բայց համբակագոյնքն, այսինքն մանկագոյն քերդողքն նոքա են... (էջ 140):

**Ստեփանոս Սյունեցի**

Իսկ շաղաշարդ զուգաշար ասի (էջ 200):  
 Իսկ մակբաշխ է, այսինքն, վերաբաշխ կամ կրկնաբաշխ կամ երկուց... (էջ 210):

**Մովսես Քերթոզ**

Մեծասար՝ երկայնն առաջին... (էջ 178):

Գերանուն. փոխանուն (էջ 63):

Հստ առողանութեան. ըստ առասացութեան (էջ 57):

Դամբանական. գերեզմանական (էջ 57):

Անձայն. ասի շարաձայնն (էջ 59):

Նայք. խոնար (էջ 59):

Համբակագոյնք. մանկագոյնք (էջ 61):

Շաղաշար. զուգաշար (էջ 58):

Մակբաշխ. վերաբաշխ (էջ 62):

Մեծասար. որ յառաջն երկայն է (էջ 64):



Մեծավերջն, որ վերջն շատ է քան զառաջն... (էջ 178):

Քողարորբ՝ առաջն ներկարէ եւ նաղատէ և... (էջ 179):

Սոնք, որ է ստուարք... (էջ 179):

Մեծավերջ. որ վերջն երկայն է (էջ 64):

Քողարորբ. որ առաջն երկայն է (էջ 64):

Սոնք. ստուար (էջ 64):

Ձեռագրերում բառարանը վերնագրված է. «Մեկնութիւն բառից քերականին», ինչպես նաև՝ «Բառք քերականութեան», «Այս բառք քերականի» և այլն: Մի շարք գրչագրերում բառարանն անվերնագիր է կամ թերի:

Երևանի Մատենադարանի 65 ձեռագրերում կա «Բառք քերականին» բառարանը: Մինչև XVII դարը գրված բառարաններից ոչ մեկն էլ այդքան շատ ընդօրինակություններով չի պահպանվել: Բառարանը, XII դ. մինչև XVII դարի երկրորդ կեսերը, ընդօրինակվել է հայ գրչության բազմաթիվ օջախներում: Գրչագրերից 20-ը գրված են մինչև XVII դարը, մնացածները՝ XVII դարում և ամենավերջինը՝ № 8235-ը, ընդօրինակվել է 1756 թվականին:

«Բառք քերականին» միջնադարյան այն սակավաթիվ բառարաններից է, որ տպագրված է: Աղոնցն իր աշխատության մեջ, Քրակացու քերականության հայերեն թարգմանության բնագրից հետո, զետեղել է բառարանի գիտա-համեմատական բնագիրը՝ մի շարք լավագույն գրչագրերի հիման վրա<sup>133</sup>:

Բառարանի նախօրինակը մեզ չի հասել: Գրչագրերը տարբերվում են իրարից թե՛ բառերի քանակով, և թե՛ նրանց դասավորության կարգով: Գարերի ընթացքում ընդօրինակվելով բառարանը փոփոխությունների է ենթարկվել. նրա մեջ նոր բառեր են ավելացվել՝ երբեմն խախտելով բառերի դասավորության այն կարգը, որ ունեցել է բառարանի նախօրինակը:

Գրչագրերի բաղդատումը և նրանց՝ քերականության հետ համեմատումը պատկերացում են տալիս բառարանի նախ-

օրինակի մասին և հնարավորություն ստեղծում վերականգնելու այն: Այդ աշխատանքը հմտությամբ կատարված է Ն. Աղոնցի կողմից: Միայն այնտեղ պետք է ավելացնել վերծանելի բառը: Այսպիսով, վերականգնված նախօրինակը պարունակում է 182 տերմիններ, դարձվածներ և այլ բառեր, սկզբում է վերծանութիւն և ավարտվում Փեռիկումն գլխաբառով:

Նրա մեջ չեն եղել հիբար, որկէն, որպակ, որչակ, որգոն, շաղաշար, բաղածայնապէս, քողախնդրի, ենքակայ, ենքակայումն, հակակայ և տարոռչ բառերը, ինչպես նաև ավելի ուշ շրջաններում՝ բառարանին վերջից ավելացված մի քանի բառեր, որոնք չկան Քրակացու քերականության մեջ: Բառարանի 65 ընդօրինակություններից միայն 6-ը՝ (№ № 1485, 1995, 2016, 3199, 3824 և 5925) ունեն բառերի այբբենական դասավորություն, իսկ մնացած բոլոր գրչագրերում բառերը դասավորված են խառը: Հենց այսպես էլ դասավորված են եղել բառարանի նախօրինակի բառերը: Այբբենական դասավորումն առաջին անգամ կատարվել է XIV դարում (տե՛ս № 5925 ձեռագիրը, գրված է 1326 թվականին):

Խառը դասավորություն ունեցող գրչագրերում բառերը դասավորված են նույն հաջորդականությամբ, ինչ կարգով որ նրանք, առաջին անգամ, հանդիպում են Քրակացու քերականության հայերեն թարգմանության շարադրանքում: Վերցնենք քերականության և բառարանի համապատասխան հատվածները.

«Վերծանութիւն է քերգածաց կամ շարագրածաց անվրախառաբերութիւն:

Եւ վերծանելի է ըստ ենքադատութեան, ըստ առոգանութեան, ըստ տրոհութեան. քանզի յենթադատութենէն զգաւրութիւնն, իսկ յառոգանութենէն զարուեստն, իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք»<sup>134</sup>:

Ընդգծված բառերը նույն հաջորդականությամբ կան բառարանում, այսպես.

Անվրաք. անահոկ, կամ անբիծ, կամ անսխալ:

<sup>133</sup> Տե՛ս Ն. Աղոնց, Եզվ. աշխ., էջ 57—64:

<sup>134</sup> Ն. Աղոնց, Եզվ. աշխ., էջ 2:

Առաջբերութիւն. առաջի բերումն:

Ըստ ենթադրութեան. ըստ քննութեան կամ ըստ նմանարանութեան:

Ըստ առոգանութեան. ըստ առասացութեան:

Ըստ տրոհութեան. ըստ որոշողութեան:

Պարունակ. որ ի ներքս փակէ<sup>135</sup>:

Բառարանում կատարված հետագա ավելացումները կարելի է բաժանել երկու խմբի. ա) բառարանի միջին մասում ավելացված և բ) բառարանի վերջում ավելացված բառեր:

Միջին մասում ավելացած են առասանութիւն, վերծանելի, նիրար, հիկէն, որկէն, որպակ, որչակ, որգոն, շաղաշար բառերը, որոնք կան Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ:

Կարելի էր չկասկածել, որ այդ բառերը եղել են հենց սկզբից՝ բառարանի նախօրինակում և ավելացումներ չեն, եթե նրանք իրենց զրաված տեղով համապատասխաններն բառերի դասավորության նախօրինակային կարգին: Սակայն բառարանի շաղաշարաց և աղաւտ բառերի միջև գտնվող՝ վերևում թվարկված հավելյալ բառերը, առաջին անգամ, գործածված են քերականության Ը և ԺԳ գլուխներում և ըստ այդմ էլ պետք է զրազեցնեն բառարանի համապատասխան մասը, մինչդեռ նրանք գտնվում են բառարանի՝ քերականության Թ և ԺԳ գլուխներին համապատասխանող հատվածում: Բառարանի միջին մասում են ավելացված նաև բաղաձայնապէս և բողախնդրի բառերը, որոնք ենթակայ, ենթակայումն, հակակայ, տարուռչ բառերի հետ չկան Թրակացու քերականության թարգմանության մեջ և գալիս են Անանունի, Մագիստրոսի և այլ մեկնություններից, գուցե և Թրակացու մեզ չհասած, անհայտ մեկնություններից:

Հիշյալ բոլոր ավելացումները կան «Բառք քերականին» բառարանի ամենահին գրչագրերում էլ, հետևաբար բառարանի մեջ զրանք մտնլ են նրա նախօրինակից կատարված առաջին ընդօրինակումների ժամանակ:

135 Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 57:

Հետագայում, XIV դարից սկսած, բառարանի եղած այդ բոլոր բառերին ավելացվել են սպումել, հպտել, համշիրակ, բէտ, իգեն, աղգեն, ամբ բառերը (տե՛ս ձեռ. № № 267, 1115, 1713 և այլ), որոնք չկան Թրակացու քերականության ու նրա մեկնությունների մեջ և գրիչների կամայական կցորդումներ են բառարանին: Ավելի ուշ, XVII—XVIII դդ. (տե՛ս ձեռ. № № 450, 8235) բառարանը վերջից ծանրաբեռնվել է այնպիսի ավելորդություններով, ինչպես՝ արմաւենի, յաբում, խոյակի, խորչն, աճջրպետ, վանդակապատ, յանգչել, զըմբաղ, եղչերին, գովգ, զին, մոյք, ելամացի, աբբանայ, կասիայ և կեղգար բառերով: Ոչ մի ձեռագրում, բառարանի վերջում, վերջին այս երկու խմբի ավելացումները միասին չեն հանդիպում: Տասնհինգերորդ դարի երկու ձեռագրերում (№ № 3201, 3202) բառարանի վերջին՝ ենթանկեայ, բառից հետո բերված է մղոն բառն իր բավականին ընդարձակ բացատրությամբ:

Վերջապես, շատ են այն ձեռագրերը, որոնց մեջ, բառարանի վերջում, տրվում է Աստուած բառի հոլովումն ուղղական, սեռական, տրական, առաքական և երբեմն էլ հոշական հոլովներով: Այդ աղյուսակը կա բառարանի վերջում բոլոր հնագույն, նախօրինակին հարազատ այն գրչագրերում, որոնք ունեն «Բառք քերականին» վերտառությունը: Ահա այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարված են բառարանի մեզ հասած ընդօրինակություններում՝ տարբեր ժամանակներում: Չենք խոսում այլևս կրկնությունների, միևնույն բառի՝ տարբեր գրչագրերում ունեցած իրարից տարբերվող մեկնությունների, գրչագրական բաղմաթիվ սխալների ու աղավաղումների մասին:

Գրչագրերի՝ վերևում նշված տարբերությունների հիման վրա «Բառք քերականին» բառարանի ընդօրինակությունները կարելի է բաժանել 4 հիմնական խմբագրությունների: Տալիս ենք յուրաքանչյուր խմբագրության ընդհանուր նկարագիրը:

Ընդօրինակությունների առաջին խմբագրությանն են պատկանում № № 5596, 532, 538 և այլ գրչագրեր: Դրանք ավելի մոտ են բառարանի նախօրինակին, նրանցում բառերի թիվը տատանվում է 186—197-ի միջև, բառարանն սկսվում է

վերծանութիւն և ավարտութեամբ ենթանկեալ բառի բացատրութեամբ, որից հետո գալիս է «հոլովք անուանց» աղյուսակը: Այդ խմբագրութեան բառարանները վերնագրված են «Բառք քերականին»: Գրչագրերի երկրորդ խմբագրութեան մեջ են մտնում մեծ մասամբ «Մեկնութիւն բառից քերականին» վերնագիրն ունեցող ընդօրինակութիւնները (տե՛ս № № 2371, 2369, 269, 267 և այլ ձեռագրեր):

Սրանք վերջին՝ ենթանկեալ բառից հետո ունեն վերևում նշված՝ հավելյալ բառերի մեկ կամ մյուս խումբը, ձեռագրերի մի մասն ունի «հոլովք անուանց», մյուսը՝ ոչ:

Այնուհետև, մի բանի ձեռագրեր՝ № № 2526, 3201, 3202 և այլ, նախորդ խմբագրութիւններից ոչ մեկի հետ լրիվ չեն համընկնում, այլ ընդօրինակված են այդ երկու խմբագրութիւնների ձեռագրերի միաժամանակյա օգտագործումով: Վերջապես բառարանի մի խմբագրութիւն են հանդիսանում նրա այբբենական ընդօրինակութիւնները: Դրանք նույնպես զգալիորեն տարբերվում են իրարից, ամենահինը № 5925 ձեռագիրն է, մյուսները ուշ շրջանների գրչագրեր են՝ հավելված բազմաթիվ ուրիշ բառերով:

Մեր հետազոտութիւնները հիմնված են բառարանի ոչ այբբենական խմբագրութիւնների, հատկապես առաջին խմբագրութեան գրչագրերի վրա: Հավասարապես օգտագործված են մինչև XVI դարը գրված բոլոր անթերի, լավագույն ընդօրինակութիւնները, մասնավորապես՝ № 5596, 5919, 2371, 7117, 538 ձեռագրերը:

«Բառք քերականին» բառարանում բացատրվում են գրեթե այն բոլոր քերականական տերմիններն ու բառերը, ինչպես նաև առանձին բառակապակցութիւններ, որոնք գործածվում են թրակացու քերականութեան հայերեն թարգմանութեան մեջ: Բառարանի ամբողջ բառամթերքը կարելի է բաժանել 2 խմբի՝ ա) նորաստեղծ հունարան քերականական բառեր ու տերմիններ, բ) մինչ այդ գոյութիւն ունեցած հայերեն բառեր, որոնք քերականութեան մեջ մասնագիտացվել, իմաստների կոնկրետացումով ու նեղացումով վերածվել են տերմինների:

Առաջին խմբի մեջ մտնող, հունարան, բառերը կազմում են բառամթերքի մեծ մասը: Դրանք թրակացու քերականութեան մեջ հանդիպող քերականական ու քերթողական (պոետիկական) այնպիսի տերմիններ ու բառեր են, որոնց համարժեքները չկային հայերենում և ստեղծվել ու առաջին անգամ գործածութեան մեջ են մտել թրակացու քերականութեան, Փիլոնի և Պիտոլից գրքի հայերեն թարգմանութիւնների բնագրերում: Այդ բառերի զգալի մասը հունարան առ, արտ, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հակ, հոմ, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, ստոր, վեր, տար, տրամ, փաղ, փար, փոխ նախամասնիկներով կազմված բառեր են: Ստորև բերվում են այդ բառերը համապատասխան հունարեն հոմանիշներով<sup>136</sup>:

ածանցական	παράγωγος	բախձաձական	περιληπτικός
ամանակ չրոնոս	αἰώνος	բաղադանութիւն(ք)	σύν- γένεσις
անբաղաւղբ	ἀσυνάριθροι	բաղաձաջն	σύμφωνον
անգալա	πυρρίχιος	բաղաւղք	σύναριθροι
անորիշ	ἀόριστος	բաղաասութիւն <sup>139</sup>	σύνταξις
ապառնի	μέλλων	բաղատական	συχρητικών
առաջբերութիւն	προφορά	բաղատութիւն <sup>140</sup>	σύχρησις
առասական	προσχηρικών	բաղանամ <sup>141</sup>	σύχρημα
առասութիւն(ք)	προσχηρία	բալածական	ὀγκματικός
առինչունակ	πρός τι ἔχον	բարբառակից	σύμφωνος
առողանութիւն <sup>137</sup>	προσφῶνία	բացադանչութիւն	ἀπήχησις
արագիկ	ὀξύτατος	բացատրութիւն	ἀπόδοσις
արուորագոյն	ἀνδρείότερος	բացարձակ	ἀπολειπόμενον
արտաբերիւմ <sup>138</sup>	ἐκφέρω	բերանուն	φερόνυμον
աւարտեղ	βαχχεῖος	գերադրական	ὑπερθετικός
բաղմաւորական	πληθυστικός		

136 Անհրաժեշտ դեպքերում տողատակում բերում ենք «Բառք քերականին» բառարանի համապատասխան գիտաբարը:

137 բառ առողանութեան:

138 արտաբերի, արտաբերիցի:

139 ի բաղաասութեան:

140 բարբաղատութեամբ:

141 բաղանամ:



ծել, սոնք, ստորադաս, վերծանութիւն, արոհութիւն, քաշուրակի, քողարորք, քողազատ և այլ բառեր առաջին անգամ հանդես են եկել միայն թրակացու քերականութեան հայերեն թարգմանութեան մեջ:

Մնացած բառերը հայերեն պարզ և բաղադրյալ բառեր են, որոնք հանդիպում են նաև նախահունարան մատենագրութեան մեջ, սակայն թրակացու քերականութեան հայերեն թարգմանութեան մեջ հանդես են գալիս որպես քերականական հասկացութիւններ արտահայտող մասնագիտական բառեր, ինչպես՝ անձայն, բարդ, բացատ, դէմք, երկար, թաւաձայնակից, յաւր և այլն:

Բառարանում բերված բառերից շատերը, արմատավորվելով մեր լեզվի մեջ, դարեր շարունակ օգտագործվել են որպես քերականական տերմիններ ու հասկացութիւններ: Այսօր էլ թրակացու քերականութեան թարգմանութեամբ ստեղծված տերմիններից շատերը զործածվում են լեզվաբանութեան մեջ, մասամբ էլ գրականագիտական աշխատութիւններում: Օրինակ՝ առոգանութիւն, ողբերգութիւն, կատակերգութիւն, դամբանական, ամանակ, բաղաձայն, կիսաձայն, վանկ, ձայնորդ, հոլով, գերայրական, մակդիր, համանուն, սահմանական, հոդ, դերանուն, մակբայ և այլն:

«Բառք քերականին» բառարանը կարևոր տեղ է գրավում հայ մշակույթի պատմութեան մեջ: Այդ փոքր, բայց բովանդակալից բառարանը մեր առաջին մասնագիտական բառարաններից է, առաջին քերականական բառարանը: Բառարանի այդքան շատ ընդօրինակութիւնների առկայութիւնը վկայում է, որ միջնադարյան հայ դպրոցներում քերականութիւնը եղել է կարևոր առարկաներից մեկը:

#### ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ

Տպաներքերորդ դարի առաջին կեսում «սպականեալ զաշխարհս ամենայն»<sup>155</sup>, մոնղոլական հրոսակախմբերը ապատակեցին նաև Հայաստանը: Սկսվեց ծայրահեղ վատթար

ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմութեան մեջ: Իրար հետևից փակվում էին դպրոցները, գրչութեան և մշակութային այլ օջախներ դադարում էին գործելուց, իսկ գոյութիւնը պաշտպանել ցանկացող «հայկական ուսումնական ու գիտական հաստատութիւնները թափառական կյանք էին վարում»<sup>156</sup>:

Հայ մանկավարժները ու գիտնականները՝ Վարդան Արեւելցիին, Ներսես Մշեցիին, Հովհան Որոտնեցիին, Գրիգոր Տաթևացիին, Սիմեոն Այրիվանցիին, Թովմա Մեծոփեցիին և բազմաթիվ ուրիշներ, շատ են թափառել ուսուցման ու գիտական աշխատանքի համար մի ապահով տեղ գտնելու նպատակով: Սակայն արևելյան Հայաստանի մի մասը՝ Սյունիքը, որը նույնպես անկախ չէր, բայց Օրբելյան և Պոռչյան իշխանների ջանքերով զերծ էր մնացել մոնղոլական ավերածութիւններից ու դաժան հարստահարումից, զեռես նպատավոր մի անկյուն էր հանդիսանում տնտեսական ու մշակութային զարգացման համար: Եվ հենց այստեղ էլ, իր աշակերտների հետ, երկար զեզերումներից հետո հանգրվանեց հայ մատենագրութեան ու դպրոցի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ներսես Մշեցիին: Նա հաստատվեց Սյունիքի Գլաձոր (Վայոց ձոր) կոչված վայրում և XIII դարի յոթանասունական թվականների վերջում հիմնադրեց Գլաձորի բարձր դպրոցը: Ներսեսի մահից հետո, 1284 թվականին, համալսարանի վարդապետաց-վարդապետ դարձավ նրա տաղանդավոր աշակերտ Եսայի Նշեցիին, որը շուրջ 60 տարի ղեկավարում էր «երկրորդ Աթենք», «մայրըն իմաստից» և բազմաթիվ նման անվանումներով կնքված գլաձորյան համալսարանը:

Գ. Հովսեփյանը գրում է. «ԺԳ դարի վերջին երկու տասնամյակից սկսած մինչև ԺԴ դարի կեսերը հոգևոր քաղաքակրթական բնույթ կրող բոլոր երևույթները մեծ կամ փոքր չափով կապված են Գլաձորի հետ»<sup>157</sup>:

<sup>156</sup> Լ. Խաչիկյան, Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսութիւնները, Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխ. հտ. 23, Երևան, 1946, էջ 424:

<sup>157</sup> Գ. Հովսեփյան, Խաղաղական կամ Պոռչյան հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ, Երուսաղէմ, 1942, էջ 199:

<sup>155</sup> Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 231:

Գլաձորի Համալսարանի անկումից հետո, 1338 թ. Նշեցու աշակերտ Հովհան Որոտնեցին տեղափոխվում է Տաթև և այնտեղ հիմնադրում նոր համալսարան, որը իր նախորդի հարուստ փորձի օգտագործմամբ ու նրա տրագիցիաները շարունակելով ավելի բարձր զարգացման հասավ:

Գլաձորյան ժամանակաշրջանի մշակույթի գործիչները շարունակում էին անցյալի մշակութային ժառանգության վերահաման և յուրացման այն գործը, որը ծավալվել էր դեռևս X դարից: Դա նախնիների թողած գրական ժառանգությունը ոչնչացումից փրկելու և ապահովելու տրագիցիա ու ձգտում չէր միայն, այլև պայմանավորված էր ժամանակաշրջանի գիտական ու քաղաքական մտքի պահանջներով:

Գլաձորի դպրոցում մեծ տեղ էր հատկացվում բնական գիտությունների դասավանդմանը, իսկ ծախեում, ինչպես նշում է Ա. Մովսիսյանը, Հովհան Որոտնեցին պարտադիր դարձրեց այդ առարկաների դասավանդումը<sup>158</sup>: Անընդհատ ուժեղանում էր հետաքրքրությունը դեպի անտիկ մշակույթը: Անդրադառնալով այդ հարցին Վ. Չալոյանը գրում է. «Հին բնագիր և հայերեն թարգմանված անտիկ գրականությունը ավելի ու ավելի է դառնում հետազոտության և դպրոցական դասավանդման առարկա»<sup>159</sup>:

Դպրոցում դասավանդվող զլխավոր առարկա էր նաև փիլիսոփայությունը, որը, ճարտասանության հետ միասին, շատ կարևոր էր վարդապետական կոչում ստանալու համար: Գլաձորի սաները ծանոթանում էին անտիկ և վաղ քրիստոնեական շրջանի գործիչների՝ Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի, Պորփյուրի, Փիլոնի, Ոլիմպիոգորոսի և մյուսների երկերին: Այդ դպրոցում առաջին անգամ հայերեն թարգմանվեց Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատությունը, որի հունարեն բնագիրը կորել է և պահպանվել է միայն հայերեն թարգմա-

նությունը: Հայ նեոպլատոնականության ներկայացուցիչ Դավիթ Անհաղթը առաջվա նման մեծ հեղինակություն ուներ փիլիսոփայության մեջ, չնայած նեոպլատոնականությունը Հայաստանում վաղուց արդեն կորցրել էր իր վաղեմի ազդեցությունը և փիլիսոփայության մեջ տիրապետող էր դառնում նոր ուղղությունը՝ վահրամ Բաբունու մոտ ձևավորված նոմինալիզմը, որն իր համար ճանապարհ էր հարթել «օբյեկտիվորեն ծառանալով Դավիթ Անհաղթի «ազգային տրագիցիա» համարվող նեոպլատոնականության դեմ»<sup>160</sup>: Գլաձոր-տաթևյան փիլիսոփայական դպրոցում, որտեղ իր հետագա զարգացումն էր ապրում նոմինալիզմը, նեոպլատոնական Դավիթ հեղինակությունը պատահական չէր: Բանն այն է, որ եթե վաղ ֆեոդալական շրջանի աստվածաբանությունն ու կրոնա-քաղաքական փիլիսոփայությունը այժմ էլ մնում էին որպես հայ եկեղեցու զաղափարական ղինանոց, ապա Դավիթի փիլիսոփայությունը նույնպես պիտանի էր ու անհրաժեշտ, որովհետև «Դավիթի նեոպլատոնիզմը չէր խանգարում հայ եկեղեցու հայրերին նրա փիլիսոփայությունը օգտագործելու հայգրիգորյան ղոգմատիկայի հիմնավորման համար»<sup>161</sup>:

Միջնադարյան բարձր դպրոցներում բաղմաթիվ օբինակներով բնագործնակվում էին հին դասագրքերը, գրվում էին նոր ձևոնարկներ ու ժողովածուներ: Փիլիսոփայական ու աստվածաբանական հին երկերի վերաբերյալ գրվում էին դպրոցական գործին հարմարված, պարզ, համառոտ մեկնություններ ու լուծումներ: Այդպիսի գործեր են, օբինակ, Նշեցու մեկնությունները, հատկապես նրա՝ Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս քահանայութեան» երկի մեկնությունը, որի մասին Գ. Հովսեփյանը ասում է. «Լուծումները շատ համառոտ է, բառերի և որոշ մտքերի լուսաբանության հետ կապված»<sup>162</sup>: Դպրոցական նպատակներով էին ստեղծվում նաև զանազան երկերի համառոտ շարագրանքները (compendium), կոմպիլյացիա-

158 Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 116:

159 В. К. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, стр. 184.

168

160 Հ. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 20:

161 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960 (Ս. Արեշատյանի ուսերեն առաջաբանը), էջ IX:

162 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 275:

ներն ու ժողովածուները, հարց ու պատասխանի ձևով գրված հեղինակումները, հավանաբար ոսկեփորիկներն ու հարցմանց գրքերը:

Այդ ժամանակներում է ստեղծվել «Սահմանք իմաստասիրականք» խորագիրը կրող հայերեն առաջին փիլիսոփայական բառարանը, որը պահպանվել է Երևանի Մատենադարանի 23 ձեռագրերում: Այդ գրչագրերի միջև էական տարբերությունների չկան: Բառարանը սյարունակող ամենահին թվակիր ձեռագիրը Մատենադարանի № 6897 ժողովածուն է, որը գրվել է 242 (1317) թ., Կարապետ վարդապետի կողմից, Գլաձորի Վարդգուս: Մնացած ձեռագրերից 3-ը (№ № 1681, 7151, 1980) նույնպես XIV դարին են պատկանում, XV և XVI դարերից կա մեկական ձեռագիր (№ 2335 և № 3448), № 1801-ը գրված է 1765 թ. և, վերջապես, մնացած բոլոր ձեռագրերն ընդօրինակված են XVII դարում:

Բառարանի ստեղծման ստույգ ժամանակը հայտնի չէ: Գրչագրերի բաղդատումը ցույց է տալիս, որ ամենահին՝ 1317 թվականին գրված № 6897 ձեռագրում այն սկզբնօրինակ չէ, այլ մի ավելի հին գրչագրի ընդօրինակություն: Բառարանը կազմված պիտի լինի XIII—XIV դարերի սահմանամերձ տարիներին, ծայրագույն դեպքում ոչ շուտ, քան Գլաձորի համալսարանի հիմնադրումը: Բառարաններ ունեցող հայերեն ամենահին ձեռագրերում և բառարանների ձեռագիր ժողովածուներում կան մեր բոլոր միջնադարյան բառարանները, բացի «Սահմանք իմաստասիրականք»-ից, որն ընդհանրապես մինչև XVII դարը գրված ոչ մի ձեռագրում էլ մյուս բառարանների հետ չի հանդիպում, նրանց հետ ոչ մի բանով չի առնչվում:

Եթե բառարանի գրություն ժամանակը հայտնի է մոտավորապես, ապա հեղինակի հարցում անորոշությունն ավելի է: Շատ հավանական է, որ այդ բառարանը կազմել է ինքը Նշեցին: Սակայն կարևորը երևույթի՝ այդ փիլիսոփայական բառարանի առկայությունն է հայ միջնադարյան մատենագրության մեջ, այն, որ բառարանը գրվել է Գլաձորի համալ-

սարանում և եթե ոչ Նշեցու, ապա զլաձորյան մեկ ուրիշ գիտնականի կողմից:

Բառարանի ամենահին գրչագիրն անվերնագիր է: Հետագա ձեռագրերում հանդիպում են «Սահմանք իմաստասիրականք», «Սահմանք իմաստասիրականք իբր հարցմամբ», «Սահմանք իմաստասիրին Գալթայ իբր հարցմամբ», «Սահմանք իմաստասիրականք Գալթի փիլիսոփայի», «Սահմանք իմաստասիրութեան փիլիսոփայի» և այլն: Վերնագրերում «Գալթայ» և «Գալթի փիլիսոփայի» բառերը շփոթություններ առաջացնող հետագա ավելացումներ են, կատարված անտեղյակ գրիչների կողմից, որոնք փիլիսոփայ և իմաստասէր բառերի տակ նկատի ունեն Գալթի Անհաղթին և ստացվում է, հետևաբար, թե բառարանի բոլոր սահմանումները վերցված են նրա երկերից:

«Սահմանք իմաստասիրականք»-ը փիլիսոփայական, բրնագիտական, աստվածաբանական և մասամբ այլ երկերից վերցված զանազան սահմանումների մի ընդարձակ հավաքածու է, որտեղ տրված են շարժում, ժամանակ, ստորոգում, սեռ, գոյացություն, օրենք, գոյ, ներգործություն, մարմին, հավատ, դուրքություն, գարուն և այլ հասկացությունների սահմանումներն ըստ այդ երկերի հեղինակների: Այսպես՝

Զգայութիւն է ախտ անձին ի ձեռն մարմնոյ, որ ի ձեռն զգայականին կիրք, և կամ հասարակաց ախտ հոգւոյ և մարմնոյ (Պլատոն)<sup>163</sup>:

Սեռ է, որ ի վերայ բազմաց և աննմանից իրաց, յորում զինչէն ստորոգեալ (Արիստոտել)<sup>164</sup>:

Սահման է բան ըստ վերլուծութեան կատարողին յառաջ բերել (Զենոն)<sup>165</sup>:

[Ակամա է], որոյ սկիզբն արտաբուստ, ոչ ինչ նպաստ

163 «Սահմանք փիլիսոփայականք», «Բաների Մատենադարանի», № 3, 1960, էջ 380:

164 Նույն տեղում, էջ 378:

165 Նույն տեղում, էջ 376:

եղեալ՝ ըստ իրում յարձակման բռնաւորեցելոյն (Նեմեսիոս)<sup>166</sup>։

Հուր [է մարմին] ջերմ և ցամաք (Հերմես)<sup>167</sup>։

Ամբողջ բառարանը, տարբեր երկերից քաղված, նման սահմանումներից է կազմված, ի տարբերություն «Բառք քերականին», «Բառք Փիլոնի», «Բառք Գաղիանոսի», «Բառք Վարդան գրոց» և այլ հին բառարանների, որոնք վերաբերում են միայն մի հեղինակի գործերին և բացի բառերի մեկնություններից, տալիս են նաև առանձին բառակապակցությունների ու ոճերի բացատրություններ։

Բառարանի մեջ մտնող սահմանումները, ինչպես տեսանք, գալիս են զանազան աղբյուրներից, սակայն մենք պայմանականորեն դրանք բաժանում ենք երկու խմբի։ Առաջին խմբի մեջ դասվում են այն բառերը, որոնք վերցված են Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուի մեջ կենտրոնացված՝ սահմանումների հնագույն հավաքածուներից։ Այդ բառերի մեծ մասը վերցված է Արիստոտելի, Պլատոնի, Ջենոնի ու մյուս ստոյիկների, Նյուսացու և էմպեդոկլեսի երկերից։ Երկրորդ խմբին բաժին է ընկնում բառերի մի փոքր մասը՝ Նեմեսիոսից, Դավիթ Անհաղթից և այլ հեղինակներից առնված սահմանումներով։

Նշելի է, որ վաղ քրիստոնեական շրջանի գործիչների, հատկապես եկեղեցու հայրերի, աշխատություններում նույնպես հանդիպում են «Սահմանք իմաստասիրականք» բառարանի բազմաթիվ բառերի սահմանումներ, ավելի ճիշտ՝ բառերի աստվածաբանական, կրոնա-բարոյախոսական բացատրություններ ու մեկնություններ։ Այդ երկերից բառարանը շատ քիչ բան է վերցրել։ Օրինակ՝ Եվագր Պոնտացու աշխատություններում, մասնավորապես նրա խրատների հարյուրակներում, կան հիշյալ բառարանի գրեթե բոլոր բառերի կրո-

<sup>166</sup> «Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացու Յազգս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889, էջ 114։

<sup>167</sup> «Հերմեսյ եռամեծի առ Ասղեպիոս Սահմանք», աշխատասիրություն մը ակադեմիկոս Հ. Մանանդյանի, «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1956, էջ 311։

նական սահմանումները, սակայն բառարանում եվագրից վերցված բառացի սահմանումներ չկան և լուկ մի քանիսը թերևս կարելի է վերագրել նրան։ Նշենք նաև, որ VIII դարում Կյուրեղ Ալեքսանդրացու, Աթանասի, Գեորգ Պիսիդեսի, Թեոդորոս Անկյուրացու, Անթիպատրոս Բոստրացու, Կլիմաքոսի և Տիտոս Կրեստացու երկերի հետ միաժամանակ հայերեն են թարգմանվել Նյուսացու «Յազգս կազմութեան մարդոյ» և Նեմեսիոսի «Յազգս բնութեան մարդոյ» գործերը, բայց, գրեթե, միայն այս վերջին երկու աշխատություններից են սահմանումներ մտել բառարանի մեջ։

Այսպիսով, «Սահմանք իմաստասիրականք» բառարանը հիմնականում բաղկացած է Արիստոտելի, Պլատոնի, էմպեդոկլեսի, Նյուսացու, Նեմեսիոսի, Դավիթ Անհաղթի, Հերմեսի, Ջենոնի ու ստոյիկյան մյուս փիլիսոփաների աշխատություններից բառացիորեն կամ քաղվածաբար վերցված սահմանումներից։

Վերևում նշվեց, որ «Սահմանք իմաստասիրականք» բառարանը գլածորյան մի հեղինակի ինքնուրույն գործ չէ։ Նրա մեջ մտած բառ-սահմանների մեծ մասը վաղուց արդեն կային հունաբան զարդի ժամանակներից մնացած սահմանումների հավաքածուների մեջ։ Իրարից անկախ, զանազան մատյաններում ցրված բառարանագրական բնույթի այդ պատասխանները հետագայում մի տեղ են հավաքվել Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուի մեջ։

Գրիգոր Երուսաղեմացին միայն վերջին տասնամյակներում հայտնի դարձած մի հեղինակ է։ Նրա կյանքի ու գործունեության մասին տեղեկություններ առայժմ չկան, բայց 1267 թ. ձեռագրում նրա աշխատության առկայությունը թույլ է տալիս ենթադրել, թե նա XII դ. հեղինակ է։ Նրա անունով մեզ հասած ուսումնական ընդարձակ ժողովածուի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նա բազմակողմանի զարգացած մարդ է եղել, զբաղվել է փիլիսոփայությունում, ճարտասանությունում և այլ գիտություններով ու մանկավարժությամբ, հավանորեն գրել է ուսումնական բնույթի ուրիշ աշխատություններ ու կազմել բառարաններ։ Նրա ժողովածուն վերնագրված



է «Գրիգորի Երուսաղէմացոյ Սահմանք զանազանք արտորոշեալք ըստ սրբոց եւ ծայրագոյն վարդապետաց յազագս տարբերական եւ այլ եւ այլ անուանց»<sup>168</sup>: Վերնագրին անմիջապէս հաջորդում է «զի՞նչ է աստուած» հարցը, որին և հետևում է պատասխանը՝ աստուած բառի սահմանումները, ապա գալիս են մյուս նյութերը: Երուսաղէմացու հիշատակված երկը լրիվ կամ առանձին մասերով հանդիպում է Երևանի Մատենադարանի № № 3082, 5254, 1980 և այլ ձեռագրերում<sup>169</sup>: Սրանցից ամենահինը № 3082 ձեռագիրն է, որ 1267 թ. ընդօրինակել է Պատանի Գևորգ գրիչը «ի Կիլիկիոյ նահանգէ»: Երուսաղէմացու ժողովածուն փիլիսոփայական, աստվածաբանական, աստղաբաշխական, տոմարական և այլ երկերի համառոտումների մի հետաքրքիր հավաքածու է: Այդ ժողովածուի մեջ ընդգրկված են սույն աշխատութեան առաջին գլխում քննված՝ հնագույն փիլիսոփայական սահմանումների ցանկերը, բացի «Սահմանք մասանց պէսպէս շարժմանց և կրից» հավաքածուից, որն անհայտ է եղել Երուսաղէմացուն: Մեզ ծանոթ այդ նյութերին նախորդում է Երուսաղէմացու «Հարցմունք կարճառատաբար» աշխատությունը: Վերջինս նույնպէս փիլիսոփայական սահմանումների հավաքածու է: Նրանում սկզբից տրվում է փիլիսոփայութեան ու նրա բաժինների համառոտ բնորոշումը, ապա գալիս են Գրիգոր Նյուացու և Դավիթ Անհաղթի երկերից բաղված՝ արդարութիւն, առաքինութիւն, սուրբ, մակացութիւն, արհեստ, անհրաժեշտ, զգայութիւն և այլ հասկացությունների փիլիսոփայական սահմանումները:

Հիշատակված նյութերի հիման վրա էլ կազմվել է «Սահմանք իմաստասիրականք» բառարանը, որի մեջ ընդգրկված են «Հարցմունք կարճառատաբար»-ի մի քանի սահմանումներ, «Սահմանք փիլիսոփայականք»-ի սահմանումների մեծ մասը և «Բարոյականի եղանակի սահմանք», «Սահմանք ի-

168 Մատենադարան, ձեռ. № 3082, էջ 431ա—451բ:

169 Տե՛ս «Философские труды в армянских рукописях Матенадарана», «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1956, էջ 406—407:

մաստասիրականք միջակք», «Բանականի մասին սահմանք», «Մասունք մարմնոյ», «Յաղագս տնկոց» և «Նիւսացոց» հավաքածուների գրեթե բոլոր սահմանումները: Այսպէս, նշվեցին «Սահմանք իմաստասիրականք» բառարանի հիմնական աղբյուրները, որոնց բառերը պայմանականորեն մտցված են բառերի առաջին խմբի մեջ և կազմում են բառարանի ամբողջ բառամթերքի ավելի քան 80 տոկոսը:

Բառերի մնացած մասը, երկրորդ խմբի բառերը, նույնպէս տարբեր բնույթի հին երկերից վերցված բառեր են, որոնք չկան Երուսաղէմացու մոտ և բառարանի մեջ են մտել նրա կազմող գլխավորյան հեղինակի կողմից: Այդ խմբի բառերն են. անհատ, անսկիզբն, արիութիւն, ամօթ, արդարութիւն, ախտ, ակամայ, առաքինութիւն, ազահութիւն, անձնական, բաղատորագրութիւն, բժշկականութիւն, բարոյական, բաժանումն, մակարածանումն, ստորաբաժանումն, բնական առաքինութիւն, բնական արհեստ, բոլոր, բարոյական առաքինութիւն, գոյ, երզումն, զօրութիւն, էութիւն, թուեցումն, ժամանակ, խրատ, խաղաղութիւն, ծաղր, ծերութիւն, կարևոր, կարծիք, հանճար, հասողութիւն, հոտ, հաւասարն, անհաւասարն, հեշտութիւն, հետ, հարցումն, պատասխանի, հաւանականութիւն, անհաւանականութիւն, ձև, ճաշակելիք, մեծ վայելչութիւն, յաւթարութիւն, ներտրամադրեալ, ներգործութիւն, շարժութեան տեսակք, որակն, ուղղութիւն, ունայնութիւն, պըղծութիւն, պատիւ, պակասութիւն, սերմ, ատելութիւն, վերստին յիշումն, տարբերութիւն, տեսակ, տեսակագոյն, փառք, քուն: Այս խմբի շուրջ 20 բառեր, ինչպէս՝ ամօթ, արդարութիւն, առաքինութիւն, ակամայ, բնութիւն, բարի, երջում և այլ կան նաև առաջին խմբում, սակայն, երկու խմբերին ընդհանուր այդ բառերը, ունեն բոլորովին տարբեր սահմանումներ, այսինքն վերցված են տարբեր աղբյուրներից:

Երկրորդ խմբի բառ-սահմանումների կեսը վերցված է Նեմեսիոսի և Դավիթ Անհաղթի, իսկ մյուս մասը՝ Նյուացու և այլ հեղինակների երկերից: Նեմեսիոսից առնված սահմանումների մեծ մասը բառարանում բերված է նրա բառացի ձևակերպումներով, օրինակ՝

Նեմեսիոս

Բառարան

Ախտ է անբան շարժութիւն անձին, վասն կարծեաց բարւոյ կամ շարի<sup>170</sup>:

Յօժարութիւն է խառն իմն ի խորհրդոյ և ի դատողութենէ, խառն և ի հարկաւոր ցանկութենէ<sup>171</sup>:

Բառարանի հեղինակը հավանաբար իր ձեռքի տակ ունեցել է նաև ուրիշ հնագույն ցանկեր, որոնք մեզ չեն հասել և նրանցից վերցրել է երկրորդ խմբի բառ-սահմանումների մի զգալի մասը, առաջին հերթին՝ նեմեսիոսի սահմանումները: Եվ միայն երկրորդ խմբի բառերի մի փոքր մասը, պետք է, որ Գավթի և այլոց երկերից քաղած ու բառարանի մեջ մտցրած լինի ինքը՝ բառարան կազմողը: Այս ամենից հետո բառարանի հեղինակը, այնուամենայնիվ, մեծ գործ է կատարել ստեղծելով հայերեն առաջին փիլիսոփայական բառարանը: Նա կատարել է հետևյալ աշխատանքը. ա) նրուսաղեմացու ժողովածուից վերցված բառ-սահմանումներին ավելացրել է նորերը, բ) հավաքված բոլոր բառերը դասավորել է այբբենական կարգով: գ) կատարել է մասնակի խմբագրումներ՝ միացրել է միևնույն բառի տարբեր սահմանումները, երբեմն համառոտելով ու ընդարձակելով դրանք՝ բոլոր դեպքերում շփոփոխելով սահմանումների հիմնական միտքն ու բովանդակությունը:

«Սահմանք իմաստասիրականք»-ը պարունակում է շուրջ 420 սահմանում: Դրանք փիլիսոփայական-աստվածաբանական գրականության մեջ հաճախ հանդիպող, շատ գործածական բառեր ու տերմիններ են: Միջնադարյան մյուս բառարանների նման «Սահմանք իմաստասիրականք»-ը պարզ ու հասարակ կառուցվածք ունի՝ բերվում է գլխաբառը, ապա տըր-

Ախտ է անբան շարժութիւն անձին վասն կարծեաց բարւոյ և շարի<sup>172</sup>:

Յաւժարութիւն է խառն իմն ի խորհրդոյ և ի դատողութենէ [և ի] հարկաւոր ցանկութենէ<sup>173</sup>:

170 Նեմեսիոս, նշվ. աշխ., էջ 89:

171 Նույն տեղում, էջ 122:

172 Մատենադարան, ձեռ. № 6897, էջ 399ա:

173 Նույն տեղում, էջ 406ա:

վում է նրա սահմանումը: Բառացանկեր կան հայերեն այբուբենի բոլոր տառերով, բացառությամբ Ղ, Ր և Վ տառերի: Բառերը դասավորված են այբբենական կարգով, սակայն ոչ այնպես, ինչպես մյուս բառարաններում: Միևնույն բառը հաճախ կրկնվում է մի քանի անգամ, բայց տարբեր հեղինակների սահմանումներով: Օրինակ՝ «Հաւատ է ցուցումն ճարտասանական բաղխոհոյթեան», «Հաւատ է մտածութիւն յաղաս ստուծոյ անախտաբար», «Հաւատ է կարծիք ուժգնակի»: Միայն այս բառը նեմեսիոսի տարբեր սահմանումներով հանդիպում է 6 անգամ, տարբերությունը՝ 4, մարմինը՝ 5 և այլն:

Նրուսաղեմացու ժողովածուից վերցված շատ բառերի տարբեր սահմանումները բառարանում միացված են իրար՝ սահմանումների հեղինակների անունների, իսկ, կամ շաղկապների և այլ կապական բառերի բացթողումով, այս ձևով՝

Սահմանումների ցանկում

Բառարանում

Զգայութիւն է ըստ Պղատոնի ախտ անձին ի ձեռն մարմնոյ, որ ի ձեռն զգայականին կիրք, և կամ հասարակաց ախտ հոգւոյ և մարմնոյ:

Իսկ ըստ Արիստոտէլի տեսակ ցնորման: Իսկ ըստ ստոյիկեանցն զգայականի երևոյթ, թուեցումն է տկար կարծիք<sup>174</sup>:

Բառարանի հեղինակը հարմար է գտել այս հատվածի վերջին մասը՝ «թուեցումն է սխալ կարծիք», որն ուղղակիորեն չի կապված սահմանումի բովանդակության հետ, անչա-

Զգայութիւն է ախտ անձին ի ձեռն մարմնոյ որ ի ձեռն սգարանի կիրք և հասարակաց ախտ հոգւոյ և մարմնոյ կամ տեսակ ցնորման կամ սգայականի երևութիւն<sup>175</sup>:

174 Բանբեր Մատենադարանի, № 5, Երևան, 1960, էջ 380:

175 Մատենադարան, ձեռ. № 6897, էջ 402ա:

տել և որպես առանձին սահմանում տեղավորել Թ-ի բառացանկում: Նման ձևով առանձնացված են նաև ձայն, հակասութիւն, մարթ, ողորմութիւն և այլ բառերի սահմանումները: Որոշ դեպքերում սահմանումները կրճատված և համառոտված են, օրինակ՝ հին բառացանկի «Իսկ զիր է յօղաւոր ձայնի նուաստ, տարր է հասարակաց, յորմէ հաստատեցաւ և յորում լուծանի»<sup>176</sup> սահմանումը բառարանում կա «Գիր է յաղաւոր ձայնի մասն նուաստ»<sup>177</sup> ձևով: Համառոտված են նաև մակացութիւն, նշմարիտ, տրամաբանութիւն, ցանկութիւն, մեծանձնութիւն և այլ բառերի սահմանումները: Կան նաև հին աղբյուրներից առնված սահմանումների պատահական աղավաղումներ, աղճատումներ, բառերի շփոթումներ, որոնց հետևանքով, օրինակի համար, վիատութիւն բառը բառարանում դարձել է վստահութիւն և առաջինի սահմանումով ստացվել է՝ «Վստահութիւն է տրամադրութիւն բանից ոչ նախախոհից և երկայնից»<sup>178</sup>:

Նման երևույթները շատ շեն բառարանում, նրանք գլխավորապես վրիպումների և այլ թյուրիմացությունների արդյունք են: Ինչ վերաբերում է սահմանումների բովանդակությանը, նրանց գաղափարական ու գիտական որպիսությանը, ապա դա այստեղ քննարկման ենթակա հարց չէ, դա վերաբերում է փիլիսոփայությանը: Բառարանի սահմանումները տրված են ըստ տարրեր հեղինակների աշխարհայացքի, գիտական ու քաղաքական ըմբռնումների: Սակայն բնդհանուր առմամբ կնշենք, որ ոչ բոլոր սահմանումներն են ճիշտ և լիարժեք: Շատ բառեր սահմանվում, մեկնվում են միակողմանի ու պարզունակ ձևով, նրանց նշանակած առարկաների ու երևույթների ոչ թե էական, այլ երկրորդական հատկանիշների ու ֆունկցիաների նկատառումով, օրինակ՝ «Ձեռք են գործարանք տալոյ և առնելոյ»<sup>179</sup>, «Տերև է ծածկոյթ պտղոյ»<sup>180</sup>, «Երկին է

վերին մասն աշխարհի»<sup>181</sup>, «Լեզու (է) գործարան ձայնի և ճաշակմանց»<sup>182</sup>, «Երակ է գործարան արեան»<sup>183</sup> և այլն:

«Սահմանք իմաստասիրականք» բառարանը հայ միջնադարյան բառարանագրության արժեքավոր գործերից մեկն է: Այն ստեղծվել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ փիլիսոփայությունը՝ աստիճանաբար բաժանվելով աստվածաբանությունից, ձևավորվում էր որպես գիտության ինքնուրույն բնագավառ և որպես ուսումնասիրության ու դասավանդման գլխավոր առարկա մեծ ուշադրության էր արժանացել ժամանակաշրջանի մտավորականության կողմից:

Փիլիսոփայական սահմանումների հնազույն ցանկերից հետո, այդ բառարանի երևան գալը միջնադարյան հայ մատենագրության մեջ, մասնավորապես XIII—XIV դարերում ընդարձակվող ու նոր երկերով հարստացող փիլիսոփայական գրականության մեջ պատահական չէ, այլ փիլիսոփայության տարածման, նրա ուսումնասիրության ու դասավանդման ուղորտի ընդարձակման վկայությունն է:

Բառարանը լայնորեն օգնել է փիլիսոփայություն ուսումնասիրողներին, հատկապես աշակերտներին, բավարարել է նրանց ամենաանհրաժեշտ պահանջները: Այդ մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ «Սահմանք իմաստասիրականք»-ը մեզ է հասել տարբեր ժամանակների ու վայրերի բազմաթիվ գրքազգրերով:

#### ԲԱՌՔ ԳԱՂԻԱՆՈՍԻ ԲԺՇԿԱՊԵՏԻ

Հայ բժշկությունն ու կենսաբանությունը շատ հին պատմություն ունեն, սակայն այդ մասին մեզ հավաստի տեղեկություններ և հուշարձաններ մնացել են գրավոր շրջանից սկսած: Ավելի վաղ ժամանակների մասին բիշ բան է հայտնի, բայց անկասկած է, որ Հայաստանում բժշկություն և բժիշկներ եղել

176 Բանբեր մատենադարանի, № 5, Երևան, 1960, էջ 378:

177 Ձեռ. № 6897, էջ 401ա:

178 Նույն տեղում, էջ 405բ:

179 Նույն տեղում, էջ 405ա:

180 Նույն տեղում, էջ 409բ:

181 Ձեռ. № 6897, էջ 402ա:

182 Նույն տեղում, էջ 403ա:

183 Նույն տեղում, էջ 402ա:

են, Ալիշանի բառերով ասած՝ «ավելի առաջ և շատ հին ատեն, երբ հայերեն գիր չկար»<sup>184</sup>;

Գրերի գյուտից հետո, V դարից սկսած, Հայաստանում ճարտասանական, փրիտոփայական, քերականական, պատմական, մաթեմատիկական և այլ բնույթի աշխատությունների շարքում երևացին բժշկությանն ու մարդակազմությանը վերաբերող մի շարք աշխատություններ: Հայ բժիշկները յուրացրին հունական բժշկական գիտությունն ու գրականությունը: VI—VIII դարերում հունարենից հայերեն թարգմանվեցին բժշկական ու բնագիտական այնպիսի երկեր, ինչպես Արիստոտելի «Յաղագս բնութեան», Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ», Գր. Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» և այլ մատյաններ: Այդ ժամանակաշրջանում և, ընդհանրապես, մինչև Մխիթար Հերացին, հայերեն ինքնուրույն բժշկական ու կենսաբանական աշխատություններ հայտնի չեն, հայ բժշկությունը գտնվում է հունականի ազդեցության տակ: Կան հայագետներ, որոնք ժխտական վերաբերմունք ունեն հունական բժշկության՝ հայկականի վրա ունեցած ազդեցության նկատմամբ, վկայակոչելով այն հանգամանքը, որ հայ հեղինակները օգտվել են արաբական բժշկական գրականությունից, հին հունական հեղինակներից քաղվածքները բերում են ոչ թե նրանց աշխատությունների հունական բնագրերից, այլ արաբական թարգմանություններից, օգտագործելով բազմաթիվ արաբական տերմիններ ու բժշկական այլ բառեր, հունական բժիշկների անունների և այլ բառերի վրա արաբական կնիք դնելով և աղավաղելով դրանք: Սակայն այդ հետազոտողները (Լեո, Բասմաջյան) սխալվում են հաստատելով, թե հայ բժշկությունը զարգացել է միայն արաբականի ազդեցության տակ և հունական բժշկությունը նրա վրա ազդեցություն չի ունեցել:

Պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը իր «История медицины в Армении» արժեքավոր աշխատության մեջ վճռականորեն

առարկում է հունական բժշկության՝ հայ բժշկության դարգացման գործում ունեցած դերը ժխտողներին և ցույց տալիս, որ մինչև արաբների պատմական ու կուլտուրական լայն ասպարեզում երևան գալը Հայաստանում կային արդեն հունարենից թարգմանված բազմաթիվ բժշկական աշխատություններ, հայերեն թարգմանված առաջին բժշկական երկը պատկանում է հույն հեղինակ Որիբասին (325—403 թթ.), այն ժամանակ, երբ արաբներից հայերեն թարգմանված ոչ մի աշխատություն չկար և արաբներն իրենք էին ծանոթանում ու եռանդուն կերպով թարգմանում հույն բժիշկներին: Ապա՝ «Հունական բժշկության ազդեցությունները, — նշում է Լ. Հովհաննիսյանը, — Հայաստանում չեն ընդհատվում ընդհուպ մինչև VIII դարը ներառյալ»<sup>185</sup>; Հունական բժշկության ազդեցությունը Հայաստանում շարունակվում էր դեռևս հունական բժշկական դպրոցի անկումից էլ հետո:

Հունական բազմաթիվ բժշկական աշխատությունների հետ VIII—X դարերում հայերեն են թարգմանվել Հիպոկրատի (460 թ. մ. թ. ա.) և Գաղիանոսի (II դար մ. թ.) աշխատությունները: Գաղիանոսը, ինչպես այլուր, այնպես էլ Հայաստանում մեծ հեղինակություն է ունեցել, խորապես ազդել հայ բժշկական մտքի վրա: Նրա աշխատության հայերեն թարգմանությունից պահպանվել է լոկ մի պատառիկ: Լ. Հովհաննիսյանը Գաղիանոսի և Ասկլեպիդեսի գործերը V—VIII դարերում Հայաստանում թարգմանված լինելը հավանական է համարում:

Գաղիանոսի հայերեն թարգմանության հարցով ավելի հանգամանորեն զբաղվել է պրոֆ. Ավ. Տեր-Պողոսյանն իր «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում» մեծարժեք մենագրության մեջ, մի առանձին ենթապլուս՝ «Գալենի թարգմանիչը», հատկացնելով այդ հարցին: Նա հիմնվում է Սերաստիայում մի մարդու մոտ պահպանված, XIII դարի հայտնի մի բժշկի «Ծաղիկ» անունը կրող ընդարձակ բժշկական աշ-

184 Ղ. Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895, էջ 4:

185 Լ. Ա. Оганесян, История медицины в Армени, ч. I, Ереван, 1946, стр. 183.

խատուության հիշատակարանի տվյալների վրա<sup>186</sup>; Այդ հիշատակարանում նշվում է, որ Վահրամ Պահլավունու որդի Գրիգորը, Մուֆարդինում Բուսայիդ և Հիսե բժիշկների մտաբուծվելիս, վերջինիս «Յէւէի բժշկին ստոյգ գիտնականին» թարգմանել է տվել Գաղիանոսի և Հիպոկրատէսի գրվածքներից: Հիսեն վախճանվել է 1040 թվականին: Ուրեմն Գաղիանոսը արաբերենից հայերեն թարգմանված պիտի լիներ մինչև Հիսեի մահը, այսինքն՝ XI դարի առաջին կեսում: Ուրախ իր կարծիքն հաստատող փաստարկ Տեր-Պողոսյանը վկայակոչում է նաև «Բառք Գաղիանոսի» բժշկական բառարանը, որն ըստ Հ. Մելիք-Փարսադանյանի, ստեղծված է X դարի վերջին կամ XI դարի առաջին քսանամյակում:

Խոսելով հայ բժշկության վրա հունականի ազդեցության մասին, նշելի է միաժամանակ, որ Հայաստանում եղել են շատ հայ բժիշկներ, ինչպես Գարրիել Շիղարացին (VI դ.), Սահակ-Պոլխար (VIII դ.), Շուշանը (VIII դ.), Հովհաննեսը (IX դ.), Լևոնը (X դ.) և ուրիշներ, որոնք մեծ դեր են խաղացել հայ բժշկական մտքի զարգացման գործում, գրել են, թերևս, աշխատություններ, որոնք մեզ չեն հասել: Հայաստանում ապրած օտարազգի բժիշկներից ամենից շատ հայտնի է եղել հույն Գոստա-բեն-Լուգան (X դ.), որը եղել է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի պալատական բժիշկը<sup>187</sup>:

Հայաստանում VI—X դարերում ստեղծված էր արդեն բավականին հարուստ բժշկական գրականություն: Պրոֆ. Լ. Հովհաննիսյանը նշում է մինչև X դարը հայերեն լեզվով գրված բնագիր և թարգմանական աշխատությունների հարյուրից ավելի ձեռագրեր, որոնք այսօր գոյություն ունեն<sup>188</sup>: Այդ ձեռագրերում կան նեմեսիոսի, Նյուսացու, Որբասի, Գաղիանոսի, Հովհաննեսի, Հակոբի, Ասկլեպիդեսի, Անանունի, Բարսեղ Կեսարացու և ուրիշների երկերը:

<sup>186</sup> Տե՛ս Այ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 290—291:

<sup>187</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 234—235:

<sup>188</sup> Նույն տեղում, էջ 250—256:

Հայ բժշկական ու բնագիտական գրականության հանգես գալը, բնականաբար, իր ազդեցությունն ունեցավ մեր լեզվի վրա: Ստեղծվում է բժշկական գիտության տերմինաբանություն ու բառապաշար: Հայերենի մեջ մուտք են գործում փոխառյալ, ինչպես նաև բնիկ, սեփական միջոցներով ստեղծված, բազմաթիվ նոր բառեր՝ տերմիններ, հիվանդություններ, զեղաբույսերի ու զեղերի անուններ և բազմաթիվ այլ բժշկական բառեր: Տասներորդ դարում հայերենն արդեն ուներ բավականին հարուստ բժշկական ու բնագիտական տերմինաբանություն ու բառապաշար: Մելիք-Փարսադանյանը նշում է, որ հայերը ոչ միայն X դարում, այլ դեռևս վաղուց, V դարում, ունեին հարուստ բժշկական ու բնագիտական բառապաշար և Ս. զիրքն ու Բարսեղ Կեսարացու աշխատությունները թարգմանելիս գլխավորապես գործածել են հայերեն տերմիններ և բացառիկ զեպքերում միայն գիմել օտար տերմիններ:

Տասներորդ դարի վերջերից սկսվում է հայ բժշկության զարգացման այն շրջանը, երբ նա գտնվում է արաբական բժշկության ուժեղ ազդեցության տակ:

Արաբները VII դարի սկզբներին դուրս եկան սեփական երկրի սահմաններից և սկսեցին նվաճումներ կատարել: Նրանք հետաքրքրվում, հաղորդակից էին դառնում նվաճված ժողովուրդների մշակույթին, սովորում ու կրթություն էին ըստանում հույն, պարսիկ, ասորի և այլազգի ուսուցիչների մոտ: Ծանոթանալով հունական բժշկությանը, արաբները VIII—X դարերում սկսեցին եռանդուն կերպով թարգմանել ու յուրացնել հունական ողջ բժշկական գրականությունը և արդեն IX դարում նրանք ոչ միայն լրիվ թարգմանել էին հույն բժիշկների, այլև տիրապետել էին պարսկական ու հնդկական բժշկությանը: Գրան հաջորդում է արաբական բժշկության ուժեղ զարգացումը, որը շատ նորույթներով հարստացրեց ու առաջ մղեց բժշկությունը և հատկապես՝ զեղաբանությունը:

Հայաստանում, առաջին անգամ, արաբները երևացին 640 թվականին, իսկ 693 թ. նրանք վերջնականապես իրենց ենթարկեցին երկիրը: Սակայն արաբական բժշկության ազ-

ղեցութիւնը հայկականի վրա սկսվում է IX դարից: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հունական բժշկութիւնն արդեն կորցրել էր իր վաղեմի ազդեցութիւնը, իսկ արաբական բժշկութիւնն, ընդհակառակը, տիրապետող էր դառնում ամենուրեք, նույնիսկ Եվրոպան անտիկ բժշկութիւնն աշխատութիւններին հաղորդակից էր դառնում նրանց արաբական թարգմանութիւնների միջոցով: Անընդհատ ուժեղանում էր արաբական բժշկութիւնն ազդեցութիւնը Հայաստանում: Նույնիսկ XIII դարում, երբ արաբական բժշկութիւնն արդեն առաջատար չէր համաշխարհային բժշկութիւնն մեջ և ղեպի վայրէջք էր գնում, հայ բժշկութիւնը դեռևս երկար ժամանակ շարունակում էր զարգանալ արաբականի ոգով ու տրագիցիաներով: Արաբերենից հայերեն թարգմանված առաջին բժշկական-ղեղաբանական աշխատութիւնները՝ ախրապատիները, երևացին IX դարում, ապա աստիճանաբար հանդես եկան նորանոր թարգմանութիւններ ու արաբական դանազան բժշկական երկերից կազմված ժողովածուներ: Բժշկական գրականութիւնը XII—XIV դարերում հայ մատենագրութիւնն մեջ իր պատկանելի տեղն ունեւր, նա շատ հարուստ էր ու բազմաբովանդակ: Այս շրջանում հայ բժիշկները այլևս չեն դիմում հունական բնագրերի և օգտվում են արաբական մատյաններից: Գաղիանոսի և Հիպոկրատի աշխատութիւնները հայերեն են թարգմանվել ոչ թե հունարենից, այլ նրանց արաբական թարգմանութիւններից: Դա բացատրվում է այն ժամանակ արևելքում արաբական գիտութիւնն տիրապետող դիրքով:

Հայ բժշկութիւնն բառապաշարն ընդարձակվեց, հարուստացավ ի հաշիվ նրա մեջ հախուռն կերպով մուտք գործող բազմաթիվ արաբական տերմինների, հիվանդութիւնների, ղեղերի, ղեղաբույսերի անունների և բժշկա-բնագիտական այլ բառերի: Նույնիսկ գոյութիւն ունեցող հունարեն ու պարսկերեն տերմիններն արաբական կերպարանք ստացան: Տասներորդ դարից սկսած հայերեն բժշկարաններն արդեն հագեցված էին արաբական բառերով: Ամիրզոլլաթի գրքերի մեջ, ըստ Մալխասյանցի, «վխտում են հազարավոր արաբական

բառեր՝ իբրև գիտութիւնն մեջ պաշտոնապես ընդունված տերմիններ»<sup>189</sup>: Արաբերենն իր մեջ էր ամփոփում հունարեն, ասորերեն, եբրայերեն և այլ լեզուներով եղած ամբողջ բժշկական գրականութիւնը: Մալխասյանցը ցույց է տալիս, որ Ամիրզոլլաթի հիշատակած հեղինակները՝ Բագրատ, Գեղիանոս, Աբահիճանիս, Ֆլուս, Ռուֆոս, Դեճանիս, Մասրճուէ, Յեսու, Մուսէն, Ջաքարիային որդին, Սապիթ Կուտան, Էհանան, Սինային որդին և այլք՝ բոլորը գրված կամ այլ լեզուներից թարգմանված են եղել արաբերեն<sup>190</sup>: «Հայ բժիշկների կողմից,— նշում է Լ. Հովհաննիսյանը,— օգտագործվող ամբողջ բժշկական տերմինաբանութիւնը, սկսած XII դարից և հետագայում, հիվանդութիւնների անունները, բուժիչ նյութերի և այլն, նույնիսկ, երբ նրանք ակնհայտ հունական ծագում ունենին՝ լրիվ կերպով արաբական էին»<sup>191</sup>:

Արաբական բառերի հաճախ շափից դուրս շատ, անտեղի գործածութիւնը խճողում, աղավաղումներ էր առաջացնում. բժշկարանները, Սուբրյանի պատկերավոր արտահայտութիւնը՝ «շատ անգամ բանից բարելոն մը էին»: Երբեմնի արմատավորված հունական տերմինները արդեն թարգմանված էին արաբերեն և արաբերենից էլ հայերեն թարգմանվելով աղավաղվում և ձևափոխվում էին:

Սակայն միայն հայ բժշկութիւնն բառապաշարը չէր, որ հագեցված էր արաբական բառերով ու տերմիններով, այլ այդպես էր արաբական ազդեցութիւնն սակ գտնվող բոլոր ժողովուրդների բժշկական, նաև այլ գրականութիւնն լեզուն: Արաբերենը գիտութիւնն, մասնավորապես բժշկութիւնն, ընդհանուր լեզուն էր դարձել ամբողջ մահմեդական արևելքի և մի շարք քրիստոնյա ժողովուրդների համար: «Կարող ենք ասել,— գրում է Լ. Աճառյանը,— թե արևելքում կազմված էր որոշ միջազգային բառարան. և ահա այդ բառարանը անցավ

189 Ամիրզոլլաթ Ամսալիպի. Յոգուտ բժշկութեան, Երևան, 1940, Մալխասյանցի առաջաբանը, էջ ԺԶ:

190 Նույն տեղում, էջ ԺԶ:

191 Լ. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., մաս 1, էջ 212:

նաև հայերին, եթե ոչ ամբողջությամբ, գոնե մեծ մասամբ»<sup>192</sup>։ Այսպիսով, XI—XII դարերում արդեն հայ գիտական գրականության մեջ էին մտել հազարավոր արաբական բառեր։ Բացի գրանից հայերենի մեջ արաբական բառեր մտնում էին նաև բանավոր, խոսակցական լեզվի միջոցով։ Գրան նպաստում էր հայերի և արաբների անմիջական շփումը. Հայաստանում ապրող արաբ բժիշկներից բացի, կային նաև արաբական զորքեր, արաբ գաղթականություն, շատ հայեր տիրապետում էին արաբերենին։

Հ. Աճառյանը մանրամասն քննելով հայերենի արաբական փոխառությունները, առանձնացնում է բոլոր արաբական փոխառյալ բառերը, որոնց մեջ զգալի մասը բժշկական բառեր են։ Եվ ոչ միայն բժշկությունը, այլև արաբական փոխառյալ բառերը վերաբերում են մյուս գիտություններին, այդ բառերից «շատերը, ամենից առաջ, պատկանում են միայն գիտական լեզվին»<sup>193</sup>։

Նշվեց արգեն, որ XI դարի առաջին կեսերին արաբերենից հայերեն են թարգմանվել Գաղիանոսի և Հիպոկրատի աշխատությունները։ Այդ ժամանակներում հունական բժշկական տերմիններն արդեն անհասկանալի էին դարձել և դրանք բացատրելու համար ստեղծվում է հատուկ բառարան՝ «Բառք Գաղիանոսի բժշկապետի» անունով։ Մանթեանանք այդ բառարանին։

Միջնադարյան հայ մատենագրության մեջ «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը աչքի ընկնող երևույթ է։ Դա մեր ամենահին, բայց որ կարևորն է՝ ամենաարժեքավոր, հետաքրքիր մասնագիտական բառարանն է, հայերեն առաջին բժշկական բառարանը։ Գ. Ալիշանը «Բառք Գաղիանոսի»-ն։ համարելով մեզ հասած ամենահին բուսաբանական բառարան, լայն շափով օգտագործել է իր «Հայրուսակի» համար։ Նրանից օգտվել են նաև Երեմիա Մեղրեցու բառարանի 2-րդ

<sup>192</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 186։

<sup>193</sup> H. Hübschmann, Armenische Grammatik, I Teil, Leipzig, 1895, S. 260.

տպագրության հրատարակիչները։ Նրանք Մեղրեցու բառարանից հետո, այլ բառացանկերի շարքում, «Բառք խոտոց, ծաղկանց և բուսոց ոմանց»<sup>194</sup> վերնագրով զետեղել են մի փոքր բուսաբանական բառարան, որի մեջ «Բառք Գաղիանոսի» բառարանից մտել է ավելի քան 60 բառ, ինչպես՝ ամոնի, աստին, բաղատրոն, գանդի, թորմ, կրոմին, կարոզին, կիար, հարմալ, հոդոմ, մորէաս, նարկիտոն, պրասին, ուղայ և այլն։ Ապա դրանից հետո, բառարանի վերջում, «Բառք Գաղիանոսի բժշկապետին»<sup>195</sup> վերնագրի տակ բերվում է համանուն բառարանի զանազան բառացանկերից իրենց նույն մեկնություններով վերցված 86 բառ։ Դա քննվող բառարանից կատարված մի անհաջող, աղավաղումներով լի բառաքաղ է և հայտնի չէ, թե ինչու՞ ընտրված են «Բառք Գաղիանոսի» բառարանի հենց այդ և ոչ թե այլ բառեր կամ ամբողջ բառարանը։

Ավելի ուշ բառարանը ուսումնասիրել և մեկնություններով հանդերձ հրատարակության է պատրաստել Ն. Բյուզանզացին, որի աշխատությունը, սակայն, ինչպես ասվեց, մինչև օրս մնում է ձեռագիր վիճակում։ Այդ բառարանն առանձին ուսումնասիրության է ենթարկվել նաև Խ. Մելիք-Փարսազանյանի կողմից։ Արգեն նշվել է, որ նա «Համառոտ տեղեկություններ մեզ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին» հոդվածում, հակիրճ, բայց գիտական ճշգրտությամբ վերլուծում է «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանն իր բոլոր հանգամանքներով։ Դա հիշյալ բառարանին նվիրված առաջին լուրջ գիտական տպագիր ուսումնասիրությունն է։ Հոդվածում Մելիք-Փարսազանյանը բառարանի բնույթի մասին նշում է. «Սակայն, եթե նկատի ունենանք նրա մեջ առկա բազմաթիվ ախտաբանական, անատոմիական, կենդանաբանական և դեղագրական բառերը, ապա մենք լիպսես իրավունք ունենք «Բառք Գաղիանոսի»-ն համարելու մեզ հասած ամենահին բժշկական բառարանը»<sup>196</sup>։ Իրօք, այդ բառարանը

<sup>194</sup> Տե՛ս Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, 2-րդ տպ., 1728, էջ 565—572։

<sup>195</sup> Նույն տեղում, էջ 573—575։

<sup>196</sup> Մելիք-Փարսազանյան, նշված հոդվածը, էջ 70։

ստեղծված է բժշկական նպատակներով՝ բժշկական տերմինների ու բառերի բացատրության համար, բայց միաժամանակ այն կարելի է նաև բուսաբանական համարել, որովհետև նրա բառերի մեծ մասը, ստորև կտեսնենք, բույսերի անուններից է բաղկացած:

Բառարանի ստեղծման ժամանակի մասին կան տարբեր կարծիքներ: Ն. Ակինյանը ենթադրում է, թե «Բառք Գաղիանոսի»-ն «Բառք Երրայեցուց» բառարանի հետ հանդիսանում է մեզ հասած ամենահին հայերեն ձեռագիր բառարանը, այն ստեղծվել է «թերևս 2—է» դարերում: Բայց քանի որ Ակինյանի նպատակն այդ բառարանի մասին խոսելը չէ և նա դրան անդրադառնում է կողմնակիորեն, իր ենթադրությունն հավաստող բանասիրական ապացույցներ չի բերում:

Պրոֆ. Մելիք-Փարսազանյանը արդեն ճշգրիտ գիտական փաստարկումներով որոշում է բառարանի ստեղծման ժամանակը: Նա գտնում է, որ բառարանն «ավելի հին ժամանակների դործ է», քան այն վկայող մեզ հասած ձեռագիր ամենահին հուշարձանները: Նրա փաստարկներն հետևյալն են.

1. Բառարանում չկան Օ և Յ տառերով սկսվող բառեր, որոնք հայերենում հանդես են գալիս XII դարից սկսած:

2. Բառարանում հունարեն «*ι*» տառը հայերեն տառադարձվում է «*ղ*»-ով, իսկ դա մեր լեզվին հատուկ էր IX—X դարերում:

3. Բառարանի մի շարք հունարեն բառերի՝ *ἄβρα* (լգորայ), *ὑποχρονδρία* (լպոքոնդրիայ), *ὑπέστασις* (լպոստասի), *ὑπέσχυσις* (լպոմիկիտոն) և այլ սկզբի *υ*-ն հայերեն տառադարձված է *ի*-ով: Մինչդեռ հայերենում *ի*-ով սկսվող բառեր չկան: Ուրեմն *υ*-ւ տառադարձությունը, ենթադրում է Մելիք-Փարսազանյանը, կատարված պիտի լիներ այն ժամանակ, «երբ հայերի և հույների մեջ կուլտուրական փոխհարաբերություններն ավելի աշխույժ էին, քան ուշ միջնադարում»<sup>197</sup>:

Այնուհետև իր կարծիքն հաստատելու համար Մելիք-Փարսազանյանը վկայակոչում է 1294 թ. ձերուհի Վարդ Մրտիչ-

ցու ձեռքով ընդօրինակված Վենետիկի № 1281 ձեռագիր բժշկարանը: Այդ բժշկարանը կոչվում է «Գաղիկ-հեթումյան» բժշկարան, որովհետև այն հանդիսանում է Գաղիկ Ա-ի (990—1020 թթ.) ժամանակ գրված մի բժշկարանի ընդօրինակություն: Այդ բժշկարանի լեզույսը բառերի բացատրություն է, բառացանկ, որը, ըստ Մելիք-Փարսազանյանի, ոչ այլ ինչ է, եթե ոչ «Բառք Գաղիանոսի» բառարանը: Այս վերջին կարծիքի հետ չի կարելի համաձայնել: Գաղիկ-հեթումյան բժշկարանի լեզույսը համարվող գլոսարիան «Բառք Գաղիանոսի» բառարանը չէ, այլ բոլորովին ուրիշ, ծավալով ավելի փոքր ու բովանդակությամբ տարբեր, բժշկական բառարան և վերնագրված է ոչ թե «Բառք Գաղիանոսի բժշկապետի», այլ «Քարգմանութիւն անուանց դեղոց զայլ լեզուաց ի մերս»: Առանց Գաղիկ-հեթումյան բժշկարանի այդ բառարանի վկայակոչման էլ Մելիք-Փարսազանյանի նախորդ փաստերը «Բառք Գաղիանոսի» բառարանի ստեղծման ժամանակի մասին համոզիչ են և միանգամայն բավարար այդ բառարանի ստեղծման ժամանակը հաստատելու համար: Այս ամենից հետո, բառարանի հետազոտողը միանգամայն ճիշտ եզրակացնում է, թե «Բառք Գաղիանոսի»-ն մեզ հասած ամենահին բժշկական բառարանն է, որի ամենահին օրինակը գրված է եղել X դարի վերջերին կամ XI դարի առաջին քսանամյակում»<sup>198</sup>:

Այս կարծիքին համամիտ է Տեր-Պողոսյանը, որը Գաղիանոսի թարգմանությունների մասին խոսելիս, ինչպես տեսանք, հիմնվելով XIII դարի հայտնի բժիշկ Ստեփաննոսի բժշկարանի հիշատակարանի վրա, ցույց է տալիս, որ Գաղիանոսի թարգմանությունը կատարված է 1040 թվականին: Տեր-Պողոսյանի վկայությամբ՝ Մելիք-Փարսազանյանը ծանոթ չի եղել Ստեփաննոսի բժշկարանի հիշատակարանին, սակայն եկել է ճիշտ եզրակացության բառարանի ստեղծման ժամանակի որոշման հարցում: Այսպիսով, իրարից անկախ, երկու հայ գիտնականների կարծիքները Գաղիանոսի թարգմանության և բառարանի ստեղծման ժամանակի մասին փո-

<sup>197</sup> Մելիք-Փարսազանյան, նշված հոդվածը, էջ 69:

<sup>198</sup> Մելիք-Փարսազանյան, նշված հոդվածը, էջ 74:



խաղարձարար լրացնում և հաստատում են մեկը մյուսին: Միանգամայն ճիշտ և ընդունելի համարելով Մելիք-Փարսազանյանի կարծիքը, հօգուտ դրան մենք կավելացնենք հետևյալը. բառարանում կա կիտր բառը, որը մեկնվում է որպես «վառունկ կամ խիար», ապա՝ «Պիտիուսայ. մայր, փայտ, փնի», «Ղեկիոն. կոծոխորի», կա նաև՝ «Ագարիկոն. տարագ վրացի կոնակի» և «Խարբակ. վրացի կոն» բացատրությունները: Վրացերեն կիտրի, փնի, կոծոխորի բառերը հայերենի մեջ են մտել X դարից հետո, երբ հայ-վրացական հարաբերություններն ավելի ուժեղանում էին: Այդ բառերի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու նաև, որ «Բառք Գաղիանոսի» բառարանն ստեղծվել է հյուսիսային Հայաստանում, Վրաստանին սահմանակից հայկական վայրերում:

Վերջապես հիշյալ կարծիքի օգտին չի՞ խոսում արդյոք նաև այն, որ բառարանը կա № 7117 ձեռագրում, որն ըստ Հ. Աճառյանի ընդօրինակվել է X դարի վերջում և XI դարի սկզբներին գոյություն ունեցած մի հին ձեռագրից: Այսպիսով, ոչ մի տարակույս չի մնում, որ «Բառք Գաղիանոսի» բառարանը ստեղծվել է X դարի վերջում կամ XI դարի առաջին կեսում:

Մելիք-Փարսազանյանը, այնուհետև, միանգամայն իրավացիորեն ժխտում է Թորգոմյանի այն կարծիքը, թե բառարանը եղել է Գազիկ-հեթումյան բժշկարանի բառերը բացատրող բառացանկ, ցույց տալով, որ բժշկարանի՝ կառուրա, պահրան, մապախ, հապ, հալիլա, պլղամ, սափրայ, սավղայ և այլ բառեր չկան բառարանում և, ընդհակառակը, բառարանի՝ անգղ, արջ, աղուէս, գամէշ, ափխ, ագուա և այլ բառեր չեն հանդիպում բժշկարանում: Նա գտնում է, որ բառարանը վերաբերում է Գաղիանոսի մեզ շահասած մի աշխատության. «Սակայն, «Բառքի» ախտարանական և անատոմիական տերմինները և այն հանգամանքը, որ այդ հուշարձանը կոչվում է Բառք Գաղիանոսի, թույլ են տալիս մեզ ենթադրելու, որ դրանք քաղված են Գաղիանոսի ինչ-որ մեզ անհայտ աշխատությունից»<sup>199</sup>:

Մատենադարանի ձեռագրերում «Բառք Գաղիանոսի»-ն հանդիպում է 41 հուշարձաններում, իսկ արտասահմանում, ըստ Մելիք-Փարսազանյանի տվյալների, կան այդ բառարանի ավելի քան 30 գրչագրեր: Ձեռագրերի այս քանակը արդեն վկայում է բառարանի՝ միջնադարյան հայ մատենագրության մեջ ունեցած մեծ արժանիքներն ու դերը: Ամենահին թվակիր ձեռագիրը Փարիզի № 302 ժողովածուն է: Երևանի Մատենադարանում ամենահին գրչագրերը № 5919, 5923, 3937, 4149 և այլ ձեռագրերն են:

«Բառք Գաղիանոսի» բառարանը իր կառուցվածքով սովորական միջնադարյան բառարան է՝ ձախ կողմում բերվում են հունարեն և արաբերեն բառերը, հայերեն տառերով զրկված, իսկ այ կողմում՝ այդ բառերի դիմաց, տրվում են նրանց հայերեն թարգմանությունները:

Բառարանում բառեր կան հայերեն այբուբենի 26 տառերով, այն տառերով, որոնցով տառադարձվում են հունարենի հնչյունները: Հայերեն է, Ը, Ձ, Ճ, Զ, Յ տառերով բառեր չկան, Ժ-ով (№ 8106-ում), Ծ-ով (№ 6624), Վ-ով (№ 7117, 7250, 3197, 538) կա մեկական բառ, որոնք հետագա ավելացումներ են: Ուրեմն բառարանի նախագաղափար օրինակը բառեր չի ունեցել նաև Ժ, Ծ և Վ տառերով:

Բառերի քանակը գրչագրերում տարբեր է և ըստ այդմ էլ գրչագրերը բաժանվում են երկու հիմնական խմբագրության՝ ընդարձակ և համառոտ: Ընդարձակ կամ լրիվ խմբագրություններում բառերի թիվն հասնում է 550-ի, իսկ համառոտ օրինակներում՝ մինչև 420-ի: Ձեռագրերի մեծ մասը համառոտ խմբագրությանն է պատկանում, ընդարձակ են միայն № 7117, 7250, 3197 և 538 գրչագրերը: Մի շարք ձեռագրերում (№ № 529, 2019, 2331, 2335 և այլ) բառեր կան մինչև «Ս» տառը ներառյալ, մյուս տառերով բառեր չկան: Այս տիպի ձեռագրերը մի առանձին խումբ են կազմում բառարանի համառոտ խմբագրության ձեռագրերի շարքում:

«Բառք Գաղիանոսի»-ն սկզբնապես բաղկացած է եղել 400—420 բառերից և հետագայում, դանազան ընդօրինակողների կողմից, համալրվել է նոր բառերով, որոնք հավանաբար

<sup>199</sup> Մելիք-Փարսազանյան, նշված հոդվածը, էջ 74:

Գաղիանոսի աշխատություններից չեն քաղված: Մի շարք ձեռագրերում ակնառու երևում է բառարանի նոր բառերով համալրվելու գործողությունը: Այսպես՝ № 7250 և № 266 ձեռագրերում բառարանի Ք-ով բառերից անմիջապես հետո սկզբում է Կ, Ն, Ս, Վ, Փ, Ք և այլ տառերով սկսվող 42 բառերից բաղկացած մի ցանկ: Դրանք բառարանի կորագու, կոկորդոս, ասասարու, նարտին, նարկիսոն, նարկէ և այլ բառերն են, որոնք հետագայում են ավելացվել բառարանի վրա՝ սկզբում նրա վերջում, իսկ հետո տեղավորվել են համապատասխան բառացանկերում, դասավորվել, վերջապես՝ բառարանը այն տեսքն է ստացել, ինչպես որ կա № 7117 և նրա խմբակից ձեռագրերում:

Հետևաբար, եթե պետք լինի այդ բառարանի օգնությամբ որոշ պատկերացում կազմել Գաղիանոսի մեզ չհասած աշխատության մասին, ապա պետք է առաջին հերթին հիմնվել բառարանի ոչ թե ընդարձակ, այլ համառոտ խմբագրությունների վրա: Սակայն մենք քննելու ենք բառարանն ըստ ընդարձակ խմբագրության:

«Բառք Գաղիանոսի» բառարանի լավագույն ընդօրինակությունը № 7117 ձեռագիրն է, որի մեջ բառարանի բառերի քանակը հավասար է 538-ի: Եթե դրան ավելացնենք նույն խմբագրության № 266 և 7250 ձեռագրերում եղած այն բառերը, որոնք չկան № 7117-ում, ապա բառերի թիվը կհասնի 550-ի:

Բաղարանի բառերից շուրջ 400-ը, ըստ Մելիք-Փարսաղանյանի հաշվումների, հունարեն են, ինչպես ագրիստիս (ἀγρόστις), ախարոն (ἀχαρον), ախանթաղիկէ (ἀχανθα), արտեմեսին (ἀρτεμισίον), անտիկնիմոլ (ἀντάκεινον), անկիւրայ (ἀγκυρα), անթրիսիգիս (ἀνθρισκος), արկոս (ἀρκτος), ալետոս (ἀετός), աղոպէ (ἀλώπηξ), բիկոս (βίκος), բալբալա (βαλάνος), բաղատրոն (βαλάστιον), բլիքիտոն (βλήγων), գրիկուրեղին (γλωκροίζα), դրիս (δρός), դենդրոն (δένδρον), իոն (λεικοίον), կրոմին (κρόμμιν), կենդարիոն (κενταρείος), կիկղամինոս (κυκλάμινος), կերոլ (κερός), դապաթոն (λαπάθιον), դաւանոն (λάσων), մարաթրոն (μαράθρον), դոսոս (λωτός), մաղաբաթրի (μαλάβαθρον), մեղեղիտոն (μελιλωτον), որեզին (ὄρουζα), որեսի-

լինոլ (ὄρουσέλινον), պրասին (πράσιν), սկոմորոլ (σκύμορος), և այլն:

Համեմատաբար քիչ է արաբերեն բառերի թիվը, կա մոտ 80 բառ՝ ալեկարեայ (ակրկահրա), արխար, պլիոն (ալպոն), ասմանուն (ասմադուն), զիննար (զինչուսի), խարբակ (խարբախ), կէսում (դայսում), կմբիլ (կմբիլ), հարմալ, հնդուպէ (հնդիպէ), մուէ (մու), ոլայիկ (ոլաիկ), սիլիկոն, վոն (վաճ), քարենաջ (քարանաջ), քիսա (քիսա) և այլն:

Մնում է շուրջ 70 բառ, որոնց ծագումը և ինչ լինելը գեղեկապարզված չէ: Դրանք նույնպես արաբերեն և հունարեն բառեր են եղել, որոնք հետագայում ազավաղվել ու անհասկանալի են դարձել: Թերևս եղած բոլոր ձեռագրերի բաղադրումներով հնարավոր լինի վերականգնել այդ բառերի նախկին ճիշտ ձևերը:

Բառարանում բերվող բառերի մի մասը մեկնվում է ոչ թե հայերեն, այլ արաբերեն բառերի օգնությամբ, և դա էլ վկայությունն է այն բանի, որ արաբական բժշկական տերմիններն ու բառերն այնպես արմատավորված են եղել հայերենի մեջ, որ նրանք, որպես լայն տարածում և ճանաչվածություն ունեցող բառեր, օգտագործվել են հունարեն բառեր թարգմանելու համար: Օրինակ՝ բորմ (բառում), կաոն (կառան), համիմ (համահիմ), լեղինջ, քոռաղ (քոռաթ), բգրկատուն, ալակ, համկենայ (համկենա), մուկլ, մշմիշ, շրնարնի (շնհարմի), դարման, կղմխի (կղմուխ), պրիեկ, սաբր (սապրո), խիարշամբար, հագար (հազաղ), փեննա, հալաէ (հալիլա), արհար (աթխար) և այլն: Նույնիսկ մի քանի արաբական բառեր բացատրվում են արաբերեն ուրիշ բառերի միջոցով, ինչպես. դարունան-փեննայ, զիննար-զրենաֆր (զինջարակ, զինչուսի): ոլայիկ-մոշ:

Բառարանի բառերն ըստ իմաստների կարելի է խմբավորել հետևյալ ձևով:

1. Բուսաբանական բառեր. ծառերի, ծաղիկների, դանազան բուսի խոտերի, պտուղների, սերմերի, տերեւների, արմատների անուններ և այլն: Օրինակ՝ արբոտինոն, ագրիստիս, այեզոն, աղթեկ, ամոնի, ամիզոզոն, արտեմեսին, անեսու,

աստին, անեթոյ, ալարտամէ, բալբալա, բաղատրոն, բամե-  
րոճ, գանդի, դիմամորոն, դենդրոն, եղկիսինէ, եղէաս, թրո-  
պոս, իոն, լոտբայ, խայիմ, կրոմին, կարիբաղսիկայ, հոո-  
դոմ, ղոտոս, մեսմեղոն, ղապաթոն, չիոնթէ, նարկիսոն, պրու-  
գիաս, պիտիուսայ, ոոգոս, տրիոբողոս, փինիկա և այլն: Այս  
խմբի մեջ են մտնում բառարանի բառերի մեծ մասը, ավելի  
քան 80 տոկոսը, և դրա համար էլ կարելի է այդ բառարանը  
նաև բուսաբանական բառարան համարել:

2. Վայրենի կենդանիների, թռչունների, սողունների, մի-  
ջատների, ջրային կենդանիների անուններ և նրանց հետ կապ  
ունեցող բառեր, ինչպես՝ ակրիս (մարախ), արկտոս (արջ),  
այնտոս (արծուի), աղոպէ (աղուէս), գաղեայ (աքիս), գզու-  
կայ (բու), գիփայ (անկղ), դաբոբողոն (գոմէշ), դարկոս  
(վիթ), երիպիտոս (ցեց), եղափաս (եղջերու), երիզիոն (ա-  
րագիլ), կոբզիեւս (խոնջալ), խիրվայ (տիգ), կիւ-  
կոն (կարապ), կորակս (ագուս), կոկորդանարին (անձեղ կամ  
կաշաղակ), կորիթաղոս (արտոյտ), կերկորոնին (ճայեակ),  
կնիզի (ցին, հաւ), կիմինա (խոզի կաշի), կամբէ (թրթուր),  
կողկոս (ծովու ձկան արին), հիպոնէ (բոր կամ ճագար), հե-  
ղիատոն (գետարծուի), ղագոս (նապաստակ), մւզաղէ (մկնա-  
քիս), մոքսին (առնէտ), նիքտարի (չիղջ, մաշկաթե), որդո-  
տին (լոր), որասէ (յովազ), ոփսարին (ձուկն), պերդիոն (կա-  
քաւ), պաւօնի (սիրամարգ), պզարգոն (կամ պղարգոն-այծ),  
սոքրտ (մողէս), սկամբուէզ (կովժուծ), տրոգոդիտէս (ճըն-  
ճողակ), քամէղոն (գետնառեծ) և այլն:

3. Չանազան միացութիւններ, ղեղանյութեր, սննդա-  
մթերքներ: Ըմպելիքներ և այլ բառեր՝ գաղակիոն (ցորենոյ  
աւշարակ), դիամորու (թրթու աւշարակ), թոպալ (պղնձաքար),  
խանակթէս (ջրի գինի), լիփնճող (երկաթի աղտ), կալոզնտար  
(հոռոմարջասպն), կողփնիաս (բեկեկի խէժ), հինդիկոն (լե-  
ղակ), համեղին (նշակաթն), հեփսնմայ (եփեալ գինի), ղի-  
դիկոս (ձուի միջուկ), ղալղալիդաս (այրած արջասպ), մօսէ  
(արջասպն), նիտրոն (բորակ), ոքնիմեղին (քացախաթան),  
ջաւարզ (կովու լեղի), սանդրաքնէ (ջնարակ), սփիրոն (գա-

ոին դմակ), սիլիկոն (կարմրագեղ), տերմիթենէս (բեեկն),  
քաղկանթոյ (ծաղիկ պղնձոյ):

4. Մարմնի մասեր, հիվանդութիւններ, վիճակ, զգաց-  
մունքներ ցույց տվող բառեր և բժշկական այլ հասկացու-  
թիւններ, որպես՝ արտերեկ (շնչերակ), անիկդիդիս (անրակ),  
ասթրիտիկայ (յաւագացաւութիւնք), իոնթոն (այտումն), կէրիոն  
(քաղցկեղ), կարբազեայ (ազազուն), նենդիոս (աղի), նար-  
կեն (ընդարմանալ), ոիզի (գիրացեալ), ռեմէ (զայրացումն),  
սիրիբզոս (վէր աղտեղի), սարկիփակէզ (ախտ հազու), մե-  
նայ (մէղն), ւիմոն (արին ուժգին), ւիպոմիկետոն (խեղ-  
ղեալ կամ ի ճճոյ խածեալ), ւպոստասի (մածումն) և այլն:

Բառարանում հաճախ միևնույն բառը հայերեն է թարգ-  
մանվում մի քանի հոմանիշների, բարբառային ձևերի օգ-  
նութեամբ, ինչպես՝

«Անդրքնէ. փերփերան կամ կոճկորակ կամ անմեռուկ»<sup>200</sup>;

«Բամերոճ. դաղձն կամ անանուխ»<sup>201</sup>;

«Բակշատլ. համկենայ, փալփալնահին, որ է խոճկո-  
րակ»<sup>202</sup>;

«Կենդարիոն. ղերեփուկ մեծ կամ նաշղակիկ, որ է մա-  
նիքեղոյ սերմ»<sup>203</sup>;

«Պիտիուսայ. մայր, փայտ, փիճի»<sup>204</sup>;

Մնացած 70 աղավաղված բառերի մասին առայժմ ոչինչ  
չի կարելի ասել: Աղավաղումները տեղի են ունեցել դեռևս  
Գաղիանոսի թարգմանութեան, ինչպես ցույց է տալիս Մելիք-  
Փարսաղանյանը, «ակիտաս» (հուն. σάκος) բառի օրինակով,  
ապա, հետագայում՝ ընդօրինակումների ժամանակ:

«Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը հայ միջ-  
նադարյան մատենագրութեան մեծարժեք ստեղծագործութիւն-  
ներից է: Եթէ մինչ այդ եղած գլոսարիաները մեզ հասել են  
զանազան աշխատութիւնների հետ միասին, ապա «Բառք

200 Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 82ա:

201 Նույն տեղում, էջ 84ա:

202 Նույն տեղում, էջ 83բ:

203 Նույն տեղում, էջ 86բ:

204 Նույն տեղում, էջ 89բ:

Քաղխանոսին» մի հուշարձան է, որի աղբյուրներն անհայտացել են և նա վկայում է, որ, իրոք, Քալենի աշխատությունները թարգմանվել են հայերեն, որ բժշկապետ Քալենը լայնորեն հայտնի է եղել հայերին: Միևնույն ժամանակ բառարանը որոշ պատկերացում կարող է տալ Քալենի մեզ անհայտ աշխատության մասին:

Բառարանում պահպանվել են մի շարք բույսերի անուններ ու բժշկական բառեր, որոնք չեն հանդիպում մեր մատենագրության մյուս գործերում, գուցե և հունական մատենագրության մեջ: Այդ արժեքավոր հուշարձանը հայ միջնադարյան գիտության ու մատենագրության բարձր զարգացման վկան է, հայ բառարանագրության զարգացման մեջ նոր առաջընթաց քայլ: Մեծ է եղել բառարանի դերը հայ բժշկության ու դպրոցի համար: Հայ գրչության բոլոր օջախներն էլ ընդօրինակել են այդ բառարանը՝ նրա ստեղծման օրվանից մինչև ժամանակակից բժշկական բառարանների հանդես գալը: «Բառք Քաղխանոսի» բառարանը խիստ արժեքավոր աղբյուր է բժշկության ու կենսաբանության պատմության մասնագետների համար:

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԴԵՂՈՅ

Բացի «Բառք Քաղխանոսի» բառարանից XIII դարից սկսած բազմաթիվ ձեռագրերում պահպանվել են զանազան մեծ ու փոքր բժշկական-դեղաբանական բառարաններ, որոնք կոչվում են «Թարգմանութիւն դեղոց»: Դրանք պարունակում են բժշկական աշխատություններում հանդիպող զանազան տեքմիներ ու բառեր, որոնք գերազանցապես արաբական ծագում ունեն: Կան հունարենից, մասամբ էլ պարսկերենից, վրացերենից, հետագայում նաև թուրքերենից վերցված բառեր: «Թարգմանութիւն դեղոց» բառացանկերը կազմված են սահմանափակ թվով բառերից՝ 150—200 դեղանուններից: Բոլոր բառերը գրված են հայերեն տառերով, երբեմն սխալ ու աղավաղված տառադարձություններով: Ի տարբերություն «Բառք Քաղխանոսի» բառարանի, բառացանկերում բերվում են զխավորապես բույսերի օտար անուններ, բժշկական մյուս

բառերը քիչ են, եղածներն էլ հիմնականում կապ ունեն բույսերի ու բուսականության հետ:

Մեզ հայտնի բժշկական բառացանկերը տարբեր են թե՛ բովանդակության, և թե՛ ծավալի տեսակետից, վերաբերում են տարբեր բժշկական աշխատությունների: Միայն առանձին բառեր են հանդիպում միաժամանակ մի քանի բառացանկերում, այն էլ, երբեմն, ամենատարբեր մեկնություններով: Հետագայում այդ բառացանկերն էլ համալրվել են նոր բառերով, մեկից բառեր են անցել մյուսին, ապա նրանց առանձին մասերի կամ ամբողջական միացումով առաջացել են նոր բառարաններ: Այդ միացումներից, ապա բազմակի ընդօրինակումներից հետո, աղճատումների ու վրիպումների պատճառով, բառարաններում բառերի զգալի մասը այսօր անհասկանալի է:

Նման գործերից ամենահինը Քաղիկ-հեթումյան բժշկաբանի վերջին՝ Լե գլուխը հանդիսացող բառացանկն է, որը բժշկարանում բերվում է «Թարգմանութիւն անուանց դեղոց զայլ լեղուաց ի մերս» վերնագրի տակ:

Հիշյալ բժշկարանը մեզ հայտնի ամենահին հայերեն ձեռագիր բժշկարանն է: Հիշատակարաններում հաղորդվում է, որ բժշկարանը հանդիսանում է «յաղթող թագաւորին հայոց Գագկայ», Թորգոմյանի հավատարմով՝ Գագիկ Ա-ի ժամանակներում գոյություն ունեցած ինչ-որ բժշկարանի ընդօրինակություն:

Այդ բժշկարանի ձեռագիրն այժմ պահվում է Վենետիկում: Ձեռքի տակ չունենալով բժշկարանը, մենք նրա բառացանկի մասին կիսոսենք ընդհանուր առմամբ, հիմնվելով սույազիր աշխատություններում ու պարբերական հրատարակություններում եղած նյութերի վրա<sup>205</sup>:

205 Բժշկարանի մասին տե՛ս Ղ. Ալիշան, Միտոան, Վենետիկ, 1885, էջ 337; Վ. Քոստյան, Հայ բժշկական ձեռագիրը Ս. Ղազարու վանքին, «Բազմավեպ», 1923, էջ 7—11, 39—43, 69—71; Ա. Սուբչյան, Պատմութիւն հայ բժշկութեան, «Բազմավեպ», 1881, էջ 33—37; Ղ. Հովհաննյան, Հետազոտութիւնը նախնեաց ոսմորէնի վրայ, Ա մաս, Վիեննա, 1897, էջ 129—162:

Վ. Թորգոմյանը «Բաղմավեպ»-ում, 1923 թ., նյութերի գլուխ առ գլուխ թվարկումով, ներկայացնում է Գաղիկ-Հեթումյան բժշկարանը, կանգ է առնում (3-րդ հոդվածում) բառացանկի վրա և նրանից հատվածներ բերում: Թորգոմյանի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ այդ բառացանկը փոքր է ծավալով, նրա մեջ բերվող դեղանունները արաբերեն են, որ այն առանձին, ուրիշ գործ է և ոչ թե «Բառք Գաղիանոսի» բառարանը, ինչպես, Թորգոմյանի նույն տրված լինելի հիման վրա, կարծում է Մելիք-Փարսազանյանը: Այդ բառացանկը «Բառք Գաղիանոսի» բառարանի հետ նույնական չէ, որովհետև.

1. Բառացանկում կան բժշկարանի մի շարք բառեր, ինչպես՝ աֆիուն, արրոտանոն, ալթիսոր, աֆթիմուն, ալքադբութ, ասկալիակրաս, բարպուշնո, բաղասիոն, զաղմագիճ, զուկու, խիարշամբար, խոռն, հելիոն, կնդրուկ, կառտամա, կալապահանկարի, կորդոն, հաշիշալշթաթ, հումալաթի, զաֆէթ, մրվոր, մաղարիոն, մամիրան, ոճճ, պետասէլինա, պրինգ, պապունիճ, ջանդիանա, ռեանգ, ռասէն, ռաստուղթ, սամխիրապի, սկոսոն, սահրկապուրա, որոնցից միայն արեռաունոն, ալթիսոր, մաղարիոն, ռեճ և պետասէլինա բառերը կան «Բառք Գաղիանոսի» բառարանում:

2. Բժշկարանում բառացանկը վերնագրված է «Թարգմանութիւն անուանց դեղոց զայլ լեզուաց ի մերս» և ոչ թե «Բառք Գաղիանոսի բժշկապետի»:

3. Բառացանկում գործածվում է Ֆ տառը, որը չկա և չէր էլ կարող լինել «Բառք Գաղիանոսի» բառարանում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Գաղիկ-Հեթումյան բժշկարանի բառացանկը բառեր ունի մինչև Ս տառը և այդպես են նաև Գաղիանոսի բառարանի մի քանի գրչագրերը (№ № 529, 2010, 2335, 5008, 5925 և այլ), ապա դա՛ բառացանկի և բառարանի կարծեցյալ նույնականությունը ապացուցող կովան չէ: Բառարանի համառոտ ընդօրինակությունները, պարզապես, կիսատ, թերի օրինակներ են, վերարտագրություն են մի այնպիսի նախօրինակի, որի թերթերը թափված են եղել և Ս տառով բառերի մի մասը, ինչպես նաև հա-

ջորդ բոլոր բառերը շեն եղել այդ նախօրինակում: Գաղիանոսի բառարանի համառոտ, ավելի ճիշտ՝ թերի գրչագրերը, մինչև Ս տառը ունեն այն բոլոր բառերը, որոնք կան լրիվ գրչագրերում:

Բժշկարանի բառացանկը նույնպես բառեր ունի մինչև Ս տառը: Գուցե այդ բառացանկին էլ, պատահաբար, բառաբանի բախտն է վիճակվել, որովհետև բառարանները սովորաբար զետեղված են եղել բժշկարանների վերջում: Սակայն ավելի հավանական է, որ Ս տառից հետո եկող բառերի բացակայությունը պայմանավորված է բժշկարանում օգտագործված բառերով ու նրանց հայերեն տառադարձումներով: Այսպես, Ս-ին հաջորդող հայերեն Վ, Տ, Բ, Յ, Ի, Փ, Ք տառերից երեքը՝ Յ, Ի և Փ չկան արաբական այբուբենում: Արաբերեն ٤ (թա) և ٥ (թա) տառերը հայերեն Տ-ով չեն տառադարձվում, այլ Թ-ով կամ Գ-ով, Բ-ով սովորաբար հայերեն բառեր չեն սկսվում, իսկ արաբերեն ٦-ն տառադարձվում է Թ-ով: Մնում են Վ և Ք տառերը, որոնցից, եթե Վ-ն արաբերեն

٧ (վավ) տառին է համարժեք, ապա Ք-ի տեղ, հավանաբար, գրվել են հայերեն Կ և Գ տառերը: Մի խոսքով, հայերենի Ա—Ս տառերը այն հիմնական հնչյուններն են, որոնց օգնությամբ տառադարձվում են արաբերենի բոլոր հնչյունները: Բառացանկում գործածվում է նաև Ֆ տառը, որը համապատասխանում է արաբերենի ٦-ին: Սա էլ ցույց է տալիս, որ հայերեն այբուբենի վերջին տառերով բառերի բացակայությունը, ամենից առաջ, կապված է հայերենի և արաբերենի հնչյունական վիճակի ու տառադարձումների հետ:

Այսպիսով, Գաղիկ-Հեթումյան բժշկարանի բառացանկը ոչ թե «Բառք Գաղիանոսի» բառարանն է կամ նրա նախօրինակը, այլ մի առանձին բառացանկ, որ ստեղծվել է հետո: Գառնալով հիշյալ բառարանի ստեղծման ժամանակի հարցին, ասենք, որ սա այնքան հին չէ, որքան բժշկարանը: Բառացանկի մեջ Ֆ և Օ տառերով բառերի անկայությունը արդեն անհավանական է դարձնում նրա XII դարից առաջ գոյություն ունենալու հանգամանքը և բացառում նրան բժշկարանի հնությունը (X—XI դդ.) վերագրելու հնարավորությունը:

Բառացանկը ստեղծվել է ավելի ուշ, ամենայն հավանա-  
կանությամբ XIII դարի վերջերին, 1294 թվականին, հենց բը-  
ժըշկարանն ընդօրինակողը՝ ծերունի վարդ Մրտիշցու կողմից:  
Ուրեմն, Գագիկ-հեթումյան բժշկարանը բառացանկ չի ունե-  
ցել, այսինքն չի ունեցել և՛ գլուխը, և ընդօրինակողն ինքն է  
կազմել այն ու կցել բժշկարանին:

Մատենադարանի մի շարք ձեռագրերում, ինչպես նաև  
արտասահմանի հայերեն ձեռագրերում, հանդիպում է մեկ ու-  
րիշ բժշկական բառացանկ՝ «Քարգամանութիւն դեղոց, զոր ընա-  
րեալ են իմաստունքն և կարգեալ ճշմարտութեամբ յայլ լե-  
զուաց ի մերս» խորագրով: Գրչագրերը XVII—XVIII դդ. ընդ-  
օրինակություններ են և տեղեկություններ չեն տալիս բառա-  
ցանկի ստեղծման ժամանակի և այլ հանդամանքների մասին:  
Ամենահին գրչագիրը հիշատակված է Մ. Տեր-Մովսիսյանի  
հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակում. դա Երուսաղեմի №  
1372 ձեռագիրն է, որն ընդօրինակել է Հովհաննես անունով մի  
գրիչ 1377 թվականին:

«Քարգամանութիւն դեղոց»-ը ծավալով փոքր է, պարունա-  
կում է ընդամենը 160—180 բառ: Տարբեր խմբագրություննե-  
րի գրչագրերը բառերի քանակով և մեկնություններով իրա-  
րից էականորեն չեն տարբերվում: Բառարանի գրեթե բոլոր  
բառերը բացառությամբ կալկատար (այրած արջասպ), ակ-  
լիմայ (աղտ է, որ ի հալել ոսկոյ կամ արծաթոյ ելանէ) և մախ-  
նատիս (աղամանգ քար) բառերի՝ բույսերի, նրանց արմատ-  
ների, ծաղիկների, հատիկների ու հունդերի օտար անուններ  
են, ինչպես՝ արխար, բարոնան, բահման, խարտալ, կիտր,  
կերիլ, մարդկան, ջասիրան, ջովզմագին, արփալչկ, տրեչան  
և այլն:

Բառերի մեծ մասը արաբերեն է, կան նաև որոշ քանակի  
պարսկերեն բառեր և միայն առանձին, հատուկենա բառեր  
վերցված են հունարենից և այլ լեզուներից, ինչպես՝ ասփար-  
թին (αψίνθιον), օրիէս (ալրաս, ἔρις), կաթշափի (κατάληψις),  
փրասիոն (πράσιον), լարան (λίβανος), սկորոզոն (σκόροδος),  
բերբերիս (լատ. berberis), գարիհենիկ (թրք. տարհին),  
կիտր (վրաց. կիտրի) և այլն:

Սակայն ոչ բոլոր բառերն առանց կասկածանքի կարող  
են հատկացվել այս կամ այն լեզվին: Բառերի շուրջ  $\frac{1}{4}$  մասը  
անձանոթ է: Դրանք կամ բոլորովին չկան արդի բառարան-  
ներում, կամ հանդիպում են այլ ձևերով, մեկնվում տարբեր  
իմաստներով: Այդ անձանոթ բառերի մի մասը, անշուշտ, ա-  
ղավաղումների արդյունք է, իսկ մյուս մասը մատենագրու-  
թյան մեջ չի հանդիպում: Վերջիններս գործածական են եղել  
միայն խոսակցական լեզվում, նրանցից շատերն էլ, հավա-  
նաբար, գրականության մեջ հայտնի բառերի բարբառային  
ձևերն են:

Աղավաղված բառերը հաճախ վերականգնվում են առանց  
գծվարություն, մի քանի ձեռագրերի բաղդատման միջոցով:  
Այսպես. № 534 ձեռագրում կարդում ենք՝ «Կղբի. ձու»: Թվում  
է, թե կղբի բառը որևէ օտար լեզվից եկող անձանոթ բառ է,  
որ հայերեն թարգմանաբար նշանակում է ձու: Մինչդեռ №  
2381 ձեռագրի համապատասխան տեղում կղբի բառի փոխա-  
րեն կա կոստաբոն (լատ. castoreum) բառը, որը ճիշտ կեր-  
պով թարգմանված է հայերեն՝ «կղբի ձու»: Ուրեմն, № 534-ն  
այբբենական խմբագրության մյուս գրչագրերում բաց է թող-  
նրված կոստաբոն գլխաբառը և նրա «կղբի ձու» մեկնության  
բառերից առաջինը ճանաչվել է որպես գլխաբառ, իսկ երկ-  
րորդը՝ նրա բացատրություն: Կամ՝ յերկայն գրեալնդ բառը  
բացատրվում է որպես արանկի տակ, սակայն արանկի բառը,  
դա սղանկի բառի աղավաղումն է (Ղ-ի վերտողյա մասի ա-  
ռաջին գծիկը միացել է Ս-ի հետ, ստացվել է Ա, իսկ Ղ-ի մնա-  
ցած մասը կարգացվել է Լ և այդ, իսկապես, Լ է): Այդ պատ-  
ճառով էլ արաբերեն زر اوونդ գրեալնդ բառը սխալ է թարգ-  
մանվել հայերեն, փոխանակ՝ որդնատակ կամ սղանգ<sup>206</sup>:

Սակայն գրչագրերի բաղդատման ճանապարհով, այնու-  
ամենայնիվ, չի կարելի պարզել բոլոր աղճատումներն ու ա-  
ղավաղումները, անստույգ բառերի ծագումն ու իմաստը: Օրի-  
նակ՝ «Շիրմաշուշ, հարկուտի»: Երկու բառն էլ անմեկնելի են  
մնում:

206 Տե՛ս Ղ. Ալիշան. Հայբուսակ, Վենետիկ, 1895, էջ 14:

Օտար բժշկական տերմիններն ու բառերը հայերեն տա-  
ռադարձվելուց, հաճախ զանազան բարբառային արտասան-  
վածքներին հարմարվելուց հետո կամ բոլորովին անհասկա-  
նալի են դարձել, կամ պահպանվել են զանազան ձևերով: Այս-  
պես, «ռամկորեն» գրված բժշկական երկերում, նաև բառա-  
բաններում, Բունթոյլն (ցմախ) բառը հանդիպում է Բրնտս,  
Բունտոշ, Բունտուս, Կունտուգ, Բունդաս և այլ ձևերով:

Հանդիպում են նաև բառերի սխալ մեկնություններ ու  
թարգմանություններ, օրինակ՝ «Սկոտղոն. սպանդի հունդ»,  
այնինչ հունարեն *σκότος* բառը նշանակում է սխտո՞ր, փրա-  
փոն ( *σπάσιον* ) բառը մեկնվում է՝ խոտակ, ծոբրին, մինչ-  
դեռ ծոբրին-ը բոլորովին այլ բառ է և չի համապատասխանում  
գլխաբառին, այդպես էլ չի կարելի աղամանդ-ը համարժեք  
համարել մախնառիս բառին և այլն: Շատ բառերի թարգմա-  
նությունը տրվում է ոչ թե հայերեն, այլ արաբերեն բառերի  
օգնությամբ, ինչպես՝ «Ասփյոնոս-դարշիշան», «Ասփոշին-  
բրուկ», «Ալշաբուս-ֆապաբ», «Բասատ-մանուն»: Որպես  
մեկնող բառեր են հանդես գալիս արաբերեն զանուֆիլ, սրն-  
պուկ, ֆստուդ, փոն (հուն. *σπίον*, լատ. *pirum*), փենեա,  
բուշա, խագրա (խաղիրան), շոֆրան և այլ բառեր:

Մի քանի գլխաբառեր ուղղակի շեն մեկնվում, այլ նրանց  
վերաբերյալ տրվում են նկարագրական ծանոթություններ,  
որոնք շեն բացահայտում բառի իմաստը, անհայտ է մնում,  
թե դրանք, այնուամենայնիվ, ինչ բույսեր են: Օրինակ՝ «Ադ-  
փորայտիպ — ինքն ի ծով է ելան է», «Բանքիջի — լեռնացի  
պտուղ» և այլն: Բառացանկի մի շարք բառեր կան նաև «Բառք  
Գաղիանոսի» բառարանում, ինչպես՝ աթխար, կերկարհայ,  
բարոնաճ, բահման, լիսենասափիր, խարբակ, խափիտ (խա-  
բոս), կնբիլ (կամիէլ), կիտր, մազբիօն, մարվ, ջադա (ջարդա),  
սարխոս (սարասխ), սկորոդոն, փակա (փուկահա), քաշմ:  
Երկու բառարաններում այդ բառերը երբեմն տարբեր ձևով են  
մեկնվում, օրինակ՝ «Բառք Գաղիանոսի»-ն բարոնաճ բառը  
մեկնում է՝ շփնածաղիկ, լիսենասափիր-ը՝ շիկատակ, սնգոյ-  
րատակ, կարդամանայ-ը՝ ասորեկ, կոտիմ, մարվ-ը՝ հալտր-  
կի հունդ և այլն: Այդ նույն բառերը «Թարգմանություն դե-

ղոց»-ում համապատասխանաբար մեկնվում են որպես՝ իրի-  
ցուկ, հացի սերմն, աևուրի տակ, սև ամբրա: Բառացանկն  
բառ երևույթին, ուրիշ այլ միջնադարյան ղեղաբանական-  
բժշկական աշխատությունների ու բառարանների հետ, օգ-  
տագործվել է Ամիրզոլլաթի կողմից. նրա «Անգիտաց ան-  
պէտ»-ում հանդիպում են «Թարգմանություն դեղոց»-ի աֆիոն,  
բարունաճ, բահման, լաբան, խաթմի, խաս, խարտալ, կոտիմ,  
նախնոյ (նանխուհ), շանթարայ (շանդալայ), վաշ և այլ բա-  
ռեր: Շատ բառեր էլ մտել են Ղ. Ալիշանի «Հայբուսակի» մեջ:  
«Թարգմանություն դեղոց» տիպի բառարանների հետա-  
դոտությունը նոր փաստեր կարող է տալ ինչպես միջնադար-  
յան, ղեղաբանության ու կենսաբանության, այնպես էլ լեզվի  
պատմության վերաբերյալ:

#### ԲԺՇԿԱԿԱՆ ԵՌԱԼԵԶՎՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Տասնհինգերորդ դարում կազմված հայերեն-արաբերեն-  
լատիներեն բժշկական-ղեղաբանական բառարանը մեր միջ-  
նադարյան բառարանագրության ուշագրավ հուշարձաններից  
մեկն է: Այդ բառարանը արժեքավոր է, առաջին հերթին,  
նրանով, որ այն հայ բժշկական մտքի զարգացման նոր առաջ-  
ընթացն է վկայում: Հայտնի է, որ արաբական բժշկության  
ոգին ու ավանդույթները Հայաստանում պահպանվում էին  
ընդհուպ մինչև XVII դարը: Սակայն դա չի նշանակում, որ  
այդքան երկար ժամանակի ընթացքում հայ բժշկությունը նոր  
քայլեր չի կատարում: Ընդհակառակը, նա աստիճանաբար  
լայնացնում է իր հորիզոնները, հայ բժիշկները սկսում են ծա-  
նոթանալ նաև եվրոպական բժշկության հետ:

Կիրիկյան հայկական պետությունը եվրոպայի հետ կապ-  
ված էր ոչ միայն տնտեսական ու բաղաքական, այլև կուլ-  
տուրական համակողմանի կապերով: Պահպանելով զարգաց-  
ման իր նախկին ոգին, հայ բժշկությունը միաժամանակ հա-  
ղորդակից է դառնում արևմտյան բժշկությանը: Դրա լավա-  
գույն ապացույցներից մեկն է միջնադարյան հայերեն-արա-  
բերեն-լատիներեն բժշկական բառարանը:

Բառարանը պահպանվել է Մատենադարանի № 7100 և Վիեննայի № 310 ձեռագրերում<sup>207</sup>: Վերջինս հայերեն երկրորդ հնագույն բժշկարանն է՝ Վենետիկում պահվող ամենահին հայերեն բժշկարանից հետո: Վիեննայի բժշկարանը հայտնի է Հովհաննես հեքիմի անունով, գրվել է նրա պատվերով, մի անհայտ վայրում, 1438 թ. Աբրահամ արեղա գրչի ձեռքով: 2. Տաշյանի ձեռագրացուցակից հայտնի է դառնում, որ Վիեննայի հիշյալ բժշկարանը Վենետիկի բժշկարանի համառոտ, ազատ խմբագրությունն է, կազմողի՝ Հովհաննես հեքիմի կողմից նոր նյութերի ավելացումով: «Ձեռագիրս, — գրում է Հ. Տաշյանը, — Վենետիկ 1294-ին գրված ամենահին բժշկարանին ազատ խմբագրությունն է, զոր կազմողն շատ փոփոխություններ ընելով, համառոտելով, զեղչելով, հավելելով, նյութոց կարգը շրջելով, իբրև նոր գրություն երևան հանած է: Ամենեն ավելի հետաքրքրական են եվրոպական լեզուներն փոխառյալ մասերը»<sup>208</sup>:

Ղ. Հովնանյանը հանդամանորեն անդրադառնալով հայերեն հնագույն բժշկարաններին, նրանք իրար հետ բաղդատելով, ցույց է տալիս, որ մեր հիշատակած երկու հին բժշկարանները մեծ ընդհանրություններ ունեն և Վիեննայի բժշկարանում կատարված ավելացումները վերցված են եվրոպական բժշկական աղբյուրներից<sup>209</sup>: Նա էլ Տաշյանի նման առավել արժեքավոր ու հետաքրքիր է համարում Վիեննայի բժշկարանում ավելացված այն նյութերը, որոնք վերաբերում են եվրոպական բժշկությունը:

Բառարանը, որ զբաղեցնում է Վիեննայի բժշկարանի 10բ—24բ էջերը, վերնագրված է՝ «Անուանք զեղերոյ. հայերէն, և յարապկերէն, և լազին բառով»<sup>210</sup>: Բաղկացած է հայերեն և հայ բժշկական գրականության մեջ գործածվող 200

<sup>207</sup> Տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 737—740:

<sup>208</sup> Տաշյան, նշվ. աշխ., էջ 737:

<sup>209</sup> Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 141:

<sup>210</sup> *Տպագրված բնագիրը տե՛ս* Zeitschrift für armenische Philologie, B. 2, H. 2, Marburg, 1903, էջ 120—136:

օտար բառերից, զեղերի անուններից, որոնց դիմաց գրված են համապատասխան արաբերեն ու լատիներեն անվանումները: Ահա մի հատված այդ բառարանից.

Անխտն, արապկերէն՝ անխտն, լազին՝ անխում: Տաք և շոր .գ. տարած:

Աշխտ, արապկերէն՝ աֆսընթին, լազին՝ աֆսընդիում: Տաք .ա. տարածան, շոր .բ.:

Արխտ, յարապկերէն՝ առխտ, լազին՝ սկինանդում: Տաք ու շոր ի .ա. տարածան:

Ամլէն, յարապկերէն՝ ամլըն, լազին՝ էմպլիսի: Հով ու շոր յ .բ. տարածան:

Անծուր, որ է գունիծատակ, արապկերէն՝ անզրութ, լազին՝ սարկակուլա: Տաք յ .բ. տարածան, շոր ի .ա. տարած:

Ասառն, արապկերէն՝ ասարուն, լազին՝ ասարում: Տաք և շոր յ .բ. տարած:

Աղէշբանկ, արապկերէն՝ պնջ, լազին՝ ճոյսգիամի: Հով և շոր յ .բ. տարած:

Աշակ, յարապկերէն՝ աշախ, լազին՝ արմօնիակում: Տաք .գ. տար., շոր՝ .բ.:

Աղբւաց առուն, արապ. տրամըլթիսուայն, լազին՝ սանկիս տրայգօնիս: Հով է և շոր յ .բ. տարածան:

Աֆրիմոն, յարապ. աֆթիմուն, լազին՝ երիդիմում: Հով և շոր յերկու տարածան:

Արչասքն, յարապ. դայն, լազին՝ աղէճի: Տաք և շոր յ .գ. տարած:

Ախլիմիա, արապկ. խլիմիա, լազ. գադիմիա: Արծաթի ախլիմիան մուճթատի է և շոր ի մէկ տարած:

Բարակ, յարապկ. պայուրախ, լազին՝ պայուրագ: Տաք .բ. տար. շոր .գ. տարածան:

Բաղկեն խէժ. յարապ. սամղ, լազին՝ կօմիտարա: Տաք յ .գ. տարածան:

Բուռ, յարապ. ճպսին, լազին՝ ճիպսում: Հով է և շոր յ .գ. տարած:

Գինձ շոր, յարապ. բուղպարա իպպայ, լազ. կալիանդում: Հով. .բ. տարած, շոր յ .գ. տարածան:



Գարծիլ՝ որ է խաւարծիլ, յարապ. ուրպաս, լաղինն՝ ուրպէս:  
Հով և շոր. .գ. տարաձան<sup>211</sup>:

Քառարանը, ինչպես երևում է վերևում բերված հատվածից, միայն բառեր չի թարգմանում, ինչպես «Քառք Գաղիանոսի» և այլ բառարաններ, այլև տեղեկություններ է տալիս զեղերի մասին և այդուհանդերձ ավելի մոտ է կանգնած իսկական մասնագիտական բառարաններին: Նրա մեջ բացի բառերի թարգմանությունից, տրվում են երկու կարգի տեղեկություններ՝ ա) նշվում է տվյալ զեղի ներգործության ուժի աստիճանը՝ տարանա (արար. աստիճան), բ) ծանոթություն զեղի ֆիզիկական, նյութային վիճակի մասին՝ տաֆ, հով, գէջ, շոր և մուքրատիլ (արար. աստիճան, անայլայլի):

Այս բառարանի մանրամասն բանասիրական ու լեզվաբանական քննությունը կատարել է գերմանացի հայագետ Յ. Կարստը: 1930 թ. «Zeitschrift für armenische Philologie» հանդեսում լույս տեսավ նրա «Das trilingue Medizinalglossar aus Ms. 310 der Wiener Mechitharisten—Bibliothek» ուսումնասիրությունը, որը կազմված է շափազանց արժեքավոր ներածականից, բառարանի բնագրից՝ ծանոթագրություններով հանդերձ և բառերի նույնականությունների աղյուսակից (Identifikationstabelle): Այդ փոքր աշխատության մեջ միանգամայն ճիշտ ու սպառիչ վերլուծության են ենթարկված բառարանի հետ կապված բոլոր էական հարցերը: Ուստի մենք կբավարարվենք, հիմնականում, Կարստի աշխատության ներածականի կարևոր մասերի համառոտ վերարտագրությամբ:

Ներածությունն սկսվում է բժշկարանի և նրա մեջ զետեղված բառարանի արտաքին նկարագրությամբ, ապա խոսվում է բառարանի աղբյուրների մասին: Հեղինակը նկատում է, որ բառարան կազմողն օգտվել է մի կողմից արևելյան՝ արաբերեն-պարսկերեն, մյուս կողմից՝ արևմտյան՝ լատինա-ռոմանական աղբյուրներից<sup>212</sup>: Ամենից առաջ բառարանը իր ար-

տաքին կառուցվածքով ու պլանով ակներախ կերպով նման է Աբու Մանսուր Մուավաֆակի այբբենական կարգով գրված բժշկական աշխատությանը: Վերջինս Կարստի կողմից ընդունվում է որպես բառարանի հիմնական աղբյուր: Սակայն, չբավարարվելով դրանով, նա նմանություններ և համապատասխանություններ է տեսնում նաև բառարանի և իրն Բայտարի աշխատության միջև, իսկ արևմտյան-ռոմանական աղբյուրների մասին կոնկրետ բան չի ասում, այլ հայ բանասերներին (Հովհանյան, Հունանյան) համամիտ լինելով, հաստատում է, որ բառարանը կապ ունի նաև արևմտյան աղբյուրների հետ:

Այնուհետև Կարստը իրավացիորեն դառնում է, որ եթե Վիննայի բժշկարանը Վենետիկի համանուն աշխատության ազատ խմբագրությունն է, ապա նրա հեղինակի՝ Հովհաննես հեքիմի, աշխատանքը կայանում է նախ հին բժշկարանի խմբագրման, ապա նոր նյութերի ավելացման մեջ: Կարևորը, ինչպես ընդունում է նաև Տաշյանը, Կարստը համարում է եվրոպական բժշկությունից եկող ավելացումները և եռալեզվյան բժշկական բառարանը, որը չկա Վենետիկյան նախորինակ բժշկարանի մեջ: Հետևաբար բառարանը կազմել է ինքը՝ Հովհաննես հեքիմը: Այդտեղից էլ ենթադրվում է, թե բառարանն ավելի շուտ է կազմվել, քան բժշկարանի ընդօրինակման թվականը՝ 1438 թ., որովհետև այդպիսի բժշկարան ըստեղծելու և բառարան կազմելու համար կպահանջվեր տարիների աշխատանք: Ուրեմն բառարանը գրված պիտի լինի ոչ թե 1438 թվականին, այլ ավելի վաղ, XV դարի սկզբներին և ձեռագրման այս համեմատաբար ուշ ժամանակին էլ համապատասխանում է բառարանի լեզվական կերպարանքը, որն իր ձևով և արտահայտչական եղանակով (Ausdrucksweise) արտացոլում է միջին հայերենի ուշ շրջանը<sup>213</sup>:

Դրանից հետո Կարստն անցնում է բառարանի լեզվական քննությանը, ցույց է տալիս, որ եթե բառարան կազմողը արարական-պարսկական աղբյուրներից բավականին հմտո-

<sup>211</sup> Zeitschrift für armenische Philologie, B. 2, H. 2, Marburg, 6103, S. 120—121.

<sup>212</sup> Այդ միտքն արտահայտված է նաև Ղ. Հովհանյանի՝ հիշատակված աշխատության մեջ, 206

<sup>213</sup> J. Karst, նշվ. աշխ., էջ 115:

բեն է օգտվել, ճիշտ թարգմանել ու տառադարձել բառերը, ապա՝ այդ շի կարելի ասել եվրոպական աղբյուրների վերաբերյալ. բառերի մի շարք անճշտություններ ու շփոթումներ վկայում են, որ բառարանի հեղինակը լավ չի իմացել կամ, նույնիսկ, բոլորովին չի տիրապետել լատիներենին, հակառակ Հովնանյանի այն կարծիքին, թե բժշկարանի խմբագիրը կամ հավաքողը, որը բժիշկ պիտի լիներ՝ ծանոթ է եվրոպական լեզուներին<sup>214</sup>:

Վերջապես, Կարստը կանգ է առնում արաբերեն ու լատիներեն բառերի հայերեն տառադարձությունների վրա, նշելով, որ արաբերեն տառադարձումները համապատասխանում են իր «Historische Grammatik des Kilikisch-Armenischen» աշխատության մեջ նշված արաբ-հայերեն տառադարձական հիմնական օրենքներին և բերում է միայն այդ բառարանին առանձնահատուկ տառադարձական դեպքերը:

Բառարանը կապ ունի հայերեն մյուս հին բժշկական բառարանների հետ, նրա՝ անխոն, աքրխօր, խարբախ, կիպէ-ոխ, հնդպէ, մամիրան, մուրտ, ռան, պապուեից, սատէն, քամաֆիդաւ և այլ բառեր կան «Բառք Գաղիանոսի» և այլ բառարաններում, հանդիպում են նաև Ամիրզովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ում:

Բառարանը արժեքավոր հուշարձան է ոչ միայն հայ, այլև եվրոպական ու արաբական բժշկության պատմության և բնագանրապես մշակույթի տեսակետից:

## Ը. ԶԱՆԱԶԱՆ ԲԱՌԱՅԱՆԿԵՐ

### ԱՅՐՈՒՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Մինչնաղարջան դասագրքերում հաճախ են հանդիպում այբուբենի կարգով կառուցված փոքր զրվածքներ, որոնց մեջ բերվում են առանձին հեղինակների ասույթներ, խրատական խոսքեր, քառյակներ և այլն: Դրանք ուսումնական-վարժական նպատակներ ունեն, օգտագործվում են զլխավորապես ցածր խմբերում սովորող աշակերտների վարժեցման համար:

<sup>214</sup> Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 141:

Այդպիսի վարժական նյութեր ստեղծվում էին դասավանդվող տարբեր առարկաների վերաբերյալ: Հատկապես հետաքրքիր են բանարվեստին և համարողական արվեստին նվիրված այբուբեն-բառարանները: Դրանք յուրօրինակ այբուբեն-բառացանկեր են, ավելի ճիշտ՝ այբուբեն-բանացանկեր:

Բանարվեստին ծառայող այբուբեն-բառարանները աշակերտների հիշողության մեջ ամրացնում էին այբուբենը, բովանդակալից ասույթներով ու խրատական խոսքերով հարստացնում նրանց գիտելիքները, նոր բառեր, դարձվածներ սովորեցնում և այլն: Համարողական արվեստի բանացանկերը աշակերտների հիշողության մեջ ամուր տպավորում էին այբուբենի տառերի թվային արժեքները, վարժեցնում էին թվաբանական գործողություններն ու հաշվումները ճիշտ և արագ կատարելու:

Այբուբեն-բառարաններ շատ կան մեր ձեռագրերում: Մատենադարանի № 7117 ձեռագրում, իրար առընթեր զետեղված են ութ տարբեր այբուբեն-բանացանկեր.

1. Այլ ինչ բան ըստ այբուբենից իմաստիցս.
2. Այլ ինչ իմաստք.
3. Այլ նիւթք իմաստութեան այբուբենիս ըստ արփիցն քաղմազանեալ իմաստ.
4. Այլ նիւթք իմաստութեան յանեղ բանն որ ի հարէ.
5. Այլ նիւթք իմաստութեան տառիս.
6. Այլ ինչ իմաստ քերթաղական բանից.
7. Այլ նիւթք իմաստասիրական տառիցս.
8. Այլ ինչ իմաստ(տ)ք տառիս<sup>215</sup>.

Այս նյութերից 7-ը իրար շատ նման են, վերաբերում են խոսքի արվեստին, իսկ մեկը, միայն երկրորդը՝ «Այլ ինչ իմաստք», նվիրված է համարողական արվեստին: Խոսքի արվեստի այբուբեն-բառարանները բնույթով ու բովանդակությամբ նման են «Բառք գովասականք» կոչվող բառարաններին: Նրանց մեջ այբուբենի յուրաքանչյուր տառով բերվում է միայն մեկ դարձված կամ առանձնահատուկ արտահայտու-

<sup>215</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 35ա—42ա:

թյուն: Ահա, որպես օրինակ, մի հատված «Այլ նիւթք իմաստութեան տառիս» բանացանկից.

Ականակիտ վտակ  
Բղխումն յորդառատ  
Գուլթ ողորմութեան  
Դոցին նմանազաց  
Երկաքանչիւր տեսիլ  
Զբարին լուսազարդ փառաց  
էրջանիկ դասուցն  
Ընդ նորափթիթ զարդուցն  
Թագակապեալ պսակացն  
Ժամանակաւ գոյացաւ... և այլն<sup>216</sup>:

Այսպես են նաև բանարվեստի մյուս բոլոր բանացանկերը, բերված քաղվածքը լիովին բավական է նրանց մասին պատկերացում ունենալու համար:

Այժմ անցնենք համարողական արվեստի բանացանկին: Նախորդ ցանկերի դարձվածների այբբենական դասավորությունն այստեղ չի կիրառված: Բերվող դարձվածները դասավորության հետաքրքիր սկզբունք ունեն, հենց այդ սկզբունքի մեջ է բանացանկի էությունը:

Նման ցանկերում խոսքի դարձվածներն ու հատվածները, ըստ իրենց սկզբի բառի սկզբնատառի, դասավորված են հայերեն այբուբենի տառերի թվային արժեքների այնպիսի հաջորդականությամբ, երբ յուրաքանչյուր տառ (թիվ) հանդիսանում է իր նախորդի տասնապատիկը: Այսինքն՝ բանացանկի նպատակն է աշակերտներին թիվը, սկսած միավորից, հաջորդաբար տասն անգամ մեծացնելու գործողությունը սովորեցնել: Դրան համապատասխան բանացանկի մեջ մտնող դարձվածներն ու նախադասությունները դասավորված են հետևյալ կարգով. Ա-ն (նրանով սկսվող բառակապակցությունը՝ անհաս խորհրդով), ապա նրա տասնապատիկը՝ Ժ-ն (ժողովեալ ճոխութեամբ), վերջինիս տասնապատիկը՝ Շ-ն (ճոխութեամբ թեալարէին), հետո Ռ-ն (աբբբի գերագունի-

ցըն): Այնուհետև գալիս է Բ (2), Ի (20), Մ (200) և այդպես շարունակ:

Ստորև բերում ենք այդ բանացանկն ամբողջությամբ, յուրաքանչյուր բառակապակցության գրությունը սկսելով նոր տողից, ձախ կողմից զննելով տվյալ բառակապակցության առաջին բառի սկզբնատառի թվային նշանը.

1. Անհաս խորհրդով:
10. Ժողովեալ:
100. Ճոխութեամբ թեալարէին:
1000. Ռաբբի գերագունիցն:
2. Բազմազան պարզեւս:
20. Ի սկզբանէ շնորհեալ:
200. Միառորեալ ի լոյս:
2000. Սեռահրաշ բանականացն:
3. Գերապարատ պերճիցն:
30. Լինել խորհրդակիցն:
300. Յանեղրալից ուրախութիւնս:
3000. Վերնահաս գնդիցն:
4. Դասք գերագունիցն:
40. Խնդութեամբ լցեալ:
400. Ներնական գոյիցն:
4000. Տող ոսկեմանեակ կերպիցն:
5. Երգեցիկս հրճմունք:
50. Ծագումն հրասեռից արփոյն:
500. Շաղ երագաղոյզ ծաւալ:
5000. Բաբունեաց գեղեցկութիւն:
6. Զարդափայլ առագաստ:
60. Կամարածել լոյս:
600. Որ է լոյս ձաղկածել արփիցն:
6000. Յնծան բերկրական ձայնիւ:
7. Էլթնաշախ արփիցն:
70. Հասարակ գեղեցիկ:
700. Զորեք արփեան ճառագայթ:
7000. Իխսական արփիցն:
8. Ընդ անմարմնոցն բազմութիւնս:

<sup>216</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 39ա:

80. Չայն երագահաս:

800. Պարագարդ հրաշիւք:

8000. Փառս երգեն դասք անմահիցն:

9. Թընդամբ և պարեօք երգեն:

90. Ղամբարեալ դասք վերնոցն:

900. Ջահ վառեալ երկնափայլ արփիցն:

9000. Քառակերպեան բազմութեանցն փառս վեր առաքեն պարառիք թագաւորին անմահին<sup>217</sup>:

Այս և նման բառացանկերը նույնպես բավականաչափ հետաքրքիր նյութեր կարող են մատուցել միջնադարյան դըպրոցի ու դասավանդման դանազան հարցերի ուսումնասիրութեանը:

Յ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

## ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՌԱԳԻՐ ԵՎ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Չեռագիր բառարանների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի արդի գիտության համար:

Հին բառարանները ընդհանրապես պատմա-մշակութային կարևորություն ունեցող հուշարձաններ են, որոշակի արժեք ունեն հայոց լեզվի ու լեզվաբանության պատմության, հայ դպրոցի, ուսումնական գրականության, բժշկության, փիլիսոփայության, ուրիշ ժողովուրդների հետ մշակութային կապերի պատմության և բազմաթիվ այլ հարցերի ուսումնասիրության տեսակետից:

Այդ բոլոր հարցերին մենք չենք անդրադառնա, այլ ուշադրություն կդարձնենք հին բառարանների՝ արդի լեզվաբանության համար ունեցած գիտական նշանակության վրա, այստեղ էլ, ձեռագիր բառարանների հետ կապված լեզվաբանական մի քանի կարևոր հարցերի զանցառումով, կկենտրոնանանք միայն բառարանագրական հարցերի շուրջը:

Պատմական դարգացման փոքր ժամանակահատվածում լեզվի քերականական կառուցվածքի փոփոխությունը կարող է չզգացվել, մինչդեռ ամենակարճ ժամանակաշրջանը, բացառապես մի տասնամյակն էլ բավական է ակնառու փոփոխություններ նկատելու լեզվի բառային կազմի մեջ, փոփոխություններ, որոնք տեղի են ունենում երկու ուղղությամբ. նախ լեզվի մեջ նոր բառերի մուտքով և հնրերի դուրս գալով,

<sup>217</sup> Մատենադարան, ձեռ. № 7117, էջ 36բ—37ա

ապա՝ բառիմաստի փոփոխության ճանապարհով: Եթե, բացարձակ իմաստով, հնարավոր չէ պատկերացնել լեզվի մի որևէ շրջանի քերականական կառուցվածքը լրիվ նկարագրող ու նորմավորող քերականություն, ապա առավել ևս հնարավոր չէ ստեղծել լեզվի տվյալ շրջանի ամբողջ բառային կազմը լրիվ ընդգրկող բառարան: Նույնիսկ ժամանակակից ամենաընդարձակ ու կատարյալ բառարանն էլ իր լույս ընծայման օրից պակասություններ ունի և մի տասնամյակի ընթացքում արդեն որոշակիորեն զգացվում է նրա պակասավոր լինելը և ավելի նորոգ բառարան ունենալու կարիքը:

Բառային կազմի մեջ տեղի ունեցող շարժումն ավելի պատիվ է, ավելի զգալի, քան քերականական կառուցվածքինը: Հետևաբար լեզվի պատմական զարգացման ընթացքը, նրա առանձին աստիճանները, առավել ընկալելի են բառային կազմի մեջ:

Լեզվի հին շրջանների ուսումնասիրության համար, գրավոր հուշարձանների շարքում, առանձնահատուկ տեղ ունեն բառարանները՝ լեզվաբանական այն հին աշխատությունները, որոնք գործ ունեն լեզվի հենց ամենազգայուն, շարժուն ու հարափոփոխ մասի՝ բառային կազմի հետ:

Արդեն ասվել է, որ հայ միջնագարյան բառարանները շափազանց փոքր են ընդգրկումներով, իրենց մեջ չեն առնում ինչպես տարբեր գիտական բնագավառների ամբողջ մասնագիտական բառապաշարը, այնպես էլ մեր լեզվի բոլոր բառերը, չեն արտացոլում հայերենի միջնագարյան շրջանի բառային կազմի ամբողջական պատկերը: Սակայն մեր լեզվի բառերի այն շնչին մասը, որ պարունակվում է միջնագարյան բառարաններում, շատ արժեքավոր ու հետաքրքիր նյութեր է տալիս իմաստաբանության, ծագումնաբանության, օտար տառադարձումների, պատճենումների, բարբառների և բառային կազմին վերաբերող այլ հարցերի ուսումնասիրությանը: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել հին բառարաններից նըշված հարցերի՝ հատկապես բառիմաստի փոփոխության վերաբերյալ:

Բացի լեզվաբանությունից հայերեն միջնագարյան բա-

ռարանները արժեքավոր են նաև բանասիրության համար: Նրանք օգնում են հասկանալու հին բնագրերի բովանդակությունը, բացատրում են բնիկ և օտար հազվագյուտ բառերի, ինչպես նաև ներկայում գոյություն ունեցող բառերի հին, անհայտ այլաձևերի իմաստները, հնարավորություն են տալիս վերականգնելու արդի բառարանները մտած անստույգ, ազավազված բառերի սկզբնական ձևերը, ուղղելու զրչագրական վրիպակներով տպագիր բառարանների մեջ զրանցված բառերը և այլն:

Իհարկե, հին բնագրերում հանդիպող բոլոր անծանոթ ու անստույգ բառերը չկան հին բառարաններում, բայց այնուամենայնիվ, շատ բառեր, իրոք, կարելի է մեկնել հին բառարանների օգնությամբ: Այդ մասին Հ. Աճառյանն իր «Հայերեն նոր բառեր» աշխատության մեջ նշում է. «Այս բառերը մեկնելու կրնան ձեռնարկել անոնք՝ որոնք ձեռքի տակ ունին հին ձեռագիր քերթողական բառարաններ: Ասոնցմե զուրս մեզի համար առայժմ ուրիշ միջոց չկա»<sup>1</sup>: Այդ արժեքավոր աշխատության մեջ մեծանուն հայագետը բերում է հայ հին մատենագրության զանազան աշխատություններից հավաքած բազմաթիվ նոր բառեր, որոնք գործածված են միայն տվյալ երկում, որոշ դեպքերում հանդիպում են նաև մեկ այլ հեղինակի մոտ: Այդ բառերը չեն մտել տպագիր բառարանների մեջ, նրանցից շատերի իմաստն անհայտ ու անմեկնելի է: Որքան հետաքրքիր է, որ այդ բառերից՝ հրոս, խշբել, նամեսական, խարբալիլ, մատարակայ, գանգապահ, սրահանգ, բաստ, շաբանդակ, բեսմոփոք, միգարե(ա)լ, փաբայ, նիատան, ազադոտամբով, բմպահակոտ, ջաշանգ, գրահանգ, մաղկատել, խեղական, շաբմել, դունել, տանիկ, վիժան, գեզգեղ, ապախտ, բաբշուկ և այլ բառեր կան հին բառարաններում: Այդ նոր բառերից շատերի իմաստը ճշտությամբ չի կարելի բացատրել, երբեմն էլ անմեկնելի է: Հ. Աճառյանը երբեմն, մոտավորապես, ենթադրում է, թե ինչ են նշանակում նրանք: Մինչդեռ

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հտ. Թ, Վենետիկ, 1922, էջ 172:

բառարաններում գտնում ենք նաև այդ բառերից մի քանիսի մեկնությունները: Այսպես, Ոսկերեքանի՝ Մատթէի մեկնության մեջ Աճառյանը գտել է գրեհանգ նոր բառը, որի մասին նա գրում է. «Նոր Հայկ. և Ջախջախյան շունին այս բառը գիտեն միայն Հին Հայկ. և Առձ. բառարանները: Առաջինը կը գրե գրահանգ կամ գրեհանգ և կը մեկնե «խեռ, հեստ, անհաւան»<sup>2</sup>. երկրորդը կը դնե միայն գրահանգ լինել և կը մեկնե «ետեւէ ըլլալ (ջանալ)», որ կը համարիմ ուղիղ մեկնություն»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, այդ բառը տարբեր ձևով է մեկնւրվում բառարաններում, հայտնի չէ, թե մեկնություններից որն է ճիշտ: Այդ պարզաբանվում է ձեռագիր բառարանների օգնությամբ. «Բառք Քերթողականը»-ում կա գրահանգ բառը (գրչագրերում նաև՝ գրահանք, գրհանք, գրրհանկ և այլ ձևերով), բոլոր ձևագրերում՝ «խեռ կամ հեստ կամ անհաւան» մեկնությամբ: Ուրեմն գրահանգ բառի ճիշտ իմաստը հայտնի դարձավ. տպագիր բառարաններից առաջինն է ուղիղ մեկնում այդ բառը: Նույն աշխատության մեջ հեղինակը քեսմոփոս նորագյուտ բառի (էջ 184) վկայությունը հղում է սփողել բառին (էջ 206) և ցույց տալիս, որ բնագրում՝ քեսմայ փառոնացն, քեսմոյփոռացն քեսմայ փառեացն աղավաղված ձևերով առկա բառը հունարեն «παρωρεον» «տանար» բառն է և բնագրում այն պետք է ուղղել քեսմոփոս ձևով: Այդ բառը մեկ անգամ գործածված է նաև Սեկունդոսի մոտ՝ քեսմոփոռոն ձևով: Այս վերջին ձևով բառը, իր մեկնությամբ, կա դարձյալ «Բառք քերթողականը» և «Բառք յունարէն» բառարաններում՝ «Քեսմոփոռոն, տանար»:

Այսպիսի օրինակներ էլի կարելի է բերել:

Եթե Աճառյանը հավաքած շիններ այդ նոր բառերը, ապա զրանց հին բառարաններում հանդիպելիս, մենք պիտի կասկածենք նրանց ճշտությանը, համարենք պատահական և տգիտ գրիչների կողմից ավելացված բառեր: Բայց այստեղ նորից հաստատվում է այն միտքը, թե հին բառարանների այն բառերը, որոնք վկայություններ չունեն և չկան տպագիր բա-

<sup>2</sup> Չ. Անառյան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Բ. Վենետիկ, 1922, էջ 258:

ռարաններում, եղել են մատենագրական բառեր, գործածվել այսօր մեզ դեռևս անհայտ երկերում: Հուսանք, որ այդ բանը կհաստատվի նաև ապագա նորահայտ հուշարձաններով, որոնց մեջ, անշուշտ, կգտնվեն այնպիսի բառեր, որոնք առայժմ հայտնի են միայն հին բառարաններով:

Հին բառարանների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշ ուղղումներ և լրացումներ կատարելու տպագիր բառարանների մեջ:

Առաջաբանում նշվել է, որ հին բառարանները օգտագործվել են մի շարք հայ բառարանագիրների կողմից՝ նրանց բառարանների համար աղբյուրներ են հանդիսացել: Սակայն հայ բառարանագիրները տարբեր վերաբերմունք են ունեցել դեպի ձեռագիր բառարանները և տարբեր շափերով օգտվել նրանցից:

Մխիթար Սեբաստացին լավ ծանոթ էր հին բառարաններին, բայց այդ բառարանները նա որպես աղբյուրներ չընդունեց իր բառարանների համար, որովհետև նրանք աղքատ են բառերով, գրված «միաբառ մեկնութեամբ», մեկնությունները խրթին ու հաճախ անհասկանալի են և վերջապես, հին բառարանների վրա նա շհիմնվեց «վասն անհամար սխալանաց սպրդելոց յանհմուտ գրչաց, կամ ի տպագրութենէ»<sup>3</sup>: Վերջին՝ «տպագրութենէ», բառի տակ նա նկատի ունի, անշուշտ, Ե. Մեղրեցու բառարանը: Սեբաստացու բառարանում հանդիպում են հին բառարանների մի շարք բառեր, բայց զրանք քաղված են մատենագրությունից, մեկնված նրա կողմից և կապ չունեն հին բառարանների հետ:

Ղևոնդ Ալիշանը, ընդհակառակը, իր «Հայբուսակ»-ի համար լայնորեն օգտվել է Ամիրզովլաթի «Անգիտաց անպէտ», «Բառք Գաղիանոսի», «Թարգմանութիւն զեղոց» և այլ միջնադարյան բժշկական բառարաններից: Հին բառագրեր օգտագործել են նաև Նոր հայկազյան բառարանի հեղինակները: Նրանք, խստագույն ընտրությամբ, ձեռագիր բառարաններից

<sup>3</sup> Մխիթար Արքա, Բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա, Վենետիկ, 1749, էջ 4:

վերցրել են գլխավորապես այն բառերը, որոնք վկայված են մասենագրությունում, սակայն հին բառարաններում հանդես են գալիս իմաստային այլ նշանակություններ, որպես տարբերակներ ու նրբերանգներ կամ էլ բոլորովին այլ իմաստներով, որպես հոմանուններ: Նոր, անվավեր բառեր հին բառարաններից նշվող հեղինակները վերցրել են բացառիկ դեպքերում, երբ նրանք այդ բառը աղավաղված կամ սխալ գրչագրված լինելու մեջ չեն կասկածել:

Զեռագիր բառարաններից վերցված բառերի կարելի է հանդիպել նաև ֆեռտմալճյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում: Թվարկված բառարանների շարքում չենք հիշատակում Մեղրեցու «Բառգիրք հայոց» բառարանը, որը նույն «Բառք բերթողականք» բառարանի XVII դարի ընդարձակ խմբագրության գրեթե անփոփոխ տպագրությունն է:

Վերջապես հին բառարանների շատ բառեր են մտել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի մեջ: Զեռագիր բառարանների տարբեր գրչագրերի և Արմ. բառարանի բաղդատական հետազոտությունը ցույց տվեց, որ հին բառարաններից շատ բառեր Արմատականի մեջ են մտել գրչագրական վրիպակներով, աղճատված, աղավաղված ձևերով: Այդ բառերի մի մասը ճշգրտելու, սրբագրելու կարիք ունի: Բերենք օրինակներ: Արմ. բառարանում (հտ. Ե, էջ 1260) կա Ռամաս գլխաբառը՝ լուր. 2. գաւառապետ» մեկնություն: Իրականում ինչ էլ այդ Ռամաս բառը, որ իրարից բոլորովին տարբեր ու հեռու երկու իմաստ ունի՝ լուր և գաւառապետ: Այդ պարզելու համար դիմենք «Բառք բերթողականք» բառարանին: Նրա մի քանի գրչագրեր (№ № 4149, 8198, 529 և ուրիշ) Արմատականի հիշյալ բառահոգվածի դիմաց ունեն ուղղակի՝ «Ռամասաղա-գաւառապետ»: Այլ գրչագրեր նույն մեկնությունում՝ գլխաբառն ունեն Ռամասլուր, Ռամասխար, ապա մյուսները՝ գլխաբառի սխալ գրչությունում ունեն Ռամասլուր, Ռամասլուր, Ռամասլար, Ռամասլաւ, Ռամաս, Ռամասհուր ձևերով, վերջապես երկու ձևագրերում աղճատված է գլխաբառը: Նրանցից մեկը (№ 7014) ունի «Ռամաս. հուր, գաւառապետ», իսկ մյուսը (№ 7250)՝ «Ռամաս. լուր կամ գաւառապետ»: Եթե նախորդ ձև-

ագրերը գլխաբառը դնում են վրիպակներով, բայց ամբողջական և հասկանալի է, որ գլխաբառը Ռամասաղաւ պիտի լինի, ապա վերջին երկու ձևագրերում գլխաբառն աղճատվելով անճանաչելի է դարձել, բաժանվել երկու մասի, նրանից անջատվել է դուր, իսկ սխալ գրությունում՝ լուր, հուր մասը և գաւառապետ բառի կողքին դարձել մեկնող բառ գլխաբառի Ռամաս մասի համար: Վերջին (№ 7250) գրչագրից կամ նրա հետ մի մայրօրինակից ընդօրինակված անհայտ ձևագրից է այդ բառն հասել Արմ. բառարան: Պահլավերեն Ռամ (ram) և սալար (sālār) բառերից բարդված Ռամասաղաւ բառի երկու բաղադրիչներն էլ առանձին-առանձին կան Արմ. բառարանում: Ուրեմն Ռամասաղաւ բարդ բառը պետք է բերվեր նրանցից մեկի կամ մյուսի տակ, բայց քանի որ նա գրչագրերում աղճատվել է, դարձել անձանոթ, անմեկնելի բառ, ապա առանձին տեղ է գրավել Արմ. բառարանում: Այժմ, պարզ է, որ այդ բառը մնում է որպես կեղծ, ավելորդ բառ Արմ. բառարանում:

Այդպես է պատմությունը նաև անարգատիպ բառի հետ: Արմ. բառարանում (հտ. Ա, էջ 289) կա՝ «Անարգատ տիպ? կամ անձրե»: Հայտնի չէ, թե ինչ է ուղում ասել: Այո, հայտնի չէ անարգատ բառը և թե ինչու է նա մեկնվում իմաստներով հեռու տիպ և անձրե բառերով: Սակայն «Բառք յունարէն» բառարանը պարզում է եղելությունը. նա Արմատականի հիշյալ բառահոգվածին համապատասխան ունի՝ «Անարգատիպանձր»: Գլխաբառը անարգ և տիպ բառերից է կազմված:

Գեթ մի տառասխալի ուղղումն էլ բավական է կասկածելի բառն ուղղելու համար: Արմ. բառարանն (հտ. Ա, էջ 392) ունի՝ «Աղխ. «մարդ և անասուն»... պետք է ուղղել՝ աղխարհ...»: Արմատականում սխալ է գլխաբառը, նրա մեջ պարզապես պետք է ուղղել միայն մի տառ՝ Շ-ն դարձնել Ղ (այդ տառերը գծագրությունում նման են իրար և ձևագրերում հաճախ են շփոթվում ու սխալ ընթերցվում): Ուղղելուց հետո կունենանք աղխ, որը և նույն մեկնությունում գտնում ենք «Բառք բերթողականք» բառարանում՝ «Աղխ-մարդ և անասուն»:

Արմատականի «Աղխանդումն-խելագարումն» (հտ. Ա, էջ

139) բառահոգվածին համապատասխանում է «Բառք բերթողականք»-ի «Աղանդումն-խելագարումն» բառահոգվածը: Արդյո՞ք Արմատականի «Դաղապար մագր»... ինչ լինելը հայտնի չէ» (հտ. Բ, էջ 388) բառահոգվածը «Բառք բերթողականք»-ի «Դաղապար և մարդացու-սուսեր կամ թուր կամ տապար»-ի կրճատումն ու աղավաղումը չէ:

Սակայն այդ կասկածելի ու սխալ բառերի սպրդումն Արմատական բառարանում իր պատճառներն ունի:

2. Աճառյանն իր անզուգական աշխատությունը կերտել է հայոց լեզվի և ընդհանրապես հայագիտության վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր նյութերի, հայ մատենագրության ու մամուլի օգտագործումով, բացի ձեռագիր բառարաններից: Նա ծանոթ լինելով հին բառարաններին, ցավոք, ժամանակ ու հնարավորություն չունեցավ օգտվելու նրանցից: Այդ բառերն Արմատականի մեջ մտել են անուղղակիորեն, Երեմիա Մեղրեցու բառարանի միջոցով: Վերջինից 2. Աճառյանը իր Արմատական բառարանի մեջ է մտցրել 1158 բառ, որպես նոր, անվավեր բառեր, ցույց տալով նրանց աղբյուրը «ունի միայն բառ. Երեմ.», «գիտե միայն բառ. Երեմ.», «այսպես ունի բառ. Երեմ.» նշումներով, երբեմն էլ, միաժամանակ, հղելով Փեշարմալճյանի և այլ բառարաններին:

Ձեռագիր բառարանների գրչագրերի համեմատական հետազոտությունից պարզվեց, որ Մեղրեցու բառարանից Արմատականին անցած բառերի մի զգալի մասը ակնբախ թերություններ ունի: Ձեռագրերի օգնությամբ հնարավոր է այդ բառերը ազատել գրչագրական վրիպակներից, վերականգնել նրանց սկզբնական ձևերն ու բառիմաստը:

Եվ Արմ. բառարանի այդ բոլոր սպրդումները գալիս են այն բառարանից, որի շատ իրավացի ու խիստ քննադատությունը տվել է ինքը՝ 2. Աճառյանը, իր բառարանի առաջաբանում: Ահա թե ինչպես է նա գնահատում Մեղրեցու բառարանը. «Մանրամասն քննելուց հետո աշխատությունը, տեսա որ մեծագույն մասամբ վրիպակների մի հավաքածու է այն»<sup>4</sup>:

<sup>4</sup> 2. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հտ. է, Երևան, 1935, էջ 11:

Ապա՝

«Այս բոլորից հետևում է, թե պետք է շատ զգուշությամբ վերաբերվիլ<sup>5</sup> սույն բառագրքի հետ և նրա հիշած ձևերը իբրև ճշմարտություն չընդունել: Այսպես արի ես էլ և բառերը ուղղորդի քննելուց հետո, եթե կեղծ չգտա, անցկացրի իմ բառարանի մեջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստույգ»<sup>6</sup>:

Ներսես Ակինյանը, 1930 թ. Արմ. բառարանին նվիրված իր գրախոսականում<sup>7</sup>, նշելով, թե «նա (Աճառյանը, — 2. Ա.) տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ, նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»<sup>8</sup>, ապա թվելով բառարանի բոլոր արժանիքները, միաժամանակ անում է մի բանի դիտողություններ:

Խոսելով Արմ. բառարանի անստույգ՝ «նորագույն», բառերի մասին, Ակինյանը գտնում է, որ այդ բառերից շատերը «պիտի ճշտվեին, նաև ջնջվեին, եթե անոնք ընտրելագույն ձեռագիրներու հետ բաղդատությամբ ստուգվեին»<sup>9</sup>, որ Աճառյանն այդ կարող էր անել էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի օգնությամբ: Նա անհրաժեշտ էր համարում «ճշտել բառերը լավագույն ընթերցվածներու վրայեն», որով հնարավոր կղառնար վերականգնել բառերի սկզբնական ձևերը: Իսկ Մեղրեցու բառարանի օգտագործման կապակցությամբ Ակինյանը գրում է. «Աճառյան, երբ վճռած է շահագործել բառագիրքս, պետք էր անդրադարձած ըլլալ տպագիր օրինակին աղճատումներուն և փորձեր վերականգնել հին բնագիրը ձեռագիրներու ուսումնասիրությամբ»<sup>10</sup>:

Ակինյանի այս պահանջները շատ լավ գիտակցում էր 2. Աճառյանը: Իր բառարանի առաջաբանում նա Ակինյանին պատասխանում է. «2. Ակինյան իր քննադատության մեջ Արմատական բառարանիս (2Ա. 1930, էջ 486—7) պահանջում

<sup>5</sup> Ընդգծումը մերն է:

<sup>6</sup> 2. Աճառյան, նշվ. բառ., հտ. է, էջ 12:

<sup>7</sup> «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 482—493:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 484:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 486:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 492:



է, որ այս նորագոյտ բառերը ես ստուգելի էջմիածնի և Երեւանի ձեռագրատաների 8000 ձեռագրերի վրա: Բայց ինչո՞ւ չստուգելի նաև Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Նոր Զուղայի, Պօլսի Անտոնյան միաբանութեան և այլ տասնյակ հազարավոր ձեռագրերի վրա: Եվ ինչո՞ւ միայն այդ նորագոյտ բառերը ստուգելի և ո՛չ թե ամբողջ հայերեն բառերը: Լավ կլինի անշուշտ: Բայց կարելի՞ է մի մարդուց այդքան բան պահանջել: Այդ գործը թողնում եմ ապագա հայերենագետներին, բանի որ նյութը արդեն պատրաստ է»<sup>11</sup>:

Իհարկե, չի կարելի մի մարդուց այդքան բան պահանջել: Ձեռագրերի համեմատությամբ՝ ոչ միայն հայերեն բոլոր բառերի, այլ միայն Արմատականի նոր, հազվագոյտ բառերի ստուգումը տարիների մեծ աշխատանք է պահանջում: Սակայն Շ. Աճառյանը, իրեն հատուկ խորաթափանցություններով զարմանալի կերպով կարողացել է կուսակալից այդ «կասկածելի ու անստույգ» բառերից շատերի ճիշտ ձևերը կամ, անվազն, իր կողմնորոշող կարծիքն հայտնել նրանց իսկություն վերաբերյալ: Ձեռագիր բառարանների բազմաթիվ դեպքերում հաստատում են Շ. Աճառյանի կուսակալների ճշտությունը:

Իրար հետ համեմատելով մի շարք ձեռագիր բառարանների ամենահին խմբագրությունների մայրօրինակներ հանդիսացող գրչագրերը, ինչպես նաև «Բառք քերթողականք» բառարանի բոլոր գրչագրերը, մենք նկատեցինք, որ Մեղրեցու բառարանի սխալ բառերի մեծ մասը կարելի է ուղղել Մատենադարանի ձեռագրերի օգնությամբ: Սակայն առայժմ մեր հիմնական նպատակը այդ աշխատանքի կատարումը չէ, որովհետև սույն ուսումնասիրությունն ավարտվում է XV դարով, իսկ նրա երկրորդ մասում, որտեղ կրճենվի XVI—XVII դարերի բառարանագրությունը, մեր գլխավոր խնդիրը կլինի, բոլոր բառարանների գրչագրերի համեմատությամբ՝ անհրաժեշտ ուղղումներ մտցնել Մեղրեցու բառարանի մեջ, վերականգնել այդ բառարանը:

Արդ, օրինակներով, ձեռագիր և Արմատական բառարանների համապատասխան բառահոդվածները համեմատելով ցույց տանք հին բառարաններից սույն գիրք բառարանների մեջ մտած բառերում առկա աղավաղումների ու սխալների առավել տարածում ունեցող մի քանի դեպքեր: Վերցնում ենք միայն այն բառերը, որոնց այստեղ ներկայացվող ձևերը հաստատվում են բազմաթիվ գրչագրերով և առարկություններ ու կասկածանքներ չեն հարուցում: Յանկի ձախ մասում զնում ենք Արմատականի բառահոդվածը (բաց թողնելով տվյալ բառի աղբյուրների նշումներն ու հղումները), իսկ աջ մասում՝ համապատասխան բառահոդվածը ձեռագրերում, փակագծերի մեջ հապավումներով ցույց տալով ձեռագիր աղբյուրի անունը:

Բառահոդվածը Արմ. բառարանում, որ նույնն է ինչ Մեղրեցու բառարանում:

Համապատասխան բառահոդվածը ձեռագիր բառարաններում

1. Ազգզուն «ատամք, ակուաներ»:

Ազգզուն. նուստ կամ ցամաք կամ տգեղ (Բառքերթ.)<sup>12</sup>: Մեղրեցու բառարանում «ատամք» բառը շփոթված է, աղավաղումն է «ցամաք» բառի: Ուրեմն ազգզուն բառը թրք. azu «ատամ» բառից չի գալիս, եթե նույնիսկ նրանից էլ ծագած լիներ առամք, ակուաներ բառերին պիտի համապատասխաններ ոչ թե ազգզուն, այլ ազուք կամ ազունք բառը:

<sup>11</sup> Շ. Աճառյան, նշվ. բառ., հտ. է, էջ 10:

<sup>12</sup> «Բառք քերթողականք» բառարանը:

2. Ալբնակ, անստույգ և անծանոթ բառ, որ գիտե միայն բառ. Երեմ. էջ 7 և մեկնում է «կընկալ», որի ինչ լինելը անհայտ է:

3. Ահար «նօթի»:

Ալբնակ կամ ընկալ (Բառ. քերթ.): գրչագրերի մեծ մասը, նույնությամբ, ունի այսպես: Անկասկած, բառահոգովածն աղճատված է: Գլխաբառը, դա ալ բառն է, որ նշք մեկնում է՝ «սեռն, լիսեռն, առանցք անուռյ, աղօրեաց կամ ճախարակ»: Այդ բառը միանալով մեկնության բնակ բառի հետ, տվել է ալբնակ կեղծ բառը, իսկ «կամ» շաղկապը, որը ձեռագրում գրվում է կ միանալով ընկալ բառին, առաջացրել է կրեկալ շինծու բառը:

Ն. Ակինյանը ենթադրում է, թե դա սովահար բառի աղճատումն է: Ծիշտ չէ: Դա Ահարոն բառն է կիսատ գրված և աղճատված մեկնությամբ. Բառ. քերթ. մի շարք գրչագրերում կա՝ «Ահար-ամլութիւն կամ թարգման նորա», ուրիշ գրչագրերում՝ «Ահարոն» նույն մեկնությամբ, իսկ դրանք էլ գալիս են Բառ. եբբ.<sup>13</sup> բառարանից, որն ունի «Ահարոն. ահա հոգի կամ լեռն կամ բան կամ ամլութիւն կամ թարգմա-

<sup>13</sup> «Բառք եբրայեցոց» բառարանը:

նութիւն, նաև՝ «Ահարոն-ահալ հոգի կամ լեռն բարձր կամ բան»: Մեղրեցու բառարանում նույնպես կա՝ «Ահարոն. ամլութիւն կամ թարգման կամ լեռն կամ լեռնային», հենց ահար բառից հետո (տե՛ս նաև Անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 89):

Աղանդեաց. ի բաց Եա (Բառ. քերթ.):

Աղանդումն. խելագարումն (Բառ. քերթ.):

Անարգատիպ. անձև (Բառ. լուս.)<sup>14</sup>:

Անիաստ. անիմաստ (Բառ. քերթ.):

Անսոլ. ստացումն (Բառ. քերթ.): Գլխաբառը՝ անսոլ, մեկ ուրիշ տեղում կրկնվելով շփոթված է անոյշ բառի հետ:

Աղխ-մարդ և անասուն (Բառ. քերթ.):

4. Աղանեալ «ի բացեալ ևղեալ»:

5. Աղրանդումն «խելագարումն»:

6. Անարգատ «աիպ? կամ անձրև», հայտնի չէ թէ ինչ է ուղում ասել:

7. Անիայ «սան կամ թիան», ինչ լինելը հայտնի չէ:

8. Անոյշ «ստացումն», նույն իմաստով ունի անսոլ:

9. Աշխ «մարդ և անասուն». պետք է ուղղել աշխարհ, որ իրոք մարդոց և անասնոց ամփոփումն է:

<sup>14</sup> «Բառք լուսարէն» բառարանը:

10. Բանին «Թնթին ա-  
հեղ»:

11. Գերում «պանդուխտ»:

12. Գաղապար «մագր»,  
ինչ լինելը հայտնի չէ:

13. Գնոր «պատգարակ  
կամ մահիճ կամ դա-  
փոխ»:

14. Կարկառիլ «վանդակ»:

15. Կարկառեաց «զազե-  
աց», ինչ լինելը հայտ-  
նի չէ:

Բումբին. թնդին ահեղ  
(Բառ. քերթ.):

Գերում. պանդուխտ (Բառ.  
քերթ.) եբբ. գերում նը-  
շանակում է պանդուխտ,  
ինչպես ստուգաբանված  
է Արմ. բառարանում:

Գալապր և մարտացու. սու-  
սեր կամ թուր կամ տա-  
պար (Բառ. քերթ.):

Գաղապար-ը պետք է լինի  
ղաղապր կամ ղալապր.  
իսկ մագր-ը հավանա-  
բար մարդացու կամ տա-  
պար բառերի ազավա-  
ղումներից առաջացած  
բառ է:

Գնոցֆ. մահիճ, դափոխ  
կամ՝ «Գնոցֆ. մահիճ»  
(Բառ. քերթ.): Բոլոր դեպ-  
քերում էլ ձեռագրերը  
հաստատում են ղնոց ձևը  
և ոչ թե ղնոր:

Կարկառիլ. վանդակ (Բառ.  
քերթ.): Միայն մի ձեռագ-  
րի (№ 6624) ունի կար-  
կառիլ, որից օգտվել է  
Մեղրեցին:

Կարկառեաց. վազեաց  
(Բառ. քերթ.):

16. Կենար «ստացուածք,  
կենդանագիր, կենդա-  
նոյ պատկեր»:

17. Կորչումն «յորջորջումն  
կամ վշտալից»:

18. Հոյ «ցից կամ ցեց».  
երկու իմաստներից  
մին անշուշտ սխալ է:

19. Ղամբատ «լոտիկարել»,  
ինչ լինելը հայտնի չէ:

Իրենց մեկնություններով  
խճողված են երկու զխա-  
բառեր: Ձեռագրերում, որ-  
պես առանձին բառաձոգ-  
ված կա՝ «Կենդանագիր,  
պատկերահան» (Բառ.  
քերթ.):

Կոչումն. յորջորջումն (Բառ.  
քերթ.):

Ենթադրությունը ձիշտ է.  
ձեռագրերում կա՝ «Հոյ. ցեց»  
(Բառ. քերթ.): Միայն է  
ցից-ը:

Ղամբատող. լեզուանի  
(Բառ. քերթ.), կա նաև  
«Ղօտիկարել. շատախօ-  
սել»: Այս երկու բառն էլ  
կան ձեռագրերի մեծ մա-  
սում: Մեղրեցու բառա-  
րանում կա նաև «Ղողե-  
կարել. շատախօսել»: Ու-  
րեմն երկու զխաբառե-  
րից մեկը դարձել է մյու-  
սին մեկնություն, այ-  
սինքն՝ ստացվել է «լե-  
զուանի. շատախօս», եթե  
ղամբատող նշանակում է  
լեզուանի, իսկ ղօտիկա-  
րել-ը՝ շատախօսել: Այս-  
պիսով երկու բառերի ի-  
մաստներն էլ հայտնի են  
դառնում:

20. Ղեղի «անդրի, ղեկ, ուղղիչ, թև»: Վերջին երեք իմաստները ցույց են տալիս Բեղի ձևը, բայց առաջինը անհայտ է:

21. Ճարտեալ «ճամբար բակեալ», ինչ լինելը հայտնի չէ:

22. Ճձոտեալ «ճոացեալ» (իմա՝ ճիւղ դարձած, շորացած, կոզած):

23. Մակու և մակ «կուսան», բայց տե՛ս մաղկու:

Այստեղ էլ իրար են խառնուրված երկու տարբեր բառեր իրենց մեկնություններով: Ձեռագրերում, որպես առանձին բառահոլովածներ ունենք՝ ա) Ղեկ. թեք նաւի կամ ուղղիչ:

բ) Ղեղ. անդրի (Բառ. քերթ.): Հետևաբար ղեղ (ղեղի), որ նշանակում է անդրի չի կարելի կապել Բեղի ձևի հետ:

Նույնպես երկու տարբեր բառահոլովածներ են խառնված: Ձեռագրերում, իրար մոտ, որպես առանձին բառահոլովածներ ունենք.

ա) ճայրոտել. ճպոտտել: բ) ճամբար. վանք հաւուց (Եւթն. գլ.)<sup>15</sup>:

Ճոտեալ. ճոացեալ (Բառ. քերթ.):

Մակու. սան (Բառ. քերթ.): Մեղրեցու մոտ կրկնված, աղավաղված է մեկնությունը: Այդպես է միայն մեկ ձեռագրում: Մյուս բոլոր ձեռագրերն ունեն վերևում ցույց տված

մեկնությամբ՝ սան, գրլխաբառի մակու կամ մաղկու ձևով:

«Մափր. հաւ (Բառ. քերթ.): Ճիշտ է մափր-ը:

24. Մամիր կամ մափր «հաւ». երկու ձևերից մին սխալ է.

25. Մառ «ժողովումն», որից մանրասէր «ժողովասէր». երկու ձևերից մին վրիպակ է:

Ձեռագրերի մեծ մասն ունի՝ «Մառնասէր. ժողովասէր» (Բառ. քերթ.): Մեղրեցու մոտ մառ նշանակում է ժողովումն, հետևաբար այդ բառից էլ կաղմված է մառնասեր-ը և ճիշտ է, իսկ մանրասեր-ը՝ վրիպակ:

Մառ. խոշ (Բառ. քերթ.):

26. Մառ «խոշ». ինչ լինելը հայտնի չէ:

27. Յամափ «ուղղութիւն». արդյոք վրիպակ է յամում բառից:

Այո, վրիպակ է: Ձեռագրերում կա՝ «Յամում. ուղղութիւն» (Բառ. քերթ.) և՛ «Յամում. պատրաստութիւն կամ ուղղութիւն» (Բառ. երբ.):

28. Ներգասեալ «գովեալ»:

Ներացեալ. գովեալ (Բառ. քերթ.), հմմտ. նաև՝ «Ներացիկ. պիտանի բան»):

29. Ներգող «դաւաճանող»:

Նեւգող. դաւաճանող (Բառ. Զարբ.)<sup>16</sup>:

30. Նժական «տէր». տե՛ս նամակ բառի տակ:

Նժանակ և բնական տէր ասի (Բառ. քերթ.): Կա նաև՝ «Նամակ. թուղթ կամ պատճեն»: Այս երկուսի շփոթումով առաջացել է

<sup>15</sup> «Եւթներորդ գլուխ» վերնագրված բառարանը:

<sup>16</sup> Զարբարիս գրչի բառարանը:

- «Նամակ. տէր» կեղծ բանահոգովածը:
31. Նծուել «արինաբամել, նժժեել», որի հետ նույն է նծուել «նեղել, տառապեցնել»:
32. Շարել «գողացուցանել կամ խախտել»
33. Շկիրանել «բնակել կամ կործանել կամ շիջուցանել»:
34. Շողնագոյն կամ շաղնագոյն «սիրողագոյն», երկուսից մեկը վրիպակ է:
35. Ոգոշել «գոռալ, հող արկանել, հող հանել կամ հովանալ»: Հավանաբար նույն է նախորդի (ոգողել, — Հ. Ա.) հետ և մին կամ մյուսը սխալ:
36. Ուրցել «կարծել»:
- Քուրթը ձեռագրերում կա՝ «նծուել. արինաբամել»:
- Շարժել. գողացուցանել (Բառ. քերթ.):
- Շկիրանել (շկիրահել). բեկանել կամ կործանել կամ շիջանել (Բառ. քերթ.): Մեկնության մեջ բնակել-ը սխալ է, պետք է լինի բեկանել:
- Շողնագոյն. սիրողագոյն, սիրագոյն (Բառ. քերթ.): Վրիպակ է շաղնագոյն-ը:
- Ոգոզել. հողահանել կամ մարտնչել (Բառ. քերթ): Ուրեմն վրիպակ է ոգոշել բառը:
- Ձեռագրերը մեկնում են տարբեր ձևերով՝ «Ուրցել. կործել», «կարծել», «գործել» և ավելի շատ՝ «կորզել»: Թե դրանցից որն է ճիշտ, դժվար է ասել, բայց օգնության է

- հասնում հաջորդ բառը՝ ուրցել, որը մեկնվում է կորզել: Պարզվում է, որ ուրցել և ուրցել միևնույն բանն է: Գլխաբառի ճիշտ ձևը, ինչպես ունեն բոլոր ձեռագրերը, ուրցել պետք է լինի, իսկ մեկնությունը՝ կորզել, ինչպես ունի ձեռագրերի համեմատաբար մեծ խումբը:
37. Ուրջու «խորհուրդ», որ կարծեմ թե շփոթված է ուրու և ուրջու բառերը:
38. Ռամաս. «լուր. 2. գալառապետ»:
39. Վաշխին «խօսակից կամ ասաց»:
40. Փայլփախել «սփոփել, փաղաքշել, փարել»:
- Տփոթում չկա, ուրջու և ուրու բառերը կապ չունեն իրար հետ: Մեղրեցու բառարանի հրատարակիչը սխալ է կարդացել և ընկալել ձեռագրերում եղածը, այն է՝ «Ուրջու. խորթ» (Բառ. քերթ.):
- Ռամասաղար - գալառապետ (Բառ. քերթ.):
- Ձեռագրերի մեծ մասն ունի՝ «Վաշին. խօսակից կամ ասակից» (Բառ. քերթ.), մյուս մասը՝ վաշի, վաշին, բայց ոչ վաշխին:
- Փայլփայլել. սփոփել (Բառ. քերթ.):
- Այս բառերի թիվը բավական շատ է, բայց առայժմ մենք բավարարվում ենք միայն բերված օրինակներով, որոնք ակ-

նառու կերպով ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ դեր ունեն  
ձեռագիր բառարանները տպագիր բառարանների սպիրտում-  
ներն ուղղելու գործում:

Վերջապես, հին բառարանների ուսումնասիրության  
շնորհիվ հայտնաբերվում են բազմաթիվ նոր բառեր ու բա-  
ռաձևեր, որոնք գրածածական են եղել հայ մատենագրության  
մեջ, բայց մինչև այժմ անհայտ լինելով՝ չեն ընդգրկվել տպա-  
գիր բառարաններում:

## ՓՆՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Ձ Ե Ռ Ա Գ Ր Ե Ր

- Բառ Եւրոպէ. ձեռ. № № 530, 4149, 5919, 8106 (516, 529, 1424, 2019, 2331, 2335, 2369, 3200, 3207, 8198):
- Բառ Փիլոնի. ձեռ. № № 266, 3937, 4149 (536, 5008, 7250, 7995, 8106):  
Փիլոնի մեկնություններ. ձեռ. № № 1053, 2595:
- Բառ խոսակն. ձեռ. № № 530, 1837, 4149, 5919, 5925, 8198 (267, 529, 532, 538, 1424, 2019, 2331, 2335, 2369, 3197, 3207, 4698):
- Բառ Բերդական. ձեռ. № № 725, 2371, 4149, 5596, 5925 (266, 267, 516, 530, 532, 533, 534, 535, 538, 540, 541, 542, 544, 545, 1138, 1654, 2019, 2152, 2291, 2329, 2330, 2331, 2335, 2369, 2370, 2372, 2381, 2450, 3119, 3171, 3197, 3200, 3201, 3202, 3207, 3261, 3287, 3824, 3937, 5008, 5126, 5919, 5995, 6624, 7014, 7117, 7250, 7995, 8106, 8198, 5954, 8563, 9151):
- Երկնաւոր զույգ. ձեռ. № № 530, 3207, 5919 (529, 1424, 2019, 2331, 2335, 3200):
- Զափախ գրչի բառարան. ձեռ. № № 3202, 3201:
- Բառ վարդապետացն. ձեռ. № 7117 (267, 5925):
- Բառ վարդան գրոց. ձեռ. № № 3202, 4149, 5925, 7117, 8198 (266, 267, 268, 450, 532, 534, 536, 537, 540, 682, 1654, 2281, 2335, 2370, 2372, 2381, 2431, 3170, 3172, 3197, 3201, 3261, 3468, 3824, 5008, 5126, 5947, 6624, 7250, 7995, 8563, 8606):
- Աւարտեն- պարսկերեն- հայերեն բառարան. ձեռ. № 7151:
- Արիտակեսի ուղագրական բառարան. ձեռ. № № 2371, 2372 (267, 2291, 2331, 2354, 2370, 2373, 2381, 2382, 2488, 2526, 3006, 3193, 3937, 3967, 6907, 7995, 8354, 8537):
- Հանդէս բանաստեղծաց ձեռ. № № 5596, 5919, 5925, 4149, 2371, 540, 268 (266, 267, 516, 529, 530, 532, 533, 536, 537, 538, 545, 546, 682,

1 Փակագծերի մեջ նշված ձեռագրերին դիմել ենք առանձին ղեպերում:

1355, 1654, 2019, 2295, 2330, 2331, 2335, 2369, 2370, 2372, 2381, 2431, 2991, 3170, 3197, 3200, 3261, 3257, 3286, 3450, 3468, 3488, 3824, 5008, 5126, 6824, 7004, 7014, 7117, 7250, 7995, 8106, 8198, 8533, 8563, 8606, 9166):

Բառաբան քառամատույց. ձև. № 3937:

Բառ գովասանական. ձև. № № 4149, 5925, 8198 (2335, 7117, 8106):

Գովասանական բառաբան. ձև. № 7117:

Բառ գովասանական վասն տղայոց ուսման. ձև. № 7117:

Բառ երբայեցուց. ձև. № № 2371, 4149, 5596, 5925, 8198 (266, 267, 516, 530, 534, 536, 538, 843, 2019, 2291, 2330 2331, 2335, 2369, 2370, 2372, 2381, 3170, 3197, 3200, 3201, 3202, 3261, 3937, 4398, 5008, 5919, 5947, 5995, 6624, 6938, 7014, 7117, 7995, 8106, 8354, 8563, 9112):

Բառ ֆեռականի. ձև. № № 3824, 5596, 5919, 5925, 7117 (266, 267, 450, 529, 530, 532, 538, 744, 1115, 1424, 1495, 1713, 1749, 1754, 1782, 1995, 2016, 2281, 2286, 2288, 2291, 2295, 2296, 2324, 2327, 2329, 2330, 2331, 2335, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2380, 2361, 2462, 2526, 3029, 3169, 3197, 3199, 3200, 3201, 3202, 3286, 3467, 3488, 3824, 3917, 4387, 5073, 5354, 7014, 7085, 7117, 7250, 7995, 8235):

Մանման փաստասիրական. ձև. № № 1681, 2335, 6897, 7151 (1101, 1424, 1686, 1689, 1739, 1740, 1743, 1744, 1756, 1764, 1801, 1803, 1980, 2018, 2286, 2288, 2331, 2368, 3448):

Բառ Գաղիանոսի բժշկապետի. ձև. № № 266, 2335, 3202, 4149, 5919, 5925, 7117 (268, 238, 529, 532, 533, 535, 536, 537, 538, 540, 607, 843, 2019, 2331, 2369, 2370, 2381, 3170, 3197, 3200, 3201, 3261, 3468, 3937, 5008, 5728, 5947, 6624, 7250, 7995, 8106, 8606, 9796, 9837):

Քարգմանորին դեղոց. ձև. № № 268, 534, 550, 2381, 3170, 6624 (537, 540, 2361, 3468, 8606):

Չանագան բառացանկեր. ձև. № 7117:

Հին ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ազարանգեղայ Պատմություն հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփլիս, 1909:

Ամիրտովլարի Ամասիացույ Անդիտաց անպէտ կամ բառարան բժշկական երկոց, ի լոյս էած հանդերձ ծանոթագրութեամբ Կ. Յ. Բասմաչեան, Վիեննա, 1926:

Ամիրտովլար Ամասիացի, Օգոստ բժշկութեան, առաջին տպագրություն, ձեռագրերի բաղադատությամբ, առաջարանով, ծանոթություններով և բաղադրությունով, խմբագրությամբ Ստ. Մալխասյանց, Երևան, 1940:

Անանիայի Շիրակայնոյ համարողի Յաղագս չափոյ, չափուց և պատարաց.— Ա. Գ. Արաբամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:

Անանիայի Շիրակայնոյ համարողի Յաղագս կշռոյ, կշռոց և կշռորոց.— անդ:

Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, յառաջարանով, համեմատութեամբ և ծանոթութիւններով Ա. Տէր Միքելեանի, էջմիածին, 1894:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջարանով և ծանոթութիւններով առաջին անգամ ի լոյս բնծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ, 1910:

Գրիգորի Նաբեկայ վանեց վանականի մատենագրութիւնը, հրատարակեաց Յարութիւն Քրիստափորեան, Տփլիս, 1905:

Դաւիթ Անյալը. Սահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջարանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արեշտայանի, Երևան, 1960:

Եզերկայ վարդապետի Կողբացույ Եղծ ազանոց, Քիֆլիզ, 1914:

Եղիշի վասն վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածելու բաղադատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Միխայիլեան, Երևան, 1957:

Եւազի Պոնտացույ վարք և մատենագրութիւնը թարգմանելով ի յունկ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատասիրութեամբ և ծանոթութեամբ ի լոյս բնծայեաց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907:

Թւղորոսի Քոբեճաւորի ճառք երեք.— Մատենագրութիւնը նախնեաց, Վենետիկ, 1833:

Թովմայի վարդապետի Արժունույ Պատմութիւն տանն Արծրունեաց, Քիֆլիս, 1917:

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Հեռմեայ եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք, աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի.— «Բանբեր Մատենագրարանի», № 3, Երևան, 1956:

Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփլիս, 1904:

Ղետնդ, Պատմութիւն հայոց, Ս. Պետրբուրգ, 1887:

Մամբրէի Վերձանողի ճառք.— Կորին վարդապետի, Մամբրէի Վերձանողի և Դաւիթ Անյալի մատենագրութիւնը, Վենետիկ, 1833:

Մովսէսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Տփլիս, 1881:

Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քիֆլիս, 1912:

Յովհան Մանգակունի. Մատենան յաղագս սիրոյ եւ սրբութեան որով պտղաբերին արարածք.— Գ. Տէր-Մկրտչեան, Յովհան Մանգակունի (արտաստուութիւն «Արարտ» ամսագրից), 1903:

Յովհաննէս վարդապետի երգեկացոյ Ասացուած ներբողեան զովեստի ի սուրբ լուսաորին շայոց Գրիգորիոս.— Սոփերք հայկականք, Ե, Վենետիկ, 1853:

Յովհաննէս իմաստասիրի Աւնեցոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն հայոց, Քիֆիս, 1912:

Յովհաննէս Ոսկերեանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ներբողեան սասցեալ յաղագս վարուց եւ նահատակութեան սրբոյն Գրիգորի շայոց մեծաց հայրապետի.— Սոփերք հայկականք, Գ, Վենետիկ, 1853:

Նեմեսիոսի փրիտոփայի Նեմեսցոյ Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889:

Նպօյն Բագրատունի, Պատմութիւն, ի յոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921:

Սահակ Պարբե, Կանոնք.— Սոփերք Հայկականք, Բ, Վենետիկ, 1853:

Ստեփաննոս Սինեցի, Ժամանակագրութեան մեկնութիւն բնորարձակ եւ համառօտ, Ս. Էջմիածին, 1917:

Վարդան, Հաւարումն պատմութեան, Վենետիկ, 1862:

Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1914:

Փիլոնի Երջայեցոյ մնացորդք ի շայս, Վենետիկ, 1826:

Փիլոնի Երջայեցոյ բանք երեք շի ի յոյս ընծայեալք, Վենետիկ, 1822:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբգարյան Գ., Մատենադարան, Երևան, 1962:

Աբգարյան Գ., Նորայր Բյուզանդացու անտիպ երկերը.— «Էջմիածին», 1964, Ը—Թ:

Աբրահամյան Ա. Ա., Գրարարի ձեռնակ, Երևան, 1958:

Ալիշան Ղ., Հայրուսակ, Վենետիկ, 1895:

Ալիշան Ղ., Սխուան, Վենետիկ, 1885:

Ակիմյան Ն., Հ. Աճառեան, հայերէն Արմատական բառարան.— «Հանդէս ամսօրեայ», 1930:

Աղայան Էդ., Լեզվարանութիւն ներածութիւն, Երևան, 1963:

Աղայան Էդ., Հայ լեզվարանութիւն պատմութիւն, հտ. 1, Երևան, 1958:

Անադյան Հ., Հայոց լեզվի պատմութիւն, 1 մաս, Երևան, 1940, 2 մաս, 1951:

Անադյան Հ., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հտ. Ա, Վենետիկ, 1913, հտ. Բ, 1922:

Անադյան Հ., Հայերէն արմատական բառարան, հտ. Ա-Է, Երևան, 1927—1935:

Անադյան Հ., Աղվանից գիրը.— ՍՍՍՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» № 3—4 (8—9), Երևան, 1941:

Անադյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա-Ե, Երևան, 1942—1962:

Ալգերեան Մ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846:

Աւետիքեան Գ., Սիււնլեան Խ., Ալգերեան Մ., Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հտ. 1, ի Վենետիկ, 1836, հտ. 2, 1837:

Բառարան սուրբ գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացոցօք եւ տախտակօք, Կոստանդնուպոլս, 1881:

Բիւզանդացի Ն., Հայկական բառարանութիւն, Կոստանդնուպոլս, 1880:

Բիւզանդացի Ն., Քննադատութիւն Հայրուսակի, Վիեննա, 1925:

Գարիբեյան Հ., Հայ փրիտոփայական մտքի պատմութիւն, հտ. 1, Երևան, 1956, հտ. 2, 1958:

Գասպարյան Գ., «Վարդանանց պատմութիւն» միջնադարյան բառարանը.— «Պատմա-բանասիրական հանդէս», № 2, Երևան, 1963:

Գաւրեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1951:

Գլուգ դպիր Տէր-Յովհաննէսեան Պալատացի, Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, Կոստանդնուպոլս, 1826:

Գրքը Աստուածաշունչը Հին եւ Նոր կտակարանաց, Վենետիկ, 1859:

Գրիգորյան Գ., Փիլոն Ալեքսանդրացու աշխատութիւնների հայ մեկնությունները.— «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960:

Գուրյան Ե., Գրոց գիտի մասին.— «Բազմալէզ», 1908:

Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ա տպ., Ալիկոռնա, 1698, Բ տպ., 1729:

Զարբանալյան Գ., Հայկական Թարգմանութիւնք Նախնեաց, Մատենադարան հայկական Թարգմանութեանց Նախնեաց (դար Գ-ԺԳ), Վենետիկ, 1889:

Թուրգոմյան Վ., Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին.— «Բազմալէզ», 1923:

ԺԳ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:

ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1955, մասն Բ, 1958:

Խաչեւոյան Լ., «Գրչութիւն արվեստի» լեզվական—քերականական տեսութիւնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962:

Խաչիկյան Լ., Գլածորյան համալսարանը եւ նրա սաների ավարտական ատենախոսութիւնները.— Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատութիւններ», հտ. 23, Երևան, 1946:

Կոստանյալեց Կ., Հայագիտութիւնն արեւմտեան եւրոպայում, համառօտ տեսութիւն եւ զրացուցակ, Քիֆիս, 1910:



Հացունի Վ., Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923:  
 Հովնանյան Վ., Հետազոտութիւնք նախնեաց ուսման վրայ, ուսումնա-  
 սիրութիւնք և քաղաածքներ, մասն 1, Վիեննա, 1897:  
 Հովսեփյան Գ., Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ,  
 մաս 2, Երուսաղէմ, 1942:  
 Կարիրյան Ա. և Պարիս Գ., Հայոց լեզվի բերականութեան, ուղղագրութեան և  
 կետադրութեան ուղեցույց, Երևան, 1957:  
 Ընդունեան Ն., Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցա-  
 բանական յատուկ անուանց յաւելեալ հայկական յատուկ անուանք,  
 Կ. Պոլիս, 1897:  
 Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հտ. Ա, Բ, Գ, Երևան,  
 1944, հտ. Գ, 1945:  
 Մանանդյան Հ., Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, քննա-  
 կան ուսումնասիրություն, Վիեննա, 1928:  
 Մելիք-Փառազանյան Հ., Համառոտ տեղեկություններ մեզ հասած հայ  
 ամենահին բժշկական բառարանի մասին.— ՀՍՍՌ ԳԱ «Աշխատու-  
 թյուններ» հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի,  
 № 2, Երևան, 1949:  
 Մխիթար Սեբաստացի, Բաղդիրք հայկազեան լեզուի, հտ. 1, Վենետիկ,  
 1749, հտ. 2, 1769:  
 Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժութեան պատմու-  
 թեան, Երևան, 1958:  
 Չուգասզյան Բ., Պարսկերեն-հայերեն առաջին տպագիր բառարանը.— ՀՍՍՌ  
 ԳԱ «Տեղեկագիր», № 12, Երևան, 1962:  
 Պարսամյան Վ., Պողոսյան Ա., Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմու-  
 թյուն, զասագիրք ութնամյա դպրոցի 8-րդ դասարանի համար, Երե-  
 վան, 1963:  
 Ջանուկյան Գ., Լեզվաբանութեան պատմություն, հտ. 1, Երևան, 1960:  
 Ջանուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և  
 միջնադարյան Հայաստանում, Երևան 1954:  
 Մանակյան Կ., Գրոց գիտք.— «Բազմավէպ», 1907:  
 Սուրբյան Ա., Հոմերական բառագիրք եւ հոմերական տողք.— «Բազմա-  
 վէպ», 1887:  
 Սուրբյան Ա., Պատմութիւն հայ բժշկութեան.— «Բազմավէպ», 1881:  
 Տաշյան Հ., Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898:  
 Տեր-Պողոսյան Ավ., Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնա-  
 գույն ժամանակներից մինչև XVIII դարը, Երևան, 1960:  
 Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա,  
 կազմեց Հ. Յ. Վ. Տաշեան, Վիեննա, 1895:  
 Յուզակ հայերէն ձեռագրաց Ձմմառի վանքի մատենադարանին, կազմեց  
 Մեսրոպ վրդ. Քելիշեան, Վիեննա, 1964:

Փշարմալեան Գ., Բաղդիրք հայկազեան լեզուի, հտ. 1, Կոստանդնուպօլիս,  
 1844, հտ. 2, 1846:  
 Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петро-  
 град, 1915.  
 Аревшатян С., Два древних философских фрагмента— «Ритор, о  
 природе» и «Философские определения».— «Բանբեր Մատենա-  
 դարանի», № 5, Երևան, 1960:  
 Баранов Х. К., Арабско-русский словарь, Москва, 1957.  
 Дворецкий И. Х., Древнегреческо-русский словарь, т. 1, 2, Москва,  
 1958.  
 Лексикографический сборник, вып. 1, 2, 3, 4, Москва, 1957—1960.  
 Малинин А. М., Латинско-русский словарь, Москва, 1952.  
 Оганесян Л. А., История медицины в Армении с древнейших времен  
 до наших дней, ч. 1, 2, Ереван, 1946.  
 Пыпин А. Н., История русской литературы, т. 1, С. Петербург, 1898.  
 Философские труды в армянских рукописях Матенадарана.—  
 «Բանբեր մատենադարանի», № 3, Երևան, 1956:  
 Чалоян В. К., История армянской философии, Ереван, 1959.  
 Чикобава А., О принципах составления толкового словаря грузин-  
 ского языка.— Лексикографический сборник, вып. I, Москва,  
 1957.  
 Carrière A., Un ancien glossaire latin-arménien, Paris, 1886.  
 Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque  
 Nationale par Frédéric Macler, Paris, 1908.  
 Finck F., Kleinere mittelarmerische Texte.— „Zeitschrift für arme-  
 nische Philologie“, B. 1, H. 3., Marburg, 1902.  
 Hübschmann H., Armenische Grammatik, 1 Teil, armenische Ety-  
 mologie, Leipzig, 1895.  
 Iskos A., Lenkova A., Deutsche Lexikologie, Leningrad, 1960.  
 Karamianz N., Die Handschriften—Verzeichnisse Königlischen Bib-  
 liothek zu Berlin. B. 10, Verzeichniss der armenischen Hand-  
 schriften, Berlin, 1888.  
 Karst J., Das trilingue Medizinalglossar aus Ms. 310 der Wiener  
 Mechitharisten Bibliothek.— „Zeitschrift für armenische Philo-  
 logie“, B. 2, H. 2, Marburg, 1903.  
 Karst J., Historische Grammatik des Kilikisch—Armenischen,  
 Strassburg, 1901.  
 Macler F., Les traducteurs arméniens ont-ils connu et utilisé l'hé-  
 breu?— «Հանդէս ամսօրեայ», 1927:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
----------	---

Գլուխ առաջին

Քառաբանագրական աշխատանքներն ու բառաբանները V—X դարերում	17
---	----

Գլուխ երկրորդ

Հայ բառաբանագրությունը XI—XV դարերում	41
Ա. Բացատրական բառարաններ	
Բառք յոմարէն	65
Բառք Փիլոնի	71
Բառք խորանին	76
Բառք բերթողականը	82
Եւթներորդ գլուխ	88
Ջաբարիա գրչի բառարանը	95
Բառք վարդապետացն	98
Բ. Քարգմանական բառարաններ	
Հայերեն-մոնղոլերեն բառացանկ	99
Բառք Վարդան գրոց	101
Արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարան	106
Գ. Ուղղագրական բառարան	
Արիստակեսի ուղղագրական բառարանը	110
Դ. Հումանիշների բառարան	
Հանդէս բանաստեղծաց	123
Ե. Բառա-դարձվածային բառարաններ	
Բառարան բառամատույց	132
Բառք գովասականը	135
Գովասական բառարան	140
Բառք գովասանական վասն տղայոց ուսման	142
Զ. Հատուկ անունների բառարան	

Բառք նորայեցոց	143
Է. Մասնագիտական բառարաններ	
Բառք բերականին	154
Սահմանք իմաստասիրականը	166
Բառք Գաղիանոսի բժշկագետի	179
Քարգմանութիւն դեղոց	196
Բժշկական եռալեզվյան բառարան	203
Ը. Զանազան բառացանկեր	
Այբուբեն բառարաններ	208

Գլուխ երրորդ

Առնչություններ ձեռագիր և տպագիր բառարանների միջև	213
Յգտագործված գրականություն	233

ՀԱՅԿ ՄԵՍՐՈՊԻ ԱՄԱԼՅԱՆ  
ГАЙК МЕСРОПОВИЧ АМАЛЯН

Միջնադարյան Հայաստանի  
բառարանագրական հուշարձանները

Տպագրվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ինստիտուտի «Մատենադարանի» գիտական խորհրդի  
որոշմամբ

Պատ. խմբագիր՝ Գ. Վ. Արզախյան  
Հրատ. խմբագիր՝ Ս. Ա. Անաստասյան  
Կազմը Կ. Հ. Յուրուշյանի  
Տեխ. խմբագիր՝ է. Ս. Ավետյան  
Սրբագրիչ՝ Ջ. Խ. Յումանյան

ՎՖ 04792, հրատ. № 2685, պատվեր 241, տպարանակ 1000:

Հանձնված է արտադրության 14/VI 1966 թ., ստորագրված է տպագրու-  
թյան 28/XII 1966 թ.: Տպագր. 15,13 մամուլ, պայմ. 12,17 մամուլ,  
հրատ. 10,46 մամուլ: Թուղթ № 2, 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Գինը 83 կոպ.:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան,  
Երևան, Բարեկամության 24

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ և ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
5	վ. 7—8	XVI—XVIII դդ.	XVI—XVII դդ.
126	ն. 3	սեևարոյր	սեևարոյր
»	ն. 1	ստանայ	ստտանայ
134	ն. 8	ինչ	իչ
140	ն. 2	hōšt'anā	hōšt'anā
150	վ. 15	ժամանակակից	տպագիր